

ԷՏ. ՅԸ ԱՄԵՐՍՍ

Մ Ի Ր Տ

Գ Ի Ր Բ Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն  
Ա Մ Է Ն Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն Ի Հ Ա Ս Ա Ր

Ի Մ Ա Ն Ն Յ Ր Ա Մ Ե Ր Կ Ն Ի

Ե Ի Փ Ի Մ Է Պ. Օ Տ Ե Ա Ն

*London: Printed and Published by J. G. Fisher, 14, Avebury Lane, E.C. 4.*

Գրքի մասին տեղեկությունները տեսնելու համար  
հարցազեկ ուղարկե՛ք Գրքերի Կենտրոնին, Երևան, ԽՍՀՄ



Լեռ  
✓ 133

ԽՍՀՄ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երևան, ԽՍՀՄ

Համար 6000000, էջ 14:

1900

1999

ԷՏ. ՏԸ ԱՄԻԶԻՍ

# Ս Ի Ր Տ

ԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԱՄԷՆ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1919

ԹԱՐԳՄԱՆՆՑ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ

ԵՒՓԻՄԷ Պ. ՕՏԵԱՆ Օ Բ



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԻԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԻՆԱՍԵԱՆ

Սուրբան Համամ հասկէի, քիւ 14

1899

ՎԱՌԵՐԱԳԻՐ ՈՒՍՈՒՄԵՆ. ԽՈՐՀՐԴՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



Ազգային կեդրոնական Վարչութեան Աւսումնական Խորհուրդն, իննութեան առկոյժ «Սիր» ակումն Ընկերչակութեան դասագիրքն, քարզմանեալ յԱզնուաշայ Օրիորդ Եւփիմէ Օսեանէ, գսաւ զայն օգտակար ի պէս Տարրական Եսխակրբարանի Ասանոյաց, ուսի եւ այսմ պաշտօնագրոյ կ'արձնէ նոյն դասագրքին յԱզգային Եսխակրբարանն գործածութիւնը:

ՈՒՍՈՒՄԵՆ. Ա. Ա. Ա. ԽՈՐՀՐԴՈՅ

Ասեկոյգիր

Վ. Ասեկոյգիր

Պօղոս Գ. Քերէսեան

Յ. Գուրգէն



ՀՔ. 139

Բ 133-60

ԼՈՒՍԱՀՈԳԻ ԵՂԲՕՐՍ

ՓՐԻՓՈՐ Ս. ՕՏԵԱՆԻ

ՅԻՇՍՏԱԿԻՆ

Քեզի կը նուիրեմ *Սիրսս*, եղբայր իմ, *Սիրս* մը որ արժանի է ֆուկիեիդ: Այս *Սիրս*ին մէջ կայ բոլոր բարութիւնը, բոլոր ազնուութիւնը, բոլոր վեհութիւնը, բոլոր մեծութիւնը ֆու արտիդ:

Ուրեմն ներէ, եղբայր իմ, որ այս նուէրով յագուրդ սամ իմ արտիս անհուն կարօտին որով կը տոչորի սասնեկու սարիներէ հետէ: Եւ ասով ինքզինքս երախտահարոյց զգամ քեզի հանդէպ:

ԵԻՓԻՄԷ Պ. ՕՏԵԱՆ

15/27 Օգոստոս, 1899

# Մ Ի Ր Տ

## Ը Ն Թ Ե Ր Յ Մ Ա Ն Գ Ի Ր Ք

Հ Ո Վ Տ Ե Մ Ք Ե Գ

Վ Ե Ր Ա Մ Ո Ւ Տ Ը

Թուրին, Երկուսաբքի 17

Այսօր դպրոցական վերամուտ է: Մեր արձա-  
կուրդի ամիսները երազի՝ պէս անցան: Մայրս այս ա-  
ռաւօտ Պառէթիի վարժարանը տարաւ զիս, երրորդ  
կարգին մէջ արձանագրել տալու համար: Իսկ ես գիւ-  
ղը կը մտածէի, եւ ակամայ կ'երթայի վարժարան: Ա-  
մէն փողոցներուն մէջ տղաք կը վիտային: Գրազաճա-  
ռի երկու խանութները լեցուած էին ծնողքներով, ո-  
րոնք կը գնէին տետրակ, ծծուն թուղթ, թղթակալ-  
ներ... Դպրոցին առջեւ այնքան բազմութիւն խռ-  
նուած էր որ դռնապանն ու պահպան զինուորը  
դժուարութիւն կը կրէին դրան մուտքը ազատ թողելու:

Երբոր դռնէն պիտի անցնէինք, զգացի որ մէկը  
ուսիս կը դպչէր: Երկրորդ դասարանի ուսուցիչս էր  
ան, իր չէկ քրքրած մազերով եւ իր անփոփոխ շէն-  
չող կերպարանքով:

« Ուրեմն մշտնջենապէս բաժնուած ենք, Հանուի, »  
ըսաւ ինծի:

Գիտէի անանկ ըլլալը, եւ սակայն այս խօսքը վիշտ

պատճառեց ինձի: Մտանք դռնէն ներս, ո՛չ առանց ճիգի: Պարոններ, տիկիններ, ժողովուրդի կիներ, գործաւորներ, սպաներ, մեծ-մայրեր եւ ծառաներ, ամէնքն ալ մէկ ձեռքով տղայ մը բռնած, միւսով ծըրարներ, սպասումի սրահը եւ սանդուղիները կը լեցընէին մեծ շուինդով:

Հաճոյքով տեսայ կրկին անգամ գետնայարկի այն մեծ սրահը որուն վրայ կը բացուին եօթը դասարաններ, եւ որմէ գրեթէ ամէն օր՝ անցած եմ երեք տարի շարունակ: Շատ բազմութիւն կար: Վարժուհիները կ'երթային կու գային: Առաջին կարգէն վարժուհի մը իր դասարանին սեմէն բարեւեց զիս ըսելով.

« Հանձի, առաջին յարկը պիտի ելլես այս տարի. այլ եւս անցնի՛լդ անգամ չպիտի տեսնեմ: »

Ու ինձի նայեցաւ տխրութեամբ: Տեսայ տնօրէնը, որուն մօրուքը անցեալ տարուընէ քիչ մը աւելի ձեւմակ երեւցաւ ինձի, շրջապատուած էր տիկիններէ, որոնք շատ սրտնեղած էին, վասն զի այլ եւս տեղ չէր մնացեր իրենց զաւակներուն համար: Ընկերներէս շատերը խիստ մեծցած գտայ: Գետնայարկին վրայ, ուր դասարաններու բաժանումները եղած ըմպած էին, տարրական դասընթացքի տղաք կը տեսնուէին, որոնք չէին ուզեր ներս մտնել, ու կը յամառէին ջորիներու պէս. պէտք էր բռնի ներս մտցընել անոնք. ուսանք կը փախչէին նոտարաններէն, ուրիշներ ալ կը սկըսէին լալ, տեսնելով որ իրենց ծնողքները կը հեռանան: Անոնք ետ կը դառնային, տղաքնին յորդորելու կամ մխիթարելու համար. իսկ վարժուհիները կը յուսահատէին:

Իմ պզտիկ եղբայրս օրիորդ Տէլքաթիին դասարանը դրուեցաւ, ես Պ. Բէռպօնիինը, առաջին յարկը՝

ժամը տասնին ամէնքս ալ դասարանն էինք. յիսուը չորս աշակերտ: Ասոնց մէջ, հազիւ տասնըհինգ տասնըվեց հատ ճանչցայ երկրորդ դասարանի ընկերներէս. անոնց մէջ էր Տէռօսին, այն որ միշտ առաջին մրցանակը կ'ուենեայ: Ի՛նչ պզտիկ եւ տխուր երեւցաւ դպրոցը աչքիս համեմատաբար անտառներու եւ լեռներու ուր անցուցեր էի քանի մը շաբաթ: Կ'ափսոսայի նաեւ երկրորդ դասարանի այն բարի ուսուցիչս, որ միշտ կը խնդար ինձի հետ: Անոր հասակը այնքան կարճ է, որ մարդը մեզի իբրեւ ընկեր կ'երեւար: Կը ցաւէի որ այլ եւս չպիտի տեսնէի զինքը հոն, իր շէկ քրքրած մազերով...:

Մեր հիմակուան դասատուն երկայնահասակ է, անմօրուս, երկար մազերով, համակ գորչագոյն, ճակտին մէջ տեղը կնճիւռ մը, հաստ ձայն մը. շեշտ կը նայի մէյ մը մէկին մէյ մը միւսին, իբրեւ թէ պիտի կարդայ մեր սրտին մէջը, երբեք չի խնդար:

Ես ինձի կ'ըսէի. « Ահա՛ առաջին օրը: Տակաւին տասը ամիս կայ արձակուրդին. ո՛րքան աշխատութիւն, քննութիւն եւ յոգնութիւն մեր առջեւը: » Արդարեւ պէտք կը զգայի մայրս գտնելու դուրս ելլելուս, ու վազեցի համրութեցի գինքը: Նա ըսաւ ինձի. « Արիութիւն, Հանոսիս, մէկտե՛ղ կ'ուսանինք: » Ու գոհ տուն դարձայ: Բայց եւ այնպէս, չունիմ այլ եւս, այն ժպտուն ուրախ եւ բարի ուսուցիչս. դըպրոցը այնքան ախորժելի չերեւար ինձի որքան անցած տարին...:

# ՆՈՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Յրեհաբթի 18

Նոր վարժապետը կրցաւ սակայն մեզի ամէնուս հաճելի ըլլալ, այս առտուընէ իվեր:

Ներս մտնելու ատեննիս, որովհետեւ նա արդէն եկած նստած էր իր տեղը, ատեն ատեն կը տեսնէինք, դասարանին դուռը, իր անցած տարուան աշակերտներէն մէկ քանին, որոնք կուգային զինքը բարեւել, անցողակի: «Բարի լո՛յս, վարժապետ: — Բարի լո՛յս, պարոն Բէնպօնի.» կ'ըսէին: Անոնցմէ ոմանք կուգային իրեն, ձեռքը կը սեղմէին ու կը դառնային կ'երթային վազելով: Կը տեսնուէր որ իր հին աշակերտները կը սիրէին զինքը եւ պիտի ուզէին տակաւին ունենալ զինքը իբրեւ ուսուցիչ: Ինք, անոնց կը պատասխանէր ամենայն պարզութեամբ. «Բարեւ,» կը սեղմէր ձեռքերը զոր իրեն կ'երկնցընէին. բայց ոչ ոքի կը նայէր: Իւրաքանչիւր բարեւին, կը ծռէր իր լըրջ կերպարանքովը, ճակատը պատուհանին դարձուցած, դիմացի տանը տանիքին նայելով: Համակրութեան այս արտայայտութիւնները փոխանակ հըրձուեցնելու կարծես կը նեղէին զինքը: Մեզի ալ կը նայէր, մենք, նորեկներս, մէկիկ մէկիկ, ուշագրութեամբ: Ուղղագրութեան դասի ատեն տեղէն վար իջաւ ու սկսաւ ժուռ գալ մեր նստարաններուն մէջ տեղերը: Նշմարելով որ աղու մը երեսը կաս կարմիր էր եւ պզտիկ ուռեցքներով լեցուն, ընդհատեց դասը, աղուն գլուխը ձեռքին մէջ առաւ, հարցուց իրեն թէ ի՞նչ ունէր, եւ ճակատը շոշափեց տաքութիւնը նայելու համար: Այն միջոցին, իրեն ետեւը աշակերտ

մը նստարանին վրայ ելաւ եւ սկսաւ խամաճիկ ընել:

Վարժապետը թափով ետին դարձած ըլլալով, տղան, յանկարծակիի եկած, նստաւ շտապով եւ գլուխը կախած մնաց դանդանակի մը սպասելով: Պ. Բէնպօնին ձեռքը դրաւ չարամճիին ուսին. «Մէյ մըն ալ մի՛ ըներ.» ըսաւ: Այսքան:

Դարձաւ իր տեղը եւ ուղղագրութիւնը աւարտեց: Ուղղագրութիւնը աւարտելուն, վարժապետը մեզի նայեցաւ վայրկեան մը լուռութեամբ, յետոյ ըսաւ իր հաստ ձայնով, բայց բարութեամբ լեցուն չեչտով մը. «Մտիկ ըրէ՛ք, տղաքս: Մէկ տարի ունինք մէկտեղ անցընելու. ընենք, ի՛նչ որ կրնանք, որպէս զի ազէ՛կ անցընենք այդ տարին: Աշխատեցէ՛ք եւ խելօք կեցէ՛ք: Ես ընտանիք չունիմ. իմ ընտանիքս դուք էք: Անցած տարի տակաւին մայրս ողջ էր. մեռաւ: Ես մինակ մնացի. ձեզ ունիմ միայն աշխարհի վրայ. որիչ մտածութիւն, ուրիշ ազապատանք չունիմ, բայց եթէ ձեզ, դուք ալ պէտք է որ իս սիրէք: Ես չեմ ուզեր ոչ ոք պատժել: Տոյց տուէք ինձի թէ սրտի տէր աղաք էք: Մեր դպրոցը ընտանիք մը պիտի ըլլայ եւ դուք իմ մխիթարութիւնս ու պարծանքս պիտի ըլլաք: Չեմ պահանջեր ձեռնէ որ պատասխանէք. զի ապահով եմ որ ամէնքդ ալ ձեր սրտին մէջէն աշխարհիք, եւ ես շնորհակալ եմ ատ ըսածնուդ համար:»

Ատ միջոցին դռնապանը ներս մտաւ ըսելու համար աւարտեցաւ ը(\*): Ամէնքս ալ տեղերնուս ելանք

(\*) Կ'երեւայ թէ իսախայի թագային վարժարաններուն մէջ սովորութիւն է որ երբ դասերը աւարտելու ըլլան վարժարանին դռնապանը գայ ծանուցանէ, պուտով սրածէ սրած պարտելով, լափներէն Finis (աւարտում) քսալը:



լռութեամբ: Այն աշակերտը որ իր նստարանին վրայ ելեր էր վարժապետին մօտեցաւ, եւ անոր ըսաւ դողդոջուն ձայնով մը. «Կը ներէ՞ք ինձի, Պարոն»:

Ուսուցիչը համբուրեց զայն ճակտէն. «Լաւ, տըզաս, գնա՛», ըսաւ իրեն:

### ԴԺԲ ԱԽՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուրբաթ 21

Տարեշրջանը դժբախտութեամբ մը սկսաւ: Այս առաւօտ դպրոց գացած ատենս, մինչ կը պատմէի հօրս Պ. Բէնպօնիին մեզի ըսած անուշ խօսքերը, յանկարծ փողոցը բազմութեամբ լեցուեցաւ: Ամէն ոք կանգ կ'առնէր դպրոցին առջեւ:

«Անտարակոյս արկած մը պատահած է», գոչեց հայրս:

Մեծ դժուարութեամբ ներս մտանք: Դպրոցին մեծ սրահը լեցուած էր ծնողքներով ու աշակերտներով, զորոնք դասարան մտցնելու չէին հասներ վարժապետները: Ամէնուն նայուածքները ուղղուած էին դէպի տնօրէնին դռուը, ու կը լսուէր որ կ'ըսէին. «Խեղճ տղայ, Խեղճ Ռօպէթի»: Մեծ սրահին խորը, գլուխներու բարձրէն, կը տեսնուէր պահակի մը գլուխանոցը եւ տնօրէնին ճաղատ գլուխը: Բարձր գլխարկով պարոն մը ներս կը մտնէր. չչնկոց մը ելաւ. «Ահա բժիշկը»: Հայրս հարցուց ուսուցիչի մը. «Ի՞նչ պատահեր է: — Անիւը ոտքին վրայէն անցեր է, պատասխանեց նա: — Ու ոտքը ճզմուեր է», ըսաւ ուրիշ մը:

Անիւին տակ մնացողը երկրորդ դասարանէն աշա-

կերտ մըն է, որ, Տօռա կօսա փողոցէն դպրոց եկած ատեն, տեսեր էր որ վարի կարգէն տղայ մը մօրը ձեռքէն պրծեր ու ինկեր էր, քալող հանրակառքէ մը քանի մը քայլ անդին: Միւսը իսկոյն սրացեր գացեր էր տղուն օգնութեան, եւ զայն թեւերուն մէջ առած վեր վերցուցեր էր: Դժբախտաբար հանրակառքին անիւը արի տղուն ոտքին վրայէն անցեր էր: Հրեաանիներու գնդապետի մը սրբին է:

Մինչդեռ այս եղելութիւնը մեզի կը պատմէին, կին մը խենթի պէս ներս մտաւ մեծ սրահէն, ամբոխը ճեղքելով: Ռօպէթիին մայրն էր, որուն իմացուցեր էին եղելութիւնը: Ուրիշ կին մը, ազատուած տղուն մայրը, անոր վիզը նստուեցաւ հեծկլտալով, ու զայն տնօրէնին սենեակը տարաւ: Տիկին Ռօպէթիին յուսահատ աղաղակները լսեցինք. «Օ՛հ, ձիուլիօ՛, սիրական՛ն զուակս»:

Պահ մը ետքը կառք մը կայնեցաւ վանդակորմին առջեւ, տնօրէնը դուրս ելաւ վիրաւորուած տղան թեւերուն մէջ բռնած: Հէգ տղան բոլորովին տժգունած էր, աչքերը կիսավազ, գլուխը կը կռթնցնէր տնօրէնին ուսին վրայ: Ամէն ոք լռեց տղան տեսնելով: Միայն կը լսուէր տիկին Ռօպէթիին խեղդուած հեծկլտուքները: Տնօրէնը պահ մը կանգ առաւ սրահին մէջ, եւ վեր վերցուց տղան իբրեւ զայն ցոյց տալու համար ամէնուն:

Այն ատեն ուսուցիչ, վարժուհի, ծնողք եւ աշակերտ ամէնքն ալ գոչեցին. «Քա՛ջ Ռօպէթի, արի եւ հէ՛գ տղայ»: Ձեռքով պաշիկներ կը զրկէին իրեն. վարժուհիներն ու աշակերտները վիրաւորին քովն էին, անոր անշարժ պզտիկ ձեռքերը կը համբուրէին: Նա աչքերը բացաւ եւ մրմնջեց. «Ո՛ւր է թղթակալս»:

Ազատուող տղուն մայրը լալով ցուցուց անոր թղթա-  
կալը. « Ի՛մ քովս է, սիրելի տղաս, ըսաւ նա, ե՛ս պի-  
տի բերեմ զայն քեզիս »

Տիկին Ռօպէթի ժպտեցաւ երբ լսեց իր որդւոյն  
խօսիլը : Դուրս ելան : Վիրաւորը կառք դրուեցաւ զգու-  
շութեամբ, ձիերը մտրակեցին : Եւ մենք ամէնքս մը-  
տանք մեր դասարանները, յուզուած եւ լռին :

### ՊԶՏԻԿ ԳԱԼԱՊՈՒԱՅԻՆ

Շաբաթ 22

Երէկ իրիկուն մինչդեռ ուսուցիչը մեզի լուր կու  
տար խեղճ Ռօպէթիին վրայ, որ քիչ մը տտեն անթա-  
ցուպերով պիտի քալէ, տնօրէնը ներս մտաւ հետը  
նորեկ աշակերտով մը, թխադէմ տղայ մը, սեւ մազե-  
րով, խոշոր, արտայայտիչ աչքերով, որոնց թանձր յօն-  
քերը իրարու կը կցուէին գրեթէ. իր թխագոյն հա-  
գուստները, սեղմուած էին սեւ կաշիէ գօտիով մը :  
Պ. Բէնպօնին հետ ցած ձայնով խօսելէ յետոյ, տնօ-  
րէնը աղան անոր քով թողուց ու դուրս ելաւ : Նորե-  
կը խոշոր աչքերով մեզի կը նայէր, գրեթէ զարհու-  
րած արտայայտութեամբ մը : Վարժապետը անոր ձեռ-  
քէն բռնեց ու մեզի ըսաւ .

« Գո՛հ պէտք է ըլլաք, տղաքս, այսօր վարժարան  
կը մտնէ աշակերտ մը որ ծնած է Գալապոսայի Ռէճիօ  
քաղքին մէջ, ասկէ շատ հեռու, Իտալիոյ թագաւո-  
րութեան միւս ծայրը : Լա՛ւ ընդունեցէք այս նոր ըն-  
կերը. նա՛ զաւակ է փառապանծ երկրի մը, որ տուած  
է Իտալիային երեւելի մարդիկ, եւ կու տայ տակաւին

լաւ աշխատողներ : Իր երկիրը մեր հայրենիքին ամէնէն  
չքեղ զաւառներէն մէկն է. ահագին լեռներ կան,  
այն գաւառին մէջ, անտառներով ծածկուած, ու ա-  
նոր բնակիչները կարի ուշիմ են : Սիրեցէ՛ք զինքը,  
պզտիկ բարեկամներս, այնպէս որ նա շնչմարէ թէ իր  
ծնած երկրէն շատ հեռու է. ցոյց տուէք իրեն թէ ի-  
տալացի տղայ մը կը գտնէ եղբայրներ, բարեկամներ  
ամէն իտալական դպրոցի մէջ ուր մտնէ : »

Այս ըսաւ, Պ. Բէնպօնին սոքի ելաւ եւ ցուցուց  
Իտալիոյ քարտէսին վրայ թէ ո՛ւր կը գտնուի Գալապ-  
ոսայի Ռէճիօ քաղաքը : « Էռնէսթ Տէնօ՛սի » կանչեց  
իր ուժեղ ձայնով :

Տէնօսին (այն որ միշտ տառջին մրցանակը կ'ու-  
նենայ) սոքի ելաւ : « Հոս եկէ՛ք, » ըսաւ վարժապե-  
տը : Տէնօսին իր նստարանէն ելաւ ու մօտեցաւ ու-  
սուցչին սեղանին, Գալապոսայիէն երկու քայլ անդին :  
« Դուք դասարանին առաջինն էք, ըսաւ իրեն Պ. Բէն-  
պօնին, եւ իրրեւ այն՝ ողջագուրեցէք նորեկը ի դի-  
մաց ձեր համայն ընկերներուն, ողջագուրանք Բիէ-  
մօնթէի զաւակներէն Գալապոսայի զաւկին : »

Տէնօսին մօտեցաւ Գալապոսայիին եւ ըսաւ իր ա-  
ռոյգ ու յստակ ձայնովը . բար՛ի՛ եկար. յետոյ համ-  
բուրեց ուժով մը անոր երկու երեսները : Ամէնքս ալ  
սկսանք ծափ զարնել : « Լուութի՛ւն, գոչեց վարժա-  
պետը, դասարանին մէջ չեն ծափահարեր : »

Հակառակ այս արգելքին, լաւ կը տեսնուէր թէ  
գո՛հ էր մեր ցոյց տուած եռանդէն : Պզտիկ Գալապ-  
ոսային, ինք ալ գո՛հ կ'երեւար : Պ. Բէնպօնին տեղ մը  
ցուցուց անոր, հոն տարաւ ու ըսաւ նորէն մեզի .

Մէկզմէկ սիրեցէք եղբօր պէս. զի ո՛վ որ նախա-  
տէ այս նորեկ ընկերը, վասն զի Բիէմօնթէցի չէ նա,

անարժան պիտի ըլլայ աչքերը վեր վերցնելու . . . .  
 Հազիւ պզտիկ Գալապոսացիին իր տեղը տեղաւո-  
 բուեցաւ, որ իր քովը նստողները իսկոյն տուին իրեն  
 գրիչ, մատիտ, պատկեր. ետեւի նստարանէն աշակերտ  
 մը, զրկեց իրեն, իբր նշան բարեկամութեան, շուէ-  
 տական նամակադրոշմ մը :

ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐՍ

Երեւոսքի, 25

Աշակերտը որ պզտիկ Գալապոսացիին նամակադր-  
 րոշմ զրկեց ամէնէն աւելի հաւնածս է դատարանին  
 մէջ. անունը Կառօն է, ամէնէս մեծ է. տասնըջորս  
 տարու գրեթէ, գլուխը խոշոր, ուսերը լայն, Նա բա-  
 րի է, իր ժպիտէն կը տեսնուի: Մտածկոտ եւ խոհուն  
 կ'երեւայ միշտ: Հիմա բնկերներէս շատերը կը ճանչ-  
 նամ: Ուրիշ մըն ալ որուն շատ կը հաւնիմ, վասն զի  
 միշտ գոհ կերպարանք մը ունի, Գոռէթի կը կոչուի:  
 Զրազուէսի բուրդէ կրկնոց մը հագած է եւ կատուի  
 մորթէ գլխանոց մը դրած է: Որդին է փայտավաճա-  
 ռի մը որ ծառայած է 1866ին Հիւսպէս իշխանին բա-  
 նակին մէջ: Կ'ըսուի թէ երեք շքանշան ունի: Կայ  
 նաեւ պզտիկ Նէլին, խեղճ սապատող մը, որ խիստ  
 վտիտ ու փափկակազմ կ'երեւայ:

Ասոնց մէջ կայ մէկ մըն ալ, խիստ լաւ հագուած,  
 որ շարունակ հագուստին վրայ փակած թելերը կը  
 վերցընէ, անունն է Վօթինի: Իմ սաջեւիս նստարա-  
 նին վրայ կը գտնուի տղայ մը զոր կ'անուանեն ւ պըզ-  
 տիկ որմնագիրքը իր հօրը արհեստին պատճառով,

դէմքը խնճորի պէս կըր է եւ քիթը տափակ:

Նա՛ մասնաւոր տաղանդ մը ունի նապաստակի  
 դնչիկ ընելու, ամէն աշակերտները իրեն ընել կու  
 տան զուարճանալու համար: Կակուղ գլխարկ մը կը  
 դնէ, զոր ծալած գրպանը կը պահէ թաշկինակի պէս:

Պզտիկ որմնագրին քով կը գտնուի Կառօֆին, եր-  
 կայնահասակ եւ նիհար, սրածայր քիթով եւ խիստ փոքր  
 աչքերով: Մշտնջենական տուրեւաւ մը կ'ընէ գրիչնե-  
 բու, լուցկիի տուփերու. ու իր դասը կը գրէ եղունգ-  
 ներուն վրայ արտասանութեան տտեն ծածուկ կար-  
 դալու համար: Կայ նաեւ պզտիկ տղայ մը արհասար-  
 հոտ կերպարանքով. Գառլօ Նօպիս: Նա կը նստի եր-  
 կու աշակերտներու մէջտեղ, որոնք շատ համակրելի  
 են ինծի: մէկը դարբինի մը որդին, փաթթուած թիկ-  
 նոցի մը մէջ որ մինչեւ ծուռկերը կ'իջնէ, եւ այնքան  
 տոգոյն՝ որ հիւանդ կը կարծուի, իր ահաբեկ կեր-  
 պարանքով ու իր թախծալից ժպիտով, միւսը շէկ մա-  
 գերով, ուսընդ մէջով պատած է իր անդամալոյծ թեւը:  
 Հայրը Ամերիկա է եւ մայրը շրջուն պտղավաճառ: —  
 Զախ կողմն նստողն ալ հետաքրքրաշարժ տիպար մըն  
 է, Սթաուսի: Կարծուկ եւ հաստ, վիզը ուսերուն մէջ  
 մտած, անդադրում կը մուտայ եւ ոչ ոքի հետ չի խօ-  
 սիր. մեծ ուշիմութիւն չունի կարծեմ, բայց շատ ու-  
 շադիր է ուսուցչին ըսածներուն. մտիկ կ'ընէ անոր  
 առանց շարժելու, ակնապիշ, ճակատը փոթտած, ակ-  
 ուաները սեղմած: Եթէ մէկը սխալի հետը խօսի ու-  
 սուցչին դաս բացատրած ստեն, չի պատասխաներ.  
 Եթէ պնդես, ոտքի հարուած մը կու տայ. . . առանց  
 սակայն բառ մը ըսելու: Իր քովը դաժան եւ դար-  
 չիլի դէմք մը կայ, Ֆոռանթի անունին պատասխանող.  
 Նա կ'երեւեայ թէ թաղային ուրիշ վարժարանէ մը ար-

տաքսուած է արդէն, Կան նաեւ երկու եղբայրներ, միեւնոյն ձեւով հագուած, փասիանի փետուրով մը զարդարուած գլխարկով, եւ որոնք իրարու կը նմանին երկու ջուրի կաթիլի պէս:

Ասոնց մէջ ամէնէն սիրունը, ամէնէն ուշիմը, այն որ անտարակոյս առաջին մրցանակը պիտի առնէ այս տարի, Տէռօսին է: Վարժապետը որ այնպէս ըլլալը գուշակած է, միշտ կը հարցաքննէ զինքը: Ապահովապէս շատ կը սիրեմ Բուէքօսին՝ դարբինին որդին, այն որ երկայն թիկնոց մը կը հագնի եւ ցաւագար կ'երեւայ: Կ'ըսեն թէ հայրը կը ծեծէ, խեղճ պզտիկը: Վարկոտ է. ամէն ատեն որ մէկուն բան մը հարցնէ կամ մէկու մը դպչի. «Անտղարիւն» կ'ըսէ իր տխրանոյշ աչքերը վրան սեւեւելով: Բայց մեծ Կառօնը կարծեմ լաւագոյնն է:

### ՄԵԾԱՆՁՆՈՒԹԻՒՆ

#### Չորեքաբքի 26

Այս առաւօտ, լաւ մը, կրցանք դատել Կառօնը: Երբ դասարան մտայ, (քիչ մը ուշ, որովհետեւ վարը խօսքի բռնուեցայ ծաղկոցի վարժուհիին հետ, որ հարցուց ինծի թէ ո՞ր ժամուն կրնայ տուն գալ), Պ. Բէռայօնին տակաւին շէր եկած. երեք չորս տղաք կը չարչարէին խեղճ Գռօսին. — չէկ մագերով տղան, որուն թեւը անդամալոյծ է ու որուն մայրը պտղավաճառ է: Տղաքը կը զարնէին անոր քանակներով. շագանակի փոճոկներ կը նետէին գլխին. խեղանդամ յեշ կը կոչէին, ու կը ծաղրէին զայն: Նա միւս մինակ,

իր նստարանին ծայրը, սիրտը կոտրած կը նստէր լսելով, նայելով մէյ մը մէկին, մէյ մը միւսին, պաղատագին աչքերով, որպէս զի հանգիստ թողուն զինքը: Բայց դպրոցականները ա'լ աւելի կը չարչարէին զայն, այնքան որ սկսաւ դողալ ու բարկութենէն կարմրիլ: Յանկարծ, Փռանթին — այն որ չար դէմք մը ունի — նստարանի մը վրայ ելաւ, եւ, երկու թեւն ի վար մէյ մէկ կողով իբրեւ թէ անցուցած, ձեւացուց ընեւ Գռօսին մօրը պէս երբ նա կու գայ դպրոցին դուռը որդւոյն սպասելու: (Քանի որ է ի վեր եկած չունի, վասն զի հիւանդ է): Այս մեջկատակութիւնը տեսնելով՝ աշակերտները սկսան խնդալ: Այն միջոցին, Գռօսին, խելակորոյս, առաւ կաղամարը որ իր առջեւն էր ու բողբօւթովը նետեց Փռանթին: Բայց Փռանթին հարուածէն ազատեցաւ եւ կաղամարը գնաց զարնուեցաւ Պ. Բէռայօնին, որ ներս կը մտնէր:

1919

Ամէն աշակերտները ահաբեկ իրենց տեղը փախան, եւ լսեցին գիւթապէս:

Ուսուցիչը, դեփդեղին կտրած, գրասեղանին առջեւ նստաւ եւ այլայլած ձայնով հարցուց.

«Ո՞վ նետեց կաղամարը?»

Ոչ ոք պատասխանեց:

«Ո՞վ» կրկնեց Պ. Բէռայօնին աւելի բարձր ձայնով: Այն ատեն Կառօնը, ի գութ շարժած հէգ Գռօսին համար, ոտքի ելաւ եւ ըսաւ աներկիւղ.

«Ես նետեցի»: Վարժապետը անոր նայելէ յետոյ, նայեցաւ՝ զարմացած աշակերտներուն.

«Դուք չէք», ըսաւ, անոր հանդարտ ձայնով մը: Յետոյ պահ մը ետքը.

«Յանցաւորը չպիտի պատժուի, թո՛ղ ոտքի ելլէ», ըսաւ:

Գուօսին ոտքի ելաւ եւ ըսաւ լալով .

« Հետս կ'իյնային , իս կը նախատէին , խեղքս գըլլ-  
խէսս գնաց . . . Նետեցի :

— Նտեցէ՛ք , ըսաւ վարժապետը . անոնք որ  
գրգռեցին թո՛ղ անոնք ոտքի ելլեն . . . » յարեց :

Գրգռիչներէն չորսը ոտքի ելան գլխիկոր :

« Դո՛ւք նախատեցիք ընկեր մը որ ձեզի չէր գըլլգ-  
ռած , ըսաւ Պ . Բէնպօնին . ծաղրեցի՛ք խեղանդամ  
մը , յարձակեցա՛ք խեղճ տղու մը վրայ որ չի կրնար  
ինքզինքը պաշտպանել : Դո՛ւք գործեցիք ամէնէն ցած ,  
ամէնէն ամօթալի արարքը որ մարդուս հոգին կը սեւ-  
ցընէ . դուք վա՛տ էք : »

Այս ըսաւ , ուսուցիչը մեր մէջը եկաւ ու գնաց  
դէպի Կառօնը , որ անոր մօտենալը տեսնելով գլուխը  
ծռեց . Պ . Բէնպօնին ձեռքը անոր դունչին տակը դը-  
րաւ գլուխը վեր վերցնելու , եւ աչքին մէջը նայելու  
համար :

« Աղնիւ սիրտ մը ունիս դուն , » ըսաւ :

Կառօն , առիթէն օգուտ քաղելով , ծռեցաւ ու  
երկու բառ փոփոսաց ուսուցչին ահանջին : Ասի խորոյն  
դառնալով դէպի չորս յանցաւորները , ըսաւ անոնց  
խտտափոյթ .

« Կը ներե՛մ ձեզի : »

### Ա. ԴԱՍԱՐԱՆԻ ՎԱՐժՈՒՅԻՍ

Հինգօտքի 27

Փոքրագոյն դասարանի նախկին վարժուհիս խոս-  
տումը կատարեց , եկաւ մեզ տեսնել այսօր , ճիշդ այն  
միջոցին ուր դուրս պիտի ելլէի մօրս հետ , ձերմակե-

ղէն տանելու համար խեղճ կնոջ մը , զոր լրագրին մէկը  
յանձնարարած է հասարակաց գթութեան : Տարի մը  
կար որ վարժուհին չէր եկած մեզի , ու ամէնքս ալ  
չատ սիրով ընդունեցանք զինքը : Միշտ միեւնոյն պըզ-  
տիկ կնիկն է , գլուխը դրած՝ կանանչ թաւիչէ եզեր-  
քով գլխարկ մը , որ իրեն չի վայլեր , եւ հագուած՝  
առանց սեթեւեթի . վասն զի հազիւ ժամանակ ունի  
մագերը շտկելու , որոնք ձերմըկեր են անցած տար-  
ուընէ ի վեր : Ինք ալ տագուներ է , ու կը հագոյ միշտ .  
« Ձեր առողջութեանը հոգ չէք տանիր . ըսաւ ի-  
րեն մայրիկս :

— Ի՛նչ հոգս , պատասխանեց զուարթ ու միան-  
գամայն թախծարից ժպիտով մը :

— Շա՛տ բարձրաձայն կը խօսիք , ձեր աշակերտ-  
ներուն հետ , յարեց մայրիկս , կը յոգնիք :

Ատ իրաւ է , միշտ կը լսուի իր ձայնը , որ կը  
տիրէ ամբողջ դասարանին մէջ : Անդադար կը խօսի ,  
որպէս զի տղաքը անուշադիր չըլլան , եւ չի նստիր  
վայրկեան մը :

Ապահով էի թէ պիտի գոյ մեզի , զի երբեք չի  
մոռնար նախկին աշակերտները . անոնց անունը միտքը  
կը պահէ , եւ , քննութեան օրերը , տնօրէնին կ'երթայ  
հասկնալու համար թէ քանի՛ թիւ առեր են . դուրս  
ելլելու ատեն անոնց կը սպասէ , եւ կը նայի անոնց շա-  
րագրութիւնները , տեսնելու համար թէ յառաջդիմու-  
թիւն րրե՛ր են : Իր նախորդ աշակերտներէն շատերը ,  
որ երկար տարաւ կը հագնին եւ ոսկի ժամացոյց ու-  
նին — մէկ խօսքով՝ մեծ աշակերտներ եղած են —  
կու գան յիսկէն զինքը տեսնելու : Նա այսօր շնչաս-  
պառ կը դառնար պատկերներու թանգարանէն , ուր  
տարեր էր իր աշակերտները . զի ամէն հինգշաբթի կը

տանի զանոնք այս տեսակ հետաքրքրական բան մը տեսնելու, անոնց բացատրելով ինչ որ զիրենք կրնայ շահագրգռել կամ հրահանգել:

Հէ՛գ վարժուհի, աւելի նիհարցեր է: Սակայն միշտ եռանդոտ է, ու կ'ոգեւորի երբ իր դասարանին վրայ խօսի: Ուզեց տեսնել անկողինը, որուն մէջ իս տեսաւ երբ ծանր հիւանդ եղայ, երկու տարի առաջ, եւ հիմա այն անկողինը պզտիկ եղբօրս եղաւ: Յետոյ դնաց մեր տունէն, ստիպուած էր երթալու. գնաց որ տեսնէ իր դասարանէն տղայ մը, թամբագործի մը որդին, որ հարսանիթ եղեր է: Տակաւին ծրար մը գրաւոր պարտականութիւններ ունէր հետը սրբագրելու. ամբողջ իրիկուան մը աշխատութիւն, առանց հաշուելու թուարանութեան դաս մը զոր ունէր տալու, ճաշէն առաջ, խանութպանուհիի մը:

« Էյ նայի՛նք, Հանուի, ըսաւ ինծի, գացած ատենը, կը սիրե՛ս տակաւին վարժուհիդ, հիմա որ թուաբանութեան կնճառոտ խնդիրներ կը լուծես, եւ մեծ մեծ շարագրութիւններ կ'ընես: » Համբուրեց զիս, ու սանդուղին վարի. ծայրէն պոռաց.

« Զիս մի՛ մոռնար, Հանուի: »

Ո՛վ իմ ազնիւ վարժուհիս, չէ, երբեք, երբեք չպիտի մոռնամ ձեզ. երբ մեծնամ, պիտի յիշեմ ձեզ տակաւին եւ պիտի երթամ ձեզ գտնեմ ձեր պզտիկ աշակերտներուն մէջ տեղը: Ս.մէն անգամ որ անցնիմ վարժարանի մը առջեւէն, եւ լսեմ դաստիարակուհիի մը ձայնը, պիտի թուի ինծի լսել ձեր ձայնը. միաքս պիտի բերեմ երկու տարիները զորոնք անցուցի ձեր դասարանին մէջ, ուր այնքան բան սորվեցայ, ուր ձեզ տեսայ այնքան անգամներ յոգնած եւ ցաւագին, բայց միշտ ուշագիր, միշտ ներողամիտ. յուսահատ՝ երբ ա-

շակերտ մը ծուռ բռնէր գրիչը եւ չկրնար կորսնցնել այս յոռի սովորութիւնը. դողալով մեզի համար, երբ քննիչները մեզ հարցաքննէին. երջանիկ՝ երբ յաջողութիւն ունենայինք, միշտ բարի եւ գորովալից, մօր մը պէս: Երբեք, ո՛չ, երբեք չպիտի մոռնամ ձեզ, սիրելի՛ վարժուհիս:

## Մ Ա Ն Ս Ա Ր Դ Ի Մ Ը Մ Է Ձ

Ուրբաթ 28

Երէկ իրիկուն, գացի, մայրիկիս ու քօջա Սիլվիային հետ, ձերմակեղէն տանիլ յանձնարարուած հէգ կնոջը: Ծրարը ես կը տանէի, Սիլվիան գրեր էր հասցէն թուղթի կտորի մը վրայ եւ լրագրին նշանակած թշուառ արարածին անուան սկզբնատառերը: Խիստ բարձրաչէն տունի մը ամէնէն վերի յարկը ելանք: Նրբանցքի մը մէջ, ուր կարգաւ դուռներ կային, մայրս զարկաւ վերջինը: Դեռատի կին մը, խարտեաչ, նիհար, եկաւ դուռը բացաւ. ինծի թուեցաւ թէ արդէն տեսած էի զինքը, իր կապոյտ պերօզը գլուխը՝ « Լրագրին մէջ յանձնարարուած անձը դո՛ւք էք, հարցուց մայրիկս:

— Ա.յո, տիկին, ես եմ:

— Էյ լաւ, քանի մը կտոր ձերմակեղէն բերինք ձեզի: »

Խեղճ կինը անհատնում շնորհակալութիւն յայտնեց մեզի:

Ա.յն միջոցին տեսայ, մերկ ու մութ սենեակին մէկ անկիւնը աղայ մը, որ կռնակը դարձուցած էր մեզի:

աթոռի մը առջեւ ճնրադրած, կ'երեւար թէ կ'աշխատէր ջանասիրութեամբ: Թուզթը դրած էր աթոռին վրայ եւ կաղամարը տախտակամածին: Ի՞նչպէս կրնար աշխատիլ անանկ մութին մէջ: Մինչդեռ ես ինձի այս հարցունքը կ'ընէի, մէյ մըն ալ ճանչցայ Գոօսիին շէկ մագերը եւ մաշած կրկնոցը, պողպատաձառին տղան, որուն մէկ թեւը անշարժ է: Կամացուկ մը մայրիկիս ըսի, մինչ այն հէգ կ'ինը ծրարը կը քակէր զոր իրեն բերեր էինք:

« Զայն մի՛ հաներ, ըսաւ մայրիկս, թերեւս նուատութիւն համարի իրեն, երբ քեզ տեսնէ որ իր մօրը ողորմութիւն կու տաս. ճայն մ'ընե՛ր: »

Բայց նոյն պահուն Գոօսին ետին դարձաւ. շիտթած մնացի, ինք ժպտեցաւ ինձի, ու մայրս զիս դէպի անոր մղեց: Նա մօտեցաւ ինձի ձեռքերը երկնցուցած: Համբուրեցի զինքը:

« Տեսէ՛ք, կ'ըսէր անոր մայրը իմինիս, գաւկիս հետ մինակ եմ, ամուսինս Ամերիկա է վեց տարիէ ի վեր. եւ, ի լրումն դժբախտութեան, հիւանդ ինկայ. չեմ կրնար երթալ քաղաքը բանջարեղէն ծախել եւ քանի մը առ վաստկիլ: Քիչ քիչ ունեցածնիս ծախեցինք. սեղա՛ն մը անգամ չմնաց, որուն վրայ կարենայ գրել իմ խեղճ Լուիս իր պարտականութիւնները: Վարը դժբանքը տակ նստարան մը ունէի, գոնէ անոր վրայ կըրնար գրել, հիմա ա՛ն ալ չմնաց...: Ծրագ ալ չունինք. եւ խեղճ տղուն աչքերը կը վնասուին ասանկ մութին մէջ աշխատելով: Բարեբախտութիւն մըն է դարձեալ որ կրնամ զինքը թաղային վարժարանը զրկել, ուր կու տան իրեն գիրք եւ տետրակ: Հէ՛գ Լուի, ի՛նչ յօժարութեամբ պիտի ուսանէր, ա՛խ, շա՛տ դժբախտ եմ: »

Մայրս հէգ կնոջը ձեռքը դրաւ ինչ որ ունէր քսակին մէջ, համբուրեց Գոօսին, ու դուրս ելաւ վերնաշարիէն, աչքերը արցունքով լեցուն:

Շատ իրաւունք ունեցաւ ինձի ըսելու.

« Տե՛ս այս խեղճ տղան, որ պարտաւորուած է աշխատիլ ասանկ տխուր պայմաններով: Դուն որ ամէն պէտք եղածը ունիս աշխատելու համար, երբեմն ուսումը դժուար կը գտնես...: Ա՛խ, սիրելիս Հանուի, աւելի արժանիք կայ Գոօսիին մէկ օրուան աշխատութեան մէջ, քան քու մէկ տարուան աշխատութեանդ. ասանկներուն պէտք է տան առաջին մրցանակը: »

Հայրս լսել էր մօրս ըսած այս վերջին խօսքերը, ու նոյն օրը հետեւեալ նամակը կը գտնէի աշխատութեան սեղանիս վրայ:

## Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ը

Ուրբաթ 28

Այո՛, սիրելիս Հանուի, ուսումը քաժանեղի է քեզի համար, ինչպէս կ'ըսէր մայրք. դուն տակաւին չես երթար դպրոց այն որոշ քալուածքով եւ ծիծաղ դէմքով, ինչպէս որ կ'ուզեմ քեզ տեսնել: Բայց մտածէ՛ք քիչ մը ի՛նչքան օրդ պարա՛պ պիտի անցնէր, եթէ դպրոց չերթայիր. շարաթ՛ մը վերջը պիտի փափաքէիր անչուշտ նորէն հոն երթալ: Հիմա ամէն տղաք կ'ուսանին, սիրելի Հանուիս: Մտածէ՛ գործաւորներուն որ իրիկունը դպրոց կ'երթան, բոլո՛ր օրը աշխատելէ յետոյ. խորհէ՛ դեռատի աղջիկներուն վրայ որ դպրոց կ'երթան կիրակի օրերը, ամբողջ շաբաթը գործարան-

ներու մէջ զբաղած ըլլալէ յետոյ՝ զինուորներուն՝ որոնք գրեթէ եւ ուսանելու կը նստին երբ մարզանքէ կը դառնան : Մտածէ՛ համբ եւ կոյր տղոցը , որ անոնք ալ կ'ուսանին : Խորհէ՛ առտուն , երբ դուրս կ'ելլես , թէ նոյն ժամուն , նոյն քաղքին մէջ , երսուն հազար տղաք կ'երթան , քեզի պէս , երեք ժամ փակուիլ դասարանի մը մէջ ուսանելու համար : Մտածէ՛ նաեւ այն ամէն տղոց , որոնք , գրեթէ միեւնոյն ժամանակ , աշխարհի ամէն երկիրներուն մէջ , կ'երթան վարժարան : Երեւակայութեանդ մէջ բեր անոնք , որ կ'երթան գիւղերու արահետներէն , բազմամարդ քաղաքներու փողոցներէն , կիզիչ արեւին տակ կամ ձիւնին միջեւէն . մահոյցով՝ այն երկիրներուն մէջ ուր ջրանցներ կան . ձիով՝ ընդարձակ դաշտերու մէջ . սահնակով՝ սառին վրայ . հովիտներէն , բլուրներէն , անտառներու , եւ հեղեղատներու միջեւէն , լեռներու վրայ բացուած ամալի ճամբաներէն , մինակ , երկու հոգի կամ խմբով , երկար տողանցով , ամէնքը իրենց գիրքերը թեւերնուն տակ , հազար տեսակ հագուստներով , տարբեր տարբեր լեզուներ խօսելով , Ռուսիայի ձիւներու մէջ կորսուած յետին վարժարանէն , մինչեւ արմաւենիներու հովանիին տակ եղող Ափրիկեան յետին վարժարանը . . . : Միխոնաւոր տղաք , սորվելով ամէնքն ալ նոյն բանը տարբեր ձեւերու տակ :

Երեւակայէ՛ այդ դպրոցականներու միջնակոյտը հարիւր գանազան ժողովուրդներէ բազկացած , այն անհուն շարժումին որ կը մասնակցին , եւ ըսէ՛ դուն քեզի . « Եթէ այս շարժումը դադրէր , մարդկութիւնը պիտի իյնար վերստին բարբարոսութեան մէջ . այս շարժումն է յառաջդիմութիւնը , աշխարհի փառքը : »

ՀԱՅՐԳ

## ԲԱՏՈՒԱՅԻ ՊՁՏԻԿ ՏՂԱՆ

( ԱՄՍՕՐԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ )

Շաբաթ 29

Ձէ՛ , չպիտի ըլլամ վատ մը , սակայն շատ աւելի յօժարակամ պիտի երթայի դպրոց , եթէ ուսուցիչը ամէն օր մեզի ըսեր պատմութիւն մը այս առտուանին նման : Ամէն ամիս , նա ըսաւ մեզի , պիտի ըսէ նմանօրինակ պատմութիւն մը , ու մեզի պիտի տայ որ օրինակենք . եւ այն՝ պիտի ըլլայ միշտ՝ տղու մը կատարած գեղեցիկ արարքի մը պատմութիւնը :

Բասուացի պզտիկ տղան , այսպէս է այն պատմութեան վերնագիրը :

Սպանիական նաւ մը Պաուէլժոնիայէն կը մեկնէր ձենովա երթալու համար , Ֆրանսացիներ , Իտալացիներ , Սպանիացիներ , Զուիցերիացիներ կային նաւուն մէջ : Այս ճամբորդներու ամբոխին մէջ կը տեսնուէր տասնըմէկ տարեկան տղայ մը , գէշ հագուած , միշտ մէկուսի կեցած , եւ հոն գտնուողներէն իւրաքանչիւրին դժնէ նայուածք մը նետելով : Թերեւս անարդար չէ՛ր նա , երբ այսպէս կը նայէր ամէնուն , երկու տարի առաջ իր հայրն ու մայրը — Բատուայի շրջականերու գիւղացիներ , շատ ողորմելի մարդիկ , — դրամական նուէրէ մը հրապուրուած , զայն վարձու տուեր էին աճարարներու խմբի մը պետին , որ , քանի մը ճարտար գործեր ընել սորվեցնելէ յետոյ իրեն , հարուածներու զօրութեամբ , հեան ի վեր քաշկուտեր էր Ֆրանսայի եւ Սպանիայի միջեւէն , զայն խոշտանգելով անդադար ու կարելի եղածին չափ քիչ անուցանելով , Պաուէլժոնա հասնելուն , չկրնալով այլ եւս



հանդուրժել այնքան թշուառ կացութեան մը, հէգ տղան խոյս տուեր էր իր բռնաւորին ձեռքէն եւ լաւ գաղտփար մը ունեցեր էր երթալ ինքզինքը Իտալիոյ հիւպատոսին պաշտպանութեան տակ դնելու: Հիւպատոսը գթալով տղուն վրայ, անոր տուեր էր ձրի տոմսակ մը ճամբուն համար եւ նամակ մը ձենովայի քաղաքապետին ուղղուած, որպէս զի ան հոգ տանի տղան իր ծնողքին զրկելու, — իր ծնողքը որ գրեթէ զինքը ծախեր էին իրրեւ անասուն: Խեղճը, տառապագին տղայ, ցնցոտիներով ծածկուած էր: Երկրորդ կարգէն խցիկ մը տուեր էին իրեն նաւուն մէջ: Ծամբորդները իրեն կը նայէին, երբեմն կը հարցափորձէին: Բայց տղան չէր պատասխաներ: Կարծես թէ ամէնը կ'աւեր, զորկանքը ու խոշտանգանքը ա'յնչափ զայրացուցած եւ վայրենի ըրած էին զինքը: Սակայն, պնդելով սնդեւելով, երեք ճամբորդներ յաջողեցան թշուառ տղուն լեզուն բանալ: եւ նա՝ քանի մը բառով, կէս մը վեներտիկեան լեզուով, կէս մը սպանիտական, պատմեց իր պատմութիւնը: Այս երեք ճամբորդները Իտալացի չէին, բայց հասկըցան հէգ տղան թշուառութիւնը. եւ քիչ մը կարեկցութեամբ, քիչ մըն ալ ատեն անցընելու համար, հաւանեցան ստակ տալ իրեն զինքը խօսեցնելու համար: Այն միջոցին քանի մը տիկիներ մտան սրահը որուն վրայ կը բացուին երկրորդ կարգի խօսցերուն դռները, եւ երեք ճամբորդները, անշուշտ ականուելու համար, նորէն ստակ տուին պզտիկ Բատուացիին. «Ա՛ւ սա, ա՛ս ալ առ, » կ'ըսէին, նետելով արծաթ ստակները սեղանին վրայ:

Տղան, ստակները գրպանելով, շնորհակալ կ'ըլլար կիսաձայն, իր կոշտ բարբառովը, բայց ժպտագին եւ սիրակաթ նայուածքով մը: Յետոյ սարգեցաւ իր խցի

կը, վարագոյրները քաշեց ու անշարժ կեցաւ, խորհելով իր ընելիքին վրայ:

Այս ստակով, կը մտածէր նա, պիտի կրնար կշտանալ, ինք որ երկու տարիէ իվեր հազիւ ուտելու բան մը կը գտնէր: Ձենովա ելլելուն պէս վայելուչ հագուստ մը պիտի գնէր — հագածը երկու տարիէ իվեր վրան էր ու պատառ պատառ եղած էր. — կրնար նաեւ յուսալ, քիչ մը ստակ տանելով իր ծնողքին, լաւագոյն ընդունելութիւն մը գտնել անոնցմէ քան եթէ ձեռքերը պարտալ երթար: Աս ստակը իրաւցընէ իրեն համար հարստութիւն մըն էր: Աս ամէնը կը մտածէր, տարաբախտը, իր խօսցին մէջ, գոց վարագոյրներուն ետին. ու ինքզինքը նուազ ազգահասակի կը գտնէր...: Այս միջոցին, երեք ճամբորդները, սրահին մէջ տեղի սեղանին առջեւ նստած, կը խմէին ու կը խօսէին իրենց ճամբորդութիւններուն վրայ եւ այցելած երկիրներնուն վրայ: Իրենց խօսակցութիւնը եկաւ ինկաւ Իտալիայի վրայ: Իրենցմէ մէկը սկսաւ գանգատիլ պանդ սկներէն, մէկ ուրիշը երկաթուղիներէն, վերջապէս տաքնալով փոխադարձաբար սկսան գէշ ըսել այն ամէն բանի որ իտալական է: Առաջինը կ'ըսէր թէ՛ կը նախընտրէր ճամբորդել Լաբոններուն երկիրը. երկրորդը կը հաւաստէր թէ Իտալիայի մէջ խարդախ եւ աւազակ մարդոց միայն հանդիպած է. երրորդը կը յարէր թէ պաշտօնեաները բնաւ կարդալ չէին գիտեր: «Տգէտ ժողովուրդ մըն է, կ'ըսէր առաջինը: — Կեղտոտ, կը յարէր երկրորդը —: Գո...» գոչեց երրորդը: «Գոլ» պիտի ըսէր, բայց ժամանակ չունեցաւ: Դեղին ու ճերմակ ստակներու տեղատարափ մը թափեցաւ այս մարդոց վրայ, սեղանին ու տախտակամանին վրայ ցայտելով: Երեք ճամբորդները ոտքի

երան կատղած, նայելով թէ ո՛ւր կէ կրնար գալ այս հիւսքը, եւ սրտերու կարկուտ մը կերան նորէն:

«Ե՛տ առէք ձեր ստակը, կը պուար անոնց արհամարհանքով պզտիկ Բատուացին, որ բացեր էր խցիկին վարագոյրները: Չե՛մ ընդունիր անոնց ողորմութիւնը որ իմ երկիրս կ'անարգեն:»

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Գ

Ծ Խ Ա Ն Մ Ա Ք Ր Ո Ղ Ը

Երեւոյթքի 1

Երէկ իրիկուն աղջիկներուն կողմը գացի, (ձեր բաժանումին կիցն է) պզտիկ Բատուացիին պատմութիւնը տալու համար Սիլվիա քրոջս վարժուհիին, որ կը փափագէր կարդալ: Այն բաժանումին մէջ կան եօթը հարիւր աղջիկ: Երբ հոն հասայ, աշակերտուհիները կը սկսէին դուրս ելլել, ամէնքն ալ գոհ, նոյեմբերի առջի օրերուն արձակուրդին պատճառով:

Դպրոցին դէմը, փողոցին անդիւրի կողմը կը կենար պզտիկ ծխան մաքրող մը, թեւը պատին փակցուցած՝ ճակատը թեւին կռթնցուցած, սեփ սեւ մրտած էր, ինչպէս իր տոպրակը, աւելները եւ քերթիչը, ու անանկ կու լար, անանկ կը հեծկլտար որ սիրտ չէր դիմանար:

Երկրորդ դասարանէն երկու երեք գեւառի աղջիկներ իրեն մօտեցան ու հարցուցին թէ ինչո՛ւ այսպէս կու լար:

Բայց պզտիկ ծխան մաքրողը չէր պատասխաներ ու կը շարունակէր լալը:

«Ըսէ՛, ի՞նչ ունիս, ինչո՛ւ կու լաս:» կրկնեցին աշակերտուհիները:

Տղան թեւը վար առաւ, ցոյց տուաւ անուշ դէմքը, եւ պատմեց թէ զանազան ծխաններ մաքրելով շահեր էր երսուն սու զոր կորսնցուցեր էր, անզգուշութեամբ ծակ գրպանի մը մէջ դրած ըլլալուն...:

Սեղծ պզտիկը չէր համարձակեր դառնալ վարպետին խանութը առանց ստակի, այնքան կը վախնար որ կը ծեծուի:

Եւ սկսաւ ա՛լ աւելի լալ, թեւը ճակտին դնելով՝ յուսահատի մը պէս:

Պզտիկ աղջիկները իրարու նայեցան լրջօրէն, ուրիշներ մեծ ու պզտիկ կու գային խմբուիլ, դործաւորի աղքատիկ աղջիկներ եւ հարուստ օրիորդներ, իրենց դպրոցական թղթակալները թեւերնուն տակ: Անոնց մէջէն մէկը, երկայնահասակ մը, որ գլխարկին վրայ կապոյտ փետուր մը ունէր, գրպանէն երկու սու հանեց ըսելով.

«Երկու սու միայն ունիմ, բայց ժողովոյք մը ընենք:

— Ես ալ ունիմ երկու սու, ըսաւ ուրիշ մը, կարմիրներ հագած: Անչո՛ւշտ երսուն սու պիտի գտնենք մէջերնիս:»

Ու այն ատեն աշակերտուհիները սկսան կանչել. «Ս.մելի՛ — Լուի՛ղ — Աննա — սո՛ւ մը — ո՞վ ունի սու մը:»

Մէկ քանիները մանրուք ստակ ունէին տետրակ ու ծաղիկ առնելու համար: Ամէնքն ալ բերին փութով իրենց ունեցածը: Մէկ քանին, աւելի պզտիկնե-

րը ասնդիւններ նուիրեցին, Կապոյտ փետուրով աղջիկը հաւաքեց ստակը ու բարձր ձայնով համբեց:

« Ութը՛, տասը, տասըհինգ, բայց դեռ ե՛ւս պէտք է »:

Մեծ մանկամարդ աղջիկ մը եկաւ, որ կ'երեւայ թէ օգնական-վարժուհի էր, տասը սուր տուաւ: — Բոլոր աշակերտուհիները խանդավառ ընդունելութիւնք բրին անոր: Հինգ սուր կը պակսէր տակաւին:

« Ահա չորրորդ դասարանին աշակերտուհիները կու գան, անոնք սուր ունին », ըսաւ պզտիկ մը:

Չորրորդ դասարանը գալուն պէս՝ սուրք տեղացին: Աշակերտուհիները կը խռնուէին ծխան մաքրողին շուրջը. ու սիրուն բան էր տեսնել այն սեւ պըզտիկ մարդուկը այս անուշիկ աղջիկներուն մէջ տեղը, գոյնզգոյն հագուստով, ծածան մազերով, բաց գոյն փետուրներով եւ մետաքսէ ժապաւէններով:

Երսուն սուր իրականացած էր, ու տակաւին մանրուքները կը տեղային. պզտիկները որ ստակ չունէին, մեծերուն միջեւէն կը սահէին պզտիկ ծաղկեփունջեր բերելով, իրենք ալ բան մը տուած ըլլալու համար:

Յանկարծ դռնապանուհին վազեց եկաւ պուսալով:

« Տիկին տեսչուհի՛ն »:

Աղջիկները մէյ մէկ կողմ փախան գացին ճրնճը կններու երամի պէս:

Պզտիկ ծխան մաքրողը՝ փողոցին մէջ առանձին մնացած՝ աչքերը սրբեց: Չէ թէ միայն ձեռքերը սուրբողով լեցուեր էին, հապա նաեւ պզտիկ աղջիկները կրկնոցին օղակին մէջ, գրպաններուն մէջ, նոյն իսկ գլխարկին մէջ շատ մը պզտիկ ծաղկեփունջեր սահեցուցեր էին: Այսպէս ստակով եւ ծաղիկով լեփ լեցուն, ինքզինքը իշխանի մը չափ երջանիկ կը դտնէր:

## ԿԱՌՕՆ ԲԱՐԵԿԱՍՍ

Ուրբաթ 4

Երկու օր միայն արձակուրդ ունեցանք. եւ սակայն ինծի կը թուի թէ անհատնում ժամանակէ ի վեր Կառօնը չեմ տեսած: Գանի կը ծանօթանամ իրեն այնքան աւելի կը սիրեմ զինքը. ամէն ընկերներս նոյն համակրութիւնը կը զգան իրեն նկատմամբ, բացի չարերը, վասն զի Կառօն կը հակառակի անոնց չար արարքներուն. ամէն անգամ որ մեծ աշակերտներէն մէկը ուզէ պզտիկի մը հետ իյնալ կամ գայն չարչարել, պզտիկը Կառօնը կը կանչէ, ու մեծը կը ստիպուի հանդարտ կենալ:

Կառօնին հայրը մեքենավար է երկաթուղիի մէջ: Կառօն՝ երկու տարիի չափ հիւանդ եղած ըլլալուն՝ քիչ մը ուշ սկսած է դասի: Այսօր դասարանին ամէնէն մեծը եւ ամէնէն կորովին է. մէկ ձեռքով կրնայ վերցնել նստարան մը . . ., ասով հանդերձ բարի է . . .: Ի՛նչ որ խնդրեն իրմէ՝ զմեզի, մատիտ, խէժ, թուղթ, միշտ բարեյօժար սրտով փոխ կու տայ կամ կը նուիրէ: Գասի տան, չի խօսիր երբեք, ու երբեք ո եւ է աղմուկ չ'ըներ: Միշտ անշարժ՝ նստարանին վրայ, որ իրեն շատ նեղ կու գայ, կռնակը կըրցած՝ գլուխը ուսերուն մէջ՝ կը նստի: Երբ իրեն նայիմ, աչքերով կը ծիծաղի իբրեւ թէ ըսելու համար. « Բարեկամ ենք, չէ՞ Հանուի »:

Քիչ մը կը խնդան իր վրայ, վասն զի, լայն ու երկայն ըլլալուն, պարեգօտը, տարատը, թեւերը կարի նեղ ու կարի կարճ են իր հասակին համար. խոշոր կոշիկներ ունի, ու փողկապ մը չունի պէս վզին շուր:

ըը փաթթուած : Խեղճ Կառօն , հակառակ աս ամէ-  
նուն , բաւական է մէյ մը տեսնել զինքը սիրելու հա-  
մար : Սատասի կոթով դանակ մը ունի , զոր անցած  
տարի գտեր է հրապարակէն . օր մը այս դանակով  
խորունկ մը կտրեր է մատը , բայց դպրոցին մէջ ոչ  
ոք նշմարեր է , տունն ալ բան չէ ըսեր , ծնողքը դող  
չհանելու համար : Երբ կատակ ընեն բնաւ չի բար-  
կանար , բայց վա՛յ անօր որ իրեն ըսէ . « Մորս եւ աս , »  
երբ ինք բան մը հաստատել ուզէ : Աչքերը փայլակ  
կ'արձակեն ու բռունցքովը գրասեղանին կը զար-  
նէ ջախջախելու չափ ուժով : Անցած շաբաթ երկու  
սուր տուաւ առաջին դասարանի աշակերտներէն մէկուն ,  
որուն ստակը առեր էին եւ որ չէր կրնար գնել տետ-  
րակ մը : Հիմա շատ գրազեալ է գրելու ութը երես  
նամակ մը ծաղկանկար թուղթի մը վրայ : Իր մօրը տօ-  
նին համար է , երկայնահասակ ու գէր տիկին մը , խիստ  
համակրելի , որ յաճախ կու գայ սպասել զինքը դպրո-  
ցէն ելլելուն : Վարժապետը բարութեամբ կը նայի Կա-  
ռօնին , եւ ամէն անգամ որ նա անցնի քովէն պզտիկ  
սպտակ մը կու տայ երեսին աղապատանքով լեցուն :  
Իրաւցընէ շա՛տ կը սիրեմ Կառօն բարեկամս : Գոհ եմ  
իր խոշոր ձեռքը իմինիս մէջ սեղմելուս : Ապահով եմ  
որ իր կեանքը վտանգի կը դնէր ազատելու համար իր  
ընկերներէն մէկը , զոր պիտի պաշտպանէր բոլոր ու-  
ժովը . ասի աչքերուն մէջ անա՛նկ լաւ կը կարգացուի :  
Ձայնին հնչիւնը քիչ մը կոշտ է , բայց կը զգաս թէ  
այդ ձայնը ազնիւ ու վեհանձն սրտի մը արձա-  
գանգն է :

### ԱՄԻԱՎԱՃԱՌՆ ՈՒ ԱՋՆՈՒԱԿԱՆԸ

Նրկուսքքի 7

Ապահովապէս Կառօնը չպիտի ըսէր Պէթթիին ինչ  
որ Գառլօ Նօպիսը համարձակեցա՛ւ ըսելու անօր :

Գառլօ Նօպիսը մեծամիտ է , վասն զի հայրը ազ-  
նուական է եւ հարուստ : Պ. Նօպիս , բաւական երկայ-  
նահասակ , լուրջ եւ ազնիւ կերպարանքով մարդ մըն  
է , մօրուօք է նա , փառաւոր մօրուք մը սեւ . գրեթէ  
ամէն օր տղան ինք դպրոց կը բերէ :

Երէկ առաւօտ Նօպիսը կուռեր էր Պէթթիին հետ  
— ամէնէն պզտիկներէն մէկը , ածխավաճառին տղան  
— եւ , ինչ ըսելիքը չգիտնալով , վասն զի զգացեր էր  
թէ յանցանքը իրն է , գօչեց . « Քու հայրդ ստահակ  
մըն է : » Պէթթիին կաս կարմիր եղաւ . ոչինչ պատաս-  
խանեց . բայց աչքերը արցունքով լեցուեցան : Երբ  
տուն գնաց ցորեկուան ճաշի , զուրցեց հօրը Նօպիսին  
ըսածը : Ուստի ճաշէն ետքը , նայիս Պէթթիին հայրը ,  
կարճուկ մարդ մը սեփ սեւ , կու գայ կը գանգատի  
դասատուին : Մինչ նա իր գանգատը կ'ընէր , խոր լու-  
թեան մէջ , Նօպիսին հայրը , որ սովորականին համե-  
մատ կ'օգնէր տղուն վերարկուն հանելու դրանը առ-  
ջեւէն , լսեց ածխավաճառը որ իր անունը կու տար :  
Ներս մտաւ իրանալու համար թէ ինչ է խնդիրը :

« Այս բարի մարդն է , պատասխանեց Պ. Բէռպօ-  
նին , որ եկեր կը գանգատի , վասն զի ձեր Գառլօն ը-  
սեր է իր տղուն . « Քու հայրդ ստահակ մըն է : »

Պ. Նօպիս յօնքերը պոստեց ու քիչ մը կարմրեցաւ :  
« Իրա՞ւ է որ ըսիր ասանկ բան , » հարցուց իր որ-  
դիին :

Ասի կայսրած Գապարակին վե՛ր տեղը ճակատը խո-  
նարհած պզտիկ Պէթիին առջեւ, Հալատախանեց :

Հայրը թեւէն ըռնեց ու հրեց դէպի Պէթիին, այն-  
պէս որ երկուքը իրարու դպչին :

Հմի Յովնանի թիւնն ինձորքէ տրեւեց ընթացի շարսմ

Անձրատախանայր անգիտի մէջ մտնելը ըսկալով զԳէտի Գէտից

Բայց տեսնելով ինձորք մտիկ ուղիւնքն անհարկի կողմէն Գառնոյին .

- Նայա՛ն երողութիւնը ինձորքից : անգիտիս ինձ ընելիքն երես

ճիւղերու վրէճն էր ինձորքի մէջ Պէթիին մնալու . Գառնոյն

ինձորքն համարի զարտարտաւանայի ճորդը զԳէտից տրուէ

ձեռքը սեղմելը պէտքիւ պիտի հասկարչեմիս Գացրս ոյս միւս

ամբ Անձրատախանայր ընդ որ անարկի անտախարին ճիւղիւ ը-

հրացոյ թիւց : Պէթի Ետնիս կտայի զԳէտի ընկածին , անձորքին

պարտաւարեցնելու պէտքն ըստ ինձորքից Գացրս պարտիւն

մէջ կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից Գացրս

պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

Գացրս պարտիւն կրկնէ կրկնելու պէտքն : Գառնոյն ըստ ինձորքից

իմաստ Եթէնցէ չըլծնէ անիճե՛րս : հիմանկովն անարմար ինձ  
ըստարկիկ ինձորքն անարկիկ տարտիկ ընտելն իրովն էն ինձորքից  
ցիկ դասն է : Ե . . . յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

Հիմարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս յամբարնոս

ԵՂՐՐՍ ԴԱՍՏԱՐԱԿՈՒՄԻ

Հինգուսթի 10

կէն գներ է փոխանակ 2 թիւէն գներու : Եւ ասանկ յիսուն հատի չափ կան , որոնց պէտք է կարդալ , գրել եւ հաշուել սորվեցնել . . . :

Այս պղտիկ էակներուն իւրաքանչիւրը կը բերէ գրպանները դրած մատուտակի ճիւղեր , անսնուխի շաքարներ , կոճակներ , խիցեր , խիճեր . . . : Վարժուհին կ'ուզէ երբեմն գրպաննին խառնել , բայց անոնք իրեց գանձերը մինչեւ կօշիկնուն մէջ կը պահեն : Ուշադիր ըլլան գոնէ : Բնա՛ւ : Պատուհանէն ճանճ մը թէ ներս մտնէ , ամէնուն գլուխը վեր կ'ելլէ . . . : Ամառը ջրեակներ կը բերեն դպրոց , որոնք կը թռչին բզզալով կամ կ'իյնան կաղամարներուն մէջ , եւ , մէյ մը որ մեւանը թաթխուին , սեւ գիծեր կը քաշեն տետրակներուն վրայ : Դաստիարակուհին պէտք է մօր տեղ բռնէ այս փոքր աշակերտներուն . անոնց օգնէ հագուելու , ծակուած մասներնին լաթ փաթթէ , ինկած գլխանոցնին կապէ , ուշադրութիւն ընէ որ վերարկունին սխալ չհագնին . ապա թէ ոչ կու լան կը պրօան պըզտիկները :

Խեղճ վարժուհի , ու երբեմն ալ մայրերը գանգատի կու գան .

« Ի՛նչպէս կ'ըլլայ որ , օրիորդ , տղաս գրիչը կը կորսնցնէ : — Ի՛նչպէս կ'ըլլայ որ բան մը չի սորվիր : — Ինչո՞ւ բարենիչ չէք տուած իմինիս , որ այնքան լաւ կ'աշխատի : — Ինչո՞ւ վերցնել չէք տուեր նստարանին գամը , որ ի՛նչթուայիս նոր տարատը պատուեց : »

Երբեմն խեղճ վարժուհիին համբերութիւնը կը հասնի , կը յանդիմանէ իր պղտիկ աշակերտները , յետոյ կը գղջայ ու կը շոյէ տղան զոր յանդիմանած է . կ'ըսէ թէ այս ինչը դպրոցէն պիտի արտաքսուի , բայց անոր լալը տեսնելով կը կակուղնայ , եւ ծնողքները կը

կշտամբէ որ իրենց զաւակներուն ծով պահել կու տան զանոնք պատժելու համար :

Երկայնահասակ ու զեղեցիկ մանկամարդ աղջիկ մըն է Օր . Տէլքաթին , լաւ հագուած , եռանդոտ , դիւրագգած եւ գորովալիր :

« Բայց գոնէ տղաքը աղապատանք ունի՞ն ձեզի՞ համար , հարցուց մայրս :

— Այո . միայն թէ , հետեւեալ տարին , կը թողուն զիս , ուրիշ դասարան երթալու համար , եւ այլ եւս իմ երեսս չեն նայիր : Երբ այս պղտիկ ապերախտները այն դասարանները մտնեն , ուր ուսուցիչներ կան , ամօթ կը համարին կարծես թէ իմ ձեռքէս անցած ըլլալուն համար . հազիւ մեզի բարե՛ւ մը կ'ըսեն : Եւ միշտ ասանկ եղած է : Երկու տարի ամէն տեսակ հոգածութիւն ունենալէ յետոյ այն տղոց՝ զորոնք այնքան սիրած ենք , պէտք է թողուլ զիրենք ու մէյ մըն ալ չտեսնել : Մէկ քանիններուն վրայ ապահով ըլլալ կը կարծենք , կ'ըսենք մենք մեզի . « Ո՛հ , ասոնք պիտի սիրեն զիս միշտ : » Եւ արձակուրդը լիննալուն՝ անոնք ալ միւսներէն աւելի չեն մտածեր մեր վրայ :

« Բայց դուն անանկ չպիտի ըլլաս , անանկ չէ՞ պղտիկս . ըսաւ յանկարծ օրիորդ Տէլքաթին , ոտքի ելլելով որ համբուրէ պղտիկ եղբայրս : Քովէս անցած ատենդ գլուխդ անդին չպիտի դարձնես . դուն չպիտի ուրանաս քու խեղճ բարեկամուհիդ , քու բարի վարժուհիդ : »



օրէն յետոյ պտոյտ մը ընելու, դռնապանին անդրա-  
նիկ տղուն հետ: Խանութի մը առջեւ կեցած սայլակի  
մը քովէն կ'անցնէինք, երբ լսեցի որ կը կանչուիմ: Ե-  
տիս դարձայ: Գօռէթին էր, իմ գասընկերս, ջրաղուէ-  
սի բրդէ կրկնոցովը ու իր կատուի մորթէ գլխանոցո-  
վը: Արիւն քրտինք մտած էր ու գոհ կ'երեւար. ու-  
սին վրայ կը կրէր բաւական ծանր բեռ մը փայտի:  
Մարդ մը, սայլակին վրայ կայնած, կու տար անոր  
փայտի կոճղեր, որոնք հօրը խանութը կը տանէր. հոն  
կը կուտակէր զանոնք, յետոյ փութով կը դառնար  
կառքին քով:

« Ի՞նչ կ'ընես Գօռէթի, հարցուցի իրեն: »

— Ահա՛ կը տեսնես ինչ կ'ընեմ, պատասխանեց ին-  
ծի, թեւերը երկնցնելով բեռ մը առնելու համար,  
կ'աշխատիմ եւ միեւնոյն ժամանակ դասիս վրայէն  
կ'անցնիմ: »

Սկսայ խնդալ: Բայց Գօռէթին լրջաբար կը խօ-  
սէր, եւ, փայտը շարկելով հանդերձ, սկսաւ մրթմրթ-  
թալ գէպի խանութ վազելով. . . « Բայէրը թուով, եւ  
անձգով փոփոխութիւններ կը կրեն. . . »

Եւ փայտերը իրարու վրայ նետելով. « Ժանաւա-  
կին հաւեւես. . . Ժանաւակին որուն մէջ կը կասարուի  
գործողութիւնը. . . », շարունակեց:

Յետոյ նորէն մտենալով սայլակին ուրիշ գոգ մը  
փայտ առնելու համար.

« . . . Եղանակին հաւեւես, որով գործողութիւնը  
ի յայտ եկած է. . . » յարեց:

Այսպէս՝ կը սերտէր մեր հետեւեալ օրուան քե-  
րականութեան դասը:

« Ի՛նչ ընեմ, ըսաւ ինծի, ժամանակը օգտակար  
կերպով կը գործածեմ: Հայրս դուրս ելաւ մանչուն

հետ, ապսպրանք մը յանձնելու համար. մայրս հիւանդ  
է, պէտք է որ օգնեմ կառքը պարպելու համար: Ասի  
չ'արգիլեր որ սերտեմ քերականութիւնս: Գծուար դաս  
մը ունինք այսօր, չեմ կրնար գլխուս մէջ զետեղել  
զայն:

« Հայրս ըսաւ թէ եօթին հոս պիտի ըլլայ ձեզի  
վճարելու համար, » աւելցուց սայլապանին ուղղելով:

Կառքը մեկնեցաւ գնաց: « Խանութ մտի՛ր պահ  
մը, ըսաւ ինծի Գօռէթին: Վախնալով որ մերժումս  
իրեն տհաճութիւն պատճառէ, մտայ փայտով ու տըր-  
ցակներով լեցուն տեղ մը, ուր կը գտնուէր նժար մը  
դրան մօտը դրուած: »


« Այսօր շատ գործ ունեցայ, իրա՛ւ կ'ըսեմ, առաւ  
նորէն Գօռէթին. պարտականութիւններս կտոր կտոր  
կ'ընեմ: Նախադրութիւնները գրելու վրայ էի, երբ  
եկան ապսպրանք մը ըրին. . . : Նորէն կը սկսէի: Հա՛ւ,  
հիմա՛ ալ սայլապանը կու գայ. . . : Այս պահուս ա-  
դէն երկու անգամ փայտի շուկան գացի եկայ, վաճա-  
տիկ հրապարակը: Մունկերս անգգայ երկր են,  
ձեռքերս ալ ուռեր: Չէի՛ ուզեր զձեռքս թեպէ՛տ  
տականութիւնը ունենալ ընելու: »

Խօսելով հանդերձ, արիասիրտ տղան կ'աւելր,  
վերցնելու համար չոր տերեւները որ տախտակամածը  
կը ծածկէին:

« Բայց ո՞ւր կը գրես պարտականութիւններդ, Գօ-  
ռէթի, հարցուցի իրեն: »

— Հոս տեղ, եկո՛ւր տեսնես: »

Ներքնահրպակը տարաւ զիս, որ խոհանոցի եւ ճա-  
շարահի տեղ կը ծառայէր: Անկիւն մը, սեղանի մը  
վրայ, դրուած էին գիրքերը եւ սկսուած պարտակա-  
նութիւնները:







« Ահա մարմնամարդ մը շատ աւելի բարձր քան մղումը քեւերը առաջ կողմ ի, կ'ուզեմ որ հայրս բոլոր այս փայտը կտրուած գտնէ երբ դայ, այնքան գոհ պիտի ըլլայ դժբախտարար սղոցելէ ետք անք եւ կ'եր կը գրեմ որոնք օձի կը նմանին, ինչպէս կ'ըսէ ուսուցիչը: Ի՞նչ կրնամ ընել. պիտի ըսեմ իրեն ճշմարիտը. — Թեւերս յոգնեցնել պարտաւորեցայ եւ մատներս կը զգան ցաւը: Գլխաւոր խնդիրը այն է որ մայրս շուտով առողջանայ, եւ այսօր աւելի լաւ է, փա՛ռք Աստուծոյ: »

« Գալով քերականութեան, վաղը առտու կանուխ կը սորվիմ: Ա՛հ, ահա ածուխի կառքը, գործի՛ սկսինք: »

Սեւ պարկերով լեցուն սայլակ մը կանգ առաւ խանութին առջեւ: Գօռէթին գնաց մարդուն հետ խօսելու եւ դարձաւ:

« Հիմա, այլ եւս չեմ կրնար քեզ պահել, ըսաւ ինծի: Վաղը կը տեսնուինք, ու շնորհակալ եմ որ եկար քիչ մը տեսնուիլ հետս. լաւ պտոյտ մը ըրէ երջանիկ հանութիւն: »

Եւ, ձեռքս սեղմելով, վազեց շալակը առաւ առաջին պարկը, նորէն սկսելով երթալ գալ խանութէն սայլակը եւ սայլակէն խանութը. գոյնը պայծառ իր կատուի մորթէ գլխանոցին տակ, եւ միշտ անա՛նկ եռանդուն, անա՛նկ ուրախ, անա՛նկ փութկոտ, որ հաճոյք էր գինքը տեսնել:

Երջանիկ հանութիւն, ըսաւ ինծի: Ա՛հ, չէ, Գօռէթի, չէ, դուն ինծմէ աւելի երջանիկ ես. դուն կ'ուսանիս եւ կ'աշխատիս միանգամայն. դուն աւելի օգտակար ես հօրդ ու մօրդ, դուն աւելի քաջասիրտ ես քան զիս եւ հարիւր անգամ ինծմէ լաւագոյն, սիրելի՛ ընկերս:

### Տ Ն Օ Ր Է Ն Ը

Ուրբաթ 18

Գօռէթին գոհ էր այս առտու, վասն զի իր՝ երկրորդ դասարանի վարժապետը, Պ. Գօռթին, եկաւ ներկայ գտնուիլ իր ամսական քննութեան: Աս Պ. Գօռթին բարձր՝ հասակ մը ունի եւ գոռզ մազեր, թխագոյն աչքեր եւ ահաւելի ձայն մը: Միշտ տղոցը կը սպառնայ զիրենք պատժել տալ, ու նաեւ բանտը դընել, լայց ոչ զոք կը պատժէ եւ մօրուքին տակէն կը խնդայ աշակերտներուն ազդած վախին համար: Մեր Թագային վարժարանը ութը ուսուցիչ ունի, մէջը ըլլալով փոխ-գասաւու մը, պզտիկ եւ անմօրուս, որ խիստ երիտասարդ կ'երեւայ:

Գալով մեր տնօրէնին, երկայնահասակ է, ճաղատ գլուխ, ոսկի ակնոց կը դնէ, եւ գորշագոյն մօրուք մը ունի որ մինչեւ կուրծքը կ'իջնէ. իր լօղիկը միշտ կանոնաւորապէս կոճկուած է մինչեւ թուշը, եւ իսկոյն կը տեսնուի թէ բա՛րի է տղոց հետ: Երբոր ասոնք դողալով կը մտնեն իր սենեակը, դիտողութեան մը համար կանչուած, տնօրէնը չի յանդիմաներ վանոնք բնաւ. հապա անոնց ձեռքէն կը բռնէ, յետոյ կը յորդորէ վանոնք քաղցրութեամբ. կը բացատրէ անոնց թէ ի՛նչ պէտք էր ընէին. եւ, ընդհանրապէս, անոնք կը զզջան ըրած յանցանքնուն վրայ, խստամտալով որ չընեն ուրիշ անգամ: Վերջապէս իրենց հետ այնքան բարութեամբ եւ այնքան համոզիչ շեշտով կը խօսի, որ դըպրոցականները սենեակէն դուրս կ'ելլեն աչքերնին կասկարմիր եղած, աւելի ամօթահար՝ քան եթէ պատժուած ըլլային: Ազնի՛ւ տնօրէն. միշտ առաջին եկողն



քով, Ռօպէթին, հրեաանիներու գնդապետին որդին (այն որ հանրակառքին տակէն ազատեց տղայ մը, եւ որ հիմա անթացուպերով կը քալէ), ամէնքս ալ հոն էինք, զինուորականներուն տողանցը տեսնելու: Յրեանթին սկսաւ խնդալ տեսնելով զինուոր մը որ կը կաղար: Իսկոյն ձեռք մը զգաց ուսին վրայ: Փռանթին ետին դարձաւ ու տեսաւ մեր տնօրէնը:

«Փռանթի, ըսաւ, ծաղրե՛լ զինուոր մը որ կարգին մէջն է, ու չի կրնար ո՛չ պատասխանել, ո՛չ ինքզինքը պաշտպանել, կը նմանի անպատուել կապուած մարդ մը: ասիկա վատութի՛ւն կը կոչուի:»

Փռանթին անհետացաւ:

Ղինուորները կ'անցնէին, չորս չորս, քրտնաթոր եւ փոշիով ծածկուած: Իրենց հրացանները կը չողային արեւուն մէջ:

«Պէտք է զինուորները սիրէք, տղաքս, ըսաւ մեզի տնօրէնը, անոնք մեզ պաշտպանողներն են: Եթէ թշնամի բանակ մը մեր հողին սպառնար, անոնք վաղը կ'երթային մեռնիլ մեզի համար: Անո՛նք ալ տղաք են: քանի մը տարու ձեռնէ մեծ են: անոնք ալ դպրոցն են, զօրագունդին դպրոցը, եւ անոնց մէջ կան, ինչպէս մեր մէջ, տղքատներ եւ հարուստներ, որոնք եկած են Խտալիոյ ամէն կողմերէն: Նայեցէ՛ք, իրենց դէմքերէն կրնան ճանչցուիլ գրեթէ: Սիկիլիացիներ կ'անցնին, Սարտենիացիներ, Նարոլիցիներ, Լոմպարտացիներ: Այս զօրագունդը հին գունդ մըն է որ 1848ին պատերազմած է: Եթէ նոյն զօրքերը չեն այլ եւս, դրօշակը նո՛յնն է միշտ:

— «Ահա՛ դրօշակը» ըսաւ կառօն:

Արդարեւ կը տեսնուէր դրօշակը որ կը ծածանէր, ձերմակ, կանանչ, զինուորներուն գլխուն վրայ:

«Օ՛ն, տղաքս, ըսաւ նորէն տնօրէնը, յարգա՛նք մատուցէք բանակին, ձեր դպրոցական բարեւը տուէք, ձեռքերնիդ ճակատնուդ դրած, երբ անցնին երեք գոյները:»

Դրօշը, զոր սպայ մը կը կրէր, անցաւ մեր առջեւէն, հինցած, պատուտած, շքադրամ մը կապուած կոթին: Ամէնքս մէկտեղ ձեռքերնիս ճակատնուս տարինք: Սպան մեզի նայեցաւ, ժպտեցաւ, ու տուաւ մեզի զինուորական բարեւը:

«Ապրի՛ք, տղաքս:» ըսաւ ձայն մը մեր ետեւէն:

Ետեւնիս դարձանք, ու տեսանք ձերունի մը որ ժապաւէն մը կը կրէր իր լօգիկին լամբակին վրայ: Հանգստեան թողակի կօշուած սպայ մըն էր: «Ապրի՛ք, տղաքս, առաւ նորէն տնօրէնը, լաւ է ինչ որ կ'ընէք:»

Եւ մինչդեռ այս պատուական մարդը կը խօսէր, զօրագունդին դրօշակը կը ծածանէր հոն Գոռսոյին վրայ շրջապատուած բազմաթիւ տղոցմէ, որոնց զլարթագին ձայները զինուորական երաժշտութեան կը մասնակցէին:

## Ն Է Լ Լ Ի Ի Ն Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ը

Չորեքաբթի 23

Նէլլին ալ երէկ կը նայէր զինուորներուն անցնիլը: Ընդհ զգտիկ սապատող, տխուր կերպարանք ունէր եւ անշուշտ կ'ըսէր ինքնիրեն: «Երբեք չպիտի կրնամ զինուոր ըլլալ ես:» Հէգ տղան շատ կ'աշխատի, բայց այնքան նիհար եւ այնքան տժգոյն է որ իսկոյն շնչասպառ կ'ըլլայ: Մայրը կարճահասակ խար-

տեաշ կին մը, սեւեր հագած, արձակուրդի ատեն կու գայ կ'առնէ զինքը դարձողէն, որպէս զի բազմութեան մէջ չհրմշակուի։ Տեսնել պէտք է ինչպէս կը գգուէ զինքը։ Առջի օրերը աշակերտները կը ծաղրէին Նէլին ու իրենց պայուսակներով կը գործէին կոնսակին։ բայց ինք երմեք չէր զայրանար ու մօրն ալ բան չէր ըսեր, կ'ուզէր անկէ խնայել, լսելու ան վիշտը թէ իր որդին ընկերներուն նշաւակ եղեր էր։ Կը ծաղրէին Նէլին. ու խեղճ տղան կու լար լսիկ մեջիկ, ճակատը կռթընցուցած գրասեղանին վրայ։ Օր մը Կառօնը միջամտեց եւ ըսաւ դարձողականներուն։ «Ո՛վ որ Նէլին դպչի, գործ պիտի ունենայ հետս. անանկ հարուած մը պիտի տամ անոր որ երկար ատեն մտքէն չելլէ։»

Փռանթին բանի տեղ չգրաւ Կառօնին սպառնալիքները եւ հարուածը ընդունեցաւ. — հարուած մը որ երեք անգամ զինք իր վրայ դարձուց —։ Անկէ իվեր ոչ ոք այլ եւս անհանգիստ կ'ընէ Նէլին։ Պ. Բէռ-պօնին Կառօնը իր պաշտպանեալին հետ միեւնոյն նըստարանին վրայ նստեցուց ու անոնք զոյգ մը բարեկամներ եղան։ Նէլին կը պաշտէ Կառօնը։ Գասարանէն ներս մտնելուն պէս աչքով կը փնտռէ թէ Կառօնը կը տեսնէ՞, երբեք չի մեկնիր առանց անոր, ցտեսութիւն, ըսելու, Կառօնն ալ նոյն բանը կ'ընէ։ Երբ Նէլին գրիչ մը կամ գիրք մը ձգէ նստարանին տակ, Կառօն իսկոյն կը ծռի վեր վերցնելու համար, որպէս զի իր բարեկամը չյոգնի։ յետոյ կ'օգնէ անոր՝ գիրքերը թղթա-կալին մէջ դնելու եւ վերարկուն հագնելու։ Ահա ինչու համար Նէլին կը սիրէ Կառօնը եւ այնքան կը հրճուի երբ ուսուցիչը անոր գովեստ կ'ընէ։ Կարծես թէ իրեն իսկ կ'ուզղեն այդ գովեստները։ Տարակոյս չունիմ թէ Նէլին ամէն բան ըսած է մօրը. առջի օ-

րերուն հակառակութիւնները եւ իր բարեկամին միջամտութիւնը, զի ահա ինչ պատահեցաւ այս առաւօտ։

Պ. Բէռպօնին զիս զրկեց որ ժամանակացոյցը անօրէնին տանիմ, արձակուրդէն կէս ժամ առաջ, հոն էի երբ Նէլին մայրը ներս մտաւ։

«Որդւոյս դատարանին մէջ Կառօն անուռնով աշակերտ մը կա՞յ, հարցուց տնօրէնին։»

— Այո, տիկին։

— Կը հաճի՞ք վայրկեան մը հոս կանչել տալ զինքը. բան մը պիտի ըսեմ իրեն։»

Տնօրէնը դանապանը կանչեց ու պատուիրեց որ երթայ Կառօնը կանչէ, վայրկեան մը ետքը Կառօն եկաւ բոլորովին զարմացած տնօրէնէն կանչուելուն։

Հազիւ թէ Տիկին Նէլին տեսաւ պզտիկ տղան, վազեց իրեն, գլուխը ձեռքերուն մէջ առաւ ու քանի մը անգամ համբուրեց։

Դո՛ւն ես, Կառօնը, տղուս բարեկամը, խեղճ պրզ-տիկիս պաշտպա՛նը. դո՛ւն ես, սիրուն տղայ։»

Յետոյ, վիզէն քակելով ոսկի շղթայ մը ուրկէ կախուած էր խաչ մը, եւ զայն անցընելով Կառօնին վիզը.

«Ա՛ս այս պզտիկ յիշատակը, սիրուն տղայ, ըսաւ անոր, ա՛ռ զայն մօր մը ձեռքէ սր քեզ կ'օրհնէ ու շնորհակալ կ'ըլլայ քեզի։»

## ԴԱՍԱՐԱՆԻՆ ԱՌԱՋԻՆԸ

Կառօնը ամէն սիրտերը կը շահի եւ Տէոսօին ամէն բարենիշերը։ Առաջին մետաղը ստացաւ. եւ այս տարի դարձեալ առաջին պիտի ըլլայ։ Ոչ ոք կրնայ մրցիլ իրեն հետ, ամէն ճիւղի մէջ կը տեսնուի իր գե-

բակայութիւնը : Առաջին է թնւարանութեան մէջ , քերականութեան մէջ , շարագրութեան մէջ , գծագրութեան մէջ . ամէն բան կը հասկնայ արտաքոյ կարգի գլուխութեամբ , եւ վարմանալի յիշողութիւն մը ունի : Ամէն բանի մէջ կը յաջողի առանց ճգնելու , եւ կարծես թէ ուսուցիչ իրեն համար խաղ մըն է : Վարժապետը դեռ երէկ իրեն կ'ըսէր . « Դուք ի բնէ մեծ ձիրքեր ունիք , ջանացէ՛ք զանոնք չկորսնցնել : »

Իրաւցնէ , անկարելի է շնտախանձիլ իրեն , երբ մարդ կը զգայ թէ ամէն բանի մէջ անկէ ստորադաս է : Ա՛հ , վօթիւնիին պէս եմ , ես ալ կը նախանձի՛մ Տէնօսին : Իտաւութիւն կը զգամ , գրեթէ վիշտ . երբ առնը ըլլամ , պարտականութիւններս կատարելու , կը մտածեմ որ Տէնօսին իրենները արդէն ըրած լինցուցած է ու առանց մէկ սխալի եւ առա՛նց յոգնութեան . բայց երբ դասարան երթամ նորէն , ու տեսնեմ ընկերս ժպտուն , գեղադէմ , ու յաղթական . երբ լսեմ իր պատասխանները ուսուցչին հարցումներուն , պատասխաններ միշտ յստակ եւ մեկին , այն ատեն բոլոր գաւնութիւնը բոլոր վիշտը կը փարատի սրտէս , ու կ'ամէնամ այս տգեղ զգացումները զգալուս :

Կ'ուզէի անդադար իր քովը ըլլալ , բոլոր դասերս իր քովը պատրաստել , որովհետեւ իր ներկայութիւնը քաջութիւն եւ փափագ կու տայ աշխատելու , իր եռանդին մասնակցելով :

Պ . Բէնպօսին մեզի պիտի կարդայ վաղը մեր ամսօրեայ պատմութիւնը , զոր Տէնօսին տուած է օրինակելու , եւ որուն վերնագիրն է . Լուսպարտացի պղծօրիկ հեծեալ պահակը : Այս դիւցազնական գործը օրինակած ատեն , Տէնօսին աչքերը արցունքով լեցուն էին եւ շրթունքները կը դողդղային : Կը նայէի իրեն ,

եւ երջանիկ պիտի ըլլայի իրեն կարենալ ըսելու . « Տէնօսի , ինձմէ աւելի կ'արժես , դո՛ւն մարդ ես , համեմատաբար պզտիկ Հանուին , որ քեզ կը յարգէ ու կ'ուզէ քեզի նմանիլ : »

## ԼՕՄՊԱՐՏԱՅԻ ՊԶՏԻԿ ՇԵՄԱԼ ՊԱՀԱԿ

( ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՄՍՕՐԵԱՅ )

Շաբաթ 26

1859ին էր , Լուսպարտայի պատերազմին ատեն , քանի մը օր ետքը Սօլֆէալինոյի եւ Սան Մաթիոյի ճակատամարտէն , զոր Ֆրանսացիներն ու Իտալացիները վաստկեցան Աւստրիացիներէն : Յունիս ամսու գեղեցիկ առաւօտ մը , Սալիւսի հեծեալազօրներու պըզտիկ խումբ մը հանդարտաքայլ կ'երթար թշնամիին կողմը , ամայի ճամբէ մը , ուշագրութեամբ զննելով դաշտը . վաջտին հրամանատարութիւնը սալայի մը ու տամնապետի մը ձեռքն էր . անոնք կը նայէին հեռուն իրենց դիմացը , համր , եւ պատրաստ տեսնելու մէկ վայրկեանէն միւսը՝ թշնամիին յառաջխաղաց զինուորներուն ճերմակ համազգեստներուն երեւալը : Այսպէս հասան հացիներով շրջապատուած գեղջուկ տնակ մը , որուն առջեւ կը գտնուէր տաս տասներկու տարեկան մանչուկ մը , որ հացիի ճիւղ մը կը կեղեւէր դանակովը , գաւազան մը շինելու համար իրեն : Տանը պատուհանէն կը կախուէր եռագոյն լայն դրօշակ մը , ներսը այլ եւս մարդ չկար : Գիւղացիները , դրօշակը կապուելուն պէս , փախեր գացեր էին , Աւստրիացիներէն վախերնուն : Երբոր տղան հեծեալազօրները տեսաւ ,

գաւազանը ձգեց ու մտրթալը հանեց : Գեղեցիկ տղայ մըն էր՝ խարտեաչ մազերով, համարձակ դէմքով, խոշոր կապոյտ աչքերով լուսաւորուած : Շապիկով մըն էր կեցած, իր կուրծքը կ'երեւար շապիկին ձեղքին մէջէն :

« Ի՞նչ կ'ընես հոս, հարցուց իրեն սպան ձին կեցընելով : Ինչո՞ւ չես փախեր ընտանիքիդ հետ : »

— Ընտանիք չունիմ, պատասխանեց մանչուկը, ընկեցիկ տղայ մըն եմ : Կ'աշխատիմ անոնց համար որ կ'ուզեն ապրուստ շահեցնել ինձի : Հոս կեցայ պատերազմը տեսնելու համար :

— Աւստրիացիներուն անցնիլը տեսա՞ր :

— Ոչ, երեք՝ օրէ իվեր չտեսայ : »

Սպան պահ մը ինքզինքը ժողվեց . յետոյ ձիէն վար ցատկեց : Զինուորները թշնամիին կողմը դարձած թողլով, ինք մտաւ տնակին մէջ եւ տանիքը ելաւ : Տունը ցած էր, տանիքին բարձրէն կը տեսնուէր միայն դաշտին դոյզն տարածութիւնը :

« Պէտք է ծառերուն վրայ ելլել : » քաւ սպան վար իջնելով :

Ճիշդ տանը առջեւ կը կանգնէր շատ բարձր հացի մը, որուն գագաթը կը տատանէր երկինքին կապոյտին մէջ : Սպան մտախոհ մնաց, մէյ մը ծառին մէյ մը զինուորներուն նայելով, յետոյ յանկարծ .

« Հեռատե՞ս ես, պզտիկ, հարցուց տղուն : »

— Ե՛ս, հազար քայլ անդիէն կը տեսնեմ թռչունը :

— Կրնա՞ս այս ծառին գագաթը ելլել :

— Այո ծառին վրայ . երկու վայրկեանի գործ է ինձի համար :

— Եւ պիտի կրնա՞ս ինձի ըսել վերէն տեսածդ, թէ կա՞ն այս կողմը աւստրիացի զինուորներ, փոշիէ

ամպեր, ձիեր կամ հրացաններ որ փայլին :

— Անտարակոյս, պիտի կրնամ ըսել ձեզի :

— Ի՞նչ կ'ուզես այս ծառայութիւնը ինձի մատուցանելու համար :

— Ի՞նչ կ'ուզեմ, պատասխանեց տղան խնդալով, ի՞նչ պիտի ուզեմ, ոչ ի՞նչ . եթէ Աւստրիացիներուն համար ըլլար, ի՞նչ որ ալ տաք չեմ ըսեր . . . բայց մեր զինուորներո՞ւն համար . . . Լուսարտացի եմ ես :

— Կաւ, մագլցէ՛ ուրեմն :

— Վայրկեան մը, սա կօշիկներս հանեմ : »

Ոտքին ամանները հանեց, մէջքին գօտին ամրապընդեց, մտրթալը խոտին վրայ նետեց ու համբուրեց ծառին բունը :

« Ուշագրութիւն ըրէ : » բացագանչեց սպան, յանկարծական դողով մը բռնուած ի պէս :

Մանչուկը ետին դարձաւ, կապոյտ աչքերովը սպային նայելով, համր հարցումով մը .

« Ոչինչ, ըսաւ սպան, ելիր . . . »

Տղան մագլցեցաւ կատուի մը պէս :

Քանի մը վայրկեանէն տղեկը մեծ ծառին գագաթը հասած էր, ոտքերը տերեւներուն մէջ կորսուած, բայց մէջքէն վերը բացը : Արեւը կը զարնէր խարտեաչ գլխուն, որ սոկեզօծ ցոլքեր ունենալ կը թուէր : Սպան հազիւ կը տեսնէր զայն, այնքան պզտիկ կ'երեւար վերը :

« Ուղիղ դիմացդ նայէ հեռո՞ւն : » պոռաց սպան : Տղան, աւելի աղէկ տեսնելու համար, աջ ձեռքը ճիւղերուն մէջէն հանեց ուր կռթնցուցեր էր, եւ աչքին դէմը բռնեց :

« Ի՞նչ կը տեսնես : » հարցուց սպան :

Տղան հակեցաւ դէպի իրեն, եւ ձեռքը ձայնատար փող մը ձեւացնելով, պատասխանեց .

« Երկու ձիաւոր մարդ ճամբուն վրայ :

— Ո՞րքան հեռու հոսկէ :

— Հազար-հազար երկու հարիւր քայլ անդին :

— Վե՞ր կ'ելլեն :

— Կեցած են :

— Ուրիշ ի՞նչ կը տեսնես , հարցոց սպան վայր-  
կեան մը լուսթենէ յետոյ : Աջիդ նայէ : »

Տղան աջին նայեցաւ : Յետոյ ըսաւ .

« Գերեզմանատունին մօտ , ծառերու մէջ տեղ ,  
կայ բան մը որ կը շողայ , կարծես թէ սուրիններ են :  
Մարդ կը տեսնե՞ս :

— Ո՛չ , մարդիկը ցորեններուն մէջ պահոււրտած են : »

Այս միջոցին գնտակի մը սուր շառաչիւնը անցաւ  
օդին մէջ , ու գնաց ինկաւ շատ հեռուն տունին ետին :

« Իջի՛ր , տղայ , պոռաց սպան , տեսան քեզ , այլ  
եւս բան իմանալ չեմ ուզեր , իջի՛ր : »

— Ձեմ վախնար , պատասխանեց տղեկը :

— Իջի՛ր . . . կ'ըսեմ :

— Կեցէ՛ք , հունա՛՛ ձախիս կը տեսնեմ . . . : »

Տղուն խօսքը ընդհատեցաւ գնդակի ուրիշ շառա-  
չիւնով մը , որ աւելի վարէն անցաւ քան առաջինը :  
Տղան սարսուտց .

« Սատանի ձա՛դ Աւստրիացիներ , բացագանչեց ,  
աչքերնին ինծի է : »

Գնդակը ահանջին քովէն անցեր էր :

« Իջի՛ր շուտով , պոռաց սպան հրամայական ու  
գրգռուած ձայնով մը :

— Կ'իջնեմ , պատասխանեց տղան , բայց ծառը իս  
կը պահպանէ , անհո՞գ եղէք , կ'ուզէ՞ք գիտնալ թէ ի՞նչ  
կայ ձախ կողմը :

— Ձէ , պատասխանեց սպան , չէ՛ , իջի՛ր :

— Ձախ կողմը , պոռաց տղան , ան կողմին հակե-  
լով , ինծի կը թուի թէ մատուռին քովը . . . : »

Երրորդ գնդակ մը շառաչեց վերը . եւ խօսյն  
տեսնուեցաւ տղան որ վար կը գլորէր , ինքզինքը ծա-  
ռին կոճղին ու ձիւղերուն բռնեցնել ուզելով , յետոյ  
ինկաւ գլուխը վար , թեւերը բացած . . . :

« Անէ՛՛ք » գոչեց սպան վազելով :

Տղան տապալեցաւ կռնակի վրայ ու մնաց տարա-  
ծուած , թեւերը խաչածեւ : Դերձանի բարակութեամբ  
արիւն կը ցայտէր կուրծքէն : Տասնապետը եւ երկու  
զինուորներ ցատկեցին ձիերնուն վրայէն , մինչդեռ սպան  
տղուն վրայ ծռած շապիկը կը բանար : Գնդակը ձախ  
թոքին մէջ միտուեր էր : « Մեռե՛ր է , գոչեց սպան :  
Ձէ , կ'ա՛յրի , ըսաւ տասնապետը : Ա՛խ , խեղճ տղան ,  
քա՛ջ տղան , ըսաւ սպան , արիութի՛ւն , արիութի՛ւն : »

Բայց մինչդեռ անոր արիութի՛ւն կ'ըսէր ու թաշ-  
կինակը տղուն վէրքին վրայ կը դնէր , անիկա բացաւ  
աչքերը խոշոր խոշոր , որոնք անշարժ մնացին , ու իր  
գլուխն ալ ինկաւ անշարժ : Մեռած էր :

Սպան տժգունեցաւ ու զննեց պահ մը տղան՝ տա-  
րածուած խոտին վրայ : Յետոյ ոտքի ելաւ , մէյ մըն  
ալ նայեցաւ , մինչդեռ իր մարդոցմէն մէկ քանին ան-  
շարժ կը կենային իր քովերը : Միւս զինուորները թշնա-  
միին կողմը դարձած էին :

« Խեղճ տղայ , կրկնեց տխրութեամբ սպան , հէգ  
եւ արի՛ տղայ : »

Ու տունին մօտենալով , վերցոց պատուհանին  
վրայէն եռագոյն դրօշակը , եւ պատանքի պէս փռեց  
զայն պզտիկ մեռելին վրայ , երեսը բաց թողլով : Տաս-  
նապետը տղուն կօշիկները , գլխարկը , կիսատաշ գա-  
ւազանը ու զմելին առաւ քովը դրաւ . . . :



Սպանս պահ մը լուռ կեցաւ, յետոյ տասնապետին դառնալով.

« Աս տղան զինուորի պէս մեռաւ, շարժուն հիւանդանոցին զինուորները կը զրկենք որ գան թաղեն »

Աս ըսաւ, ձեռքովը համբոյր մը զրկեց պզտիկ մեռելին ու գոչեց .

« Զի՛ հեծէք »

Զինուորները հեծան, ու խուճիք շարունակեց իր ճամբան :

Քանի մը ժամ ետքը, պզտիկ մեռելը պիտի ընդունէր զինուորական պատիւները :

Արեւամուտին, Իտալական նախապահնորդ զինուորներու ամբողջ կարգը դէպի թշնամին կը յառաջանար :

Այն ճամբուն վրայէն ուր առտուն իսկ հեծելափորներ անցեր էին, երկու կարգի շարուած հրետաւորներու վաշտ մը կու գար :

Մանչուկին մահուան լուրը տարածուեր էր զինուորներու կարգերուն մէջ, բանակատեղին թողլէ առաջ : Վաշտին առաջին սպաները երբ տեսան պզտիկ դիակը հացիին տակ տարածուած, բարեւեցին զայն իրենց սուրերով, եւ անոնցմէ մէկը, ծռելով գետակի մը եզերքը որ կը վազէր հոն մօտը, ծաղիկներ փրցուց ու նետեց տղուն մարմինն վրայ : Այն ատեն բոլոր հրետաւորները, անցած ատեննին, իրենց պետերուն պէս ըրին ու ծաղիկներ նետեցին պզտիկին վրայ : Քանի մը վայրկեանէն ծաղիկներով ծածկուեցաւ մեռելը : Սպայ եւ զինուոր կը բարեւէին զայն :

## Ա Ղ Ք Ա Տ Ն Ե Ր Ը

Երեւոսքի 29

Կան առաքինութիւններ որոնք անտես առնելու չէ՞, զաւակս : Այս առտու, դպրոցէն դառնալու, երբ առջեւէս կ'երթայիր, անցար խեղճ կրնկան մը քովէն որ թեւերուն մէջ ունէր տժգոյն եւ փափկակազմ տղայ մը . կինը ողորմութիւն ուզեց քենէ : Դուն իրեն նայեցար, բան մը չտուած անցար գացիր, թէ եւ գրպանդ մանրուք ստակ ունէիր : Մտիկ ըրէ, տղաս, ինքզինքդ մի՛ վարժեցներ քեզի ձեռք երկնցընող թշուառութեան առջեւէն անտարբերութեամբ անցնելու, եւ մանաւանդ մօր մը առջեւէ որ քանի մը փարա կ'ուզէ իր զաւակին համար : Մտածէ՛ որ թերեւս ատ պզտիկ տղան անօթի էր, մտածէ խեղճ կնոջը անձկութիւնները : Կ'երեւակայի՞ս յուսահատ հեծկլտուքները զոր մայրդ պիտի արձակէր, եթէ պարտաւորէր օր մը ըսել քեզի . « Հանուի, հաց չունիմ որ քեզի տամ » երբ ես աղքատի մը ողորմութիւն տամ, չնորհակալ կ'ըլլայ ինձի, մաղթելով որ իմիններս եւ ես առողջ ըլլանք :

Ձե՛ս գիտեր ի՞նչ քաղցրութիւն ունին այս բառերը ինձի, եւ ի՞նչ երախտագիտութիւն կը զգամ այն աղքատին որ կ'ըսէ ինձի ասոնք : Ինձի կը թուի թէ այս մաղթանքը պիտի պահպանէ ամէն անոնք որ կը սիրեմ. ու տուն կը դառնամ աւելի գոհ սրտով, ես ինձի ըսելով :

« Այս աղքատը աւելի՛ տուաւ ինձի քան ես իրեն » Հաւատա՛, Հանուիդ իմ, ատեն ատեն պզտիկ քսակիդ մէջէն սու մը հանէ, զայն դնելու համար ա-

ուանց նեցուկի ծերունիի մը, առանց հացի մօր մը, կամ առանց մօր տղու մը ախին մէջ: Ազգատները կը սիրեն աղոց ըրած ողորմութիւնը, վասն զի զիրենք չի նուատացներ, վասն զի մանկութիւնը իրենց կը նմանի, մանկութիւնը որ ամէնուն կը կարօտի: Նշմարած ես որ միշտ ազգատներ կան դպրոցին շուրջը: Մեծ մարդու մը տուած ողորմութիւնը ողորմածութիւն մըն է, բայց մանուկի մը տուած ողորմութիւնը ողորմածութիւն մը եւ միեւնոյն ժամանակ գգուանք մըն է, կը հասկնանս: Իբրեւ թէ միեւնոյն ժամանակ իյնային իր ձեռքէն սու մը եւ ծաղիկ մը: Խորհէ՛ թէ ոչինչ կը պակսի քեզի, եւ թէ ամէն բան կը պակսի ազգատներուն: մինչդեռ դուն կը բաղձաս երջանիկ ըլլալ, առնք անօթութենէ չմեռնիլ միայն կը փախաքին: Ի՞նչ տխուր բան է մտածել որ այնքան հարուստ տուներուն մէջ, փողոցին մէջ ուրկէ կ'անցնին այնքան փառաւոր կառքեր եւ թաւիչէ զգեստներ հագած մանուկներ, կը գտնուին կիներ եւ մանուկներ որոնք ուտելիք չունին: Ուտելիք չունենա՛լ, Աստուած իմ...: Ո՛հ, այլ եւս մի՛ անցնիր մուրացող մօր մը առջեւէ, առանց ձեռքին մէջ սու մը դնելու:

ՄԱՅՐԳ

# ՊԵԿՏԵՄԲԵՐ

## ԱՌՈՒՏՈՒՐ ԸՆՈՂԸ

Հայրս կ'ուզէ որ ամէն արձակուրդի օր ընկերներէս մէկը տուն բերեմ, կամ ես անոր երթամ, որպէս զի քիչ քիչ բարեկամներ ունենամ:

Կիրակի պիտի երթամ պտղտիմ Վօթիւնիին հետ (այն որ միշտ այնքան լու հագուած է): — Այսօր Կառօֆին տեսայ, երկայնահասակ նիհարը որ ագուաւի կտուցի նման քիթ մը ունի, որուն պզտիկ աչքերը ամէն կողմ կը յածին: Դեղավաճառի մը որդի է: Զարմանալի տարօրինակ ա՛նձ մը այս Կառօֆին. շարունակ գրպանը ունեցած ստակը կը համրէ, մտաներուն վրայ կը համրէ ծայրայեղ արագութեամբ եւ որեւէ բազմապատկութիւն կ'ընէ առանց Պիւթագորեսան աղիւսակին պէտք ունենալու: Բոլոր իր սուերը կը պահէ, եւ արդէն խնայութեան արկղին մէջ հաշուեզրքոյկ մը ունի: Եթէ գրպանէն անսրիւն մը իյնայ նրատարանին վրայ, կորող է զայն փնտուել ժամերով: Անծեղի պէս կ'ընէ, կ'ըսէ Տէռօսին. կը հաւաքէ ինչ որ գտնէ. մաշած գրիչներ, սարուած նամակագրումներ, պարապ տուփեր, եւ այլն: Երկու տարիէն աւելի է որ նամակագրում կը հաւաքէ, ամէն երկրէն հարիւրաւորներ ունի, մեծ տետրոցի մը մէջ, զոր անշուշտ պիտի ծախէ յետոյ գրավաճառի մը, երբ որ հաւաքածոն ամբողջանայ: Առ այժմ, գրավաճառը Կառօֆինի կուտայ ձրի տետրակներ, վասն զի շատ մը յաճախորդ տղաք կը տանի անոր խանութը: Դպրոցին մէջ, ինչպէս որ ինք կ'ըսէ, միշտ առուտուր կ'ընէ. փոխանա-

կութիւն, վաճառում, վիճակահանութիւն: Կը զղջայ երբեմն ըրած փոխանակութիւններուն ու այն ատեն ետ կ'ուզէ սուածը, երկու սուրի գնածը չորս սուրի կը ծախէ. կը ծախէ նաեւ հին լրագիրներ ծխավաճառին: Ամէն ըրած առուտուրները գրուած են պղտիկ հաշուետետրակի մը մէջ. միայն թուանշաններ կը տեսնուին անոր մէջ. յաւելում կամ բարձում: Վարժարանին մէջ թուաբանութիւն միայն կ'ուսանի, եւ եթէ կը փափագի մետալ ստանալ, միայն անոր համար է, վասն զի այդ մետալը կ'արտօնէ իրեն ձրի մտնել խամաճիկներու պղտիկ թատրոնը: Կը հաւնիմ այս կառօֆիին, կը զուարճացնէ իս:

Սանութպան խաղացինք կշիռներով եւ նժարներով: Նա ամէն բանին գինը գիտէ, կշիռները կը ճանչնայ ու թուղթէ եղջիւրներ կը շինէ այնքան չուտ որքան նախարավաճառ մը: Դպրոցէն դուրս ելլելուն պէս, խանութ մը պիտի բանայ նոր վաճառականութիւն մը ընելու համար, որ ինք հնարած է: Ծատ գոհ եղաւ իրեն տուած օտար նամակագրոջմներէս, ու ըսաւ ինձի մօտաւորապէս իւրաքանչիւրին արժէքը, ժողովածոններու համար: Հայրս լրագիր կարգաւ կը կեղծէր անոր խօսածը մօտիկ ընելով, ու շատ կը զրօսնուր անկէ: Կառօֆիին գրպանները լեցուն են իր պղտիկ ապրանքներով, զորոնք կը պահէ մեծ սեւ պահարանի մը մէջ: Զբաղած եւ շատ գործ ունեցող մարդու կերպարանք ունի, ինչպէս են վաճառականները: Սակայն իր ամէնէն սիրած բանը նամակագրոջմի հաւաքածոն է: Ա'ն իր գանձն է, միշտ անոր վրայ կը խօսի, իբրեւ թէ անկէ հարստութիւն մը պիտի հանէ: Ընկերները ազահ եւ վաշխառու կը կոչեն զինքը: Ես անոնց կարծիքէն չեմ. ես կը սիրեմ զինքը, վասն զի նա ինձի

չատ բան կը սորվեցնէ, կատարեալ մարդու ազգեցութիւնը կ'ընէ ինձի: Գօռէթին, փայտավաճառին տղան, կը հաւաստէ թէ կառօֆին չպիտի տար իր նամակագրոջմները նոյն իսկ մօրը կեանքը ազատելու համար, եւ հայրս կ'ըսէր ինձի. «Սպասէ դեռ զանի դատելու համար»: Սակայն, այս շահախնդիր մոլութիւնը արգիլել չի թուիր զինքը սրտի տէր ըլլալէ:

### Ս Ն Ա Պ Ա Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

#### Երկու քաբի 5

Երէկ պտըտել գացեր էի Վօթինին ու իր հօրը հետ: Տօռա կռօսա փողոցէն անցած ատեննիս, տեսանք Սթառտին որ ստքի հարուածներ կու տար ընկերներուն, որոնք զինքը անհանգիստ ընելու դժբախտութիւնը ունէին: Գրավաճառի մը խանութին առջեւ կեցեր էր, աչքերը տնկած աշխարհագրական քարտէսի մը վրայ, (զի փողոցին մէջ անգամ կ'ուսանի), եւ հազիւ մեր բարեւը առաւ, պղտիկ շինականը: Վօթինին չափազանց վայելչօրէն հագուեր էր մանջու մը համար: Այժմնորթէ կօշիկներ հագեր էր, կարմիր կարերով, բանուած հագուստ մը եւ զարդարուած մետաքսով բանուած տրէզներով, ճերմակ թաղիէ գլխարկ մը եւ ոսկի ժամացոյց մը: Կը սիգա՛ր... սակայն իր ունայնամտութիւնը շատ գէշ պիտի յաջողէր այս անգամ: Քիչ մը ատեն ճամբուն վրայ վազելէ ետքը, մեր ետին շատ հեռուն թողով Պ. Վօթինին, որ յամրաքայլ կու գար, կանգ առինք, քարէ նստարանի մը առջեւ, համեստօրէն հագուած պղտիկ մանջուկի մը քով, որ յոգ-

նած կ'երեւար եւ կը հանգչէր, գլխիկոր: Մարդ մը — իր հայրը պիտի ըլլար — կ'երթար ու կու գար ծառերուն տակ, լրագիր մը կարդալով: Նստանք: Վօթինին նստաւ պզտիկ տղուն ու իմ մէջ տեղս, եւ ուզեց ինքզինքը զմայլել տալ քովինին:

Մէկ ոտքը վեր վերցնելով, ըսաւ. ինծի. «Տեսա՞ր սպայի կօշիկներս:»

Ապահովապէս այս խօսքը ըսաւ որ տղեկը նայի իր ոտքի ամաններուն. բայց անի բնաւ ուշադրութիւն չըրաւ:

Այն ատեն Վօթինին ոտքը վար առաւ, իր մետաքսէ տրէզները ցոյց տուաւ ինծի, եւ քովինին կողմը նայելով, ըսաւ ինծի, թէ այսօր սազարդերուն չէր հաւնեար եւ թէ անոնք պիտի վերցնէր ու տեղը արծաթ կոճակ պիտի դնել տար: Ի գո՛ւր, Գեռատի տղան աչքը անգամ վեր չվերցուց Վօթինին վրայ:

Ասիկայ սկսաւ այն ատեն մատին վրայ դարձնել գեղեցիկ ձերմակ թաղիէ գլխարկը: Բայց տղան, որ կարծես կամաւ կ'ընէր, արժան չսեպեց գլխարկին նայիլ:

Վօթինին, զայրացած, ժամացոյցը հանեց, բացաւ, ցուցուց ինծի անիւները: Քովերնիս նստողը ուշադրութիւն չըրաւ:

- «Ոսկեզօծուած արծաթ է, հարցուցի:
- Չէ՛, պատասխանեց Վօթինին, ոսկի է:
- Բայց բոլորովին ոսկի չէ, ըսի. արծաթ ալ կայ մէջը . . . .
- Չէ՛, կը վտահայնե՛մ:» Եւ որպէս զի պարտաւորէ տղան նայելու, ժամացոյցը անոր քթին տակ դըրաւ ու ըսաւ իրեն. «Ահա, նայեցէ՛ք, չէ՞ որ բոլորովին ոսկի է:

— Չեմ գիտեր, պատասխանեց տղան չոր կերպով:  
— Ո՛հ, ո՛հ, բացագանչեց Վօթինին բարկութեամբ, ի՛նչ հպարտութիւնս:»

Մինչդեռ այս կ'ըսէր, վրայ եկաւ Պ. Վօթինին, որ լսեց ըսածը: Ակնապիչ մեր քովի տղուն նայեցաւ, եւ յանկարծ ըսաւ իր տղուն. «Լուէ՛. յետոյ անոր ահանջին ծռելով յարեց. «Խեղճ տղան կո՛յր է:

Վօթինին այն ատեն տղուն դէմքը նայեցաւ, որուն ապակենման բիւրերը առանց արտայայտութեան էին:

Ապշտօմ, շուտաւ մնաց, աչքերը խոնարհած եւ մրմնջեց.

«Կը ցաւիմ . . . . Չէի գիտեր:»

Կոյրը, որ ամէնը հասկցեր էր, մեղանոյշ ժպիտով մը պատասխանեց.

«Ո՛հ, հոգ չէ . . . .»

Լա՛ւ, Վօթինին կրնայ ծանծաղամիտ ըլլալ, բայց գէշ սիրտ չունի, վասն զի ամբողջ պտոյտի ժամանակը մտախոհ մնաց:

ԱՌԱՋԻՆ ԶԻՒՆԸ

Շարաք 10

Մնաք բարո՛ւ պտոյտներ: Ահա մանուկներու գեղեցիկ բարեկամը, ձիւնը, որ կու գայ . . . . Երէկ իրիկուընէ իվեր խիտ խիտ կը թափի ան, խոչոր խոչոր ծուէններով, յասմիկ ծաղիկի չափ խոչոր: Այս ատու, դարձողին մէջ, հաճոյք մըն էր տեսնել որ ձիւնը կու գար կը զարնէր ապակիներուն ու կը դիզուէր տանիքներուն վրայ: Վարժ ապետը, ինք ա, կը նայէր ձիւ-

նին՝ ձեռքերը շփելով. ու ամէնքս ալ գոհ էինք, մտածելով մեր շինելիք ձիւնադնդակներուն, անկէ ետքը գալիք սառույցին ու կրակին որ պիտի վառէին տունը: Միայն Սթաուտին կար — բոլորովին զբաղած դասին, բռունցքը դրած քունքին — ուշադրութիւն չէր ըներ ձիւնին:

Ի՛նչ գեղեցիկ հանդէս դպրոցէն ելլելուս:

Ամէնքը կը գլտորէին փողոցին մէջ պուռալով, ձիւնը կը խառնէին ու մէջը կը քալէին, նման պլտիկ շուներու զոր ջուրին մէջ կը նետեն: Ծնողքները դուրսը կը սպասէին, անձրեւանոցներ ծածկուած էին ձիւնի հատիկներով, քաղաքային պահակին գլխանոցը ձեփ ձերմակ եղած էր ու մեր պայուսակներն ալ մէկ վայրկեանի մէջ ձերմիեցան: Ամէն աշակերտները հիացումի մէջ էին մինչեւ Բուէքօսին, թամբագործին որդին, տժգոյն տղեկը որ բնաւ չի խնդար, եւ Ռօպէթին, այն՝ որ տղան ազատեց հանրակառքին տակէն. դատկեց, խեղճ պղտիկը, իր անթացուպերով: Գալապուսցին, որ երբեք չէր տեսած այոջափ ձիւն գետինը ծածկուած, առաւ անկէ կծիկ մը շինեց ու կերաւ, ճիշդ իբրեւ թէ գեղձ մը ըլլար կերածը: Գուօսին, պողաՎաճառին որդին, ձիւնով լեցուց պայուսակը. եւ պղզտիկ սրմնագիրը ճաթեցաւ խնդալէն երբ հայրս հրաւիրեց որ վաղը մեզի գայ: Բերանը ձիւնով լեցուն էր, եւ չհամարձակելով ո՛չ դուրս հանել բերնինը ո՛չ կլլել, հոն կը կենար մեզի նայելով առանց կարենալ պատասխանելու: Վարժուհիները, անոնք ալ կը խնդային իրենց վարժարանէն դուրս ելլելով, իմ առաջին դասարանի վարժուհիս, ան իսկ խեղճուկը որ, կը վազէր ձիւնին մէջ ու կը հազար, երեսը պատուպարելով իր կանանչ քօղովը:

Քովի բաժանուժէն հարիւրի չափ տղաք եկան անցան պուռալով ու վազելով անարատ գորգին վրայ: Վարժապետները, դռնապանները ու պահակները կը պուռային. « Տուներնի՛դ գացէք, տուներնի՛դ գացէք: » Նուազ չէին խնդար, անոնք ալ, փախուստին վրայ այս դպրոցականներուն որ ձմեռը կը տօնէին:

« Դուք ձմեռը՞ կը տօնէք... ըսաւ հայրս: Բայց տղաք կան որ ո՛չ զգեստ ունին, ո՛չ կօշիկ, ոչ կրա՛կ: Կան հազարաւորներ որ գիւղերէ կ'իջնեն, երկար ճամբէ կու գան, ձմեռնակէն ուսեցած ձեռքերնուն մէջ բռնած փայտի կտորը որ դպրոցը պիտի տաքցնէ (\*): Հարիւրաւոր դպրոցներ կան գրեթէ թաղուած ձիւնին տակ, մերկ ու մթին քարայրի նման, ուր տղաքը հեղձամահ կ'ըլլան մուխէն կամ կը դադդղան ցուրտէն. ասոնք սոսկումով կը նային ձերմակ ծուկներուն որ կը թափին անվերջ, որ կը հաւաքուին անդադրում իրենց հեռաւոր խրճիթներուն վրայ, սպառնալով ձիւնակոյտ դառնալ: Տօնեցէ՛ք ձմեռը, տղաք, այդ լա՛ւ է, բայց մտածեցէ՛ք հազարաւոր տղոց՝ որոնց ձմեռը տառապանք կը բերէ: »

(\*) Տակաւին քանի մը երկիրներու մէջ, ինչպէս ասենով Ֆրանսայի մէջ, աւանդական սովորութիւն մը եղած է գիւղերուն մէջ, որ ամէն դպրոցական քաւական թուով փայտ սանի ձմեռը, դասարանը քարցնելու համար:

# ՊՁՏԻԿ ՈՐՄՆԱԴԻՐԸ

## Կիրակի 11

Պզտիկ որմնադիրը մեզի եկաւ այսօր, հագած էր ներքնակ մը, հօրը մէկ հին զգեստէն ձեւուած, որ կը պահէր տակաւին կիրի եւ գածի հեռքեր:

Հայրս, ինձմէ աւելի, կը բաղձար որ գայ, եւ իր այցելութիւնը մեզի մեծ հաճոյք պատճառեց: Հազիւ ներս մտած, մարթակը հանեց բոլորովին ձիւնով թըրջուած, ու դրաւ գրպանը. յետոյ առաջ եկաւ գործաւորի յոգնած քալուածքով, հոս հոն դարձնելով խնձորի նման կլորիկ դէմքը, իր տափակ քիթովը: Երբ ճաշատրահը մտաւ, ակնարկ մը նետեց կարասիներուն վրայ, եւ, աչքը տնկելով պատկերի մը որ Ռիկօլէթ-թօն կը ներկայացնէ, սապատող խեղկատակ մը, անոր ըրաւ նապաստակի դնչիկ մը: Անկարելի է խնդալը բռնել երբ մարդ տեսնէ պզտիկ որմնադիրն նապաստակի դնչիկ ընելը:

Սկսանք խաղալ ճարտարապետական խաղեր: Աս սիրելի պզտիկ որմնադիրը տարօրինակ ճարտարութիւն մը ունի կառուցանելու աշտարակներ, կամուրջներ որոնք կարծես հրաշքով կանգուն կը կենան. ասոնք կը շինէ պզտիկ մարդու մը լրջութեամբ եւ համբերութեամբ: Մէկ աշտարակը շինած ատեն, խօսեցաւ ինձի իր ընտանիքին վրայ: Իր ծնողքին հետ մանաւորքի մը մէջ կը բնակի. հայրը գիշերուան դասախօսութիւններու կ'երթայ կարգաւ սորվելու համար: Ծնողքը անշուշտ կը սիրեն զինքը, ասի ակներեւ է, զի իր խեղճուկ հագուստները լաւ կը պատասպարեն զինքը ցուրտէն, հոգ տարեր են անոնց մէջը աստառ անցընել, եւ

իր փողկապը կոկիկ կապուած է մօրը ձեռքով: Հայրը, ըսաւ նա ինձի, շատ երկայնահասակ է եղեր, գրեթէ հսկայ մը, դժուարութիւն կը կրէ դուռներէ անցնելու. բայց բարի է եւ միշտ իր սրբւոյն «նապաստակի դնչիկ» անունը կու տայ եղեր: Որդին հօրը հակառակ, կարճահասակ է:

Ժամը չորսին ակրատ ըրինք, բազմոցին վրայ նըստած, եւ երբ ոտքի ելանք, չեմ գիտեր ինչո՞ւ հայրիկս չուզեց որ սրբեմ յենարանը որուն վրայ պզտիկ որմնադիրին ներքնակը ձերմակ բիծ մը թողեր էր. ձեռքէս բռնեց, ու ետքը ինք սրբեց գաղտնապէս: Խաղացած ատեննիս որմնադիրը ներքնակին մէկ կոճակը կորսնցուց, մայրիկս կարեց զայն: Տղան կաս կարմիր եղաւ եւ լեզուն կապուեցաւ մօրս կարելը տեսնելով: Հէր համարձակեր շունչ առնել, այնքան ամօթահար եղեր էր մօրս իրեն համար առած աշխատութենէն: Ծաղրամկարի տեարոցներ տուի իրեն նայելու, եւ, առանց գիտնալու, կը նմանցնէր պատկերներուն ծամածուծութիւնը այնպիսի կատարելութեամբ մը որ հայրիկս անգամ սկսաւ խնդալ:

Անանկ գոհ էր իր անցուցած օրէն, պզտիկ որմնադիրը, որ մեկնած ատեն մտացաւ գլխարկը գլուխը դնելու: Գուլթիք հասնելուն, անշուշտ ցոյց տալու համար ինձի իր երախտագիտութիւնը, անգամ մը եւս ըրաւ «նապաստակի դնչիկ»ը: Այս տղան Անթուան Ռապինքօ կը կոչուի, ու թը տարու եւ ու թը ամուսն է...

— Գիտե՞ս, տղաս, ինչո՞ւ չուզեցի որ բազմոցը սրբես ընկերովք հոս եղած ատենը, ըսաւ հայրիկս, վասն զի իրեն յանգիմանութիւն մը պիտի ըլլար զայն ազտոտած ըլլալուն համար: Եւ աղէկ չպիտի ըլլար այդ, վասն զի ոչ թէ միայն կամաւ չըրաւ, այլ հա-

գուստը իրն ալ չէր, ազտոտեց բազմոցը այն հազուստ-  
 ներով զոր հայրը կրտսած է աշխատած ատեն, Աշխա-  
 տութեան նշանները միշտ յարգելի են: Փոշի է, կիր  
 է, ջրդեղ է, ինչ որ կ'ուզես է, բայց ազտեղութիւն  
 չէ: Աշխատութիւնը չ'ազտոտեր: Մի՛ ըսեր երբեք գոր-  
 ծաւորի մը համար որ աշխատութենէ կը դառնայ.  
 «Ազտոտ է»: — Պէտք է ըսես. «Իր զգեստներուն վրայ  
 աշխատութեան հետքերը կը կրէ»: Յիշէ՛ ասիկա, եւ  
 շատ սիրէ պզտիկ որմնագիրը, նախ վասն զի ընկերդ  
 է, յետոյ վասն զի աշխատողի մը որդին է:

## Ձ Ի Ի Ն Ա Գ Ն Դ Ա Կ Մ Ը

Ուրբաթ 16

Կը ձիւնէ, կը ձիւնէ՛ միշտ:

Յաւալի դէպք մը պատահեցաւ այս առաւօտ դըպ-  
 րոցէն ելլելնուս, ձիւնին պատճառաւ: Շատ մը տղաք,  
 հազիւ Գօռսոյի հրապարակը ելած, սկսան զնդակներ  
 նետել, այն թաց ձիւնէն շինուած որ կարծր ու ծանր  
 կ'ըլլան քարի պէս: Շատ մարդ կար մայթերուն վրայ:  
 Պարոն մը պոռայ. «Վերջացուցէ՛ք, չարածձիւննր»: »

Ճիշդ այն միջոցին փողոցին անդիի կողմէն սուր  
 ճիչ մը լսուեցաւ, եւ ձերունի մը տեսնուեցաւ որ կը  
 տատանէր, երեսը երկու ձեռքովը գոցելով, մինչդեռ իր  
 քովը տղայ մը կը կոչէր. «Օգնութի՛ւն, օգնութի՛ւն»: »

Իսկոյն, ամէն կողմէ վազեցին: Խեղճ մարդը աչ-  
 քին գնդակ մը կերեր էր: Դպրոցականներու ամբողջ  
 խումբը փախաւ: Ես, կը գտնուէի գրավաճառի մը խա-  
 նութին առջեւ, ուր հայրս մտեր էր, եւ տեսայ որ

ընկերներէս մէկ քանին կու գային վազելով, մէկ քա-  
 նին ալ կանգ առին եւ ցուցադիզկէն ներս նայիլ կեղ-  
 ծեցին: Կառօնը կար, գրպանը հացի կտոր մը դրած,  
 Գօռէթին, պզտիկ որմնագիրը, ու Կառօֆին՝ առու-  
 տուր ընողը:

Բազմութիւնը, այս միջոցին խմբուեր էր ձերու-  
 նին շուրջը, պահակ մը եւ անցորդներ կը վազէին  
 հոս հոն, սպառնալով եւ հարցնելով:

«Ո՞վ է: — Ո՞վ ըրաւ այս բանը, Ըսէ՛ք, ո՞վ է: »

Տղոցը ձեռքերը կը նայէին տեսնելու համար թէ  
 ձիւնով թրջուե՞ր էին, Կառօֆին իմ քովս էր: Նշմա-  
 րեցի որ կը դողար, ու ձերմակ լաթի մը պէս ձերմը-  
 կեր էր:

«Ո՞վ է, Ո՞վ տուաւ հարուածը. » կը շարունակէին  
 պոռալ:

Հսեցի Կառօնը որ կ'ըսէր Կառօֆիին.

«Օ՛ն, գնա՛ ինքզինքդ մատնէ. վատութիւն կ'ըլ-  
 լայ եթէ ուրիշ մը ձերբակալել տաս: »

— Բայց կամաւ չըրի՛, պատասխանեց Կառօֆին,  
 տերեւի պէս դողալով:

— Ի՛նչ որ է: Դուն պարտքդ կատարէ՛, կրկնեց  
 Կառօնը:

— Սրիութիւն չունիմ:

— Աներկիւզ եղիր, ես կ'ընկերանամ քեզի: »

Պահակը եւ ուրիշ մարդիկ կը պոռային միշտ ա-  
 ւելի ուժով:

Ո՞վ է արդեօք, ո՞վ է: Սրիկաները ակնոցին ա-  
 պակին աչքին մէջ մտցնել տուեր են, միականի ըրեր  
 են դայն: »

Կարծեցի թէ Կառօֆին գետին պիտի լյնար:

«Եկո՛ւր ըսաւ Կառօնը հաստատապէս, քեզ պիտի

պաշտպանեմ. » եւ , անոր թեւէն բռնելով , առաջ մղեց ,  
զայն բռնելով հիւանդի մը պէս :

Կառօֆին տեսնուելուն պէս , հասկցուեցաւ որ ան  
էր ընողը , ու քանի մը անձեր առաջ եկան բռունցք-  
նին վեր վերցուցած :

Բայց Կառօնը իր ընկերոջ առջեւը կեցաւ պոռալով .

« Տասը հոգի՞ պիտի կենաք մէկ տղուն դէմ »

Կառօֆները վար իջան , պահակ մը եկաւ Կառօֆին  
առաւ ու տարաւ , ամբոխին մէջէն , մինչեւ կրպակ մը ,  
ուր մտցուցեր էին վիրաւորուածը :

Չայն տեսնելուս , իսկոյն ճանչցայ ծեր պաշտօն-  
եան որ մեր տանը մէջ կը բնակի , չորրորդ յարկը . իր  
պզտիկ քեռորդին կ'ընկերանար իրեն : Աթոռի մը կրու-  
թըներ էր արմուկովը , թաշկինակը աչքերուն դրած :

« Կամաւ չըրի , կ'ըսէր հեծկլտալով Կառօֆին , վա-  
խէն կէս մեռել դարձած : Կամաւ չըրի՞ »

Երկու երեք հոգի ուժով մը մղեցին զինքը խա-  
նութիւն մէջ պոռալով .

« Ներողութի՛ւն խնդրէ ծնրադ իր »

Բայց իսկոյն երկու զօրեղ բազուկներ Կառօֆին  
ոտքի կախնեցուցին եւ հաստատ ձայն մը ըսաւ .

« Ո՛չ , պարոններ »

Այս ըսողը մեր անօրէնն էր , որ ամէն բան տե-  
սեր , ամէն բան իմացեր էր :

Կառօֆին հեծկլտաւ մըն է փրցուց , ծերունիին  
ձեռքերը համբուրելով . անիկա խարխափելով փնտռեց  
զղջացող տղուն գլուխը եւ անոր մազերը շոյեց :

Ամէն մարդ ըսաւ Կառօֆիին .

« Գացէ՛ք , տղաս , ձեր տունը դարձէք »

Հայրս իս քաշեց բազմութեան մէջէն , եւ ըսաւ  
ճամբան երթալով .

« Հանուի , նմանօրինակ պարագայի մը մէջ , քաջու-  
թիւն պիտի ունենայի՞ր երթալ յանցանքը խոստովա-  
նելու : » — Այո՛ » պատասխանեցի :

« Սրտի եւ պատուոյ տէր տղու խօսքդ տո՛ւր ինձի  
թէ այնպէս պիտի ընես , ըսաւ ինձի :

— Խօսք կու տամ քեզի , սիրե՛լի հայրիկս : »

## Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի Ն Ե Ր Ը

Շաբաթ 17

Կառօֆին բոլորովին վախկոտ էր այսօր , գանգա-  
նակ մը կը սպասէր ուսուցչէն : Բայց Պ. Բէնպօնին չե-  
կաւ , եւ փոխանորդը նոյն պահուն հոն չըլլալուն , տի-  
կին Գոօմին , վարժուհիներուն ամէնէն տարիքոտը ե-  
կաւ դասախօսելու : Տխուր էր նա , վասն զի մէկ որդին  
հիւանդ է : Հագիւ թէ դասարան մտած էր , տղաքը  
սկսան աղմուկ ընել : Նա , այն ատեն , իր յամր եւ հան-  
դարտ ձայնով ըսաւ մեզի .

« Ճերմակ մազերս յարգեցէ՛ք : Ես միայն վարժու-  
հի չեմ , այլ մայր մը : »

Ոչ ոք համարձակեցաւ այլ եւս բերան բանալ ,  
նոյն իսկ անպատկառ Գոանթին . նա գոհացաւ գաղ-  
տուկէն զայն ծաղրելով :

Տիկին Գոօմին դասարանը Օր. Տէլքաթին ղըր-  
կուեցաւ , եղբորս վարժուհին , եւ այս վերջինին տեղ  
ղրկուեցաւ այն վարժուհին , որուն հոս « Պզտիկ մայ-  
րապետ » անունը կու տան , վասն զի միշտ մութ գոյ-  
ներ կը հագնի : Իր դէմքը ձերմակ եւ փափուկ է , մա-  
զերը կոկիկ , աչքերը պայծառ , եւ իր անուշ ձայնը



կարծես աղօթքներ մրթմրթալու համար եղեր է: Սա-  
կայն, այն անուշ ձայնով, գիտէ հանդարտ կեցնել բո-  
լոր իր պզտիկ մարդիկը. ամէնէն անհանդարտներն ալ  
չեն համարձակիր բնաւ իր դիմացը տեղերնուն շարժիլ:

Ուրիշ վարժուհի մը կայ, որուն շատ կը հաւնիմ,  
տարրական առաջինին Յ թիւ դասարանին վարժուհին  
է այն, վարդագոյն դէմքով, դեռատի կին մը որ եր-  
կու փոսիկներ ունի այտերուն մէջ տեղը, եւ կարմիր  
փետուրով գլխարկ մը կը դնէ: Միշտ շէնչող է ան,  
զուարթ կը բռնէ դասարանը, ու միշտ կը ժպտի: Լուռ-  
թիւն պատուիրելու համար անդադար գրասեղանին  
կը զարնէ քանակովը, կամ երկու ձեռքը իրար կը զար-  
նէ: Երբ տղաքը դուրս ելլեն, ետեւնուն կը վազէ զա-  
նոնք կարգի դնելու. մէկին օձիքը կը շտկէ, միւսին  
վերարկուն կը կոճկէ, աշակերտներուն ետեւէն կ'եր-  
թայ փողոցը, որպէս զի մէկզմէկու հետ շկուռին, կ'ա-  
ղաչէ ծնողքներուն որ չպատժեն զանոնք տունը, հա-  
զացողներուն բլիթ (pastille) կը տանի, ձեռնամուշտա-  
կը (manchon) կու տայ մտղներուն . . . : Ծարունակ  
պաշարուած է պզտիկներէն, որոնք կ'ուզեն զինքը շո-  
յել եւ համբուրել, քօղը կամ կրկնոցը քաշելով: Կը  
թողու որ ընեն, գգուանքով կը պատասխանէ անոնց  
գգուանքին. իր աղու ժպիտը փոսիկներ առաջ կը բե-  
րէ այտերուն վրայ: Այս սիրուն վարժուհին, որ մի-  
եւնոյն ժամանակ գծագրութեան ուսուցիչ ալ է, իր  
աշխատութեամբը մայրն ու եղբայրը կը պահէ:

### ՎԻՐԱԻՈՐԵԱԼԻՆ ՏՈՒՆԸ

Կիրակի 18

Քեռորդին ծերունի պաշտօնեային — այն որ ձիւ-  
նագնդակէ մը զարնուեցաւ — կը գտնուի դասարա-  
նին մէջ այն սիրուն վարժուհիին որուն վրայ խօսեցայ  
հիմա: Տեսանք զինքը այսօր, նա կը բնակի մօրեզրօրը  
հետ, որ իր գաւկին պէս կը մեծցնէ վայն: Գրեր լմնցեր  
էի ամսական պատմութիւնը զոր մեզի պիտի կարդան  
գալ շարթու. վերնագրուած. Ֆլորանցի պզտիկ գրա-  
գիրը, երբ հայրս ըսաւ ինձի:

«Չորրորդ յարկը ելլե՛ք, ծեր պարոնին վրայ լուր  
առնելու:» Մտանք գրեթէ մութ սենեակը ուր ծե-  
րունին նստած էր անկողնին մէջ, բարձերու կոթնած:  
Իր կինը անկողնին սնարը կեցած էր, եւ սենեակին  
մէկ անկիւնը իր պզտիկ քեռորդին կը խաղար: Ծերու-  
նիին աչքը կապուած էր: Ծատ գոհ եղաւ հայրս տես-  
նելուն, նստեցուց մեզ, եւ ըսաւ թէ աւելի աղէկ էր:  
աչքը չէ կորսուեր, քիչ օրէն պիտի առողջանայ:

«Աղետալի պատահար մը եղաւ աս, յարեց, կը  
ցաւիմ խեղճ տղուն կրած վախին. . . : Յետոյ խօսեցաւ  
բժշկին վրայ որ զինքը զարմանել կու գար:

«Ա՛հ, անշուշտ ինքն է,» ըսաւ, դրանը զարնուի-  
լը լսելով:

Դուռը բացուեցաւ. . . : Ո՛վ տեսնեմ աղէկ, կառօ-  
ֆին՝ իր մեծ վերարկուին մէջ պլլուած, շիփ շիտակ  
դրան սեմին վրայ կեցած, գլխիկօր, չէր համարձա-  
կեր ներս մտնել:

«Ո՛վ է, հարցուց ծերունին:

— Զիւնագնդակ նետող տղան է, մրմնջեց հայրս:

— Եկուք, խեղճ տղայ, ըսաւ ծերունին, ձեռքը  
Կառօֆին երկնցնելով, եկած ես վիրաւորեալէն լուր  
առնելու, անանկ չէ՞: Աւելի լաւ է, հանդիստ եղիր,  
գրեթէ առողջացած եմ. . . . »

Կառօֆին, ամօթահար, անկողնին մօտեցաւ, ջա-  
նալով որ չլայ: Ծերունկը կը շոյէր զայն, բայց ինք չէր  
կրնար բառ մը արտասանել, այնքան յուզուած էր:

«Շնորհակալ եմ որ եկար, շարունակեց վիրաւոր-  
եալը, գնա ըսէ՛ հօրդ եւ մօրդ թէ լաւ վիճակի մէջ  
եմ եւ թո՛ղ անհանգիստ չըլլան: »

Կառօֆին չէր խլրտար, իրեւ թէ ծանրակշիւ  
բան մը ունէր սրտին վրայ եւ չէր կրնար ըսել:

— Ի՞նչ կ'ուզես, ի՞նչ ունիս ինձի ըսելու, հար-  
ցուց ծերունին:

— Ե՛ս. . . ոչի՛նչ:

— Էյ ուրեմն, ցտեսութիւն, տղաս կրնաս երթալ  
հանդարտ մտքով: »

Կառօֆին դէպի դուռը ուղղուեցաւ: Բայց հոն  
հասնելուն կանգ առաւ, եւ, դառնալով դէպի պզտիկ  
քեռորդին, որ իրեն կը նայէր հետաքրքրութեամբ,  
յանկարծ հանեց վերարկուն տակէն առարկայ մը զոր  
դրաւ տղուն ձեռքին մէջ ըսելով. « Բեզի համար է: »

Յետոյ աներեւութացու փայլակի պէս:

Տղան առարկան բերաւ մօրեղբօրը, որ բացաւ  
պահարանը: Չկրցայ բռնել զարմանքի ճիւղ մը, հանրա-  
ժանօթ տեսողն էր, նամակադրոշմի հաւաքածոն, զոր  
խեղճ Կառօֆին բերեր էր. այն հաւաքածոն որուն վրայ  
միշտ կը խօսէր, որուն վրայ այնքան յոյսեր կը տածէր  
եւ որ իրեն այնքան աշխատութիւն կրել տուեր էր.  
Վերջապէս իր գանձն էր, խեղճ տղուն. իր արիւնին  
կէսն էր զոր կու տար փոխարէն իր ներումին:

### ՅԼՈՒԱՆՍՅԻ ՊԶՏԻԿ ԳՐԱԳԻՐԸ

( ԱՄՄՕՐԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ )

Նախակրթարանի չորրորդ դասարանի աշակերտ  
էր: Շնորհալի Ֆլուանցի մըն էր տասներկու տարե-  
կան, սեւ մազերով, ձերմակ դէմքով, անդրանիկ որ-  
դի երկաթուղիի պաշտօնեայի մը, որ, բազմաթիւ  
ընտանիք մը ունենալով, եւ վաստակը չնչին բան մը  
ըլլալուն, շատ նեղութեամբ կ'ապրէր: Հայրը շատ կը  
սիրէր զինքը եւ բարի ու ներողամիտ կը գտնուէր ի-  
րեն համար: Ներողամիտ ամէն բանի մէջ, բացի այն  
բանին՝ որ ուսման կը վերաբերէր: Աս կէտին վրայ  
պահանջկոտ եւ խիստ էր, վասն զի այս անդրանիկ  
որդին, ընտանիքին օգնելու համար, պարտ էր, կա-  
րելի եղածին չափ շուտով, պաշտօն մը ձեռք բերե-  
լու վիճակին մէջ գնել ինքզինքը: Եւ, քիչ առեռնէն  
անոր արժանանալու համար, պէտք էր շատ աշխատիլ  
քիչ ժամանակի մէջ:

Թէեւ տղան ջանասէր էր, բայց հայրը միշտ կը  
մղէր զայն ուսման: Հայրը տարիքոտ էր, բայց շա-  
փազանց աշխատութիւնը զինքը աւելի ծեր կը ցուցը-  
նէր քան որչափ էր իրապէս: Սակայն, ընտանիքին  
պէտքերը հոգալու համար, բացի այն սպառիչ աշխա-  
տութիւնը զոր իր պաշտօնը կը պահանջէր, անկէ առ-  
կէ ընդօրինակութիւններ կ'առնէր ընելու, եւ գիշեր-  
ուան մեծ մասը գործով կ'անցընէր:

Վերջին անգամ տպագրիչէ մը, որ լրագիրներ եւ  
տետրակներ կը հրատարակէր, ստանձներ էր զրել գօ-  
տիներու վրայ անունն ու հասցէն բաժանորդներուն:  
Հինգ հարիւր հասցէի համար երեք Փրանք կը շահէր,

խոշոր եւ կանոնաւոր գրելով: Բայց այս աշխատութիւնը կը յոգնեցնէր զինքը, եւ շատ անգամ իրիկունը ճաշի ատեն կը գանգատէր: «Աչքերս կը տկարանան, կ'ըսէր, աս' գիշերուան աշխատութիւնը կը հատցընէ զիս:»

Տղան օր մը ըսաւ իրեն. «Հայրիկ, թո՛ղ, ես քու տեղդ ընեմ, գիտես որ ճիշդ քեզի նման կը գրեմ...»

— Չէ՛, զաւակս, դուն պէտք է ուսանիս, պատասխանեց հայրը, քու դպրոցական աշխատութիւններդ աւելի կարեւոր բաներ են քան իմ ծրարներու գօտիներս: Մէկ ժամ մը ես կորսնցնել տամ քեզի, ցաւ կ'ըլլայ ինծի: Ծնորհակալ եմ, բայց չեմ ուզեր ընաւ...»

Տղան գիտնալով որ հայրը անդդուելի պիտի մնար, չպնդեց: Բայց անա թէ ի՛նչ ըրաւ. գիտէր որ հայրը կէս գիշերին գիրը կը վերջացնէր եւ սենեակէն դուրս կ'ելլէր ննջասենեակը երթալու համար:

Շատ անգամ լրած էր, ժամացոյցը տասներկուք զտրնելէն ետքը, որ հայրը աթոռը տեղը կը դնէր, ու յամրաքայլ կ'երթար դէպի սենեակը:

Գիշեր մը, սպասեց որ ան պառկի. յետոյ ելաւ, ըռութեամբ հագուեցաւ, խարխափելով գնաց աշխատութեան սենեակը, լամպարը վառեց նորէն, գրասեղանին առջեւ նստաւ ուր կը գտնուէր դէպ մը ձերմակ գօտիներ եւ հասցէներու ցանկը. ու սկսաւ գրել նմանցնելով ճշգրտպէս հօրը գրին: Նա կը գրէր աշխուժով, գո՛հ սրտով, բայց ոչ առանց յուզմունքի...»

Ու գօտիները կը կուտակուէին... Ատեն ատեն, գրիչը կը թողուր ձեռքերը շփելու համար, յետոյ նորէն կը սկսէր աւելի աշխուժով, ականջ դնելով ու ժպտելով: Հարիւր վաթսուս հասցէ գրեց:

Մէկ ֆրա՛նք վաստկած էր. ուստի կանգ առաւ, գրիչը դրաւ հոն ուրկէ առած էր, լամպարը մարեց ու ոտքին ծայրերը կոխելով գնաց անկողին մտաւ:

Այն օրը կէս օրին, հայրը սեղան նստաւ աւելի չէնչող, Բան մը չէր նշմարեր: Ան՝ այս աշխատութիւնը մեքենարար կ'ընէր, միտքը ուրիշ բան կը մտածէր. եւ գօտիներն ալ հետեւեալ առտուն կը համրէր: Ուստի զուարթութեամբ նստաւ, եւ, ձեռքը որդւոյն ուսին դնելով. «Ե՛յ, ժիւլ, ըսաւ: Հայրդ քու կարծածէդ աւելի աղէկ կ'աշխատի տակաւին: Երէկ գիշեր, երկու ժամուան մէջ, մէկ երրորդ աւելի գործ ըրի քան ուրիշ օրեր, ձեռքս տակաւին ճարտար է եւ աչքերս իրենց պարտականութիւնը կրնան կատարել:»

Ժիւլ, բոլորովին գո՛հ, ինքնիրեն կ'ըսէր.

Խե՛ղճ հայրիկս, բացի շահէն, ինքզինքը երիտասարդացած կարծելու գոհունակութիւնը կը հայթայթեմ անա իրեն: Քաջութիւն ուրեմն:

Իր յաջողութենէն քաջալերուած, հետեւեալ իրիկունը, կէս գիշեր զարնելուն, ժիւլ ելաւ նորէն աշխատելու: Այսպէս ըրաւ շատ գիշերներ: Հայրը չէր կասկածեր: Միայն անգամ մը ճաշի ատեն, յանկարծ գոչեց. «Ձարմանալի է որքա՛ն քարիւղ կը սպառի այս տանը մէջ:» Ժիւլ սարսուաց: Ուրիշ խօսք չեղաւ այլ եւս, ու տղան շարունակեց իր գիշերային աշխատութիւնը:

Բայց եւ այնպէս ամէն գիշեր, արթուն կենալով եւ աշխատելով այսպէս, բաւական չէր հանգստանար: Առտունները յոգնած կ'ելլէր, ու իրիկունները դպրոցական պարտականութիւնները ըրած ատեն աչքերը կը գոցուէին ակամայ:

Իրիկուն մը — առաջին անգա՛մն ըլլալով կեանքին

մէջ — քունը տարաւ տետրակին վրայ :

« Գաջութիւն , քաջութիւն , պոռաց հայրը ձեռքերը իրարու զարնելով , աշխատէ : »

Ժիւլ թոթ վուեցաւ ու գործի սկսաւ նորէն : Բայց հետեւեալ օրը նոյն բռնը պահահեցաւ , եւ երթալով շատցուց այս խոնջէնքը : Գիրքերուն վրայ կը մրափէր , սովորականէն ուշ կ'ելլէր , շտապով կը սորվէր գասերը , ու զգուած կ'երեւար ուսմունքէն : Հայրը սկսաւ մէկ քանի գիտողութիւններ ընել իրեն , յետոյ յանդիմանութեան ելաւ , առաջինները՝ զոր ուղղեց կրորդւոյն :

Ժիւլ , ըսաւ անոր առաւօտ մը , շտա կը փոխուիս , առջինը չես այլ եւս : Յիշէ՛ որ ընտանիքին բոլոր յոյսը քու ապագայիդ վրան է : Գո՛հ չեմ քեռէ , գիտցած եղի՛ր : »

Աս խօսքերուն վրայ , տղան խռովեցաւ ու ըսաւ ինքն իրեն .

« Այո՛ , իրաւ է , չեմ կրնար այսպէս շարունակել . պէտք է որ այս խորէութիւնը վերջանայ : »

Բայց , նոյն օրուան իրիկունը , հայրը խոտովանեցաւ մեծ խնդութեամբ թէ այն ամիսը նախորդ ամիսէն երեսուն երկու Ֆրանք աւելի շահեր էր : Ու , այս ըսելով , գրպանէն հանեց շաքարեղէնի տուփ մը զոր գներ էր այս բացառիկ վաստակը տօնելու համար իր տղոցը հետ : Տղաքը ընդունեցան շաքարները ցընծութեան աղաղակներով եւ ծափահարութիւններով : Ժիւլ այս տեսարանէն քաջալերուեցաւ ու ըսաւ ինքնիրեն .

« Ձէ՛ , խեղճ հայրիկ , չէ , չպիտի դադրիմ՝ քեզ խաբելէ , աւելի մեծ ջանքեր պիտի ընեմ , շատ պիտի ուսանիմ ցորեկը , ու պիտի շարունակեմ աշխատիլ գի-

չերը քեզի համար ու պզտիկներուն համար . . . »

Հայրը յարեց . « Երեսուն երկու Ֆրանք աւելի : Շատ գո՛հ եմ , դժբախտաբար ասիկա — եւ մատով ցոյց տուաւ ժիւլը — շատ հոգ կը պատճառէ ինծի : »

Ժիւլ կշտամբանքները կլլէց , մէկդի ըրաւ արցունքի երկու խոշոր կաթիլներ , իյնալու պատրաստ : Սակայն սիրաբ շատ քաղցր ուրախութեամբ մը լեցուած էր :

Բոլոր ուժովը շարունակեց աշխատիլ , Բայց խոնջէնք խոնջէնքի վրայ բարդուելով . երթալով աւելի դժուար եղաւ իրեն դիմադրել Այսպէս շարունակեց երկու ամիս :

Հայրը կը շարունակէր մեղադրել իր տղուն տարօրինակ թուլութիւն մը եւ օր օրի աւելի ցասկոտ աչքերով կը նայէր իրեն :

Օր մը , գնաց ուսուցչէն տեղեկացաւ թէ որդին ի՛նչ կ'ընէ :

« Այո՛ , ըսաւ ուսուցիչը , ան կը սորվի , վասն զի ուշիմ է , բայց այլ եւս չունի առաջուան բարի կամեցողութիւնը : Թմրած , մտազրաղ է ու կը յօրանջէ շարունակ : Իր շարադրութիւնները կարճ են , արի յափոյ գրուած , գիրը անմաքուր : Ո՛հ , ան կարող է աւելի , շատ աւելի աղէկ աշխատիլ : »

Նոյն իրիկունը , հայրը մէկ կողմ տարաւ տղան ու անոր սովորականէն աւելի խիստ յանդիմանութիւններ ըրաւ :

« Ժիւլ , կը տեսնես որ ես կ'աշխատիմ , կեանքս կը սպառեմ ընտանիքիս համար : Ինծի չես հետեւիր դուն : Ո՛չ ինծի համար աղապատանք ունիս , ո՛չ եզրայրնեւորուդ համար , ո՛չ ալ մօրդ համար : »

— Ա՛յո , մի՛ ըսէք այդ բանը , հայրիկ , ընդմիջեց տղան հեծկտալով : Բերանը պիտի բանար որ խոտո-

վանէր ըրածը, երբ հայրը ընդմիջեց ըսելով.

«Դուն գիտես ի՞նչ պայմաններու մէջ կը գտնուի ընտանիքը, գիտես թէ ամէնուն կողմէն բարի կամեցողութիւն եւ զոհողութիւն պէտք է: Ես իսկ, կը տեսնես, պէտք է կրկնապատկեմ աշխատութիւնս: Այս ամիս հարիւր Փրանք պարգեւ կը սպասէի երկաթուղիի ընկերութենէն, իսկ այս առաւօտ իմացայ թէ բան մը չպիտի տան:»

Այս լուրին վրայ ժիւլ լուեց եւ չթողուց որ բերնէն փախչի խոստովանութիւնը զոր դիտաւորութիւն ունէր ընելու:

«Ձէ, հայրիկ, չէ, ոչինչ պիտի ըսեմ քեզի, ես ինձի պիտի պահեմ գաղտնիքս, ըսաւ միտքն ի վար. վասն զի կ'ուզեմ քեզի համար աշխատիլ: Ասիկա պիտի փոխարինէ այն վիշտը զոր կը պատճառեմ քեզի ուրիշ կերպով: Գալով դպրոցիս, պիտի աշխատիմ միշտ, այնպէս որ կարենամ անցընել քննութիւններս: Կարեւորը այն է որ քեզի օգնեմ ապրուստդ ճարելու, ու թեթեւցնեմ յոգնութիւնը որ քեզ կը մեռցնէ:»

Երկու ամիս եւս գիշերային աշխատանք, նուազկոտ օրեր, յուսահատ ջանքեր որդւոյն կողմէն, դառն կշտամբանք հօրը կողմէն:

Սակայն գէշն ան էր որ հայրը կը պաղէր տղուն նկատմամբ, զոր սկսեր էր նկատել իբր անհնազանդ մը, ապերախտ մը, որմէ այլ եւս ոչինչ կար սպասելիք:

Ժիւլ, նշմարելով հօրը տրամադրութիւնները չարաչար կը տանջուէր: Երբ հայրը ետին դառնար, գաղտագողի համոյրներ կը զրկեր անոր հեռուէն, եւ իր գէմքը գորովի, գթութեան եւ տխրութեան զգացում մը կ'արտայայտէր: Վիշտն ու յոգնութիւնը մէկ գալով՝ ժիւլ կը նիհարնար ու կը կորսնցնէր երեսին գոյ-

ները, պարտաւորուած էր երթալով երեսի վրայ թողուլ իր ուսմունքը: Լաւ կը հասկնար որ պէտք էր այս վիճակին վերջ տար, եւ ամէն իրիկուն կ'ըսէր ինքնիրեն.

«Այս գիշեր չպիտի ելլե՛մ:»

Բայց հազիւ թէ կէս գիշեր կը զարնէր, այն միջոցին ուր պէտք էր իր որոշումին մէջ զօրանալ, խիզճը կը սկսէր զինքը տանջել: Իրեն կը թուէր թէ անկողնին մէջ կենալը պարտագանցութիւն մըն էր, թէ հօրմէն եւ ընտանիքէն մէկ Փրանք գողնալ էր: Ու կ'ելլէր, յուսալով որ գիշեր մը հայրը պիտի արթննար եւ վրայ պիտի հասնէր, կամ թէ դիպուածով պիտի նըշմարէր խօսքութիւնը, գօտիները երկու անգամ համբընով, եւ այն ատեն ամէն բան պիտի լիննար բնականաբար, առանց իր կողմէն յայտարարութիւն մը ընելու որուն քաջութիւն չպիտի ունենար: Ու կը շարունակէր:

Իրիկուն մը, հայրը խօսք մը ըսաւ որ որոշիչ եղաւ իրեն համար: Մայրը կը նայէր ժիւլին, եւ, զայն սովորականէն աւելի տկար եւ աւելի գունատ տեսնելով, ըսաւ.

«Ժիւլ, հիւսնո՞ք ես. յետոյ, անկուլութեամբ էրկանը դառնալով. «Ժիւլը հիւանդ է, նայէ ի՞նչպէս դեղնած է: Սիրական տղաս, ի՞նչ ցաւ կը զգաս:»

Այն ատեն հայրը, ակնարկ մը նետելով վրան.

«Յոռի խիզճը, ըսաւ, յոռի առողջութիւն առաջ կը բերէ: Ժիւլ ասանկ չէր երբոր ուսումնասէր դպրոցական մը եւ սրտի տէր տղայ մըն էր:

— Հիւանդ է... շարայարեց մայրը:

— Այլ եւս հոգս չէ՛ պատասխանեց հայրը:

Այս պատասխանը դաշոյնի հարուած մը եղաւ խեղճ տղուն:

Ա՛հ, այլ եւս հոգը չէ՛ր, հայրը որ ատենով կը դողար վրան միայն հազալն իսկ եթէ լսէր: — Ուրեմն այլ եւս չէ՛ր սիրեր զինքը: Ա՛լ տարակոյս չկար, ժիւլ մեռած էր հօրը սրտին մէջ . . . :

« Ա՛խ, չէ, հայր իմ, ըսաւ ինքնիրեն տղան, սիրտը սեղմուած, հիմա իրաւ պիտի դադրեցնեմ գրելը: Ես չեմ կրնար առանց քու սիրոյդ ապրիլ, կ'ուզեմ նորէն զայն ձեռք ձգել ամբողջովին. ամէն բան պիտի ըսեմ քեզի, այլ եւս չպիտի խօսեմ քեզ, առաջուան պէս պիտի ուսանիմ. ինչ կ'ուզէ ան ըլլայ, բաւական է որ դուն զիս սիրես դարձեալ, խեղճ հայրիկս սիրելի: Ո՛հ, այս անգամ հաստատ պիտի մնամ որոշումիս մէջ: »

Բայց եւ այնպէս, այն գիշերը նորէն ելաւ, իբր սովորութենէ մղուած: Երբ ոտքի ելաւ, ուզեց տեսնել քանի մը վայրկեան, գիշերուան լուսթեան մէջ եւ վերջին անգամի համար, այն աշխատութեան խցիկը ուր այնքան աշխատեր էր գաղտնարար, սիրտը զեզուն գոհունակութեամբ եւ գործով: Երբոր ինքզինքը գըրասեղանին առջեւ գտաւ, լամպարը վառուած, տեսաւ ձերմակ գօտիները որոնց վրայ ա՛լ երբեք չպիտի գրէր, այն քաղքի եւ անձի անուաները որոնք գոց գիտէր, մեծ տխրութեամբ մը համակուեցաւ, եւ, անգիտօրէն գրիչը ձեռք առաւ սկսուած գործը շարունակելու: Բայց, երբ ձեռքը երկնցուց, գրքի մը զարկաւ որ գետինը ինկաւ: Սոսկումով վեր ցատկեց: Եթէ հայրը արթննա՛ր: Անշուշտ, գէշ գործ մը ընելը չէր որ պիտի տեսնէր հայրը, եւ ինք որոշած էր ամէն բան ըսել անոր, սակայն . . . լսել անոր քայլերը մութին մէջ, գիշերուան մէջ տեղը բռնուիլ այսպէս, այն խորին լուռութեան մէջ, կը դողար մտածելով թէ առա-

ջին անգամ հայրը կրնար նուաստացած ըլլալ իր առջեւ . . . :

Ժիւլ ականջ կը դնէր, շնչառութիւնը բռնելով, եւ ոչ իսկ պզտիկ շշուկ մը լսեց: Ոչինչ, ոչինչ, Ամբողջ տունը քունի մէջ էր: Հայրը բան մը չէր լսեր: Հանգստացաւ, գրելու նստաւ եւ գօտիները գօտիներու վրայ դիզուեցան . . . : Բոլորանուէր իր աշխատութեան, ժիւլ կը գրէր, միշտ կը գրէր:

Սակայն, հայրը, իր ետեւն էր: Գրքին լյնայը լսելով ելեր կայներ էր, եւ յարմար առիթի մը սպասեր էր բոկոտն երթալու մինչեւ աշխատութեան խուցը: Այո՛, հոն էր, ձերմակ գլուխը որդւոյն թխագոյն գլխին վրայ: Կը տեսնէր գրիչին սահիլը գօտիներուն վրայ, ու ամէն բան հասկեցեր էր, մանրամասնութիւններ կը յիշէր հիմա որոնք մոռցած էր ու խորապէս կը վշտանար տղուն վրայ կասկած ունեցած ըլլալուն: Ծայրայեղ գործանք մը կը պտտեցար սրտէն, ու զինքը հոն գամուած կը կեցնէր, յուզուած ու սրտատրոփ, տղուն ետին:

Յանկարծ ժիւլ աղաղակ մը արձակեց. երկու ձեռքեր ջլածգարար կը սեղմէին իր գլուխը:

« Ա՛խ, հայրիկ, հայրիկ, ներէ ինձի, ներէ ինձի, գոչեց, ճանչնալով հայրը, անոր հեկեկանքներէն: »

— Դո՛ւն ինձի ներէ, սիրելի ժիւլ, պատասխանեց հայրը, համարյոնբերով եւ արցունքներով ծածկելով տղուն ճակատը: Ամէն բան հասկցայ, ամէն բան գիտեմ, եւ, ես եմ, ես՝ որ քեռնէ ներողութիւն կը խնդրեմ, իմ ամենասիրելի որդիս. եկո՛ւր, ինձի հետ եկուր: »

Աթոռին վրայէն վեր վերցուց զայն, կամ լաւ եւս անկողնին վրայ տարաւ մօրը, որ արթնցեր էր, անոր թեւերուն մէջ նետեց ու ըսաւ.

« Համբուրէ՛ այս անձնուէր զաւակը, որ չորս ամիսէ իվեր քուն չի քնանար ու իմ տեղս կ'աշխատի. ես կը զրպարտէի զինքը, մինչդեռ նա ընտանիքին հացը կը վաստկէր. »

Մայրը զայն սեղմեց սրտին վրայ առանց կարենալ մէկէն իմէկ բառ մը արտասանելու. յետոյ՝ երբ զայն լաւ մը համբուրեց, ըսաւ.

« Իսկոյն անկողինդ մտի՛ր քնացիր, տղաս, գնա՛ հանգչէ՛ . . . »

Հայրը գրկեց ժիւլը եւ սենեակը տարաւ, անկողին դրաւ խոնդաղառանքով զայն զգուելով, վերմակը աղէկ մը ծածկեց վրան, բարձերը շտկեց.

« Շնորհակալ եմ, հայրիկ, շնորհակալ եմ, կ'ըսէր տղան, բայց դուն ալ գնա՛ պառկէ՛. զո՛հ եմ, բարի գիշեր, հայրիկս. »

Հայրը ուզեց անպատճառ զայն քնացած տեսնել. Անկողնին սնարին քով նստաւ, ձեռքը բռնեց ըսելով. « Գնացի՛ր, քնացի՛ր, հրեշտակս. »

Ժիւլ ուժամբ ամի եղած քունը տարաւ, ու երկար քնացաւ, վայելելով վերջապէս երջանիկ երազներով ողորդուած հանգիստ քուն մը, ուրկէ զրկուեր էր բազում ամիսներէ իվեր. »

Երբ աչքերը բացաւ, արեւը արդէն կը շողար քանի մը ժամէ իվեր. եւ զգաց խիստ մօտը, անկողնին եզրին կռթնած, հօրը գլուխը, որ գիշերը այնպէս անցուցեր էր. նա երջանիկ քնացեր էր, զուգին հանգիստը տեսնելով.

### Կ Ա Մ Ք Ը

Չորեքուրթի 28

Ապահով եմ թէ դասընկերս Սթաուտին պզտիկ Ֆլուանսցիին ըրածը ընելու քաջութիւնը պիտի ունենար. Այս առտու, երկու երջանիկ կար դպրոցին մէջ. Կառօֆին, ուրախութենէն խենթեցած, վասն զի ետ տուեր են իրեն տետրոցը, որուն մէջ աւելցուցեր են նաեւ երեք նամակադրոշմ կուսթէմալայի հասարակապետութեան (երեք ամիսէ իվեր ատոնց կը տենչար). մէյ մըն ալ Սթաուտին, որովհետեւ երկրորդ մետալը առաւ Սթաուտին, որ դասարանին առաջինն է Տէնօսլէն եաքը. Սմէն մարդ հիացաւ. Ո՞վ կը յուսար. Հոկտեմբերին, երբ հայրը դպրոց բերաւ զինքը, իր կանանչ թիկնոցին մէջ փաթթուած, ըսաւ ուսուցչին.

« Ծատ համբերութիւն ունեցէ՛ք, վասն զի որդիիս ըմբռնումը դժուար է. » Սմէն աշակերտները, անկէ իվեր, « փայտէ գլուխ » կը կանչէին զինքը. Բայց ինք, Սթաուտին, կ'ըսէր լնքնիրեն. « Կամ պիտի մեռնիմ, կամ պիտի յաջողմ. » Ու սկսաւ աշխատիլ գիշերը, ցուրկը, առնը, դպրոցը, ճեմաձայրը, եզի պէս համբերատար, ջորիի պէս յամառ. Ու այսպէս, փութաջանութեան զօրութեամբ, ծաղրելով ծաղրողները, ոտքի հարուածներ տալով ձանձրացնողներուն, ամէնը անցաւ այս յամա՛ւր.

Թուարանութենէն բառ մը չէր գիտեր, շարադրութիւնը անխմատ բառերով կը լեցնէր. Թուական մը չէր կրնար միտքը պահել, իսկ հիմա խնդիրներ կը լուծէ, ուղիղ կը գրէ, ու իր դասերը կ'արտասանէ առանց դոյզն սխալի. Իր երկաթէ կամքը կը գուշա-

կուրի, տեսնելով միայն իր հաստ ու կարճ կերպարանքը, իր քառակուսի գլուխը որ ուսերուն մէջ մտած է, իր կարճ եւ կուստ ձեռքերը, ու լսելով իր կոչա ձայնը: Ամէն ատեն որ տասը առ ունենայ, գիրք մը կ'առնէ. արդէն պզտիկ գրքատուն մը կազմած է, եւ շէնչող մէկ ատենին, բերնէն փախցուց թէ՛ պիտի ցոյց տայ ինծի գրքատունը երբ իրենց տունը երթամ: Մարդու հետ չի խօսիր, մէկու մը հետ չի խաղար, միշտ իր նստարանին վրայ է, եւ, դուռնը գոց բռունցքին վրայ, դասատուին մտիկ կ'ընէ:

Ո՛րչափ աշխատած պէտք է ըլլայ, այս խեղճ Սթաուտին: Աս առտու, մետաղը տուած ատեն, ուսուցիչը, որ սակայն իր նեղարտութեան վայրկեաններուն մէջ էր, չկրցաւ ինքզինքը բռնել ու ըսաւ.

«Ապրի՛ս, Սթաուտի, յարատեւութիւնը ամէ՛ն բանի մէջ կը յաջողի:»

Սթաուտին ընաւ հպարտացած չէր երեւար իր յաջողութեան համար, չժպտեցաւ իսկ, ու նստարանն երթալով, դուռնը կռթնցուց նորէն երկու բռունցքին, ու նստաւ աւելի ուշադիր քան երբեք:

Ամէնէն աղուորը, դուրս ելած ատեննիս էր, երբ հայրը եկեր էր զայն տանելու: Հայրն ալ իրեն պէս հաստ ու կարճ մարդ մը, խոշոր դէմքով ու խոշոր ձայնով: Որովհետեւ ընաւ չէր սպասեր որ մետաղ առնէ, չուզեց հաւատալ: Պէտք եղաւ որ ուսուցիչը ինք անձամբ վստահացնէ, այն ատեն սկսաւ քահ քահ խնդալ, ապտակ մը տուաւ տղուն ծոծրակին ու գոչեց բարձրաձայն. «Է՛՛ աղէկ, շատ աղէկ, սիրո՛ւն կո՞ գըլուխս:» Հոն գտնուողներն ալ զարմացած կը ժպտէին: Մինակ Սթաուտին հանդարտ էր եւ կը մըթմըթար արդէն հետեւեալ օրուան դասը:

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Շաբաթ 31

Հանութիւն,

Քու ընկերդ Սթաուտին երբեք չի գանտատիր իր վարժապետէն, ապահով եմ: «Ուսուցիչը իր նեղարտութեան վայրկեաններէն մեկուն մեջ էր,» ըսիր ու խակալութեան շեշտով մը: Մտածէ՛ քիչ մը թէ դուն որչափ անգամ կը նեղարտիս: Եւ որո՞ւ դէմ: Հօրդ ու մօրդ դէմ, որոնց հանդէպ այս ցասկոտութիւնները շատ մեղք են: Ուսուցիչդ շատ անգամ առիթ կ'ունենայ նեղարտելու: Բազում տարիներէ իվեր նա կը յոգնի տղոց համար, եւ եթէ անոնցմէ ոմանք խանդաղատանք ունին իրեն համար, շատերը ապերախ գտնուած են, չարաչար գործածած են անոր բարութիւնը եւ իր աշխատութիւնը չեն ձանչցած: Պժքախտարար, դուք ամէնքդ ալ, աւելի տաղտուկ կը պատճառէք իրեն քան գոհունակութիւն: Աշխարհիս ամէնէն անուշ մարդն ալ, եթէ իր տեղն ըլլար, բարկութեան պիտի մատնուէր: Եթէ գիտնայիր թէ քանի՛ քանի անգամներ դասատուն դասը կու տայ հիւանդ հիւանդ, վասն զի հիւանդութիւնը բաւական ծանր չէ՞ որ ինքզինքը արդարացնէ: Կը սրտնեղի վասն զի կը տանջուի, ու իրեն համար մեծ վիշտ մըն է որ դուք կը տեսնէք իր տկարութիւնը, ու չարաչար կը գործածէք զայն: Յարգէ՛ ու սիրէ՛ ուսուցիչդ, տղաս: Սիրէ՛, վասն զի քու հայրդ կը սիրէ ու կը յարգէ զայն: սիրէ՛ վասն զի նա կը զոհէ իր կեանքը այնքան տղոց երջանկութեանը որ զինքը պիտի մոռնան: Սիրէ՛ զայն, վասն զի նա կը բանայ ու կը լուսաւորէ քու իմացականութիւնդ



ու կ'ազնուացնէ հոգիդ : Ապա, երբ մեծնաս, մարդ  
 ըլլաս, եւ մենք այլ եւս այս աշխարհին մէջ չըլլանք,  
 ո՛չ ես, ո՛չ ան, անոր յիշատակը պիտի ներկայանայ  
 մտքիդ յաճախ, իմ յիշատակիս հետ. ու այն ատեն, կը  
 տեսնե՛ս, անոր բարի դէմքէն վշտի եւ յոգնութեան  
 մէկ քանի արտայայտութիւնները քեզի ցաւ պիտի ըլ-  
 լան, նոյն իսկ երսուն տարի ետքը : Եւ պիտի ամչնաս,  
 պիտի զղջաս զայն սիրած չըլլալուդ, իրեն հետ գէշ  
 վարուած ըլլալուդ համար : Սիրէ՛ ուսուցիչդ, որովհե-  
 տեւ նա կը պատկանի ուսուցանող այն մեծ ընտանի-  
 քին որ ցրուած է համայն աշխարհի մէջ, որ կը մեծցնէ  
 հազարաւոր տղաք, որոնք քեզի հետ կը մեծնան : Ես  
 չպիտի պարծիմ քու ինծի համար ունեցած աղապա-  
 տանքիդ համար, եթէ նոյնը չուեննաս նաեւ ամէն ա-  
 նոնց համար որ քեզի աղէկութիւն կ'ընեն. եւ, անոնց  
 մէջ ուսուցիչդ առաջինն է ծնողքէդ ետքը : Սիրէ՛  
 զինքը ինչպէս պիտի սիրես հայրդ . սիրէ՛, երբ քեզ  
 զգուէ, սիրէ՛ նաեւ, երբ քեզ յանդիմանէ, սիրէ՛, երբ  
 արդար ըլլայ, սիրէ՛ երբ կարծես թէ արդար չէ . սի-  
 րէ՛ երբ ուրախ ըլլայ, բայց ա՛լ աւելի սիրէ երբ, ար-  
 խուր ըլլայ, եւ միշտ յարգանքով արտասանէ այս տիտ-  
 ղտը . « ուսուցիչ » . հայր տիտղոսէն ետքը ամէնէն աղ-  
 նիւն է, ամէնէն անուշն է, զոր մարդ կարենայ տալ  
 ուրիշ մարդու մը :

ՀԱՅՐԴ

Յ Ո Ւ Ն Ո Ր Ա Ր

Փ Ո Ւ Ա Ն Ո Ր Դ Ը

Չորեքշաբթի 4

Հայրս իրաւունք ունէր, Պարոն Բէռպօսին սըրտ-  
 նեղած էր վասն զի հիւանդ էր : Սրդարեւ, երեք օրէ  
 իվեր, փոխանորդը կու գայ անոր տեղը (այս փոխա-  
 նորդը կարճ եւ անմօրուս է, ու շատ դեռատի կ'ե-  
 րեւայ) : Անճահ բան մը պատահեցաւ այս առտու ի-  
 րեն նկատմամբ : Սրդէն, առաջին եւ երկրորդ օրերը,  
 աշակերտները աղմուկ ըրեր էին դասարանին մէջ, ո-  
 րովհետեւ այս փոխանորդը շատ անուշ մարդ է եւ  
 միայն սանկ կ'ըսէ . « Լեռեցէ՛ք, կ'աղաչեմ » առանց  
 պատժելու : Բայց այս առաւօտ չափը անցուցեր էին  
 աղմուկին : Այնպիսի շշնկոց մը կ'ընէին որ վարժապե-  
 տին ձայնը չէր լսուեր : Նա կ'աղաչէր, կը պաղատէր,  
 անօգուտ էր : Երկու անգամ անօրէնը երեւցաւ դրան  
 սեմին վրայ . բայց, ան երթալուն պէս, շշուկը նորէն  
 սկսաւ, կարծես թէ շուկային մէջն էինք : Իզուր կա-  
 ոսնն ու Տէնօսին ետեւնին կը դառնային ու նշանացի  
 կը խնդրէին իրենց ընկերներէն որ լռեն, հասկցնելով  
 որ խելօք կենան, եւ թէ ըրածնին ամօթ բան էր : Ոչ  
 ոք ուշադրութիւն կը դարձնէր : Միայն Սթառտին  
 հանդարտ կը կենար, արմուկները գրասեղանին կռթըն-  
 ցուցած, բոունցքները քունքին վրայ դրած, խորհե-  
 լով թերեւս իր հանրածանօթ գրադարանին, եւ կա-  
 ոօֆին, նամակադրոջմ պահող աշակերտը, կը զբաղի  
 ցանկը շինելով, զրուողներուն, երկու սանդիմնոց վի-

ճակահանութեան մը, զոր ինք կը կազմակերպէ, եւ զոր շահողը պիտի ստանայ գրպանի կաղամար մը։ Միւսները կը պրօսային, կը խնդային, կը զարնէին իրենց գրասեղաններուն գրիչնուն կոթովը, եւ թղթէ գնդակներ կը նետէին իրարու։

Փոխանորդը մէյ մը մէկին, մէյ մը միւսին թեւէն կը բռնէր, կը թօթուէր, պատին կը կռթնցնէր, առանց սակայն լուսթիւն եւ հնազանդութիւն առաջ բերելու։ Ա՛լ չէր գիտեր ի՞նչ ընէր։

« Բայց ինչո՞ւ ասանկ կ'ընէք, կ'ըսէր, կ'ուզէք յանդիմանութի՛ւն լսել տալ ինձի։ »

Բռունցքով գրասեղանին կը զարնէր, սպառնական եւ աղաչական շեշտով մը։

« Լուսթի՛ւն, լուսթի՛ւն, լուսթի՛ւն։ »

Մեղքնալիք բան էր վարժապետը լսելը։ Սակայն ազմուկը կը շատնար երթալով։

Փռնութիւն թղթէ նետ մը նետեց վարժապետին, մէկ քանիները կը մլաւէին, ուրիշներ իրենց մորթակը վեր կը նետէին։ Վերջապէս աննկարագրելի շշնկոց մըն էր։ Յանկարծ դռնապանը ներս մտաւ ըսելով․

« Պարո՛ն, տնօրէնը ձեզ կ'ուզէ։ »

Փոխանորդը ոտքի ելաւ յուսահատական ձեւով մը եւ շտապով դուրս ելաւ։

Այն ատեն ազմուկը աւելի շտոցաւ։ Բայց կառօնն ելաւ, եւ բարկութեան դողդոջուն ձայնով մը պոռաց․

« Է՛, վերջացուցէք․ յիմա՛ր էք դուք։ Վարժապետին բարութիւնը չարաչա՛ր կը գործածէք․ երբ նա թեւերնիդ կտորտէր, եւ բաւական ուժով է այդ ընելու համար, ամէնքդ ալ կը դողայիք իր դիմացը․ քայց ան կը մեղքնայ ձեզ, ձեր ըրածը վատութի՛ւն է, »

կը լսէ՞ք, ով որ պզտիկ շշուկ մը հանէ կամ ծամածըռութիւններ ընէ վարժապետին ներս եկած ատենը, գործ պիտի ունենայ ինձի հետ, երբ դուրս ելլենք։ Հայրը անգամ հոն ըլլայ, ըսածս պիտի ընեմ, եւ ապահով եմ որ անոր հայրն ալ ինձի իրաւունք պիտի տայ։ »

Լուեցին։ Ա՛յ, գեղեցիկ էր կառօնը այսպէս տեսնել, աչքերը հրացա՛յտ, կարծես կորիւն մըն էր կատաղած։ Ամէնէն խիզախներուն նայեցաւ մէկիկ մէկիկ, ամէնքն ալ գլուխնին վար առին։

Երբ վարժապետը ներս մտաւ, աչքերը կարմրած, շունչ մը չէր լսուէր։ Նախ զարմացաւ յետոյ, տեսնելով կառօնը տակաւին դողդոջուն, հասկցաւ եւ ըսաւ իրեն անուշ շեշտով մը, իրբեւ թէ եղբօր մը հետ խօսէր․ « Ծնորհակալ եմ, կառօն։ »

Այն ատեն ամբողջ դասարանին տղաքը ծափահարեցին։

Եւ ես ասով հասկցայ թէ ի՞նչ կարող է ընել սրտի տէր տղայ մը։

### ՍԹԱՐՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Գացի Սթառտին, որ դպրոցին դէմը կը բնակի եւ ճշմարիտ նախանձի զգացում մը ունեցայ տեսնելով իր գրադարանը։

Հարուստ չէ Սթառտին, շատ գիրք չի կրնար գընել, բայց մեծ խնամով կը սկսէ իր դասողիքերը, եւ ինչ ստակ որ տան իրեն գրավածառին ավել կը լեցնէ։ Այս կերպով պզտիկ գրադարանի մը տէր եղած է, երբ հայրը, նշմարեց թէ գիրքի փափաք ունի, ըն-

կուզենիէ գեղեցիկ դարան մը գնեց, կանանչ վարագոյրներով, եւ բոլոր հատորները կազմել տուաւ տղուն հաւնած գոյներովը: Երբ վարագոյրները բացուին, կը տեսնուի երեք շարք գրքի հատորներ ամէն գոյնէ կարգով շարուած, շատ փայլուն, գիրքին անունը ոսկեզօծ գրերով կ'ունակը գրուած, մանկական պատմութիւններու, ուղեւորութիւններու, բանաստեղծութիւններու գիրքեր, գրեթէ ամէնքն ալ պատկերազարդ: Սթարտին շատ լաւ գիտէ հատորներուն գոյները քովէ քով բերել, ճերմակները կարմիրներուն քով, դեղինները սեւերուն, կապոյտները ճերմակներուն, այնպէս որ հեռուէն խիստ աղւոր կ'երեւան աչքի: Կը զուարճանայ ատեն ատեն երանգներու զուգադրութիւնները փոխելով: Իր ունեցած գիրքերուն ցանկը շինած է, ճիշդ ու ճիշդ գրասէրի մը նման: Միշտ իր գիրքերովը կը զրաղի, անոնց փոշիները կը մաքրէ, կը թղթատէ, կազմերը կը վնէ: Պէտք է տեսնել ի՞նչ խնամով կը բանայ անոնք, իր կարճ ու հաստ ձեռքերով, էջերը փշելով: Կարծես թէ նոր նոր են գիրքերը — ես որ բոլոր իմիններս ապականեցի: — Իրեն համար, ամէն գիրքը որ կը գնէ իրեն հաճոյք կը հայթայթէ զանի շոյելու, զայն շարելու միւսներուն քովը, յետոյ նորէն ձեռք առնելու, ամէն կողմէն նայելու համար ու զայն գանձի պէս պահելու համար: Ամբողջ ժամ մը, Սթառտին ուրիշ բան չցուցուց ինծի:

Պահ մը հայրը անցաւ այն սենեակէն ուր էինք, եւ երկու երեք անգամ ձեռքը անոր ծոծրակին վրայ դրաւ իր հաստ ձայնովը ըսելով.

« Ի՞նչ կ'ըսէք այս պղնձէ գլխուն, խոշոր գլուխ մըն է որ բանի մը պիտի հասնի, խօսք կու տամ ձեզի: »

Ու Սթառտին աչքերը կէս մը կը գոցէր հայրական այս բիրտ գգուանքներուն տակ:

Չեմ գիտեր ինչու, չէի համարձակեր այլ եւս կատակ ընել Սթառտին հետ. չէի կրնար իսկ հաւատալ թէ մէկ տարու միայն մեծ ըլլայ ինչ: Երբ դրան սեմին վրայ, « ցտեսութիւն » ըսաւ ինծի, իր ցասկոտ կերպարանքովը, քիչ մնաց պիտի ըսէի. « Ժառանջ եմ » ինչպէս պիտի ընէի հասակաւոր մարդու մը: Տուն դառնալուս հօրս ըսի ասիկա:

« Չեմ հասկնար, ըսի, Սթառտին խելացի չէ, լաւ դաստիարակուած չէ, ծաղրաշարժ դէմք մը ունի, եւ սակայն պատկառանք կ'ազդէ ինծի: » Հայրս պատասխանեց.

« Վասն զի նկարագիր ունի նա: »

Ու յարեցի.

« Մէկ ժամը որ իրեն հետ անցուցի, յիսուն բառ չարտասանեց, խաղալիկ մը չցուցուց ինծի, անգամ մը չխնդաց. եւ սակայն գոհ էի իրեն հետ ըլլալուս: »

Հայրս առաւ նորէն. « Վասն զի կը յարգես զինքը: »

**ԵՐԿԱԹԱԳՈՐԾԻՆ ՈՐԴԻՆ**

Կը գնահատեմ Բռէքօսին ու կը յարգեմ: Բռէքօսին, երկաթագործին որդին, դեղնած տղայ մը, որ տիրանուչ աչքեր ունի եւ ահարեկ կերպարանք մը, այնքան վախկոտ՝ որ ամէնուն կ'ըսէ. « Ներեցէ՛ք ինծի, » եւ որ, թէեւ միշտ հիւանդկախ, սակայն շատ եւ հաստատ կ'ուսանի: Իր հայրը, ըսածնուն նայելով, ամէն ատեն արբած տուն կը մտնէ, չնչին բանի մը համար կը ծեծէ տղան եւ անոր գիրքերն ու տետրակները անգին ասդին կը նետէ: Խեղճ տղան դպրոց կու գայ ե-

րեսին վրայ կսարսրեցած, երբեմն ալ աչքերը կարմրած եւ ուռեցած լալէն:

Բայց երբեք, բնաւ երբեք, չեն կրնար իրեն ըսել տալ թէ հայրը ծեծած է զինքը:

« Սակայն գուք չէ՞ք այրած ձեր տետրակին այս էջը » ըսաւ իրեն ուսուցիչը, ցոյց տալով անոր իր սարտականութեան տետրակը այրած:

« Ներեցէ՛ք, ես եմ այրած, » պատասխանեց դողդոջուն ձայնով: Մենք ամէնքս ալ զիտեմք թէ հայրն է ընողը: Արրած մէկ պահուն հրեր է սեղանը որուն վրայ Բռէքօսին կ'աշխատէր, ու լամպարը շրջեր է, այրելով խեղճ տղուն տետրակը. Բռէքօսին մեր բնակած տունը մանսարդի մը մէջ կը բնակի, բակին խորը. դռնապանուհին կը պատմէ ասոնք մեր սպասուհիին, որ ան ալ մօրս կ'ըսէ:

Օր մը, քոյրս Սիլվիան լսեց Բռէքօսին որ կը պոռաբ գլտորելով սանդուղէն վար, ուր հայրը նետեր էր զինքը ոտքի հարուած մը տալով, վասն զի քանի մը առ ուզեր էր քերականութիւն մը գնելու համար: Բռէքօսին հայրը կը խմէ, բնաւ չ'աշխատիր, եւ ընտանիքը անօթի կը մեռնի: Քանի քանի անգամներ խեղճ պզտիկը դպրոց եկած է փորը անօթի, եւ անկիւն մը մտած կերած է հացի կտոր մը զոր կսռօնը տուած է, կամ կերած՝ խնձոր մը զոր գաղտուկ սահեցուցած է փիին մէջ կարմիր փետուրով վարժուհին, որուն աշակերտ եղած էր առաջին դասարանին մէջ:

Երբեք Բռէքօսին չպիտի ըսէ. « Անօթի եմ, հայրս ինձի ուտելիք չի տար: »

Երբեմն հայրը կու գայ զինքը առնել դպրոցէն, անցած ատենը, տժգոյն, դեղեկոտ, վայրագ աչքերով, մագերը քրքրած եւ մորթակը քովընտի դրած:

խեղճ տղան դող կ'ելլէ երբ հայրը տեսնէ փողոցին մէջ. եւ սակայն ժպտելով իրեն կը վազէ. բայց հայրը կ'երեւայ թէ չի տեսներ զայն եւ ուրիշ բան կը մտածէ: Հէ՛գ Բռէքօսի, Պատուած տետրակները նորէն կը կարէ եւ կ'ազաչէ քովը նստողներուն որ իրեն փոխ տան իր չունեցած գիրքը որ սորվի: Շապիկը գնդասեղներով կը խոթէ, եւ մարդուն գութը կը շարժի տեսնելով անոր մարմնամարզ ընելը իր խոշոր կօշիկներով որոնց մէջ ոտքերը կը խաղան, տարատը պատառ բզիկ եղած ու իր երկայն պարեգօտովը, որուն թեւերը հանգրիծած է մինչեւ արմուկը: Ու կ'ուսանի՛, կը ճգնի սորվի՛լ. առաջիններէն մէկը կ'ըլլար, եթէ կարենար հանգրիտ կերպով աշխատիլ իր տանը մէջ:

Այս առաւօտ նա դպրոց եկաւ այտերուն վրայ խոշոր ճանկաուտքով մը: Ընկերները ըսին իրեն.

« Հայրդ ըրած է այդ, աս անգամ չես կրնար ուրանալ: Տնօրէնին իմաց տուր, որպէս զի պահականոց տանին հայրդ: »

Բայց Բռէքօսին կաս կարմիր եղաւ.

« Սո՛ւտ է, սո՛ւտ է, հայրս երբեք իս չի ծեծեր, » պողաց զայրոյթէն դողդաղացած ձայնով մը:

Սակայն, դասի ատեն արցունքները կը վազէին գրասեղանին վրայ, եւ երբ մէկը իրեն նայէր, կը ջանար ժպտիլ անոր, տառապելու կերպարանք չունենալու համար:

Խե՛ղճ Բռէքօսի:

Վաղը Տէւօսին, Գօնէթին ու Նէլլին մեր տունը պիտի գան: Բռէքօսին ալ պիտի ըսեմ որ գայ, մեզի հետ ախրատ պիտի ընէ. գիրքեր կու տամ իրեն. ասոնը տակն ու վրայ պիտի ընեմ զինքը զուարճացնելու համար, ու իր գրպանները պտուղով պիտի լեցնեմ:

կ' ու գեմ' անգամ մը աս տղան գոհ ու շէնչող տեսնել, ինք որ այնքա՛ն բարի է ու այնքա՛ն արի :

### ՀԱՃԵԼԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Հինգ օր 12

Ահա հինգ շաբթի մը որ, ինծի համար, տարուան ամենէն գեղեցիկներէն մէկը եղաւ :

Ժամը ճիշդ երկուքին եկան Տէնօսին, Գօռէթին եւ Նէլին. պզտիկ սապատողը, Իսկ Բուէքօսին՝ հայրը չէր թողած որ գայ :

Տէնօսին եւ Գօռէթին սրտանց կը խնդային, վասն զի փողոցին մէջ Գնօսիին հանդիպեր էին, պողպատաձառին տղուն — այն որուն թեւը անգործածելի է եւ չկ' մազեր ունի — որ թեւին տակ կը տանէր ահագին կաղամբ մը զոր պիտի ծախէր, եւ ծախելիք կաղամբին երկու սուսովը գրիչ մը պիտի առնէր : Բողոքովին գոհ էր, խեղճ պզտիկ Գնօսին, վասն զի հայրը Ամերիկայէն գրեր էր թէ մէկ օրէն միւսը կրնան իրեն սպասել :

Ո՛հ, ի՛նչ երջանիկ ժամեր անցուցի իմ սիրելի ընկերներուս հետ : Տէնօսին եւ Գօռէթին դասարանին ամենէն զուարթներն են : Հայրս շատ ուրախ եղաւ անոնց գալէն : Գօռէթին, իր շագանակագոյն կրկնոցովը եւ կատուի մորթէ գատակովը, շատ աղմուկ կ'ընէր : Առտուն կանուխ կէս սոյլակ փայտ պարպեր էր. եւ սակայն տունին ամէն կողմը վազեց վազվառեց, ամէն բան դիտելով եւ անդադար խօսելով, թեթեւ եւ կայտառ սկիւռի մը պէս : Խոհանոցէն անցած ատեն խո-

հարարուհիին հարցուց թէ քանի՛ կ'առնէր փայտը եւ ածուխը, համեմատելու համար անոնց գինը հօրը ծախածին հետ : Իրաւցնէ, թէեւ փայտի մթերանոցի մը մէջ ծներ ու մեծցեր է Գօռէթին, սակայն ազնուութիւն ունի սրտին մէջ :

Տէնօսին ալ մեզ լաւ զուարճացուց : Ուսուցչի չափ աշխարհագրութիւն գիտէ : Աչքերը կը գոցէր ու կ'ըսէր. « Ահա, ամբողջ Իտալիան կը տեսնեմ. Ապենեան լեռները որ մինչեւ Յոնիական ծովը կ'երկարին, գետերը որ կը հոսին ասդին անդին. ճերմակ քաղաքները, ծոցերը, կապոյտ խորշերը, կանանչ կղզիները, » եւ անուսները կու տար կարգով ատանց մէկը զանց ընելու, որպէս թէ քարտէսին վրայ կարդար : Իրաւ շատ սիրուն էր այս Տէնօսին, իր բարձր գլխով, համակ գանգուր եւ խարտեաչ, իր գեղեցիկ արթուն աչքերով, ամէնքս ալ կը զմայլէինք : Մէկ ժամուան մէջ բերնուց սորվեցաւ երկու էջ ոտանաւոր զոր վաղը շէ միւս օրը պիտի արտասանէ հանդէսի մը մէջ : Նէլին ալ սքանչացած կը նայէր իրեն : Իր սեւ գոգնոցին շուրջի խծիպը ճորգ կեւով ձեռքին մէջ, կը ժպտէր, եւ իր պայծառ ու նուաղիտ աչքերը կարծես կը լուսաւորուէին այս ժպիտէն : Իսկ ես, այս այցելութիւնը մեծ հաճոյք պատճառեց ինծի, կայծեր թողուց մտքիս ու սրտիս մէջ : Նոյնպէս հաճելի եղաւ ինծի տեսնել Նէլին որ կ'երթար երկու ընկերներուս մէջ տեղէն սրսնք թեւերնին առեր էին զայն, անոնք մեծ եւ ուժեղ, ինք պզտիկ եւ փափուկ, կը խնդար այնպէս որ երբեք չէի տեսած : Սեղանատունը մտած ատեննիս նկատեցի որ միկօլէթօն, սապատող հացկատակը ներկայացնող պատկերը անհետացեր էր : Հայրս զայն վերցուցեր էր : Տղոցը գալէն սռաջ, որպէս զի Նէլին շտեմնէ :

### ՏՈՒՆԹԻՆ ԴՊՐՈՑԷՆ ԱՐՏԱՔՍՈՒԱԾ

Շաբաթ 21

Մեր մէջը խիստ անհաճոյ տղայ մը կայ, Ֆռանդին։ Կ'ատեմ այս տղան, չար սիրտ տղայ մըն է։ Երբ աշակերտներէն մէկուն հայրը գայ տղան յանդիմանելու համար, նա ուրախ կ'ըլլայ։ Երբ ուրիշը լայ ինք կը խնդայ, Կառօնին դէմը կը դողայ, վախուն, իսկ պզտիկ որմնագիրը կը ծեծէ, վասն զի նա ինքզինքը չի կրնար պաշտպանել։ Կը չարչարէ Գոսին, որուն թեւը անդամալոյժ է, կը ծաղրէ Բուքօսին, զոր ամէն մարդ կը յարգէ, եւ կը ծաղրէ մինչեւ իսկ Ռօպէթին, երկրորդ գասարանի աշակերտը, այն որ անթացուպնեւրով կը քալէ, տղայ մը ազատած ըլլալով՝ վիրաւորուած ըլլալուն։ Տկարագոյնները կը գրգռէ, եւ երբ ծեծկուի, կ'ոգեւորի, վայրագ կը դառնայ եւ կը ջանայ սուստիկ հարուածներ տալ իր հակառակորդներուն։

Բան մը կայ որ զգուանք կ'ազգէ այն ցած ճակտին վրայ, այն պղտոր նայուածքին մէջ, զոր միշտ թագուն կը պահէ գլխարկին տակ։ Ֆռանդին բանէ մը չի վախնար, ուսուցչին քիթին կը խնդայ, կը դողնայ երբ կրնայ, կ'ուրանայ անհաստատալի յանդգնութեամբ եւ միշտ կուռտ է մէկու մը հետ։ Դասարանին մէջ մեծ գնդատեղներ կը բերէ քովիները կճելու համար, իր կրկնոցին կոճակները կը փրցնէ, ուրիշներունն ալ կը փրցնէ։ Գիրքերը, տետրակները լի են մեղանի բիծերով, եւ պատռած, աղտոտ, անխնամ՝ քանակին եզրը ատամնաձեւուած է, գրիչը խածոտուած, եղունգները կրծուած, զգեստները կզվտուքներէն ըզրկուուած։

Կ'ըսեն թէ մայրը հիւանդ եղած է որդւոյն պատճառած վիշտերէն եւ թէ հայրը երեք անգամ տունէն վռնտեր է զինքը։ Մայրը կու գայ ատեն ատեն կը հարցնէ թէ ինչպէս է տղուն վարքը. ու ամէն անգամուն լալով տուն կը դառնայ։ Ֆռանթին կ'ատէ թէ, ուսուցիչը, թէ՛ ընկերները եւ թէ՛ վարժարանը։ Վարժապետը երբեմն չտեսնել կը ձեւացնէ անոր ըրած կոշտութիւնները, իսկ ան՝ կը կրկնապատկէ լրբութիւնները։ Պ. Բէռպօնին փորձեց անուշ բռնելով ուղղել զայն, բայց Ֆռանթին անգոսնեց զայն։ Այն ատեն վարժապետը խիստ սպառնալիքներ ըրաւ։ Ֆռանթին այն միջոցին ձեռքերովը երեսը կը ծածկէր իր թէ կու լար։ Բայց չէ, ընդհակառակը, կը խնդար։ Առժամանակեայ կերպով դպրոցէն արտաքսուեցաւ, եւ երեք օր դպրոց սոք չկոխնց. երբ նորէն եկաւ աւելի լրբացած էր։

Օր մը Տէրօսին ըսաւ իրեն.

«Է՛յ վերջացու՛ր, վարժապետին բարութիւնը չարաչար կը գործածես։»

Ֆռանթին, իրբեւ պատասխան, սպառնացաւ գամ մը խօթել փորը։

Այս առաւօտ, վերջապէս, շան մը պէս վռնտուեցաւ։

Մինչ վարժապետը կու տար Կառօնին Սարսենեացի պզտիկ քնքիւհախախիւ նախագիծը, յունուարի ամսօրեայ պատմութիւնը, օրինակելու համար, Ֆռանթին դետինը փանխուշտ մը նետեց որ պայթեցաւ, հրացանի պայթիւնի պէս գասարանին պատերը հնչեցընելով։ Բոլոր աշակերտները նստած տեղերնուն ցատկեցին։ Վարժապետը սոքի ելաւ պուալով։

«Դուրս կորսուէ՛ Ֆռանթին։»

Նա խնդալով պատասխանեց . « Ես չեմ : »

— Գնա՛ , կրկնեց Պ. Բէռպօնին :

— Տեղէս չեմ երերար :

Այս լիրբ պատասխանին վրայ , Պ. Բէռպօնին պաշարիւնութիւնը կորսնցուց . Ծռանթիին վրայ խուժեց , թեւէն բռնեց ու նստարանէն վեր վերցուց . անառակը կտոր կտոր կ'ըլլար ու ակօսաները կը կրճտեցնէր . ուսուցիչը պարտաւորեցաւ դուրս քաշել զինքը եւ բռնի տանիլ մինչեւ անօրէնին սենեակը : Երբ Պ. Բէռպօնին մինակ դարձաւ ու նստաւ իր գրասեղանին առջեւ , գլուխը ձեռքերուն մէջ , հեւ ի հեւ եւ տխուր , իր թախծալից կերպարանքը վիշտ կ'ազդէր տէսնողին :

« Երսուն տարի է որ դասարան կը կառավարեմ , երբեք այսպիսի բան պատահած չէ՛ ինձի : » ըսաւ հառաչելով :

Ոչ ոք կը խրտէր : Վարժապետին ձեռքերը կը դողդղային եւ ճակտին կնճիւղը այնքան խորունկցեր էր որ վէրքի մը կը նմանէր : Հէ՛գ ուսուցիչ : Ամէնքը կը մեղքնային զինքը : Տէռօսին սոքի ելաւ եւ ըսաւ Պ. Բէռպօնինին .

« Մի՛ վշտանաք , պարոն , մենք հոս ամէնքս ալ ձեզ կը սիրենք : »

Աս անուշ խօսքերէն՝ դասատունը գլուարթացած երեւցաւ եւ մրմնջեց . « Իսսերնուս նայինք , տղաք . . . »

### Ն Ա Խ Ա Ն Ձ

#### Չորեքաբքի 25

Դարձեալ Տէռօսին ամէնէն աւելի յաջողեցաւ շարադրութեան մէջ : Ու Վօթիինին որ կը կարծէր թէ ապահովարար ինք պիտի ստանայ առաջին մետալը . . . Պիտի սիրէի Վօթիինին , թէեւ քիչ մը ծանծաղամիտ է եւ չափազանց կարեւորութիւն տուող իր արդուզարդին , բայց անհաճոյ է ինձի դասարանին մէջը քովի ընկերս ըլլալէն ի վեր : Կարի նախանձոտ է Տէռօսիին : Կ'ուզէ մաքառիլ անոր հետ , այդ նպատակով կ'ուսանի . բայց մեր ընկերը ամէն բանի մէջ անկէ կ'անցնի : Գառլօ Նօպիսն ալ հաւասարապէս կը նախանձի Տէռօսին . բայց այնքան հպարտ է որ չի ցուցներ իր նախանձը : Վօթիինին , ընդհակառակը , ինքզինքը կը մատնէ . կ'երթայ անոր կը գանգատի՝ իրեն պակաս առած թիւերուն համար , ու կը կարծէ թէ ուսուցիչը անիրաւութիւն կ'ընէ : Երբ Տէռօսին ուսուցչին հարցումներուն շուտ եւ լաւ պատասխանէ , ինչպէս միշտ , Վօթիինին շլտել կը ձեւացնէ , կամ կը ճգնի խնդալ : Բայց ակամայ կը խնդայ : Եւ , որովհետեւ ամէն մարդ նշմարած է այս բանը , երբ դասատունը գովեստ տայ Տէռօսիին , ամէնքն ալ Վօթիինին կը նային անոր զջարած դէմքը տեսնելու համար , մինչդեռ պզտիկ որմնադիրը նապաստակի դնչիկը կ'ընէ անոր :

Այս առաւօտ , զոր օրինակ , ուսուցիչը դասարան մտաւ , ու քննութեան արդիւնքը ծանուց :

« Տէռօսի , տասը պատուանիչ եւ առաջին մետալ : »  
Վօթիինին սկսաւ ուժով մը փռնգտալ : Վարժապետը անոր նայեցաւ ու հասկցաւ :

«Վօթինի՛», ըսաւ անոր, մի՛ թողուր որ նախանձի օձը սրտիդ մէջ մտնէ: Անիկա սողուն մըն է որ ուղեղը կը կրծէ ու սիրտը կ'ապահանէ:» Ամէն աշակերտները, բացի Տէնօսիէն, Վօթինիին նայեցան: Ան ուղեց պատասխանել, չկրցաւ, ու մնաց քարացած, դէմքը տփուռնած: Յետոյ, երբ Պ. Բէնպօնին դաս կ'ընէր, սկսաւ խոշոր գրերով գրել թուղթի թերթի մը վրայ:

«Ես չեմ նախանձիր անոնց որ առաջին վեճալը կը ստանան, շնորհիւ պաշտպանութիւններու եւ անիրաւութեան:»

Ասիկա տոմսակ մըն էր զոր Վօթինին կ'ուզէր զըրկել Տէնօսիին: Նոյն միջոցին, տեսայ որ Տէնօսիին բարեկամները իրենց մէջ կը փոխափային, իրարու ահանջի խօսելով, եւ անոնցմէ մէկը զմեղիովը թուղթէ մեծ մետալ մը կը կտրէր, որուն վրայ սեւ օձ մը գծեր էին: Վօթինին տեսաւ զայն: Վարժապետը վայրկեան մը դուրս ելած ըլլալով, Տէնօսիին քովը նստողները իսկոյն ոտքի ելան, երթալ պաշտօնապէս ներկայացնելու համար մետալը նախանձողին: Ամբողջ դասարանը կը պատրաստուէր տեսարան մը տեսնելու: Վօթինին արդէն կը դողդղար: Տէնօսիին գոչեց. «Ա՛յդ թուղթը ինձի տուէ՛ք:»

— Աւելի՛ աղէկ, պատասխանեցին քովինները, ինք իր ձեռքովը պիտի տայ:»

Տէնօսիին մետալը առաւ ու կտոր կտոր ըրաւ:

Վարժապետը ներս մտաւ այն միջոցին ու նորէն սկսաւ դասը: Ես աչքս Վօթինիին վրայէն չէի հեռացընէր, ա՛ն ամօթէն կաս կարմիր եղեր էր. կամացուկ մը գրած թուղթը առաւ, իրրեւ թէ մտադրազուժեամբ ձեռքին մէջ պլորեց, բերանը դրաւ, ծամեց քիչ մը, յետոյ թքաւ նստարանին տակը . . . :

Դասարանէն ելած ատեննիս, Տէնօսիին քովէն անցնելով, Վօթինին, քիչ մը շփոթած, իր ծծաքարը գետինը ձգեց: Տէնօսիին առաւ զայն գետնէն շնորհալի կերպով մը, Վօթինիին պայուսակին մէջ դրաւ ու օգնեց անոր պայուսակը գոցելու: Միւսը չհամարձակեցաւ իսկ երեսը նայիլ:

### Ֆ Ռ Ա Ն Թ Ի Ի Ն Մ Ա Յ Ր Ը

Շաբաթ 28

Այս առաւօտ, Յռանթիին մայրը ներս մտաւ յանկարծ դասարանէն, գորշագոյն մազերը խառնիխուռն, ձիւնով ծածկուած, առջեւէն հրելով տղան, որ ութը օր է չէր երեւցած: Տխուր տեսարանի մը ներկայ գըտնուեցանք: Խեղճ կինը գրեթէ տնօրէնին ծունկերը ինկաւ, ձեռքերը կցած, պաղատագին:

«Ա՛խ, Պ. տնօրէն, ըսաւ, շնորհ ըրէք զաւակս նորէն վարժարանը ընդունելու: Երեք օրէ իվեր, պահուրացուցեր եմ տունին մէջը. որովհետեւ եթէ հայրը իմանայ ճշմարտութիւնը, կը մեռցնէ զինքը: Գթացէ՛ք, չեմ գիտեր ի՞նչ ընել: Կը պաղատիմ . . . :»

Տնօրէնը Զանաց դուրս հանել կինը, բայց նա պընդեց կեցաւ լալագին, աղաչելով:

«Ո՛հ, եթէ գիտնայիք ի՞նչ վիշտեր պատճառած է ինձի այս տղան, պիտի գթայիք վրաս . . . ըրէ՛ք ինձի այս շնորհը: Կը յուսամ թէ պիտի փոխուի: Ես ալ շատ չպիտի աօրրիմ անշուշտ, պարոն տնօրէն, սիրտս հատած է: Որքան կ'ուզեմ զաւակս փոխուած տեսնել մեռնելէ առաջ, վասն զի . . . — ու հէգ կինը հեծկըլ:



տալ սկսաւ — զաւակս է, կը սիրեմ, յուսահատ պիտի մեռնիմ: Առէ՛ք նորէն, պարոն տնօրէն, դժբախտութեանէ մը ազատեցէ՛ք զիս, գլխացէ՛ք թշուառ մօր մը վրայ . . . »

Ձեռքերովը երեսը ծածկեց լալով: Փռանթիւն գըլըլը կախ կը կենար, անկարեկիր: Տնօրէնը անոր նայեցաւ, քանի մը վայրկեան մտախոհ մնաց, յետոյ ըսաւ. « Փռանթի՛, գացէք տեղերնիդ նստէ՛ք: »

Հէգ մայրը խիստն հանդարտեցաւ ու սկսաւ շնորհակալ ըլլալ տնօրէնին, յետոյ գացած ատենը եւ աչքերը սրբելով հանդերձ՝ ըսաւ նորէն.

« Շնորհակալ եմ, պարոն տնօրէն, եղբրմութեան գործ մը կատարեցիք. . . Բարի եղի՛ր, զաւակս, դուք ալ, տղա՛ք, քիչ մը համբերութիւն ունեցէ՛ք իրեն հետ . . . Մնաք բարով, տղաք, դարձեալ շնորհակալ եմ, ներեցէ՛ք հէգ մօր մը, պարոն տնօրէն: »

Ու դրանը սեմին վրայէն պաղտատազին ակնարկ մը մը նետելով իր որդւոյն, գնաց կորաքամակ, ընկճուած, տոգունած. ու մենք լեցինք որ դարձեալ կը հազար սանդուղին վարի ծայրը:

Տնօրէնը շեշտ նայեցաւ Փռանթիւնին, եւ, խոր ըռութեան մը մէջ, ըսաւ իրեն ձայնով մը որ ամէնուս վրայ խոր տպաւորութիւն ըրաւ. Փռանթի՛, դուք կը սպաննէ՛ք ձեր մայրը: »

Ամէնքս ալ Փռանթիւնին նայեցանք. անօրէնը կը ժպտէր . . .

# Պ Ե Տ Բ ՈՒ Ա Ր

## ԱՐԺԱՆԻՔՈՎ ԱՏԱՅՈՒԱԾ ՄԵՏԱԼ ՄԸ

Շարաք 4

Այս առաւօտ վարժարաններու ընդհանուր տեսուչը եկաւ մետալները բաժնելու: Սեւեր հագած պարոն մըն էր, ձերմակ մօրուքով: Տնօրէնին հետ դասարան մտաւ դասը աւարտելէն քիչ մը առաջ ու դասատուին քովը նստաւ: Քանի մը աշակերտ հարցաքննեց, առաջին մետալը տուաւ Տէռօսիին, ու երկրորդը տալէն առաջ, քանի մը վայրկեան ցած ձայնով խօսեցաւ տնօրէնին ու դասատուին հետ: Մենք մեզի կը հարցնէինք. « Ո՞վ պիտի ստանայ արդեօք երկրորդ մետալը: »

« Երկրորդ մետալին արժանի եղաւ այս շաբթու Բիէթոօ Բուէքօսի աշակերտը. արժանի եղած է ան թէ՛ տանը մէջ եւ թէ՛ դպրոցին մէջ աշխատութեամբը, իր դասերը լաւ սորվելուն համար եւ իր գեղագրութեանը համար: »

Ամէն տղաքը Բուէքօսիին կողմը դարձան ինքնաբերութեամբ մը, որ կ'ապացուցանէր թէ որքան գոհ էին այս վարձատրութենէն: Բուէքօսին ստքի ելաւ այնքան շփոթած որ չէր գիտեր ինչ ընելը:

« Հոս եկէ՛ք, » ըսաւ ընդհանուր տեսուչը:

Բուէքօսին ցատկեց իր նստարանէն ու գնաց ուսուցչին գրասեղանին քով կեցաւ:

Տեսուչը ուշադրութեամբ նայեցաւ այն պզտիկ դէմքը մոմագոյն, այն պզտիկ մարմինը ծակ ծակ եւ

գոյնը նետած հագուստներու մէջ, անոր բարի եւ տր-  
խուր աչքերը, որ չարչարանքներու երկար շարք մը  
կրած ըլլալը կը յայտնէին. ու ըսաւ քաղցրութեամբ  
լեցուն ձայնով մը, մետալը տղուն կուրծքը անցնե-  
լով. «Բռէքօսի, ձեզի կու տամ այս մետալը, վասն զի  
ոչ ոք ձեռնէ աւելի արժանի է զայն կրելու: Միայն ձեր  
ուշիմութեանը ու ձեր բարի կամեցողութեանը համար  
չէ որ ձեզի կու տամ զայն, հապա ձեր ազնիւ եւ բարի  
զաւակի սրտին, արիութեանը եւ բնաւորութեանը հա-  
մար: Իր որդիական սիրոյն համար ալ արժանի է, այն-  
պէս չէ՞, յարեց տեսուչը, մեզի ամէնուս ուղղելով:

— Այո՛, այո՛, » պատասխանուեցաւ միարեւրան:  
Բռէքօսին նետեց դէպի մեզի ակնարկ մը որ ան-  
սահման երախտիք կը յայտնէր:

« Գացէ՛ք, սիրելի տղայ, ըսաւ անոր տեսուչը,  
երջանի՛կ եղէք: »

Դուրս ելլելու ժամն էր:

Մեր դասարանը միւսներէն առաջ դուրս ելաւ:  
Հազիւ դրանը սեմին վրայ էինք, որ տեսանք բակին  
մէջ Բռէքօսիին հայրը, երկաթագործը, տժգոյն սովո-  
րականին պէս. աչքերը դաժան, մազերը աչքերուն  
վրայ ինկած, մորթակը ծուռ դրած, սրունքները դող-  
դոջուն: Վարժապետը տեսաւ զայն իսկոյն, ու տեսու-  
չին ակոնջն իվար բան մը ըսաւ: Ասիկա Բռէքօսին  
փնտուեց, ձեռքէն բռնեց ու հօրը քովը տարաւ: Տղան  
կը դողար: Ուսուցիչը ու անօրէնը իրեն հետ առաջ  
գացին, բազմաթիւ տղաք կը չրջապատէին զանոնք:

« Դուք այս տղուն հայրն էք, այնպէս չէ՞, հար-  
ցուց տեսուչը երկաթագործին, խանդազատալից շեշ-  
տով մը, յետոյ, առանց պատասխանին սպասելու.

« Ես ալ ձեզի հետ կը հրճուիմ: Նայեցէ՛ք, երկ-

րորդ մետալը ստացաւ յիսունը չորս աշակերտի մէջ:  
Արժանի եղաւ ատոր՝ շարագրութեան մէջ, թուաբա-  
նուութեան մէջ, ամէն բանի մէջ: Իմացականութեամբ  
եւ բարի կամեցողութեամբ լեցուն տղայ մըն է, ապա-  
գայ ունի. ազնիւ տղայ մը որ ամէնուն համարումը կը  
վայելէ, կրնաք իրմով հպարտանալ, կը հաւաստե՛մ  
ձեզ: »

Երկաթագործը բերանարաց մտիկ ըրեր էր, շեշտ  
մը տեսուչին, անօրէնին նայեցաւ, յետոյ աչքը դար-  
ձուց իր աղուն վրայ, որ առջեւը կեցած էր, աչքերը  
վար ծռած, դողդոջուն: Երկաթագործը իրրեւ թէ  
հիմա առաջին անգամը ըլլալով կը հասկնար ինչ որ քա-  
շել տուեր էր այս խեղճ պղտիկին, ու բարութիւնը,  
դիւցազնական հաստատամտութիւնը որով անիկա տա-  
ռապիւր էր, թուեցաւ յայտնել զարմացում մը որ ապ-  
շութեան կը նմանէր, խոր վիշտ մը, վերջապէս ուժ-  
գին ու միանգամայն տխուր գորով մը: Արագ շար-  
ժումով մը իրեն քաշեց որդին ու սրտին վրայ սեղմեց:

Ամէնքս ալ իրենց առջեւէն անցանք: Հրաւիրեցի  
Բռէքօսին որ հինգշաբթի օրը մեզի գայ կառօնին ու  
Գոօսիին հետ: Ուրիշ աշակերտներ բարեւեցին զին-  
քը. սմանք անցած ատեննին գգուանք մը կ'ընէին ի-  
րեն, ուրիշներ մետալը կը շօշափէին, ամէնքն ալ բան  
մը ըսին իրեն: Ու հայրը մեզի կը նայէր ապշած, միշտ  
սեղմած բռնելով իր կուրծքին վրայ գլուխը տղուն որ  
կը հեծկտար:

# Լ Ա Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր

Կիրակի 5

Բռէքօսիին մետալը մտքէս չելլեր: Ես տակաւին չստացայ՝ մէկ հատ մը:

Ատենէ մը իվեր, չեմ աշխատիր ու տժգոհ եմ ես ինձմէ: Ուսուցիչը, հայրս եւ մայրս ալ տժգոհ են հաւասարապէս: Այլ եւս նոյն հաճոյքը չեմ գգար զբօսանքի ատեն որչափ որ կը գգայի փութաջանութեամբ աշխատած ատենս: Պարտականութիւններս գրելէս վերջը, ուրախ զուարթ գրասեղանին առջեւէն կ'ելլէի, ու խաղերուս կը վազէի եռանդով: Հիմա սեղան անգամ չեմ նստիր այլ եւս, ծնողքիս քով, առջի գոհունակութեամբ: Ստուեր մը կայ հոգւոյս վրայ, ներքին ձայն մը, որ կ'ըսէ շարունակաբար. «Աս ասանկ չըլլար»:

Կը տեսնեմ, մոլորակով աշխատութենէ դարձող տղոց անցնիլը, գործաւորներու խումբի մը մէջտեղ: Ամէնքն ալ յոգնած, բայց ամէնքն ալ շէնչող են. քայլերնին կը փութացնեն, անհամբեր են տուն հասնելու: Բարձրաձայն կը խօսին ու կը խնդան, երերցնելով ձեռքերնին անուխէն սեւցած կամ գածէն ճերմկած: Կը խորհիմ թէ ասոնք աշխատած են արշալոյսէն մինչեւ այս վերջին ժամը, թէ անոնց մէջ ինծի հասակակից տղաք կան, որոնք ամբողջ օրը, ասնիքներուն վրայ էին, հնոցներու առջեւ էին, մեքենաներու մէջտեղ, ջուրին մէջ, ու գետին տակը, ուտելով միայն կտոր մը ցամաք հաց: Ամօթ կը գգամ գրեթէ ինքզինքս անոնց հետ համեմատելով, ես որ այս ժամանակամիջոցին ակահայ չըրս էջեր մտտած եմ: Դժգոհ եմ,

չա՛տ դժգոհ: Կը տեսնեմ որ հայրիկս ալ տխուր է եւ կ'ուզէ ինծի ըսել, թէ ասիկա իրեն վիշտ կը պատճառէ եւ թէ կը սպասէ տակաւին: Սիրելի հայրիկս, որ այնքա՛ն կ'աշխատի: Ամէն ունեցածս քենէ է, հայրիկս. ի՛նչ որ կը տեսնեմ տունին մէջ, ի՛նչ որ կը հագնիմ, ի՛նչ որ կ'ուտեմ, ի՛նչ որ իս կը զուարճացնէ, ի՛նչ որ իս կը հրահանգէ եւ ի՛նչ որ պատիւ կը բերէ ինծի: այս ամէնը քու աշխատութեանդ արդիւնքն է: Ու ես, չե՛մ աշխատիր: Դուն տագնապներ ունեցար, յոգնութիւն, գրկանք ունեցար, ու ես ծուլութիւն կ'ընեմ: Ո՛հ, գէ՛շ է ասի ու ինծի վիշտ կը պատճառէ:

Կ'ուզեմ, այսօրուրնէ սկսեալ, ուսանիլ նոյն եռանդով որ Սթառտին կ'ուսանի, կ'ուզեմ աշխատիլ սրտիս ու կամքիս բոլոր ուժովը: Կ'ուզեմ յաղթել գիշերուան քունին, նանուխ ելլել առտուն, յաղթել անդթօրէն ծուլութեանս հակումին:

Այո՛, որոչաճ եմ վերջ տալ այս մեղի ու անօգուտ կեանքին, որ զիս կը նուստացնէ իմ աչքիս առջեւ ու կը տխրեցնէ ծնողքս: Արիութիւն, աշխատա՛նք, բոլոր հոգւով, բոլոր սրտով: Աշխատութիւն, որ պիտի պարգեւէ ինծի զուարթ հանգիստը, ակտիւ զուարճութիւնները, համադամ ձալը. աշխատութիւն, որ պիտի վերադարձնէ ինծի ուսուցչիս անուշ ժպիտը եւ հօրս գորովալի՛ր համբոյրը:

### ՄԵՔԵՆԱԿԱՆ ՊՁՏԻԿ ՇՈՒԿԱՌՔԸ

Ուրբաթ 10

Բռէքօսին երէկ մեզի եկաւ Կառօնին հետ: Խիստ սիրավոր ընդունեց թիւն մը ըրինք իրենց: Առաջին անգամն էր որ Կառօնը կու գար մեզի: Քիչ մը վայրենի է անիկա ու չուզեր որ գիտնան թէ այդ տարիքին մէջ տակաւին երրորդ կարգն է: Ամէնքս ալ դէմերնին վազեցինք երբ դուռը զարկին: Գռօսին չեկաւ, վասն զի հայրը եկեր է Ամերիկայէն վեց տարուան բացակայութենէ մը յետոյ: — Մայրս համուրեց Բռէքօսին, հայրս ներկայացուց անոր Կառօնը, ըսելով. «Ահա ո՛չ միայն բարի տղայ մը, այլ սրտի տէր տղայ մը»: Կառօն իր խոշոր գլուխը ծռեց ու ժպտեցաւ ինծի նայելով:

Բռէքօսին մետալը կախեր էր: Բողբոլովին երջանիկ էր ան: Իր հայրը սկսեր է նորէն աշխատիլ. հինգ օրէ ի վեր այլ եւս չի գինովնար, կ'ուզէ որ միշտ տղան իր քովը ըլլայ աշխատանոցին մէջ, եւ ուրիշ մարդ մը դարձեր է: Մենք սկսանք խաղալ, բոլոր խաղալիքներս դուրս հանեցի: Բռէքօսին հիացած մնաց շոգեկառքիս առջեւ, որուն զսպանակով բանող վայրաշարժը ինքնիրեն կը քալէ: Ասանկ բան տեսած չէր, աչքերովը կը լափէր կարմիր, դեղին սզտիկ վակօնները: Պզտիկ բանալին իրեն տուի, որպէս զի մեքենան լարէ. ծնրադրած նստաւ խաղալու համար ու այլ եւս գլուխը վեր չառաւ: Երբեք զինքը այնքան գոհ տեսած չէի: Ամէն առթիւ կ'ըսէր. «Ներեցի՛ք ինծի, ներեցի՛ք ինծի»: մեզ մէկդի ընելով, որպէս զի չարգիլէնք շոգեկառքը քաշելէ. յետոյ կ'առնէր ու դարձ-

եալ տեղը կը դնէր սզտիկ վակօնները մեծ խնամքով, իրրեւ թէ ապակիէ ըլլային, ու ինք վախնար իր շունչովը ազօտացնել զանոնք: կը սրբէր զանոնք անոնց վրան, տակը նայելով, ու կը խնդար սրտէն: Մենք կը նայէինք Բռէքօսին. իր ճկուն վիզը, իր խեղճ ականջները, որոնք օր մը արիւն թաթախ տեսեր էի, իր խոշոր ներքնակը հանդրիճած թեզանիքներով, որոնց մէջէն դուրս կ'ելլէին երկու բարակ թեւեր, որոնք անշուշտ շատ անգամ վեր ելեր էին խեղճ տղան հարուածներէ պաշտպանելու համար... Ո՛հ, այս միջոցին բոլոր խաղալիքներս ու գիրքերս իրեն կու տայի: Բերնէս հացիս պատառը կը քաշէի կու տայի իրեն. ես կը մերկանայի զայն հագուեցնելու համար ու ինքզինքս կը բռնէի վիզը չցատկելու համար, — խեղճ սզտիկ Բռէքօսի: — Խորհեցայ որ իրեն նուիրեմ շոգեշարժ կառախուճքս: Նախ ուզեցի հրաման առնել հայրիկէս: Ճիշտ այն միջոցին զգացի որ ձեռքիս մէջ բան մը կը սահեցնեն: Նայեցայ: Հայրս թուղթի մը վրայ գրեր էր մատիտով. «Բոեֆօսիև հարևեցաւ շոգեկառքիդ, ան խաղալիք չուրի: Մոտեղ բան մը չի՞ զար որ ընես»: »

Իսկոյն երկու ձեռքով առի վայրաշարժը եւ վակօնները ու Բռէքօսին երկնցուցի:

«Ա՛ն ասիկա, քուկդ է: »

Անիկա ինծի նայեցաւ առանց հասկնալու:

«Քո՛ւկդ է, կրկնեցի, քեզի կը նուիրեմ: »

Բռէքօսին ապշած հայրիկիս ու մայրիկիս նայեցաւ ու հարցուց ինծի. «Բայց ինչո՞ւ համար: — Հանուն քեզի կու տայ այդ խաղալիկը, ըսաւ հայրս, վասն զի իր բարեկամն ես եւ քեզ շատ կը սիրէ... քու մտալդ տօնելու համար է... »

Բռէքօսին երկչոտութեամբ հարցուց .

— Կրնամ տանիլ այս խաղալիկը . . . մեր տունը :

— Բայց անտարակոյս :

Սեղճ պզտիկը , դրան սեմին վրայ կեցած , տակաւին չէր համարձակէր տանիլ իր գանձը : Երջանիկ էր . . . ու կը մրմնջէր «Ներեցե՛ք ինձի ,» դողդոջուն ու ժպտուն բերնոյ մը :

Կառօնը օգնեց անոր շոգեկառքը անոր թաշկինակին մէջ փաթթելու , եւ , վար ծռած ատեն , կոտորտեց պզտիկ կարկանդակները զոր մայրս լեցուցեր էր անոր գրպանը :

«Օր մը հօրս աշխատանոցը պիտի գաս , ըսաւ ինձի Բռէքօսին : Քեզի գամե՛ր պիտի տամ :»

Մայրս Կառօնին ներքնակին լամբակին մէջ պզտիկ ծաղկեփունջ մը դրաւ , որպէս զի նա ալ , իր կողմէն , մօրը տայ : Կառօն իր խոշոր ձայնովը շնորհակալ եղաւ մօրս , առանց գլուխը վեր առնելու , բայց իր աչքերուն մէջ կը ցոլար իր ազնիւ ու բարի հոգին :

### Հ Պ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

#### Շաբաթ 11

Սա՛ Գառլօ Նօպիսն ալ որ արուեստակութեամբ կը սրբէ թեզանիքը երբ Բռէքօսին քովէն անցած ատեն կը դաչի իրեն : Այս տղան հպարտութեան մարմնացումն է , ինչու որ հայրը հարուստ է : — Բայց Տէռօսին ալ այդչափ հարուստ հայր ունի : — Այս Նօպիսը իրեն համար յատուկ նստարան մը ունենալ կ'ուզէ , այնքան կը վախնայ որ քովինները կ'աղտոտեն նստա-

րանը . մեզի ամէնուս ալ կը նայի վերէն վար , ու միշտ արհամարհոտ ժպիտ մը ունի շրթունքին վրայ : Չե՛ս կրնար ստքին դաչիլ , երբ , կարգաւ , դուրս կ'ելլենք զոյգ զոյգ : Ոչինչ բանի մը համար լուտանք մը կը նետէ գլխուդ , կամ կը սպառնայ հայրը կանչել տալ : Եւ սակայն հայրը լաւ խրատ մը տուաւ իրեն , այն օրը որ «ստահակ» անուաներ էր ամխափաճաւին տղան :

Չտեսայ դպրոցական մը որ անոր ընկերութիւնը փնտռէր : Ոչ ոք կը խօսի իրեն հետ , ոչ ոք երթաւ բարով կ'ըսէ անոր երբ կը մեկնի դպրոցէն , ոչ ոք դասը կ'ըսէ քովէն երբ չգիտնայ . . . : Իսկ ինք ոչ զոք կրնայ հանդուրժել , ու անարգել կը ձեւացնէ Տէռօսին , վասն զի դասարանին առաջինն է , Կառօնն ալ կ'անարգէ , վասն զի ամէնքը զինքը կը սիրեն : Տէռօսին արժան չի սեպեր ուշադրութիւն դարձնել անոր ըրածին , եւ երբ Կառօնին ըսեն թէ Նօպիսը զինքը կը ծաղրէ , նա կը պատասխանէ . «Այս աղան այնքան ապուշ հպարտութիւն մը ունի որ չ'արժեք իսկ իրմով զբաղիլ :»

Գօռէթին օր մը ըսաւ Նօպիսին , որ արհամարհոտ նայուածք մը կը նետէր իր կատուի մօրթէ գլխարկին վրայ .

«Գնա՛ քիչ մը Տէռօսիէն մեծ-աղայութիւն ընե՛լ սորվէ :»

Երէկ Նօպիսը դանգատեցաւ ուսուցչին թէ Գալապրոցին ոտքովը իր սրունքին դպեր էր : Ուսուցիչը հարցուց Գալապրոցիին .

«Դիտմամբ ըրիք :

— Ոչ , պարոն , պատասխանեց անկեղծաբար :

— Կարի դիւրագգած էք , Նօպիս .» ըսաւ վարժապետը :

Նօպիս արհամարհանքով պատասխանեց .

« Հօրս պիտի ըսեմ : »

Պ. Բէնպօսին գոչեց .

« Ձեր հայրը իրաւունք չպիտի տայ ձեզի , ինչպէս որ անցեալ անգամ ըրաւ : Եւ սակայն , հոս , ձեր արարքները դատողը ես եմ : » Յետոյ առաւ պսակի մեղմիւ . « Օն , Նօպիս , քիչ մը քաղաքավար ու բարի եղէ՛ք ձեր ընկերներուն հանդէպ . տեսէք , հոս գործաւորի տղաք կան , քաղքենիներու տղաք , ազնուականներ , հարուստներ եւ աղքատներ կան , ու ամէնքն ալ զիրար կը սիրեն իրրեւ թէ եղբայր ըլլային : Ինչո՞ւ դուք ու միւսներուն պէս չէք ըներ . շատ աւելի գոհ պիտի ըլլայիք . . . բան մը չունի՞ք պատասխանելու : »

Նօպիս , որ իր սովորական արհամարհատ ժպիտովը մտիկ ըրեր էր , պազուժեամբ պատասխանեց .

« Ոչ , պարոն : »

— Նստէ՛ք , ըսաւ Պ. Բէնպօսին : Կը մեզքնամ ձեզ , սիրտ չունեցո՞ղ տղայ մըն էք դուք : »

Ամէն բան լինցած կ'երեւար , բայց պզտիկ որմնադիրը , որ առաջին նտարանին վրայ է , կլորիկ երեսը դարձուց դէպի Նօպիսին , որ վերջին նտարանին վրայ էր , ու անոր « նապաստակի դնչիկ » մը ըրաւ , այնքան ծաղրաշարժ , որ ամբողջ դասարանը խնդալով ձաթեցաւ : Ուսուցիչը յանդիմանեց զայն . բայց պարտաւորութեցաւ ձեռքը բերնին դնել խնդալը բռնելու համար : Նօպիսն ալ սկսաւ խնդալ , բայց ջղային ու սրբանկաճ խնդալ մը որ ոչ զոք խաբեց .

### ԱՇԽԱՏՈՒԹԵՆԷ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾՆԵՐԸ

Երկուօրքի 13

Նօպիսը կրնայ ֆուսթիլին զոյգը ըլլալ . երկուքն ալ չեն յուզուիր ո՛չ մէկ բանէ . անայլայլ մնացին սոսկալի տեսարանին առջեւ զոր ունեցանք դարոցէն դուրս ելլելու ատեննիս : Հայրիկիս հետ կը նայէինք երկրորդ դասարանէն տղոց որոնք գետնի սառոյցներուն վրայ կը նետուէին իրենց վերարկուին ծայրովը կամ իրենց գլխարկովը կը շփէին սառոյցը , որպէս զի աւելի լաւ սաշին անոր վրայ , երբ տեսանք որ փողոցին ծայրէն կու գային խուճի մը մարդիկ որոնք արագ կը քալէին , լուրջ եւ զարհուրած կերպարանքով , ցած ձայնով խօսելով իրարու հետ : Ամբոխին մէջ կային երեք թաղապետութեան պահակներ . պահակներուն ետեւէն , երկու մարդ պատգարակ մը կը տանէին : Գարոցականները վագեցին ամէն կողմէ : Ամբոխը դէպի մեզի կու գար . պատգարակին վրայ մարդ մը կը տեսնուէր տարածուած : Դիակի մը պէս տոգոյն էր , գլուխը կը թնած ուսին վրայ , մազերը խառնիխուռն եւ արիւնով լեցուն . արիւնը կը վագէր հաւասարապէս իր բերնէն ու իր ականջներէն , սոսկալի բան էր : Պատգարակին քովէն կը քալէր կին մը թեւերուն մէջ տղայ մը գրկած , վշտէն խենթեցած կ'երեւար , յանկարծ գոչեց .

« Ընտա՛ւ , մեռա՛ւ : »

Կնօջը անմիջապէս ետեւէն պզտիկ տղայ մը կը քալէր , դարոցի պայտասակը թեւին տակ . կը հիծկըլտար :

« Ի՛նչ պատահեր է » հարցուց հայրս :

Անցորդ մը պատասխանեց թէ որմնադիր մըն էր որ

չորրորդ յարկէն վար ինկեր է , աշխատած ատեն , Պատգարակը տանողները կանգ առին պահ մը : Մեր մէջէն շատերը աչքերնին անդին դարձուցին սասկումով : Տեսայ կարմիր փետուր գնող վարժուհին որ առաջին դասարանի վարժուհիս կը բռնէր գրեթէ նուազած , նոյն միջոցին զգացի որ արմուկս կը հրեն : Պզտիկ որմնադիրն էր , գունաթափ ոտքէն գլուխը կը դռար : Անշուշտ իր հօրը կը մտածէր : Ես ալ անոր վրայ կը մտածէի : Ես հանգիստ եմ դպրոցին մէջ , վասն զի գիտեմ թէ հայրիկս տունն է , իր դրասեղանին առջեւ նստած , զերծ ամէն վտանգէ : Բայց քանիներ իմ ընկերներէս կը մտածեն թէ իրենց հայրը կ'աշխատի շատ բարձր կամուրջի մը վրայ կամ մեքենայի մը անիւնեբուն քով , սխալ քայլ մը կրնայ անոնց մահուանը պատճառ ըլլալ : Զինուորներու տղոց պէս են , որոնց հայրերը պատերազմի մէջ են :

Պզտիկ որմնագիրը կը նայէր միշտ ու հեռզհեռէ դողը կը շատնար , հայրս նշմարեց ու ըսաւ իրեն .

« Տուն գնա՛ , տղաս , գնա՛ շուտով տե՛ս հայրդ , զոր քաջառօղջ ու հանգի՛ստ պիտի գտնես : »

Պզտիկ որմնագիրը գնաց , ո՛չ առանց ետին դռնալու ամէն մէկ քայլին : Տխուր ամբոխը սկսաւ ճամբայ առնել ու հէգ կիներ այնպէս կը պռար որ սիրտդ կտոր կտոր կ'ըլլար՝ « Մեռա՛ւ , մեռա՛ւ :

— Չէ , չէ , մեռած չէ , » կ'ըսէին իրեն ամէն կողմէ : Բայց ան մտիկ չէր ըներ ու կ'սղարար միշտ , երբ զայրացկոտ ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր . « Կը լընդա՞ք : »

Ետիս դարձայ ու տեսայ սեւ մօրուքով մարդ մը որ կը նայէր Ֆռանթիին , որ տակաւին կը ժպտէր , Մարդը գետինը նետեց շար տղուն մորթակը , եւ խիստ ձայնով մը ըսաւ .

« Գոնէ գլխա՛րիդ հանէ , թշուառական , երբ կը տեսնես որ աշխատութեան զոհ մը կ'անցնի : »

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

Ուրբաթ 17

Երէկ հօրս կ'ընկերանայի Մօնգալիէսի շրջակայները երթալու : Կ'երթայինք տեսնել ամարանոց մը զոր կ'ուզէ վարձել ամառուան եղանակին համար : Տանը բանալիները վարժապետի մը քովն էր , որ զրագրի դեր կը կատարէ տանտերօջը քով : Ասիկա մեզ պարտացուց տունը եւ յետոյ մեզ տարաւ իր սենեակը , ուր զովացուցիչ ըմպելիներ հրամցուց մեզի :

Հոն սեղանին վրայ էր , փայտէ կաղամար մը , կոնաճեւ , եզականապէս քանդակուած : Տեսնելով որ հայրս այդ կաղամարին նը նայի , վարժապետը ըսաւ .

« Այդ առարկան թանկագի՛ն է ինձի համար . դուք ալ ինձի պէս պիտի դատէիք պարոն , եթէ անոր պատմութիւնը գիտնայիք : »

— Պատմեցէ՛ք զայն մեզի , ըսաւ հայրս :  
Ու ան պատմեց մեզի :

Քանի մը տարիներ առաջ , այս վարժապետը Թուրին ըլլալով , իրեն յանձնարարուեր է , ամբողջ ձմեռ մը , դասեր առն բանտարկեալներուն :

Այս դասերը տալու համար , կլոր սրահի մը մէջ կը կենար , որուն շուրջը , բարձր եւ մերկ պատերուն վրայ , կը բացուին շատ մը պզտիկ քառակուսի պատուհաններ , խաչաձեւ երկաթներով ձողաւորուած : Պատուհաններուն իւրաքանչիւրը պզտիկ խցիկ մը կը

լուսաւորէ : Ուսուցիչը իր դասը կու տար այդ սրահին մէջ պտտեւելով . իր ունկնդիրները այդ լուսամուտնե-  
րուն ետեւ կր կենային , իրենց տետրակները ձողերուն  
կաթնցուցած , թողլով կէս մութին մէջ միայն նիհար  
ու վշտալից դէմքեր , գիտախաիւ եւ գորշագոյն մո-  
րուքներ , մարդասպանի եւ գողի պիչ նայող աչքեր :

Ասոնց մէջ մէկ հատ մը կար , 78 թիւը կրողը , որ  
իր ընկերներէն աւելի ուշագիր էր դասին . շատ կ'ու-  
սանէր եւ դասատուին կը նայէր յարգանքով ու երախ-  
տագիտութեամբ լեցուն աչքերով : Ասիկա սեւ մորու-  
քով երիտասարդ մըն էր , աւելի թշուառ մը քան սրի-  
կայ մը , ետենագործ մը , որ բարիութեան շարժու-  
մով մը , քերիչ մը նետեր էր իր վարպետին գլխուն ու  
զայն վիրաւորեր էր մահացու կերպով : Շատ տարիներ  
խցարգելութեան դատապարտուեր էր :

Երեք ամսուան մէջ , այս բանտարկեալը սորվեր էր  
կարդալ եւ գրել . շարունակ կը կարդար . ու քանի  
կ'ուսանէր , այնքան կը թուէր ուղղուիլ ու զղջալ դառ-  
նապէս բրածին վրայ :

Օր մը , երբ դասը պիտի վերջանար , նշան ըրաւ  
դասատուին որ մօտենայ իր պատուհանին , ու անոր  
ծանուց տխրութեամբ թէ հետեւեալ օրը թուրինի  
բանտէն վեներտիկի բանար պիտի փոխադրուէր : Դա-  
սատուին հրաժեշտ տալէ ետքը , բանտարկեալը աղա-  
չեց անոր խոնարհ եւ յուզուած ձայնով մը որ իրեն  
թոյլատրէ ձեռքը բռնել : Ուսուցիչը ձեռքը երկնցուց  
անոր , ան համուրեց ու ըսաւ . « Շնորհակալ եմ , շնոր-  
հակալ եմ : » յետոյ աներեւութացաւ : Երբ դասատուն  
ետ քաշեց ձեռքը , արցունքով ողորուած էր ան :

Այն օրէն յետոյ այլ եւս չաետաւ զայն : Վեց տա-  
րի անցաւ :

Բոլորովին մտքէս ելած էր այդ թշուառ մարդը ,  
շարունակեց ուսուցիչը , երբ երէկ առաւօտ տեսայ որ  
անծանօթ մը եկաւ հոս գէշ հագուած , սեւ մորուքով  
մը արդէն գորշագունիլ սկսած . « Դո՛ւք էք , պարոն ,  
այս ինչ ուսուցիչը , հարցուց ինծի : — Ո՛վ էք դուք ,  
ըսի անոր : — Ես 78 թիւ բանտարկեալն եմ , այն՝ ո-  
րուն կարդալ եւ գրել սորվեցուցիք , վեց տարի կայ ,  
շարունակեց , ու վերջի դասին օրը հաճեցաք ձեր ձեռ-  
քը տալ ինծի . . . : Հիմա պատիժս լրացաւ եւ եկայ . . .  
ձեզի աղաչել որ ընդունիք այս փոքրիկ աշխատութիւ-  
նը զոր բանտին մէջ գործեցի . . . : Կ'ուզէ՞ք զայն ըն-  
դունիլ իրրեւ ապացոյց իմ երախտագիտութեանս ,  
պարոն ուսուցիչ :

Համր կեցայ , եւ խեղճ մարդը կարծեց թէ չէի ու-  
զեր ընդունիլ իր նուէրը , ինծի նայեցաւ վշտալից ար-  
տայայտութեամբ մը , որ ըսել կ'ուզէր : « Վեց տար-  
ուան տառապանքը չի՞ բաւեր պատիւս տեղը բերե-  
լու : » Գի՞տցի նախկին աշակերտիս՝ բանտարկեալին վը-  
րայ , ու առի առարկան զոր ահաւաստիկ է : »

Հայրս եւ ես ուշագրութեամբ կը նայէինք կաղա-  
մարին զոր մեզի կ'երկնցնէր ուսուցիչը : Կարծես թէ  
գամի մը ծայրովը քանդակուած էր , եւ անհուն համ-  
բերութիւն հարկ եղած էր զայն աւարտելու համար :  
Այս կաղամարը կը ներկայացնէր տետրակ մը որուն  
վրայ ձգուած էր գրիչ մը եւ վրան կը տեսնուէր գըր-  
ուած . Ուսուցչիս — յիշատակ 78 թիւեւ : — Վեց տա-  
րի : — Ու տակը , պզտիկ գրերով . Ուսում եւ յոյս . . . :

Ուսուցիչը աւելի երկար ատեն վար չդրաւ մեզ ու  
մեկնեցանք : Բայց Մօնթալիէսիէն թուրին երթալու  
ճամբան , չէի կրնար ուրիշ բանի վրայ մտածել , բայց  
եթէ լուսամուտին ետին կեցող բանտարկեալին , իր



ուսուցչին ուղղած հրածեղտին, այն խեղճ կաղամարին որ, բանտին մէջ քանդակուած, շատ բաներ կ'ըսէր: Գիշերն ալ ան երազեցի ու հետեւեալ առաւօտն իսկ այն կը մտածէի...: Շատ հեռո՛ւ էի երեւակայելէ անակնկալը որ կը սպասէր ինձի դպրոցին մէջ: Հազիւ մտած նստած էի նոր տեղս — Տէոսիին քովը — ու թուաբանութեան խնդիրս գրելէ յետոյ ամսօրեայ քըննութեան համար, ընկերոջս պատմեցի բանտարկեալին պատմութիւնը, եւ կաղամարին ինչպէս շինուած ըլլալը, եւ վրայի գրուածները:

Տէոսիին սարսուռաց իսկոյն, եւ, նայելով փոխնիփոխը Գոսիին ու ինձի — Գոսիին, պողպատաճառին տղան, որ մեր առջևի նստարանին վրայ նստած էր, կ'անակը դարձուցած, բողբոջին թաղուած իր թուաբանութեան խնդիրին լուծումին մէջ. « Լո՛ւս, բաւ ինձի Տէոսիին ցած ձայնով, թեւս սեղմելով, Գոսիին ինձի առջի օրը ըսաւ թէ իր հօրը ձեռքը, որ Ամերիկայէն եկած է, տեսած է փայտէ կաղամար մը, կոնաձեւ, վրան տետրակով մը ու գրիչով մը. այդ ըսածդ պէտք է ըլլայ...: Վե՛ց տարի, ճիշդ այնքան ատեն է որ հայրը անցուցած է, կ'ըսէ Ամերիկայի մէջ, — խեղճ բանտն էր: — Գոսիին, շատ փոքր էր դատին ատենը, չի յիշեր, մայրը կամաւ սխալ բաներ ըսած է անոր: Ան բան մը չի գիտեր: Աս ըսածներէս բառ մը չփախչի՛ մեր բերնէն. խեղճ պզտիկ, պէտք է յարգել իր անգիտակցութիւնը...: »

Ապշած կը մնայի, պիչ նայելով Գոսիին վրայ: Այս ժամանակամիջոցին Տէոսիին խնդիր մը լուծեց, Գոսիին տուաւ զայն, ձերմակ թերթ մը թուղթի հետ, յետոյ առաւ անոր ձեռքէն Թարայի հիւսանդապահը, ամսօրեայ պատմութիւնը զոր ուսուցիչը տուած էր օ-

րինակելու: Տէոսիին ուզեց այդ աշխատութիւնը բառնալ Գոսիին: Նաեւ տուաւ անոր գրիչներ, աղապատանքով ձեռքը անոր ուսին վրայէն անցընելով: Տէոսիին պատուոյս վրայ խօսք առաւ ինձմէ ոչ ոքի ըսել գիացածս:

Երբ դպրոցէն դուրս ելանք, ըսաւ ինձի ուժգնութեամբ.

« Գոսիին հայրը երէկ եկաւ զայն առնելու դպրոցէն դուրս ելլելու ատեն, այս առտու ալ հոն պիտի ըլլայ դուրս ելած ատեննիս...: Ես ինչ ընեմ, դուն ալ անանկ ըրէ: »

Երբ փողոց ելանք, տեսանք, արդարեւ, Գոսիին հայրը, սեւ մօրուքով մարդ մը, արեւէն այրած գոյնով մտահոգ եւ դեղնած դէմքով, որ քիչ մը հեռուն կը կենար:

Տէոսիին Գոսիին ձեռքը սեղմեց, բայց տեսնուելու կերպով մը, ու ըսաւ անոր. « Ցտեսութիւն, Գոսի. » թուշը շոյելով: Ես ալ նոյն բանը ըրի: Տէոսիին ու ես կոսս կարմիր եղեր էինք ակամայ. ու Գոսիին հայրը մեզի նայեցաւ ու շաղբութեամբ, բարեմիտ նայուածքով, բայց խռոված ու կասկածոտ արտայայտութեամբ մը որ պաղութիւն ձգեց մեր սրտին մէջ:

**ԹԱԹԱՅԻ ՇԻՒԱՆԴԱՊԱՆԸ**

(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՄՍՕՐԵԱՅ)

Մարտի անձրեւոտ առաւօտ մը, գիւղացիի պէս հագուած տղայ մը, վրան գլուխը ջուրը թաթխուած եւ ցեխը պլլուած, թեւին տակը ծրար մը բռնած,

ներկայացաւ Նարոյի մեծ հիւանդանոցին դռնապանին առջեւ, ու անոր յանձնեց նամակ մը իր հայրը հարցնելով:

Այս տղան գեղեցիկ դէմք մը ունէր հաւկիթածեւ, թուխ տմոյն, խոհուն աչքեր, եւ իր կիսարաց շրթութունքներուն միջեւէն կը տեսնուէր սպիտակափայլ ակունքերը:

Նա կու գար Նարոյի շրջականերու գիւղերու մէկէն: Իր հայրը որ նախորդ տարին մեկնած էր Ֆուսսսայի մէջ գործ գտնելու, դարձեր եկեր էր Բտալիա: Նարոյի հասնելուն՝ յանկարծ հիւանդութիւն մը եկեր էր վրան ու հոն մնացեր էր: Հազիւ երկու տող գրելու ժամանակ ունեցեր էր իր ընտանիքին, խոսցնելու համար իր հասնիլը եւ ըսելու համար թէ հիւանդանոց կը մտնէր: Իր կինը, վշտացած այս լուրէն, չկրնալով թողուլ իր տնակը, ուր պէտք էր մնար անկար մայր մը եւ խիստ ազտիկ տղայ մը խնամելու համար, Նարոյի զրկեց իր անդրանիկ սրգին, քանի մը սուտալով ձեռքը երթալ հայրը գտնելու, իր թաթան (\*), ինչ պէս կ'ըսեն հոն: Տղան տասը հազարամեթր տեղ քալեր էր ոտքով:

Դռնապանը, նամակին վրայ ակնարկ մը ձգելէ յետոյ հիւանդապահ մը կանչեց, եւ ըսաւ անոր որ տղան իր հօրը տանի:

«Ո՞վ է հայրը,» հարցուց հիւանդապահը:

Տղան, դողալով թէ գէշ լուր մը պիտի առնէ, անունը տուաւ:

Հիւանդապահը այդ անունով մարդ չէր յիշեր:

(\*) Թարա, բարա (հայրիկ բառին ձեւափոխութիւնը, Նարոյի ժողովրդեան բարբառով:

«Ծեր գործաւոր մըն է որ օտար երկրէ՞ կու գայ, հարցուց:

— Գործաւոր, այո՛, պատասխանեց տղան ա՛լ աւելի անձկու թեան մէջ մտնելով. ծեր չէ, բայց օտար երկրէ եկած:

— Ե՞րբ մտած է հիւանդանոց:»

Տղան նամակին վրայ նայեցաւ:

«Գրեթէ հինգ օրէ իվեր.» ըսաւ:

Հիւանդապահը մտածեց քանի վայրկեան, յետոյ, իբրեւ թէ յանկարծ միտքը գալով.

Հա՛, գիտե՛մ, ըսաւ: Չորրորդ սրահին մէջ, խորի անկողինը. . . .

— Շա՞տ հիւանդ է. ի՞նչպէս է.» հարցուց տղան սրտատանջութեամբ:

Հիւանդապահը անոր նայեցաւ առանց պատասխանելու:

«Եկո՛ւր,» ըսաւ միայն:

Երկու յարկ վեր ելան միասին, եւ նրբանցքի մը ծայրը դրան մը առջեւ կեցան. դուռը կը բացուէր ննջարանի մը վրայ, ուր երկու շարք անկողիններ կային:

«Եկուր,» կրկնեց հիւանդապահը ներս մտնելով:

Տղան անոր ետեւէն գնաց. աջ ու ձախ զարհուրած նայուածքներ նետելով՝ հիւանդներու տոգոյն եւ այլալած դէմքերուն, Հիւանդներէն մէկ քանին աչքերնին գոցած էին եւ մեռածի կերպարանք ունէին, ուրիշներ վեր կը նայէին, խոչոր, շեշտ, զարհուրած աչքերով: Ուրիշներ կը հեծկլտային տղու պէս: Սրահը մութ էր, մթնոլորտին մէջ կը տիրէր դեղերու սաստիկ հոտ մը: Երկու գթութեան քոյրեր կ'երթային, կու գային, ձեռքերնին դեղըմպելիներու շիշեր բռնած:

Երբ սրահին խորը հասան՝ հիւանդապահը կանգ առաւ անկողնի մը սնարին քով, վարագոյրները բացաւ ու ըսաւ .

« Ահա հայրդ : »

Տղան հեծկտուք մըն է փրցուց, ու ձեռքի ծրարը վար ձգելով, գլուխը դրաւ հիւանդին ուսին վրայ : Անոր ձեռքը բռնեց որ վերմակին վրայ տարածուած էր : Հիւանդը շարժում մը չըրաւ :

Տղան ոտքի ելաւ, հօրը նայեցաւ, ու նորէն լալ սկսաւ : Այն ատեն հիւանդը երկար նայուածք մը նետեց անոր վրայ ու գայն ճանչնալ թուեցաւ : Բայց իր չրթոււքները չէրերացնէր : Խեղճ քարաւ, ինչպէս փոխուած էր : Իր որդին չպիտի կրնար երբեք ճանչնալ զինքը : Մտղերը ճերմկեցեր էին, եւ մօրուքը երկնցեր անիննամ կերպով, Երեսը ուռեցեր ու կաս կարմիր եղեր էր, մորթը պրկուեր, աչքերը պղտիկեցեր, շքրթոււքները հաստցեր, դէմքը այլայլեր : Միայն ճակատը իրը մնացեր էր ու մէյ մ'ալ աղեղնածեւ սեւ յօնքերը : Հիւանդը ճիգ կ'ընէր շունչ առնելու համար :

« Թաթա, թաթա՛, ըսաւ տղան, ես եմ, զիս չէ՞ք ճանչնար : Փռանսուան եմ, ձեր Փռանսուան, երկրէն եկայ, մայրիկը իս զրկեց : Ինծի նայեցէ՛ք լաւ մը, չէ՞ք ճանչնար : Բա՛ւ մը ըսէք ինծի : »

Բայց հիւանդը, ուշագրութեամբ անոր նայելէ յետոյ, աչքերը գոցեց :

Այն ատեն տղան աթոռ մը առաւ լալով, նստաւ ու սպասեց, առանց աչքը հօրը երեսէն սողնի առնելու :

« Անշուշտ բժիշկը պիտի գայ այցելէ, մտածեց, նա բան մը կ'ըսէ ինծի : »

Ու նորէն իր տխուր մտածութիւններուն մէջ ին-

կաւ, շատ մը բաներ յիշելով իր բարի հօրը վրայ, անոր մեկնումին օրը, երբ իրեն հրածեշտ տուեր էր նաւուն մէջ, այն յոյսերը զոր ունեցեր էր ընտանիքը այս ճամբորդութեանը համար, մօրը սաստիկ տխրութիւնը նամակը առնելուն : Խորհեցաւ մահուան վրայ, ընտանիքին թշուառութեան մէջ իյնալուն վրայ . . . . Այսպէս մնաց քիչ մը ատեն :

Յանկարծ ձեռք մը դպաւ ուսին թեթեւ մը ու զինքը սորսոտցուց : Գթութեան քոյր մըն էր :

« Ի՞նչ է հօրս հիւանդութիւնը, հարցուց խօսոյն : »

— Ասի քու հայրդ է, հարցուց նա :

— Այո՛, հայրս է, եկած եմ զինքը խնամելու : Ի՞նչ ունի :

— Քաջութիւն, տղաս, բժիշկը պիտի գայ, » պատասխանեց քոյրը, ու հեռացաւ առանց ուրիշ բան ըսելու :

Կէս ժամ վերջը, փոքր զանգակի մը ձայնը լուռեցաւ, ու տղան տեսաւ որ այցելու բժիշկը ներս կը մտնէ ներքին բժիշկի մը հետ. գթութեան քոյրը եւ հիւանդապահը ետեւէն կու գային : Այցի սկսաւ, կանգ առնելով իւրաքանչիւր անկողնի առջեւ : Առանկ սպասելը շատ երկար թուեցաւ խեղճ տղուն, եւ ամէն մէկ քայլը զոր կ'ընէր բժիշկը առաջ գալով՝ իր երկիւղը կ'աւելցնէր :

Վերջապէս քովի անկողնին առջեւ եկաւ բժիշկը : Սա երկայնահասակ ծերունի մըն էր կորաքամակ, լուրջ դէմքով : Քովի անկողնէն հեռանալէն առաջ տղան ոտքի ելեր էր, եւ երբ բժիշկը մօտեցաւ, Փռանսուան սկսաւ լալ :

« Հիւանդին որդին է, ըսաւ քոյրը բժիշկին, այս առաւօտ եկաւ իր երկրէն : »

Բժիշկը մէկ ձեռքը Ֆռանսուային ուսին դրաւ , յետոյ ձաւեցաւ հիւանդին վրայ , բազկերակը շօշափեց , ձեռքը ճակտին դրաւ ու քանի մը հարցումներ ըրաւ մայրապետին , որ պատասխանեց . « Նոր բան մը չկայ » Բժիշկը խորհեցաւ քիչ մը ու ըսաւ . « Շարունակեցէ՛ք առաջուան պէս :

— Պարոն բժիշկ , հարցուց տղան , ի՞նչ հիւանդութիւն ունի հայրս :

— Քաջութիւն ունեցի՛ր , բարեկամս , պատասխանեց բժիշկը , վերստին ձեռքը տղուն ուսին վրայ դնելով : Հայրդ գլխու օձախտ ունի : Ծանր հիւանդութիւն է , բայց չեմ՝ յուսահատիր : Քովը կեցի՛ր , քուներկայութիւնդ կրնայ ազէկութիւն բերել :

— Բայց չի ճանչնա՛ր զիս , գոչեց , տղան վշտագին :

— Պիտի ճանչնայ . . . վաղը թերեւս : Յուսանք , եւ քա՛ջ եզիր :

Տղան ուրիշ բաներ ալ հարցնել ուզեց , բայց չհամարձակեցաւ . բժիշկը անդին գնաց :

Այն ատեն սկսաւ , Ֆռանսուային համար , հիւանդագահի կեանքը : Մեծ ծառայութիւն մը չէր կրնար ընել , վերմակը կը շտկէր հիւանդին , ատեն ատեն ձեռքը կը բռնէր , ճանձերը կը վանէր , անոր ամէն ձայն հանելուն կը ծռէր վրան . ու երբ մայրապետը ըմպելիք բերէր թասը եւ դգալը անոր ձեռքէն կ'առնէր հիւանդին հու տար : Հիւանդը իրեն կը նայէր երբեմն , բայց ոչ մէկ կերպով չէր յայտնէր թէ՛ զայն կը ճանչնար . բայց միայն իր նայուածքը աւելի երկար կանկ կ'առնէր Ֆռանսուային վրայ , մանաւանդ երբ նա թաշկինակը աչքերուն տանէր :

Այսպէս անցաւ առաջին օրը :

Գիշերը՝ տղան պառկեցաւ երկու աթուռի վրայ ,

եւ առաւօտուն նորէն սկսաւ իր ջերմեանդ պաշտօնը :

Առաւօտուն՝ հիւանդին նայուածքները թուեցան ցոյց տալ թէ՛ ճանաչողութիւնը եկեր է քիչ մը :

Տղուն փաղաքշտ ձայնէն երախտագիտութեան տարտամ արտայայտութիւն մը փայլեցաւ հիւանդին մեծցած բիրերուն մէջ , եւ անգամ մը շարժեց քիչ մը շրթունքները իրբեւ թէ՛ բան մը ըսել կ'ուզէր : Իւրաւրաքանչիւր թմրութենէ յետոյ , երբ աչքերը կը բանար , հիւանդը կարծես թէ իր պզտիկ հիւանդապա՛շը կը փնտռէր : Բժիշկը , երկու անգամ հոնկէ անցած ատեն , փոքր ինչ բարելաութիւն նշանակեց : Իրիկուան դէմ , երբ պզտիկ տղան հիւանդին շրթունքներուն կը մօտեցնէր թասը , կարծեց տեսնել ժպիտ մը անոր առաւ շրթունքներուն վրայ : Ուստի սկսաւ քիչ մը սիրտ առնել եւ յուսալ : Կարծելով թէ ձայնը լսելի կրնար ըլլալ , գոնէ շիտթ կերպով , տղան երկարօրէն խօսեցաւ հօրը հետ : Խօսեցաւ անոր ցած ու քաղցր ձայնով իր մօրը վրայ , պզտիկ քոյրերուն վրայ , իրենց տուն վերադարձնուն վրայ , ու կը համոզէր քանի արիութիւն ունենալու : Եւ , թէեւ Ֆռանսուան կը կասկածէր թէ՛ հիւանդը իր ըսածները չէր հասկնար , բայց եւ այնպէս կը խօսէր , վասն զի իրեն այնպէս կը թուէր թէ նա մտիկ կ'ընէր հաճոյքով իր ձայնին հնչիւնը : Այսպէս անցուց երկրորդ եւ երրորդ օրը , ու չորրորդը մարտնչում մը եղաւ թեթեւ բարելաութեան մը եւ յանկարծական սաստկացումի մը միջեւ : Տղան այնքան պաշարուած էր իր հօրը շոքալած խնամքներովը , որ հազիւ թէ օրը երկու անգամ քիչ մը հաց պանիր կ'ուտէր : Նա չէր տեսներ իր շուրջը անցած դարձածը . մահամերձ հիւանդները , գթութեան քոյրերուն երթալ գալը գիշերուան մէջ , լացը կոծը այցելուներու

որոնք կը թողուին կ'երթային յուսահատ, վերջապէս հիւանդանոցի կեանքի մը բոլոր լալագին ու կսկծալի տեսարանները, որոնք ուրիշ ամէն պարագայի մէջ պիտի սարսափեցնէին զինքը: Ժամերը, օրերը կ'անցնէին, եւ ինք միշտ հոն էր իր քարային հետ, խնամոտ, տառապագին, անոր ամէն մէկ շունչ առնել տալուն ամէն մէկ նայուածքին իր սիրտը կը արտփէր:

Յանկարծ, հինգերորդ օրը, հիւանդութիւնը սաստկացաւ:

Երբ բժիշկին հարցուցին, նա գլուխը ծռեց, իրրեւ ըսելու համար թէ ամէն բան ըննցած էր. տղան աթոռին վրայ ինկաւ հեծկտալով: Կը թուէր իրեն թէ հակառակ հիւանդին յուսահատ վիճակին, երթալով ճանաչողութիւնը կը վերստանար անի: Հէգ մահամերձը Ֆռանսուային կը նայէր միշտ առաւել շեշտօրէն, քաղցրութեան եւ իմացականութեան աճեցուն արտայայտութեամբ մը: Միայն իր սղտիկ հիւանդապահին ձեռքէն խմել կամ դեղ առնել կ'ուզէր, եւ խեղճը երթալով ա'լ առելի շարժում մը կ'ընէր շրթունքներու, իրրեւ թէ բառ մը արտասանել կ'ուզէր: Երբեմն այս շարժումը այնքան զգալի էր որ տղան անոր թեւերը կը սեղմէր ու ժգին ու կ'ըսէր անոր գրեթէ ցնծալին շեշտով մը. «Քաջութիւն, արիւթիւն, թաթա, պիտի ըռընտնաս, հոսիչ դուրս պիտի ելլենք, պիտի երթանք գտնել մայրիկը ու պզտիկները . . . »

Իրիկուան ժամը չորան էր, ու ճիշտ տղան իր գորովանքի եւ յոյսի եռանդներուն մէջ կը ծփար, երբ բաց դռնէն անդին, սրահէն դուրս, ոտնաձայն մը լսեց, յետոյ ուժով ձայն մը որ սա բռուերը կ'արտասանէր:

«Ցտեսութիւն, քոյր իմ:»

Տղան ոտքէն գլուխը սարսուռաց այս ձայնէն եւ ոտքի ելաւ իրրեւ թէ զսպանակով մը կը շարժէր:

Մարդ մը մտաւ այս պահուն, մայրապետի մը հետ, սրահին մէջ, թեւին տակը խոշոր ծրար մը բռնած:

Տղան, զանի տեսնելով, սուր ճիչ մը արձակեց ու դամուած մնաց նստած տեղը:

Մարդը ետին դարձաւ, պահ մը անոր նայեցաւ ու պոռաց ինք ալ:

«Փրահուաւ»

Նա սրացաւ դէպի տղան, որ շնչասպառ ինկաւ հօրը բազուկներուն մէջ:

Մայրապետները, հիւանդապահները, ներքին բժիշկները վազեցին եկան ու զարմացած մնացին:

Տղան չէր կրնար իր ձայնը վերստանալ:

«Ո՛վ իմ Ֆռանսուա», գոչեց հայրը իր ուշադիր նայուածքը հիւանդին վրայ ուղղելէ յետոյ, եւ բազում անգամներ իր սրգին համարուելով:

«Ի՞նչպէս կ'ըլլայ որ քեզ ուրիշի մը անկողնին քով տարեր են: Ու ես կը յուսահատէի թէ քեզ չպիտի տեսնեմ, զի մայրդ գրեթէ ինքն ինքն թէ քեզ զրկած է հոս: Հէ՛գ Ֆռանսուա՛ Քանի օր է որ հոս ես: Ի՞նչպէս պատահեցաւ այս շփոթութիւնը: Փառք Աստուծոյ, ունեցած հիւանդութիւնս վտանգաւոր չէր: Առողջացայ կը տեսնե՛ս, ու հիւանդանոցէն դուրս կ'ելլեմ, երթանք ուրեմն հոսիչ . . . Ո՛վ կրնար երբեք ենթադրել այս օրինակ սխալմունք մը:»

Տղան ճիգ մը ըրաւ քանի մը բռնով պատասխանելու, ընտանիքին վրայ լուր տալու համար:

«Ո՛հ, որքան ուրախ եմ, կակաղեց, ինչ ուրախ եմ: Ի՞նչ գէշ օրեր անցուցի . . . »

Ձէր յագենար նայելէ, համարուելէ իր հայրը,

բայց կարծես հետը երթալ չէր ուզեր :

« Եկո՛ւր նայինք , ըսաւ հայրը , այս իրիկուն իսկ տուն կը հասնինք : »

Ու վայն դէպի իրեն քաշեց :

Տղան ետին դարձաւ իր հիւանդին նայելու համար :

« Պիտի դա՛ս » հարցուց նորէն գործաւորը վարմա-  
ցած :

Փռանսուան ակնարկ մը նետեց հիւանդին , որ այս միջոցին աչքերը բացեր ու իրեն կը նայէր շեշտօրէն :

« Մտիկ ըրէ՛ , թաթա , ըսաւ սղան արագ եւ յըս-  
տակ հնչումով մը , սպասէ՛ տակաւին . . . ահա ասիկ . . .  
չեմ կրնար : Այս ձերը զոր հինգ օրէ իվեր կը խնա-  
մեմ : Անդադար ինծի կը նայի . . . կը կարծէի թէ դուն  
էիր , շատ կը սիրէի զինքը : Կ'ուզէ որ քովը ըլլամ , ե՛ս  
միայն իրեն խմելիք կու տամ , հիմա շատ գէշ է վի-  
ճակը . . . ներէ՛ ինծի , բայց սիրտ չեմ ըներ զինքը լքա-  
նել . . . կարի շատ պիտի վշտանամ եթէ թողում . . .  
Գթութեան գործ մը ըրած չեմ ըլլար զինքը թողով ,  
նայէ՛ կարծես թէ իս կը կանչէ աչքովը , Ձեմ գիտեր  
ո՛վ է , բայց ի՛նչ ընեմ . թո՛ղ որ հոս կենամ , թաթա :

— Ազնիւ պզտիկ մարդ . մրմնջեց ներքին բժիշկը :

Հայրը վարանեցաւ , նայելով փոխն ի փոխ տղուն  
եւ հիւանդին : « Ո՛վ է այս մարդը , հարցուց :

— Ձեզի պէս գործաւոր մը , պատասխանեց ներ-  
քին բժիշկը , օտար երկրէ եկած եւ հիւանդանոց մտած  
նոյն ձեր մտած օրը : Ձինքը մարած հոս բերին , ու  
չկրցաւ բառ մը ըսել : Անշուշտ ընտանիք մը ունի հե-  
ռուն , տղաքներ ունի . . . կը կարծէ թերեւս թէ ձեր  
որդին իրեններէն մէկն է . . . »

Հիւանդը աչքը Փռանսուային երեսէն վար չէր  
առնար :

« Կեցիր , ըսաւ հայրը :

— Երկար ատեն կենալու ժամանակ չունի , ըսաւ  
ներքին բժիշկը :

— Կեցիր , կրկնեց հայրը : Սրտի տէր ես : Ես իս-  
կոյն տուն կ'երթամ մոյրդ ապահովցնելու : Մնաս բա-  
րով ազնիւ վաւակս , ցտեսութիւն : »

Ձաւկին ճակտէն համբուրեց ու մեկնեցաւ :

Տղան դարձաւ եկաւ հիւանդին սնարին քով , որ  
նուազ մտահոգ երեցաւ : Փռանսուան շարունակեց իր  
հիւանդապահի խնամքները . այլ եւս չէր լար նա , բայց  
նոյն հոգածութիւնները ունէր , նոյն համբուրութիւնը  
որ առաջ ունէր այս դժբախտ անձանթին համար :  
Անոր քովը կեցաւ այն օրը , ամբողջ գիշերը , ու հե-  
տեւեալ օրը : Սակայն հիւանդութիւնը կը ծանրանար  
միշտ , հիւանդին դէմքը մանիշակագոյնի կը դառնար ,  
իր շնչառութիւնը աւելի սղաւաճ , իր յուզումը կ'ա-  
ւելնար : Անյօգ անկապ ճիշեր կ'ելլէր իր բերնէն , ու-  
ռեցքը այլանդակ ահռելի կը դառնար , բժիշկը , իրիկ-  
ունն այցելութեան , միջոցին , յայտարարեց թէ գիշերը  
չպիտի անցընէր :

Այս տխուր հաւատարկ լսելով Փռանսուան կըրկ-  
նապատկեց իր խնամքները , եւ այլ եւս աչքը չգտտեց  
հէգ մարդուն վրայէն : Հիւանդը իրեն կը նայէր , չըր-  
թունքները կ'երեքցնէր ատեն ատեն , մեծ ճիգով , իր-  
բեւ թէ բան մը ըսել կ'ուզէր : Սրտակարգ քաղցրու-  
թեան արօտյայտութիւն մը կ'անցնէր աչքերուն մէ-  
ջէն , օրոնք կը պզտիկնային ու կը քօղարկուէին եւս  
քան զեւս : Այն գիշերը տղան հոկեց մինչեւ որ տե-  
սաւ պատուհանէն օրուան նախածագ լոյսը : Գթու-  
թեան քոյրը ներս մտաւ անկողնին մօտեցաւ , ակնարկ  
մը նետեց հիւանդին վրայ եւ փութկոտ քայլերով  
դուրս ելաւ :

Պահ մը ետքը նորէն երեւցաւ ներքին բժիշկին ու հիւանդագլանի մը հետ :

« Պիտի մեռնի , » ըսաւ ներքինը :

Տղան հիւանդին ձեռքը բռնեց : Հիւանդը աչքը բացաւ , շեշտ մը նայեցաւ Փռանսուային ու նորէն գոցեց արեւանուները :

Տղուն այնպէս թուեցաւ թէ այս մահուան վայրկեանին մէջ հիւանդը իր ձեռքը սեղմեր էր :

« Ձեռքս սեղմեց » գոչեց :

Բժիշկը պահ մը մահամերձին վրայ հակած կեցաւ , յետոյ վեր ելաւ :

« Մեռա՞ւ , գոչեց տղան :

— Գնա՛ , տղաս , ըսաւ բժիշկը , քու վեհանձն պաշտօնդ պահուած է , գնա՛ եւ երջանիկ եղի՛ր . զի արժանի ես ըլլալու : »

Մայրապետը՝ որ պահ մը հեռացեր էր , ետ դարձաւ ձեռքը փունջ մը մանիչակ բռնած , զոր վերցուցեր էր պատուհանին մէջ դրուած գաւաթի մը մէջէ . փունջը աղուն երկնցուց ըսելով .

« Աւրիշ բան չունիմ . քեզի նուիրելու , ա՛ն այս ծաղիկները հիւանդանոցին յիշատակին :

— Շնորհակալ եմ , ըսաւ Փռանսուան , մէկ ձեռքով փունջը առնելով , միւսով աչքերը սրբելով . բայց այնքան երկար ճամբայ ունիմ քաղելու որ պիտի թառամեցնեմ զանոնք . . . »

Աւ մանիչակները մէկիկ մէկիկ հանելով ցրուեց զանոնք անկողնին վրայ ըսելով . « Այս խեղճ մարդուն յիշատակին կը ձգեմ այս ծաղիկները . . . Շնորհակալ եմ . քոյր իմ , շնորհակալ եմ , պարոն բժիշկ . . . »

Յետոյ դէպի մեռնողին դառնալով .

« Մնաք բարով . . . ու այն ատեն բերանն եկաւ

այն այնքան անուշ անուներ զոր տուեր էր այս տարաբախտ մարդուն հինգ օր շարունակ . — Մնաք բարով , հէ՛գ թաթաս : »

Այս ըսելէն յետոյ՝ Փռանսուան թեւին տակ դրաւ իր հանդերձի ծրարը , ու յամրաքայլ , յոգնարեկ , գընաց . . . :

Այդը կը ծագէր . . . :

### Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ո Յ Ը

Շարար 18

Բուէքօսին եկաւ երէկ իրիկուն ինծի յիշեցնել թէ իրեն խոստացած էի այցելել իր աշխատանոցը , ու այս սուաւօտ , դուրս ելած ատենը , հայրս հաճեցաւ զիս հոն տանիլ պահ մը :

Երբ դրան սեմին առջեւ հասանք , տեսանք Բուէքօսին աղիւսի կոյտի մը վրայ թառած , դասը սորվելով , գիրքը ծունկին վրայ դրած :

Առքի ելաւ մեզ տեսնելով , ու ներս մտցուց մեզ ածուրի փոշիով լեցուն տեղ մը , պատերը ծածկուած մուրճերով , աքճաններով , բութակներով , ամէն տեսակ հին երկաթեղէններով : Մէկ անկիւնը հնոց մը , ուր կրակը կը վառէր , անդադար հրահրուած դարընոցի փքոցով մը զոր կը փչէր դեռատի մանչուկ մը : Հայր Բուէքօսին ոտին քօփը էր եւ գործաւոր մը երկաթէ ձող մը բռնած էր խարոյկին վրայ :

« Հա՛ , ահա՛ ազնիւ տղան որ երկաթուղիի կառախումբներ կու տայ որդիիս , գոչեց մեզ տեսնելուն պէս , մեր աշխատութիւնը տեսնելու եկաք , այնպէս չէ՞ :

Ահա պիտի կատարուի ձեր փառաբանք . . . »

Փայտելով կը խօսէր մեզի, չաւնէր այլ եւս առաջ-  
ուան դաման դէմքը ու պզտոր աչքերը: Փորձաւորը  
բերաւ մէկ ծայրը կրակին վրայ կարմրած երկաթի եր-  
կար ձողը զոր երկաթագործը սալին վրայ կաթնցուց:  
— Նա ձեւի կը դնէր խոյակի զարդ շինելու ձողերէն  
մէկը որոնք պատշգամի լազրիք մը կը կազմեն: —  
Մեծ մուրճ մը վեր վերցնելով, սկսաւ զարնել, կար-  
միր մասը մէյ մը հոս, մէյ մը հոն հրելով, սալին ծայ-  
րին ու մէջ տեղին միջեւ, ու զայն դարձնելով զանա-  
զան կերպերով: Հիանալի բան էր տեսնել, մուրճին ա-  
րագ եւ հասու հարուածներուն տակ, երկաթին ծախ-  
լը, ու քիչ քիչ տեքեւի մը շնորհալի, եւ պարոյրի մը  
ձեւը առնելը, իրեւ թէ զայն կազապարած ըլլային  
ձեռքով: Տղան այս միջոցին, մեզի կը նայէր մասնաւոր  
հպարտութեամբ մը: Իրեւ թէ ըսել ուզէր. «Տեսէ՛ք  
հայրս ինչպէս կ'աշխատի»:»

— Տեսաք ի՞նչ կերպով կը գործուի, պզտիկ պա-  
րոնս, » հարցուց ինձի երկաթագործը, երբ աւար-  
տեց, մէկ ձեռքով ձողը բռնած, որ կը նմանէր հիմա  
եպիսկոպոսի մը գաւազանին:

Յետոյ՝ զայն մէկ կողմ դնելով՝ ուրիշ ձող մը զե-  
տեղեց կրակին մէջ:

«Ստուգիւ շատ լաւ է, ըսաւ հայրս, ուրեմն . . .  
կ'աշխատուի՞ հիմա, բարի կամեցողութիւնը եկա՞՞ծ է  
նորէն:»

— Այո, եկաւ նորէն, պատասխանեց արհեստա-  
ւորը, քրտնաթոր ճակատը սրբելով, ու կարմրելով քիչ  
մը: Եւ գիտէ՞ք ով զայն բերաւ:»

Հայրս չհասկնալ կեղծեց:

«Այո ազնիւ տղան, յարեց դարբինը, մատովը իր

որդին ցոյց տալով, այս ազնիւ տղան, որ կ'ուսանէր  
ու պատիւ կը բերէր իր հօրը, մինչդեռ հայրը . . . ծու-  
լութեան մէջ ինքզինքը կը մոռնար ու անոր հետ շու-  
նի պէս կը վարուէր . . . : Երբ այս մետալը տեսայ . . .  
ա՛խ, խեղճ պզտիկս, պզտաբախիկս, եկա՛ւր հոս քիչ մը  
որ աղէկ մը երեսդ իվար նայիմ . . . »

Տղան վազեց իսկոյն, դարբինը զայն առաւ բա-  
զուկներուն մէջ ու կայնեցուց սալին վրայ անութնե-  
րէն բռնելով

«Մաքրեցէ՛ք շուտով սա տխմար հայրիկին ճակա-  
տը . . . » ըսաւ անոր:

Բռեքօսին համրոյրներով ծածկեց հօրը դէմքը,  
մինչեւ որ ինք ալ սեր սեւ եղաւ:

«Առանկ աղէկ է, ըսաւ երկաթագործը, ու որդին  
գետինը դրաւ նորէն:»

— Շա՛տ աղէկ է, Բռեքօսի, » գոչեց հայրս:

Ու, ցտեսութիւն ըսելով արհեստաւորին ու անոր  
որդիին, տարաւ զիս:

Երբ դուրս կ'ելլէինք, պզտիկ Բռեքօսին ըսաւ ինձի.  
«Ներեցէ՛ք . . . ու գրպանիս մէջ սահեցուց ծրար  
մը գամ: Շնորհակալ եղայ ու հրաւիրեցի գալ մեր սու-  
նէն տեսնել բարեկեանդ անի դիմակաւորներուն անցնիլը:

— Դուն անոր երկաթուղիդ տուիր, ըսաւ ճ հայրս  
ինձի գացած ատեննիս, բայց երկաթուղիդ եթէ ոսկի է  
ըլլար եւ մարգարիտներով լեցուն՝ չնչին ընծայ մը ե-  
զած պիտի ըլլար նուիրելու այս սքանչելի տղուն, որ  
հօրը սիրտը վերանորոգեց:»



Պ Ձ Տ Ի Կ Ղ Տ Պ Ի Տ Ը

Երկուսաբքի 20

Ամբողջ քաղաքը շարժումի մէջ է, բարեկենդանը կը վերջանայ: Ամէն հրապարակներու վրայ, աճպարարներու տաղաւարներ եւ ձիախաղութեան շէնքեր կանգնուած են: Մեր պատուհաններուն առջեւ կտաւէ կրկէս մը կայ, ուր վենետիկեան պզտիկ ընկերութիւն մը ներկայացումներ կու տայ: Հինգ ձի կայ մէջը: Կրկէսը հրապարակին մէջ տեղն է, եւ անկիւններէն մէկուն մէջ կը գտնուին երեք մեծ կառքեր, որոնց մէջ աճպարարները կը քնանան եւ կը հագուին ու կը հանուին, երեք պզտիկ տուներ անիւներու վրայ իրենց պատուհաններով, իւրաքանչիւրը ունենալով իր պզտիկ վաւարանը որ միշտ կը միսայ: Պատուհաններուն մէջ տեղ չուաններ ձգուած են որոնց վրայ կը չորնան տղոց լաթեր: Կին մը կայ հոն որ գիրուկ մանուկ մը կը գիւցնէ, խուճիկն կերակուրը կ'եփէ ու լարին վրայ կը խաղայ: Խեղճ մարդիկ: Աճպարար անուներ իբրեւ անարգանք կու տան մէկու մը եւ սակայն ասոնք պարկեշտութեամբ կը վաստակին իրենց հացը, ուրիշները զուարճացնելու համար, ու ինքզինքնին յոգնեցնելով, Աստուած գիտէ ինչպէս: Բոլոր օրը կը վազեն կրկէսէն կառքերուն, միայն վարդապոյն հիւսկէն մը հագած, ցո՛ւրտ ըլլայ թէ տաք: Ոտքի վրայ պատառ մը բան կ'ուտեն, երկու ներկայացումի միջեւ: Երբեք սեղան չի շտկուիր այս ողորմելիներուն համար: Ու երբեմն երբ իրենց կրկէսը արդէն լեցուած է բազմութեամբ, հով մըն է կ'ելլէ, կտանները կը քաշէ, լապտերները կը մարէ . . . առէն տեսարան:

Երկու տղաք կ'աշխատին այս կրկէսին մէջ:

Հայրս ճանչցաւ փոքրագոյնը, մինչ նա կ'անցնէր հրապարակէն. վարպետին տղան է, նոյնը զոր տեսանք որ ձիու վրայ ճարտար խաղեր կ'ընէր, անցեալ տարի, վիքթու-էմմանուէլ հրապարակին վրայ կրկէսի մը մէջ: Մեծցեր է անկէ իվեր. ութը տարեկան ըլլալու է. գեղիցիկ տղայ մըն է կլորիկ դէմքով, թուխ գոյնով, սեւ գանգուր մազերով, որոնք իր սրած այր գլխարկէն դուրս կ'ելլեն կը ծածանին:

Անգլիացի հտպիտի մը պէս հագուած է, բանտարկուած տեսակ մը պարկի մէջ կապոյտ թեզանիքներով վրան սեւով բանուած, ու իր ոտքի ամաններն ալ կտաւէ են: Սատանի ձագ մըն է այս հտպիտը: Ամէնքը կը հաւնին անոր: Աստուան կանուխ կը տեսնենք զինքը շարի մը մէջ փաթթուած, կաթ տանելով իր շրջուն տունը. յետոյ կ'երթայ առնել ձիերը տխուհն: Մանուկը կը պտըտցնէ գիրկը առած, փայտէ շրջանակները, աթուակները, պատնէշները ու չուանները կը տանի, կառքերը կը լուայ, կրակը կը վառէ, եւ իր հանգստութեան հագուադէպ վայրկեաններուն մօրը քովը կը կենայ: Հայրս անոր կը նայի միշտ պտտուհանէն, ու միշտ անոր վրայ եւ անորներուն վրայ կը խօսի, որոնք բարի մարդիկ կ'երեւան, գուրգուրացող իրենց զաւակներուն վրայ: Իրիկուն մը՝ կրկէս գացինք. ցուրտ էր, ու գրեթէ մարդ չկար. խեղճ պզտիկ հտպիտը քառսուն կտոր կ'ըլլար, այդ քիչ մը մարդոց տրամադրութիւնը լաւ պահելու համար: Վտանգաւոր ոտտումներ կ'ընէր, ձիերուն պոչին կը կապուէր, ձեռքերուն վրայ կը քաշէր. ոտքերը օդին, կ'երգէր, կը խնդար, ու իր սիրուն թուխ դէմքը ամէնուն համակրութիւնը կը գրաւէր:

Հտպիտին հայրը, կարմիր հագած, ճերմակ վարտիքով ու ձի հեծնելու մեծ կօշիկներով, խորազանը ձեռքը, պզտիկին կը նայէր տխուր կերպարանքով մը:

Հայրս կարեկցութիւն ունեցաւ այս դժբախտներուն վրայ: Հետեւեալ օրը անոնց համար խօսեցաւ Տէլիս պատկերհանին որ եկաւ մեզ տեսնել.

«Այս խեղճ մարդիկը, ըսաւ հայրս, աշխատութեան տակ կը մեռնին եւ այնքան քիչ հասոյթ կ'ունենան: Մանաւանդ պզտիկ մանչը այնքան սիրուն է: Ի՞նչ կրնանք ընել արդեօք ասոնց համար:»

Պատկերհանը գաղափար մը ունեցաւ:

«Ազուօր յօդուած մը գրէ՛ կազմէրին մէջ, ըսաւ, դուն որ լրագրագետ ես: Պզտիկ հտպիտին արժանիքը եւ տաղանդը կը գովես, ես ալ իր պատկերը կը շինեմ: Ամէն մարդ կը կարգայ կազմքը, ու այս կերպով գոնէ մէկ անգամ բազմութիւն կ'ու գայ կրկէսին:»

Ըսաւ ու եղաւ: Հայրս շատ զբօսուցիչ յօդուած մը գրեց, ուր կը պատմէր ինչ որ կը տեսնէինք մեր պատուհաններէն, եւ ուր փափագ կ'ազդէր տեսնելու ու գգուելու պզտիկ արուեստագէտը: Պատկերհանը ուրուազծեց փոքր պատկեր մը շատ նման եւ շնորհաւէր, որ հրատարակուեցաւ շաբաթ իրիկուն: Եւ ահա կիրակիի ներկայացումին բազմութիւնը խռնուեցաւ կրկէսը: Ներկայացումը ծանուցուեց էր ի նպաստ պըզտիկ հսպիսին:

Հայրս տարաւ զիս առաջին կարգի նստարանները: Աճապարարները կազմքը փակցուցեր էին դրանք քով: Կրկէսը լեցուն էր, հանդիսականներէն շատեր լրագիրը ձեռքերնին բռնած էին, եւ իրարու կը ցուցնէին պզտիկ հտպիտը, որ կը վազէր մէյ մը մէկուն, մէյ մը մէկալին, բոլորովին երջանիկ: Վարպետը, ինք ալ, գոհ

էր, անտարակոյս: Երբեք ոչ մէկ լրագիր չէր բրած իրեն այնքան յարգ պատիւ: ու արկղիկը լեցուած էր ճերմակ ու սեւ ստակներով:

Հայրս նստաւ իմ քովս: Հանդիսականներուն մէջ ծանօթներ գտանք: Իրանը քով կեցած էր մարզանքի դասատուն, եւ, մեր դէմը, երկրորդ կարգի նստարաններուն վրայ, պզտիկ սրմնաղիւրը իր հսկայ հօրը քով: Հաղիւ թէ զիս տեսաւ «նապաստակի դնչիկ» ըրաւ ինձի: Քիչ մը հեռուն, տեսայ Կառօֆին, որ կը համբէր հանդիսականները եւ կը հաշուէր իր մատերուն վրայ թէ ի՞նչ հասոյթ կրնար շինած ըլլալ ընկերութիւնը այդ իրիկունը: Կար նաեւ առաջին կարգի աթոռներուն վրայ, ո՛չ մենէ հեռու, հէգ Ռօպէթին (այն որ տղայ մը ազատեց հանրակառքին տակէն) իր անթացուպերը սրունքներուն մէջ տեղը: Իր հայրը, հրետանիի գնդապետը, իր քովն էր, մէկ ձեռքը տղուն ուսին վրայ դրած:

Ներկայացումը սկսաւ: Պզտիկ հտպիտը հրաշալիքներ ըրաւ ձիուն վրայ, արապէզին եւ լարին վրայ: Իւրաքանչիւր մարզանք ուժգին ծափահարութիւններով ողջունուեցաւ:

Ուրիշ ճարտար խաղեր եւս եղան, զոր գործադրեցին լարախաղացներ եւ աճապարարներ, արծաթէ գանակներով շողջողուն:

Իսոյց երբ հտպիտը հոն չըլլար, կարծես թէ ժողովուրդը կը ձանձրանար:

Պահ մը, տեսայ մարզանքի դասատուն, կայնած կրկէսի մուտքին առջեւ, որ կը խօսէր վարպետին ահանջն իվար: Ասի իսկոյն դարձուց աչքերը դէպի հանդիսականները, իբրեւ թէ մէկը կը փնտռէր: Իր նայուածքը մեր վրայ կանգ առաւ: Հայրս նշմարեց զայն,

հասկցաւ թէ դասատուն յօգուածին խորագիրը ցոյց տուեր էր. ու շնորհակալութիւն չլսելու համար ձգեց գնաց, ինծի ըսելով.

« Դուն կեցիր մինչեւ վերջը, Հանուի, դրանը առջեւ քեզի կը սպասեմ: »

Պզտիկ հոպիտը, իր հօրը հետ քանի մը խօսք փոխանակելէ յետոյ, մարզանք մը եւս ըրաւ.

Վազող ձիուն վրայ կայնած՝ չորս անգամ զգեստ փոխեց, ու երեւցաւ փոխն ի փոխ ճգնաւորի, նաւաստիի, զինուորի եւ յարախաղացի հազուստներով: Ամէն անգամ որ իմ քովէս կ'անցնէր ինծի կը նայէր:

Երբ խաղերը վերջացան, իջաւ ձիէն ու կրկէսին շրջանը ըրաւ, իր հոպիտի գլխարկը ձեռքը: Ամէն մարդ ստակ ու շաքար կը նետէր իրեն: Ձեռքս երկու ձող բռնած էի, իրեն տալու համար, բայց երբ իմ մօտս եկաւ, փոխանակ գլխարկը ինծի երկնցնելու, ետ քաշեց զայն ու անցաւ գնաց թափով: Վշտացայ այս կերպ վարմունքին: Ինչու ընէր ինծի այդ անքաղաքավարութիւնը:

Ներկայացուցի մտորտելուն՝ վարպետը շնորհակալ եզաւ հասարակութենէն, ու ամէն մարդ ոտքի ելաւ եւ ուզուեցաւ դէպի դուռը: Բազմութեան մէջ խառնուեալ էի եւ կրկէսէն դուրս ելլելու վրայ էի, երբ զգացի որ ձեռքիս կը դպչին: Ետիս դարձայ, ու տեսայ պզտիկ հոպիտը, որուն անուշ դէմքը ժպտալից էր, ձեռքերը շաքարալից: Իսկոյն հասկցայ մտքը.

« Կուզե՞ս, ըսաւ ինծի, ընդունիլ պզտիկ հոպիտէն այս շաքարահատները: »

Հաւանեցայ ու երեք չորս հատ առի:

« Ուրեմն, յարեց նա, ա՛ռ նաեւ այս պաշիկը: »

— Երկու հատ տո՛ւր անկէ, » պատասխանեցի, երես կարկառելով:

Թեզանիքով սրբեց ալիւրոտ երեսը, թեւը վզիս շուրջը անցուց, ու երկու հնչուն համայր փակցուց այտերուս, յարելով.

« Ա՛ռ, ու մէկը հօրդ տա՛ր: »

### ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԸ

#### Երեքաբքի 2

Այսօր, դիմակաւորներու անցած պահուն, ախո՛ւր տեսարանի մը ներկայ գտնուեցանք, բարեբախտաբար աղէկ վերջաւորութիւն ունեցաւ. սակայն կրնար մեծ դժբախտութիւն մը պատճառել:

Սուրբ-Շառլի հրատարակը, ամբողջովին զարդարուած՝ դեղին, կարմիր, ձերմակ պսակներով, բազմութեամբ լի էր: Ամէն տեսակ դիմակաւորներ կ'անցնէին ամբսիսին մէջէն: Մեծ տողանցութիւն կար ոսկեզօծ կառքերու դրօշակներով ծածկուած, ներկայացնելով թարօններ, մակոյկներ, տաղաւարներ, հոպիտներով եւ զօրականներով, խոհարարներով, նաւաստիներով ու հովուահիներով լեցուն: Անանկ խառնաշփոթ տեսարան մըն էր որ մարդ ո՛ւր նայիլը չէր գիտեր: Շեփօրներու, որսի փողերու եւ ծնձղաներու աղմուկ մը ականջ կը իլցնէր: Կառքերու մէջէն դիմակաւորները կը խըմէին, կ'երգէին, անախորժ խօսքեր ըսելով ոտքով գացողներուն եւ պատուհաններէն նայող հետաքրքիրներուն, որոնք կը մրցէին պատասխանելով անոնց նարինջներու եւ շաքարներու տեղատարափներու միջեւէն, զորոնք մէկզմէկու կը զրկէին երկու կողմէ: Կառքերու վրայ կը տեսնուէր դրօշներու ծածանիլը, սա-

զաւարտներու շողալը, փետուրներու ծփալը եւ խո-  
շոր գլուխներու շարժիլը հսկայածեւ զարդերու, կամ  
տարօրինակ գլխարկներու տակ:

Կարծես թէ խենթերու բանակ մըն էր:

Երբ մեր կառքը Սուրբ-Շառլ հրապարակը մտաւ,  
մեր առջեւ ունէինք սքանչելի երկանիւ կառք մը, ո-  
րուն լծուած էին չորս ձիեր ոսկեհիւս ասպազէններով  
ու վարդէ պսակներով ծածկուած: Այդ կառքին մէջ  
կը գտնուէին տասնըչորս տասնըհինգ պարոններ Փռան-  
սայի հին արքունիքի ազնուականներու հագուստ հա-  
գած, ամբողջ ոսկիով ու մետաքսով շողալուն, ձեր-  
մակ կեղծամով, եռակողմ գլխարկով, սուրը կողերնին  
ու փայլուն ժապաւէնը ուսերնին: Ամէնքը մէկ կ'եր-  
գէին Փռանսերէն երգ մը, ու շաքարներ կը նետէին  
ամբոխին, որ կը ծափահարէր ու կ'ողջունէր զանոնք:

Յանկարծ, աջ կողմերնիս, տեսանք մարդ մը որ  
վեր կը վերցնէր չորս-հինգ տարեկան աղջիկնակ մը,  
խեղճ սիրունիկ աղջիկ մը, որ դառնապէս կու լար,  
թեւերը երկնցնելով, իրրեւ թէ ջրային տազնապէ բռ-  
նուած ըլլար: Մարդը անցաւ գնաց մինչեւ կառքը  
ազնուական պարոններու, ասոնցմէ մէկը կառքէն վար  
ծուեցաւ ու մարդը ըսաւ անոր.

« Գլխացէ՛ք, առէ՛ք այս տղան, իր մայրը կորսըն-  
ցուցեր է բազմութեան մէջ, ձեր թեւերուն վրայ բռ-  
նեցէք զայն. մայրը պէտք չէ հեռու ըլլայ, սխալ տես-  
նէ իր աղջիկը. ուրիշ միջոց չկայ զայն գտնելու: »

Ազնուական պարոնը առաւ աղջիկը թեւերուն վը-  
րայ, իր ընկերները երգը դադարեցուցին խօսոյն: Տղան  
կը խօսէր ու կտոր կտոր կու դար, զի կը վախնար.  
չուտ մը պարոնը հանեց իր գլխակը, ու կառքը շա-  
րունակեց երթալ յամբընթաց:

Այս միջոցին, հրապարակին անդիւ ծայրը, խեղճ  
կին մը խենթեցած իզուր կը ջանար ամբոխին մէջէն  
անցնիլ:

« Մառի՛տ, Մառի՛տ, Մառի՛տ: Աղջիկս կորսնցու-  
ցի, կը սրտար, զողջան զայն ինձմէ, խեղդեցի՛ն ալ-  
ջիկս: »

Քառորդէ մը իվեր, կը յուզուէր ու կը յուսահա-  
տէր այսպէս, հոն հոս երթալով, ամբոխէն ճնշուած,  
որուն մէջէն չէր կրնար անցնիլ:

Կառքին մէջի ազնուական պարոնը տղան միշտ թե-  
ւերուն մէջ բռնած, աչքը հրապարակին չորս կողմը  
կը դարձնէր. ջանալով հանդարտեցնել հէգ պզտիկը,  
որ ձեռքերովը երեսը կը գոցէր լալով. չգլխանալով բը-  
նաւ թէ ս'ըր կը գտնուի:

« Փնտաեցէ՛ք մայրը, կը սրտար պարոնը ամբոխին:  
Փնտաեցէ՛ք մայրը: »

Ու ամէն մարդ կը դառնար աջին, ձախին ու  
մայրը չէր գտնուեր բնաւ: Վերջապէս, Հուսի փողո-  
ցէն քանի մը քայլ հեռուն, կին մը տեսնուեցաւ որ  
դէպի կառքը կը սրանար. . . ա՛խ, երբեք չսխալ մտ-  
նամ զայն:

Մարդկային արարածի մը չէր նմաներ այլ եւս  
նա, մազերը ցիրուցան. դէմքը այլայլած, զգեստները  
պատուտած. ճիշ մը արձակեց որ կը նմանէր ուրախու-  
թեան, անձկութեան կամ բարկութեան տաղաւի մը,  
ձեռքերը երկնցուց ջլապնդարար, աղջիկը տանելու  
համար:

Կառքը կանգ առաւ. « Ահա՛ կորուսած տղան, »  
ըսաւ ազնուականը, Համբուրեց աղջիկնակը, ու զայն  
դրաւ բազուկներուն մէջ հէգ կնոջ, որ խենթի պէս  
սեղմեց տղան կուրծքին վրայ. . . Բայց տղուն պըզ-

տիկ ձեռքերուն մէկը երկվայրկեան մը տտեն մնացեր էր ձեռքերուն մէջ ազնուական պարոնին, որ, քաշել հանելով իր մատէն աղամանդազարդ շքեղ մատնի մը, սահեցուց զայն պզտըլիկին թաթիկներուն մէջ ըսելով.

Ա՛ն, քու օժիտդ ըլլայ այս:»

Մայրը քարացած մնաց եւ ամբողջ ծափահարութեամբ գոռացուց: Ազնուականը նորէն դբաւ իր դիմակը, իր ընկերները նորէն սկսան ֆրանսական երգ մը. ու կառքը գնաց յամբընթաց, կեցցէներու գոռում գոչումի մը մէջ տեղ:

Կ Ո Յ Ր Տ Ղ Ա Ք Ը

Հինգւաբքի 24

Մեր ուսուցիչը հիւանդ ըլլալուն՝ իր տեղը զրկեցին մեզի շորորդ դասարանի ուսուցիչը, որ ժամանակաւ դեռատի կոյրերուն վարժարանին մէջ էր: Վարժապետներուն ամէնէն տարիքոտն է, ու իր մազերը այնքան ճերմակ են որ կարծես թէ բամբակէ կեղծամ մըն է: Խօսելու մասնաւոր կերպ մը ունի, բայց աղէկ կը խօսի եւ չառ բան գիտէ: Հազիւ ներս մտեր էր դասարանէն, տեսաւ որ տղուն մէկուն աչքը կապուած էր, մօտեցաւ անոր, ու հարցուց թէ ի՛նչ ունէր:

« Հո՞գ տար, աչքերուդ տղաս, » ըսաւ:

Տէռօսին հարցուց իսկոյն.

« Իրա՞ն է, պարոն, թէ կոյր աղոց դասատու եղած էք:

— Այո, շատ տարիներ, պատասխանեց:

— Անոնց վրայ բան մը կը պատմէ՞ք մեզի, » ըսաւ Տէռօսին ցած ձայնով:

Դասատուն գնաց նստաւ գրասեղանին առջեւ: Գօռէթին ըսաւ.

« Կոյրերու վարժարանը նիս փողոցին մէջ է:

— Կոյր կ'ըսէք, առաւ նորէն ուսուցիչը, իբրեւ թէ ըսէիք հիւանդ կամ աղքատ: Լաւ կը հասկնա՞ք, այս բառին նշանակութիւնը « կոյր »: Խորհեցէք քիչ մը: Ոչի՛նչ չտեսնե՞լ երբեք: Չզանազանել գիշերը ցորեկէն, չտեսնել ո՛չ երկիրքը, ո՛չ արեւը, ո՛չ ծնողքը, ոչ ինչ այն ամէն բանէն որ մեզ կը շրջապատէ ու այն ամէնուն որ մենք կը հպինք: Ընկղմած ըլլալ մշտնջենական խաւարի մը մէջ, ու իբրեւ թաղուած՝ գետնին խորը, Փորձեցէ՛ք գոցել աչքերնիդ, եւ խորհեցէ՛ք թէ ի՛նչ գժբախտութիւն պիտի ըլլար եթէ այդ վիճակին մէջ մնայիք: Անտարակոյս վշտալի շնչահեղձութիւն մը, սոսկում մը պիտի բռնէր ձեզ, ու ձեզի պիտի թուէր թէ չպիտի կարենաք դիմադրել: Յուսահատութեան ճիչեր պիտի արձակէիք իսկոյն... »

« Եւ սակայն... երբ մարդ տառջին անգամ մտնէ կոյրերու վարժարանը զրօսանքի տտեն, անոնց ջութակ եւ սրինգ օձելը լսէ ամէն կողմէն, բարձրաձայն խօսեցնին, խնդալնին լսէ, սանդուղներէն վազելով ելլել իջնելին, նրբանցքներէն ու ննջարաններէն հաստատաբայլ անցնելին տեսնէ, չի կարծեր երբեք թէ այս եղիկելիները ըյս չեն տեսներ: Դիտել պէտք է զանոնք լաւ ճանչնալու համար: Տասնրվեց տասնրութը տարեկան պատանիներ կան մէջերնին, կայտառ եւ զըւարթ, որոնք տեսակ մը անտարբերութեամբ կը հանդուրժեն կուրութեան. բայց կը հասկցուի, իրենց դէմքին արտայայտութենէն, թէ սոսկալի կերպով տա-

առաքած պէտք է ըլլան, իրենց դժբախտութեան համակերպելէ առաջ:

«Ուրիշներ կան, տոգոյն ու անուշ դէմքով, որոնց վրայ կը տեսնուի մեծ համակերպութիւն մը՝ խառնուած մեծ տխրութեան մը. ու կը գուշակես դադոնապէս թէ պէտք է առատորէն լան երբեմն: Ա՛խ, տղաքս, խորհեցէ՛ք թէ այս տարարախոտներուն շատերը քիչ օրուան մէջ կորսնցուցած են իրենց աչքին լոյսը, ումանք ալ երկար մարտիրոսութեան տարիներէ յետոյ եւ վիրարութեան վշտաջարջար գործողութիւններէ յետոյ: Վերջապէս կան ալ որ այնպէս ծնած են, գիշեր մը՝ որ արշալոյս չունի. անոնք աշխարհ եկած են իբրեւ անսահման գերեզմանի մը մէջ, ուր չեն սրտեր ոչ մէկ ձեւ, ոչ մէկ գոյն: Երեւակայեցէ՛ք թէ ո՛րքան պէտք տառապիւն, երբ բաղդատեն իրենց կեանքը անոնց կեանքին որոնք կը տեսնեն:

«Ինչո՞ւ այս տարբերութիւնը, պէտք է ըսեն իրենք իրենց, սակայն ոչի՛նչ յանցանք չենք գործած մենք:

«Ես որ քանի մը տարի կեցած եմ՝ կոյրերու մէջ, շարունակեց ուսուցիչը, չեմ կրնար խորհիլ այն դասարանին — ուր ամէն աչքերը գոց էին մշտնջենապէս, ըրերը առանց նայուածքի եւ առանց կեանքի, — ու տեսնել ձեզ այնուհետեւ, ձե՛զ, արթուն աչքերով, ու չըսել ես ինձի թէ անկարելի է որ ամէնքդ ալ երջանիկ չըլլաք: Խորհեցէ՛ք թէ միայն Իտալիայի մէջ քոսներվեց հազար կոյր կը հաշուուի: Քոսներվեց հազար, կը լսէ՛ք:»

Ուսուցիչը լռեց: Խոր լռութիւն մը կը տիրէր դասարանին մէջ, Տէռօսին հարցուց թէ իրա՞ւ է որ կոյրերու շօշափելիքը աւելի սուր է քան մերը:

«Իրաւ է, առաւ նորէն դասատուն: Միւս ամէն զգայարանքները կը նրբանան անոնց քով, ճիշդ անոր համար որ, միւս զգայարանքները տեսնելու զգայարանքին տեղը բռնելու ըլլալուն, անոնք աւելի լաւ կը գործածուին քան թէ տեսնողներունը: Առտուն, ննջարանին մէջ, կոյր աշակերտ մը կը հարցնէ ուրիշի մը. «Արեւ կա՞յ այսօր: Մէջերնին ամէնէն թեթեւաշարժը կը հագուի ու վար կ'իջնէ բակին մէջ, ձեռքերը վեր կը բռնէ, զգալու համար թէ արեւը մթնոլորտը կը տաքցնէ՞»: յետոյ աւետիս կը բերէ վազելով:

«Արեւ կայ:»

«Մէկու մը ձայնէն, անոր հասակին վրայ գազափար կը կազմեն: Մենք կը դատենք մարդու մը բնութիւնը անոր նայուածքէն, իրենք կը դատեն անոր ձայնէն: Տարիներով կը յիշեն ձայնի մը ելեւէջը, եթէ սենեակի մը մէջ շատ մարդ ըլլայ, կը նշմարեն, նոյն իսկ եթէ մէկ հոգի միայն խօսի, միւսները անշարժ կենան: Շօշափելիքի օգնութեամբ, կոյրերը կը հասկընան թէ դժբալ մը շատ մաքուր է, կամ չափաւորապէս մաքուր է:

«Պզտիկ աղջիկները կը զանազանեն ներկուած բուրբը չներկուածէն, երկերկուք անցնելով փողոցներէն՝ պզտիկ կոյրերը գրեթէ ամէն խանութները կը ճանչնան, անոնց հոտէն: Շունչան կը խաղան, ու միայն անոր շունչիւնը լսելով՝ կ'երթան զայն բռնել առանց սխալելու: Չուան կը ցատկեն այնքան ճարտարութեամբ որքան կոյր չեղող տղայ մը: Ասկէ զատ՝ մանուշակ կը քաղեն իբրեւ թէ տեսնէին, արկղիկներու վրայ խիճեր փակցնելով կը զարդարեն զանոնք, կողովներ կը շինեն, տարբեր գոյներով յարդեր իրարու մէջէ կ'անցընեն արտաքոյ կարգի շուտով, այնքան իրենց շօշափելիքը

սուր է: Շօշափելիքը իրենց երկրորդ տեսանելիքն է, ու իրենց ամենամեծ հաճոյքներէն մէկն է բանի մը դպչիլ, սեղմել, գուշակել անոր ձեւը զայն շօշափելով:

«Սրտաշարժ տեսարան մըն է կոյրերը դիտել, երբ անոնք ճարտարարուեստական միւզէնը կը տանին, ուր կը թոյլատրեն իրենց դպչիլ ինչ բանի որ ուզեն. ինչ որ արտաթեամբ տուներու օրինակներու վրայ, գործիքներու վրայ կ'իյնան, տեսնելու համար թէ ինչպէս շինուած են անոնք: Այո, տեսնելու, զի անոնք ալ ունին, մեզի պէս, այս կերպով բացատրելու սովորութիւնը:»

Կառօֆին ընդմիջեց դասատուն անոր հարցնելու համար թէ իրա՞ւ էր որ կոյրերը ուրիշներէ ազէկ հաշուել կը սորվին:

«Շատ ճշմարիտ է, պատասխանեց վարժապետը: Կը սորվին հաշուել ու կարգալ: Գիրքեր ունին սրոնց տառերը ու ուղեցիկ են: Մատներնին անոնց վրայ քսելով կը ճանչնան գիրքերը ու ջուրի պէս կը կարգան: Ու տեսնել պէտք է, հէգ պզտիկները, ինչպէս կը կարմորին երբ սխալին, կը գրեն ալ, առանց մեղանի: Կարծր եւ հաստ թուղթի մը վրայ կը գրեն մետաղէ հերիւնով մը որ խոռոչաւոր պզտիկ կէտեր կը շինէ, խմբուած մասնաւոր այբբենարանի մը համեմատ: Այս պզտիկ կէտերը ու ուղեցիկ դուրս կ'ելլեն թղթին միւս կողմէն, այն կերպով որ աշակերտը թուղթը դարձնելով ու մատները ու ուղեցիկ մասին վրայ քսելով կրնայ կարգաւ գրածը: Կոյրերը կը ճանչնան նոյնպէս ուրիշներուն գիրքը, ասանկով շարադրութիւններ կ'ընեն ու կը գրեն իրարու: Նոյն կերպով կը գրեն թուանշանները ու իրենց հաշիւը կ'ընեն. բայց, ասկէ վատ, մտքով ալ կը հաշուեն անհաւատալի դիւրութեամբ, որովհետեւ,

մեզի պէս, մտազբազ չեն, զիրենք շրջապատող բաներուն տեսքովը: Եւ գիտնայիք թէ որքան կը սիրեն ընթերցում լսել: Ինչպէս ուշագիր են, ինչպէս կը յիշեն ամէն բան, եւ ինչպէս կը վիճարանին իրենց մէջ. նոյն իսկ պզտիկները, ամէն բանի վրայ: Չորսը հինգը միեւնոյն նստարանի վրայ նստած, առանց մէկգմէկու կողմ դառնալու, կը խօսակցին երբեմն առաջինը երրորդին հետ, երկրորդը չորրորդին հետ բարձրաձայն ու ամէնքը միասին, առանց բառ մը կորսնցնելու, այնքան լսողութիւննին սուր է:

«Անոնք ձենէ շատ աւելի կարեւորութիւն կու տան քննութիւններուն, ճշմարիտ, ու աւելի շատ կը սիրեն իրենց ուսուցիչները: Ոտքին ձայնէն ու անոր հոտէն կը ճանչնան իրենց վարժապետը: Կը գուշակեն թէ նա զուարթ կամ ակուր է, թէ քաջաուղղ կամ տկար է, միայն անոր մէկ խօսքը լսելով: Կ'ուզեն որ դասատուն հպի իրենց, երբ զիրենք քաջալերէ կամ գովէ, ու անոր ձեռքերը եւ թեւերը կը սեղմեն արտայայտելու համար իրենց երախտագիտութիւնը:

«Կոյր դպրոցականները կը սիրեն մէկգմէկ, ու ընդհանրապէս լաւ ընկերներ կ'ըլլան: Զրօսանքի ատեն, միշտ նոյն խումբերն են որ կը կազմուին: Ազը ջիկներուն մէջ, զոր օրինակ, խումբերը կը կազմուին անոնցմէ որ միեւնոյն գործիքը կը սորվին ջութակահարները, դաշնակահարները, սրնգահարները չեն բաժնուիր երբեք իրարմէ: Կոյրերը բարեկամութեան մէջ շատ հաւատարիմ են, անոր մէջ կը գտնեն իրենց բոլոր միտքարութիւնը: Զիրար կ'արժեւորեն շատ մեծ դատողութեամբ. ազէկին համար ալ, յոռիին համար ալ յստակ ու խորին գաղափար ունին: Ոչ ոք իրենցմէ աւելի կը վառի վեհանձն արարքի մը կամ երեւելի

գործի մը պատմութեան առջև :

Վօթիւնին հարցուց թէ լաւ երածի՞նչտ են :

« Կարի շատ կը սիրեն երածչտութիւնը , պատասխանեց ուսուցիչը : — Երածչտութիւնը իրենց կեանքը ու իրենց ուրախութիւնն է : Կոյր պզտիկ տղաքը , հազիւ դպրոց մտած , չեն ձանձրանար երբեք երածըչտութեան գործիք մը մտիկ ընելէ : Դիւրութեամբ կը սորվին ու հոգւով կ'ածեն երածչտութիւն : Եթէ ուսուցչին մէկը ըսէ կոյրի մը թէ երածչտութեան յարմարութիւն չունի , նա մեծ վիշտ կը զգայ , ու կը սկսի կատաղարար ուսանիլ : Ա՛խ , եթէ լսէիք կոյրերուն նըւազ ածելը . եթէ տեսնէիք զիրենք հակատնին բարձր , ժպտաւ շրթունքնին , դէմքերնին վառուած , յուզմունքով դողդոջուն , անյագ՝ լսելու այն անձը որ ձառագայթով մը կը լեցնէ անվերջանալի խաւարը որուն մէջ ընկղմած են , պիտի հասկնայիք թէ երածչտութիւնը երկնային մխիթարութիւն մըն է : »

« Երբ դասատուներէն մէկը ըսէ իրենց .

« Արուեստագէտ մը պիտի ըլլաս » ոչինչ կրնայ նկարագրել իր երջանկութիւնը : Իրենց համար , երածըչտութեան մէջ առաջինը , այն՝ որ ամէն քուէները կ'ընդունի դաշնակի կամ ջութակի , իշխանի մը պէս է : Կը սիրեն զայն ու կը յարգեն : Եթէ երկու ընկերով մէջ վէճ մը ծագի , անոր կը վազեն . եթէ երկու բարեկամներ կուրն , այն կը հաշտեցնէ զիրենք : Ամէնէն պզտիկները , որոնց նա կը սորվեցնէ երածչտութիւն , զանի հօր տեղ կը դնեն : Քնանալէ առաջ ամէնքն ալ կ'երթան անոր բարի գիշեր մտղթելու : Կոյրերը շարունակ երածըչտութեան վրայ կը խօսին . նոյն իսկ իրիկունը երբ պառկին , ուսմունքէն ու աշխատութենէն յոգնած , ու կէս մը քնացած , ցած ձայնով կը խօսին օրեառներու ,

վարպետներու , գործիքներու , նուագախումբերու վրայ : Զանոնք երածչտութեան ընթերցումէ կամ դասէ զրկելը մեծ պատիժ մըն է , անանկ խոր վիշտ մը կը զգան ատոր համար , որ մարդ գրեթէ երբեք սիրտ չ'ըներ անոնց այդ կերպ պատիժ մը տալու : Երածըչտութիւնը արդէն անոնց սրտին համար է՝ ինչ որ լյսւր է՝ մեր աչքին համար : »

Տէռօսին տեղեկութիւն ուզեց թէ ուզուը չի՞ կըրնար երթալ տեսնել կոյրերը :

« Կրնայ , պատասխանեց ուսուցիչը , բայց դուք , տղաք , ձեզ չեմ խրատեր որ երթաք : Աւելի ուշ պէտք է երթաք . երբ անոնց դժբախտութեան ամբողջ մեծութիւնը հասկնալու տարիքին մէջ ըլլաք , եւ զգալու թէ ո՞րքան գութի տրտանի է այդ դժբախտութիւնը :

« Տխուր տեսարան մըն է , տղաքս , կը տեսնէք երբեմն հունա՛ , տղաք կիսաբաց պատուհանին առջեւ նստած , թարմ օդ ծծելով , անշարժ դէմքով , իրբեւ թէ նայէին դալար մեծ դաշտն իվար եւ գեղեցիկ կապոյտ լեռներն իվեր , որոնք կը տեսնէ՞ք դուք . . . բայց երբ մարդ մտածէ թէ անոնք ոչինչ կը տեսնեն , թէ երբեք չպիտի տեսնեն այս չքնաղ գեղեցկութիւնը , մարդուս սիրտը կը եղմուի , իրբեւ թէ ինք իսկ կոյր ըլլար այդ միջոցին :

« Անոնք որ կոյր ծնած են , որ երբեք չեն տեսած աշխարհը , քիչ մը նուազ արգահատելի են , որովհետեւ կ'անգիտանան թէ ի՛նչէ գրկուած են : Բայց տղաք կան որ միայն քանի մը ամսէ իվեր կոյր են , որոնք կը յիշեն ու կը հասկնան թէ ի՛նչ կորսնցուցած են : Ասոնք այն վիշտն ալ ունին որ կը տեսնեն քիչ քիչ մթննալը իրենց յիշողութեան մէջ իրենց ամէնէն սի-



րելի դէմքերուն : Այս տարաբախտներէն մէկը կ'ըսէր  
օր մը ինծի անբացատրելի տխրութեամբ մը . « կ'ու-  
զէի տեսանելիքս նորէն ձեռք բերել միայն մէկ անգամ ,  
մէկ վայրկեան , տեսնելու համար մօրս դէմքը . զոր  
այլ եւս չե՛մ յիշեր : »

« Երբ ասոնց մայրը կ'երթայ տեսնել զիրենք , ձեռ-  
քերնին անոր երեսը կը քսեն , չմոռնալով ոչ մէկ դի-  
մագիծ շօշափելու իրենց մատով , զգալու համար թէ  
ինչպէս է . ու հազիւ կը համոզուին թէ չեն կրնար  
տեսնել զինքը այլ եւս , ու կը կանչեն զայն քանի քա-  
նի անգամներ իր անունը տալով , իբրեւ թէ աղաչէ՛ին  
զինքը որ թողու անգամ մ'ալ տեսնել : »

« Որքան մարդիկ որ կ'երթան իրենց այցելութեան ,  
լալով դուրս կ'ելլեն : Մարդս երբ անոնց քովէն բաժ-  
նուի , իրեն այնպէս կը թուի թէ ինք բացառութիւն  
մը կը կազմէ , որովհետեւ անարժան առանձնաշնոր-  
հումը կը վայելէ տեսնելու աշխարհը , տուները , եր-  
կինքը , Մեղքցի՛ք , տղաքս , ու ժգնապէս մեղքցի՛ք ա-  
նոնք՝ որոնց համար արեւը լոյս չունի բնաւ , ու մայր  
մը նայուածք չունի բնաւ : »

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՇԻՒԱՆԴ

Շարք 5

Երէկ իրիկուն , դարոցէն ելլելուս , գացի այցե-  
լու թիւն մը տալ հիւանդ դասատուիս , հիւանդ՝ չափա-  
զանց աշխատութեան : Օրը հինգ ժամ դաս ունի , աս-  
կէ զատ ժամ մըն ալ մարզանքի , երկու ժամ ալ իրի-  
կուան դասի : Մէկ խօսքով քիչ կը քնանայ , շտապով

կ'ուտէ . առտուընէ մինչեւ իրիկուն շունչ կը հատցը-  
նէ . նա կ'ընէ ամէն բաները որոնք առողջութիւնը կը  
խանդարեն , կը հաւաստէ մայրս : Մայրս բարութիւն  
ունեցաւ սպասել ինծի անդաստակին մէջ , մինչդեռ  
ես վեր կ'ելլէի Պ . Բէնպօնին ինչպէս ըլլալը հարցնե-  
լու : Սանդուխին վրայ , սեւ մօրուքով դասատուին  
հանդիպեցայ , Պ . Գօթին , այն որ կը վախցնէ ամէն-  
քը եւ ոչ զոք կը պատժէ : Իր խոշոր աչքերովը ինծի  
նայեցաւ , եւ , կատակի համար , աւանց խնդալու , ա-  
ռիւծի պէս մռնչեց : Չորրորդ յարկը ելած էի ու տա-  
կաւին կը խնդայի ըրածին . երբ վարժապետիս դուռը  
զարկի : Սպասուհին իս մտցուց անբաւական լոյսով  
խեղճուկ սենեակի մը մէջ ուր պառկած էր ուսուցչիչս :  
Երկաթէ փոքրիկ անկողնի մը վրայ էր : Ձեռքը ձախ-  
տին վրայ դրած ըլլալով՝ աւելի լաւ տեսնելու հա-  
մար , ուրախութեամբ գոչեց զիս ձանձնալով .

« Վա՛յ , Հանուի՛ն է : » Անկողնին մօտեցայ , Պ . Բէն-  
պօնին թողուց որ ձեռքը իյնայ ուսիս վրայ ու ըսաւ  
ինծի .

« Ենորհակալ եմ , տղաս , աղէկ ըրիր եկար տես-  
նել հէգ վարժապետդ : Ողորմե՛լի վիճակի մը մէջ եմ ,  
կը տեսնես , Հանուիս է՛ , ի՛նչպէս կ'երթայ դասարա-  
նը , ու տղա՞քը : Ծա՛տ լաւ , անանկ չէ՛ : Հե՛շտ է ձե-  
զի անցնիլ ձեր ձեր վարժապետէն : »

Կ'ուզէի ոչ ըսել , բայց Պ . Բէնպօնին ընդմիջեց .  
« Լա՛ւ , լա՛ւ , գիտեմ սակայն թէ զիս կը սիրէք : »  
Երբ պատէն կախուած լուսանկարներու կը նայէի .  
« Կը տեսնես հոտ , ըսաւ ինծի , աշակերտներուս  
պատկերները : Քսան տարիէն աւելի է որ տուած են  
ինծի ատոնք : Ազնի՛ւ տղաք . . . ատոնք իմ յիշատակ-  
ներս են : Երբ մեռնիմ , վերջին նայուածքս անոնց պի-

տի ուղղուի: Դուն ալ պիտի տո՞ս ինծի քու պատկերդ, Հանուի, երբ նախակրթական դասերդ աւարտես:»

Քովի սեղանին վրայէն նարինջ մը առաւ, ձեռքիս մէջ դրաւ ըսելով.

«Ուրիշ ոչինչ ունիմ նուիրելու, հիւանդի մը ընծան է ասի...»

Իրեն կը նայէի, սիրտս սեղմուած.

«Ուշագրութիւն... առաւ նորէն... կը յուսամ թէ պրծիմ. բայց եթէ չառողջանամ... հո՞գ տար թուարանութեան, որ քու տկար կողմդ է... Զանք մը ըրէ, առաջին Զանքի մը կը կարօտի միայն, վասն զի երբեմն ընդունակութեան պակասութիւն չէ. աս նախապաշարում մըն է զոր ունին, եւ որ շատ դիւրութեամբ անհոգութեան կը տանի:»

Խօսելով հանդերձ, Պ Բէռպօնին կը թասար, յայտնի էր թէ կը տառապէր:

«Սաստիկ տնդ մը ունիմ, հառաչեց. յետոյ նորէն առաւ. լսեցիր, այնպէս չէ՞, Հանուի. ժրջանութեամբ աշխատէ՞ թուարանութեան եւ խնդիրներու: Մարդ եթէ առաջին անգամ չյաջողի, կը հանգչի քեջ մը աւ նորէն կը սկիւի. եթէ նորէն գլուխ չելլէ, նոր հանգիստէ մը յետոյ նորէն կը սկսի: Ու յառաջ. բայց հանդարտութեամբ, աւանց շտապի, աւանց սրտմոեւրու: Գնա՛, բարեւ տար մօրդ իմ կողէս. դպրոցը կը տեսնուինք, եւ եթէ այլ եւս չտեսնենք զիրար... յիշէ՛ երբեմն երրորդ դաս սրանի ուսուցիչդ, որ քեզ կը սիրէր:»

Ս.յս խօսքին վրայ՝ աչքերս արցունքով լեցուեցան:

Զեռքը ինծի երկնցնելով ու զիս իրեն քաշելով, համբուրեց, յետոյ կրկնեց.

«Գնա՛. ու դարձաւ պատին կողմը,  
Զորս ոտքով վար իջայ. պէտք ունէի մօրս փարելու:»

### Փ Ո Ղ Ո Յ Ի Ն Մ Է Ձ

Շաբաթ 25

Պատուհանէն քեզ կը դիտէի, այս իրիկուն, երբ դասատուիդ տունէն կը դառնայիր: Տիկնոջ մը բախեցար: Աւելի ուշագիր եզիր, երբ փողոցը կը քալես: Հոն ալ, կան պարտականութիւններ: Եթէ տան մէջ չափ կը դնես քու արարքիդ եւ շարժուածքիդ, ինչո՞ւ նոյն բանը չընես փողոցին մէջ, որ ամէնուն անցնելու տեղն է: Խորհէ՛ Հանուի. ամէն անգամ որ հանդիպիս ծերունիի մը, սղքատի մը, կնոջ մը՝ որ ունենայ թեւերուն վրայ տղայ մը, խեղանդամի մը՝ անթացուպերով, բեռի տակ ընկճուած մարդու մը, սգաւոր ընտանիքի մը, պէտք է յարգանքով ետ քաշուիս: Մենք կը պարտինք յարգել ծերուրիւնը, քշուտուրիւնը, մայրական սէրը, անկարուրիւնը, յոգնուրիւնը եւ մանր:

Ս.մէն անգամ որ տեսնես մէկը կառքի մը զարնուելու վտանգին մէջ, ազդարարէ՛, եթէ մարդ մըն է, ու ազատէ՛ զայն, եթէ տղայ մըն է. եթէ տեսնես տղայ մը մինակ որ կու լայ, հարցար իրեն թէ ինչո՞ւ կու լայ. ու մխիթարէ՛ զայն, եթէ կարող ես. վեր վերցուր գաւազանը զոր ծերունի մը գետինը կը ձգէ. եթէ երկու տղաք կը ծեծկուին, բաժնէ՛ զանոնք մէկ-գմէկէ. եթէ տեսնես որ երկու մարդ իրարու հետ կը ծեծկուին, փախիր հոնկէ՛ ներկայ չըլլալու համար վայրագ ցասկոտութեան մը տեսարանին, որ սիրտ կը

կարծրացնէ : Երբ մարդ մը անցնի , ձեռքերը կապած , երկու սասիկաններու մէջ տեղ , մի' աւելցնէր քու անգութ հետաքրքրութիւնդ ժողովրդին հետաքրքրութեանը Թերեւս անմեղ մըն է նա : Դարձէ՛ խօսելէ , խնդալէ քու ընկերներուդ հետ , երբ անցնի պատգարակ մը կամ մեռելի յուղարկաւորութիւն մը . վաղը քու տունդ ալ կրնայ մահ մը պատահիլ : Պատկառանքով նայէ գթութեան հաստատութիւններու տղոց , որ կ'անցնին երկու երկու . կոյրերու , համբխուլերու , որբերու , լքեալներու . խորհէ՛ , զանոնք տեսնելով , թէ մարդկային թշուառութիւնը եւ գթութիւնն է որ կ'անցնին : Երբ ծաղրելի կամ չլուելի տձեւութիւն մը տեսնես , չտեսնելու դարձի :

Քաղաքավարութեամբ պատասխանէ անցորդին որ ճամբայ կը հարցնէ քեզի : Ոչ սքի քիթին մի' խնդար , մի' վազեր , մի' հրեր ոչ զոք . մի' պուար , յարգէ՛ փողոցը : Ժողովրդի մը դատարարակոթիւնը կը դատուի իր' փողոցի մէջ կեցուածքէն : Ուր տեսնես կոշտութիւն փողոցին մէջ , ապահով եզի'ր թէ տուներուն մէջ կոշտութիւն պիտի գտնես : Եթէ վաղը ստիպուած ըլլայի'ր հեռուն երթալ , շատ գոհ պիտի ըլլայի'ր քու ծնընդավայրդ յիշողութեանդ մէջ ներկայ ունենալ , մանկութեանդ հայրենիքը , որ քու առաջին տարիներուդ մէջ միտ'կ աշխարհը եղաւ որ ճանչցար :

Այդ քաղաքին մէջ քու առաջին քայլերդ առի'ր , մօրդ ժիր ձեռքէն առաջնորդուած , հո'ն ըրի'ր առաջին ուսմունքդ , հոն գտար առաջին բարեկամներդ : Սիրէ՛ զայն ուրեմն , սիրէ՛ անոր փողոցները ու անոր բնակիչները . եւ եթէ երբեք լսես որ կը զրպարտեն զայն , պաշտպանէ՛ :

ՀԱՅՐԴ

Մ Ա Ր Տ

### ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐԸ

Հայրիկս տարաւ զիս երէկ վարժարան , ներկայ ըլլալու համար իրիկուան դասերուն : Երբ հոն հասանք , դասարանները արդէն լուսաւորուած էին եւ աշակերտները կը սկսէին գալ :

Տնօրէնը կատղեր էր , վասն զի ազակի մը կոտորէին քար նետելով . դռնապանը խկոյն դուրս սրացեր ու կեցուցեր էր կոտակ մը որ կը բողբէր , լալով , թէ ինք չէ ըրած :

Սթաւտին , որ դպրոցին դէմը կը բնակի , այս խօսքերուն հոն հասաւ :

« Անի չէ՛ , ըսաւ ցոյց տալով պզտիկ մահչուկը որ կու լար . Ծռանթին նետեց քարերը : Ես տեսայ , աչքովս տեսայ : Նա ինծի սպառնացաւ թէ կը ծեծէ զիս եթէ իմաց տամ ըրածը , բայց ես չեմ վախնար Ծռանթիէն : »

Իսկոյն թող տուին տղեկը , ու տնօրէնը ըսաւ հօրս թէ հետեւեալ օրը , առանց ներման Ծռանթին պիտի վռնտուի դպրոցէն :

Իրաւ է որ չեմ սիրեր Ծռանթին , յուր ընկեր մըն է . բայց այս սպառնալիքը սիրտս ձմէց :

Երբեք չէի տեսած իրիկուան դասերը : Խիստ շահագրգիռ է , մանաւանդ խիստ հոգեշահ :

Երկու հարիւրի մօտ գործաւորներ կային հոն , ամէն տարիքէ . տասներկու տասներեք տարեկան տղաք եւ մօրուսաւոր մարդիկ , որոնք իրենց աշխատութեան օրէն յետոյ , կու գային ուսանիլ . ատուղձագործներ ,

մեքենավարներ սեւցած դէմքով, որմնադիրներ՝ կիրէն ճերմկած ձեռքերով, հացագործի աշակերտներ մազեր- նին ալիւրով ճերմկած :

Թնթանօթածիգ զինուորներ եկան մոտն, համա- գգեստ հագած եւ տասնապետէ մը տռաջնորդուած :

Պէտք էր տեսնել ի՛նչպէս այս դպրոցականները կը փութային դալ մեր տեղերը բռնել նստարաններուն վրայ, ու ի՛նչ ջանասիրութեամբ կը զբաղէին իրենց պարտականութիւններուն : Ոմանք, տետրակներն բաց բռնած, կ'երթային բացատրութիւններ կը հարցը- նէին ուսուցչին : ու անոսոյ դեռատի վարժապետը, զոր «պզտիկ փաստարան» կը կոչենք, շրջապատուած երեք շորս գործաւորներէ, որոնց պարտականութիւն- ները կը սրբագրէր, կը խնդար ցոյց տալով ներկարարի մանչուկ մը իր տետրակը կարմիր կապոյտ բիծերով արատուած :

Տեսայ նաեւ Պ. Բէն զօնին, իմ սիրելի վարժապետս, որ առողջացեր է, ու նորէն դասի պիտի սկսի վաղը : Շատ զոհ եղայ զինքը տեսնելու :

Դասարաններու դռները բաց կը մնային : Դասերը սկսան :

Ձարմացայ եւ սքանչացայ այն ուշադրութեանը որով այս մարդիկը . . . այս աշակերտները մտիկ կ'ը- նէին դասատուին :

Անոնց մէջ, կը գտնուին, կ'երեւայ թէ, այնպիսի- ներ որոնք ժամանակ չէին ունեցած տուն մտնել ճա- շելու . անօթի պիտի ըլլային ամբողջ օրը աշխատելէ յետոյ :

Պզտիկները, զոր օրինակ, կէս ժամուան դասէ յե- տոյ քունքներուն կը մարէին, գլուխնին գրասեղանին դրած : Ուսուցիչը կ'արթնցնէր վանոնք կամացուկ մը,

չոյելով վանոնք իր փետուրէ գրչին ծայրովը :

Բայց մեծերը ուշադիր էին, աչքերնին յառած դա- սատուին վրայ . ճանճի թռչիլը պիտի լսուէր, երբ նա դաս բացատրէր :

Ես կը հպարտանայի տեսնելով մեր մանկական տե- ղերը մեծ մարդիկ նստած : Ասի զիս կը բարձրացնէր իմ աչքիս առջեւ : Ա՛հ, եթէ կարենայինք նմանիլ ի- րիկուան աշակերտներուն եւ իրենց պէս կենալ :

Նստարանիս վրայ, իմ գրասեղանիս առջեւ, կը գտնուէր երիտասարդ մը պեխերով եւ մօրուսաւոր, մեքենայի գործաւոր մը անշուշտ . աջ ձեռքին մէկ մատը վիրաւորուած էր, լաթերով փաթթուած, եւ սակայն կը ջանար գրեւոր յամրաբար, միւսներուն պէս ընելու համար :

Ի՛նչ օրինակ ինծի համար :

Ինչ որ աւելի հաճոյք պատճառեց ինծի, այն էր որ տեսայ պզտիկ ուրմնադիրին տեղը իր հայրը նստած : Այս հսկան անհանգիստ էր այդ պզտիկ անկիւնը ուր նեղ կու գար իր արմուկներուն : Ինք, կ'երեւայ թէ շնորհը խնդրեր է անօրէնէն իր պզտիկ « ևսպաս- սակի դնչիկիկն » (այսպէս կ'անուանէ իր որդին) տեղը նստելու եւ իրեն շնորհուեցաւ անմիջապէս ինչ որ կը փափաքէր :

Հոն կեցայ, հայրիկիս հետ, մինչեւ դասին վերջը : Ինծի համար ալ դաս մըն էր . ուշադրութեան եւ կե- ցուածքի դաս մը, որմէ իմ օգուտս պիտի քաղէի :

Դրան առջեւ, շատ կիներ կային, թեւերնուն վը- րայ պզտիկով մը, որոնք կը սպասէին իրենց ամուսին- ներուն, Անոնցմէ մէկը դպրոցին դրան առջեւ կ'երե- ւար, տղան ձեռքը կ'երկնցնէր հօրը, որ զայն կ'աւ- նէր համբուրելով : Կինը, փոխարէն, էրկանը գիրքերը

ու տետրակները կը տանէր : Լսեցի անոնցմէ մէկը որ կ'ըսէր . « Շուտ ընենք ապուրը կը պաղի : »

Ու կ'երթային խումբով . դէպի իրենց բնակարանը : Փողոցը պահ մը աղմուկով ու բազմութեամբ լեցուեցաւ . յետոյ իւրաքանչիւրը իր կողմը գնաց , լռութիւնը տիրեց , ու այլ եւս չուրք միայն տեսայ տնօրէնին , որուն դանդաղ քալուածքը կը մատնէր կրած յոգնութիւնը :

Առաջինն է դպրոց եկող , ու վերջին՝ գացող , այս սիրեղի տնօրէնը :

Ո՛հ , ի՛նչ լաւ պիտի աշխատիմ այս առաւօտ , նրմանելու համար երէկ իրիկուան դպրոցականներուն :

### Կ Ռ Ի Ի Ը

#### Կիրակի 5

Պէտք էր այս բանին սպասել : Ֆռանթին , տնօրէնէն վանուուելէ յետոյ ուղեց վրէժ տունել : Սթառտին կը սպասէր փողոցին մէկ անկիւնը , այն ժամուն ուր նա կու գայ իր քրոջը հետ , զոր կ'երթայ առնել Տօռա Կոօսա փողոցի դպրոցէն : Քոյրս՝ Սիլվիան , դուրս ելած ատեն , ինք ալ , իր դպրոցէն տեսաւ կռիւը ու տուն եկաւ բոլորովին զարհուրած : Ահա ինչ պատահեր է . Ֆռանթին մոմչորէ գլխարկը գլուխը դրած , մատներուն ծայրերը կոխելով Սթառտին ետեւէն զընաց , ու զայն գրգռելու համար , անոր քրոջը մազին հիւսքը քաշեց ուժով , այնքան ուժով որ պզտիկը գրեթէ գետին ինկաւ : Տղան ճիշ մը արձակեց , եղբայրը ետին դարձաւ : Ֆռանթին , որ շատ աւելի մեծ եւ

աւելի ուժեղ է քան Սթառտին , միտքէն կ'ըսէր անչուշտ . « Կա՛մ բառ մը չպիտի արտասանէ , կամ կողերը պիտի կոտրտեմ : »

Բայց Սթառտին երկվայրկեան մը իսկ չխորհեցաւ . կարճ եւ ծանր որպէս է , խոյացաւ անպիտանին վրայ , ու սկսաւ կռուիի հարուածներու տարափ տեղալ վրան : Բայց եւ այնպէս , ինք ալ կ'ընդունէր անկէ , տուածէն աւելի : Փողոցին մէջ պզտիկ աղջիկներ միայն կային , մէկը չկար որ ասոնք իրարմէ զատէր : Սթառտին մէյ մը գետին տապալելէ յետոյ՝ վեր կ'ելլէ իսկոյն , նորէն կը խոյանայ միւսին վրայ : Ֆռանթին կը զարնէր անոր : Միջոց մը անոր ականջին կէտը կը փրցնէ , ու աչքին մէկը կ'ուռեցնէ զարնելով . Սթառտին քիթէն արիւն կու գար , բայց կը կատղէր ու կը մանչէր :

« Իս պիտի սպաննես , բայց սո՛ւղի պիտի նստեցընեմ քեզի : »

Կին մը պոռաց պատուհանէ մը .

« Ապրի՛ս , պզտիկ : »

Ուրիշներ կ'ըսէին .

« Եղբայր մըն է որ քոյրը կը պաշտպանէ , քաջութիւն , ուժով զարկ : »

Ու կը պոռային Ֆռանթին .

« Վա՛տ , տնօրէն : »

Բայց Ֆռանթին կատղած , ոտքի կեռ հարուած մը տուաւ Սթառտինին , որ ինկաւ իր առջեւը :

Ֆռանթին վրայէն ոտքի ու կռուիի հարուածներ կու տար . Սթառտին տակէն կը պաշտպանէր ինքզինքը գլխու ու կրունկի հարուածներով :

Սակայն մէկ ոստումով , Սթառտին ոտքի ելաւ , Ֆռանթին մէջքէն կախուեցաւ , կատաղի ճիգով մը ,

Մ Ն Ո Ղ Ք Ն Ե Ր

Երկուսարքի 6

խճուղիին վրայ նետեց զայն, ու ծուռկը անոր կուրծքին դրաւ :

«Ո՛հ, անօրէնը, դանա՛կ կը քաշէ .» պոռաց մարդ մը վազելով զինաթափ ընելու Ֆռանթին, որ, արդարեւ, դանակը հաներ էր գրպանէն ու անով պիտի վիրաւորէր Սթառտին :

Արդէն Սթառտին, ինքզինքէն ելած, Ֆռանթին բազուկը երկու ձեռքով բռներ եւ այնքան ուժով խածեր էր դաստակէն, որ դանակը ինկեր էր ձեռքէն :

Ուրիշ անձեր վազեր եկեր էին, տղաքը կը շրջապատէին, վեր կը վերցնէին : Ֆռանթին փախաւ, շատ խոշտանգուած : Սթառտին կռիւի դաշտը մնաց, երեսը արիւնած, աչքը ուռած, բայց յաղթող : Իր պզտիկ քոյրը կու լար իր քովը կեցած, մինչդեռ պզտիկ աղջիկներ կը ժողուէին անոր գիրքերը, տեսարկները որ գետնին վրայ ցրուած էին :

«Կեցցէ՛ պզտիկը որ իր քոյրը պաշտպանեց .» կ'ըսէին իրեն շուրջը :

Սթարտին, որ աւելի իր պայուսակը կը մտածէր բան թէ յաղթութիւնը, սկսաւ խօսոյն զննել մէկիկ մէկիկ իր գիրքերը, տեսարկները, ապահով ըլլալու համար թէ բան մը չէր պակսեր, թէ բան մը չկար աղոտոտած : Թեւովը սրեց ամէն բան, իր գրչակալը նայեցաւ, ամէն առարկայ իր տեղը դրաւ : յետոյ, հանդարտ եւ լուրջ ինչպէս միշտ, ըսաւ քորջը .

«Շուտ երթանք . չորս գործողութեան խառն խորնդիր մը ունիմ' ընելու .»

Այս առաւօտ, Պ. Սթառտի հայր կը սպասէր իր որդւոյն, վախնալով որ իր տղան նորէն չհանգիպի Ֆռանթին : Կ'ըսեն սակայն թէ այլ եւս չպիտի տեսնենք, այդ ստահակը, եւ թէ ուղղութեան տուն մը պիտի դնեն զինքը :

Շատ ծնողքներ կային, այս առտու, անդաստակին մէջ, որոնց մէջ էր փայտավաճառը, Գօռէթին հայրը . բոլորովին տղուն պատկերն է, երկայնահասակ, զուարթ, իր գորշագոյնի դարձած պէխերովը եւ լամբակին վրայ ժապաւէնովը : Ա'լ ամէն ծնողքները կը սկսիմ' ճանչնալ, զանոնք ամէն օր տեսնելով : Մամիկ մը կայ կորաքամակ, ձերմակ դտակ մը գլուխը, որ անձրեւին, ձիւնին, միշտ կու գայ իր թռուռը հետ, առաջին դասարանի աշակերտ է, վզնոցը կը շտկէ, փոշիները կը թօթուէ, մտքերը կը շտկէ, տեսարկները կը պահէ : Լաւ կը տեսնուի թէ ուրիշ մտածում չունի, թէ իր թոռնէն ուրիշ աւելի գեղեցիկ բան չի տեսներ աշխարհի վրայ :

Յաճախ կը տեսնենք նաեւ հրետանիի հարիւրապետը, Ռօպէթիի հայրը, անոր որ տղայ մը ազատեց : Եւ որովհետեւ ամէն ընկերները, իր քովէն անցած տեսնին զգուռնք մը կու տան զիւրցազուն պզտիկ վիրաւորեալին, հայրը ամէն բարեւները եւ ամէն ձեռքի սեղմումները կը հատուցանէ իր որդւոյն ամէն բարեկամներուն, առանց բացառութեան : Ո'րքան անոնք պզտիկ ըլլան կամ գէշ հագուած, այնքան աւելի գոհ ու շնորհակալ կ'ըլլայ անոնցմէ :

Երբեմն տխուր բաներ կը տեսնէ մարդ, զոր օրի նակ տիկին մը որ ամիսէ մը իվեր այլ եւս դպրոց չէր գար, վասն զի զաւկին մէկը կորսնցուցեր էր, եւ միւսն ալ դպրոցէն առնելու համար սպասուհին կը զրկեր: Երէկ այդ տիկինը եկաւ վարժարան. բայց, իր մեռած տղուն դասարանը եւ ընկերները տեսնելով, լաց մըն է փրցուց. անօրէնը անոր թեւէն բռնեց ու իր սենեակը տարաւ:

Հայրեր ու մայրեր կան որ գոց գիտեն իրենց զաւակներուն ընկերներուն բոլորին անունը: Քովի դըպրոցէն աղջիկներ կան, մօտակայ լիսէներու աշակերտներ, որոնք կու գան իրենց եղբայրները առնելու: Հանգստեան թոշակի կոչուած ծեր գնդապետ մը կայ, որ, երբ աղայ մը գրիչը կամ տետրակը գետինը ձգէ, վեր կ'առնէ: Կը տեսնուին նաեւ հագուած սքուած տիկիներ, որոնք դպրոցական բաներու վրայ կը խօսին գլուխնին սերող դրած կիներու հետ, սակառնին թեւերնուն տակ, եւ որոնք կ'ըսեն. Ա՛խ, խնդիրը շատ դժուար էր, այս անգամ: — Քերականութեան դաս մը կար որ վե՛րջ չուներ, այս առաւօտ:»

Եւ երբ հիւանդ մը ըլլայ դասարանի մը մէջ, ա՛ս կիները ամէնքն ալ գիտեն ու կ'ուրախանան երբ նա ապաքինի: Ճիշդ, այս առտու, ութը տասը գործաւորուհիներ եւ տիկիներ կային Գոօսիին մօրը շուրջը, շրջուն պտղավաճառին. անոր հարցնելու համար հէգ պզտիկի մը սրպիտութիւնը եղբօրս դասարանէն, որ անոր բակին մէջ կը բնակի, եւ որ մահուան վտանգի մէջ է: Կարծես թէ վարժարանը հաւասար կ'ընէ ամէն դասակարգերը եւ ամէն մարդ իրարու բարեկամ կ'ընէ:

Սրտաշարժ տեսարանի մը ներկայ եղայ երէկ: Քանի մը օրէ իվեր, ամէն անգամ որ պտղավաճառ կինը կ'անցնէր Տէոսիին քովէն, կինը անոր կը նայէր մեծ աղապատանքի արտայայտութեամբ մը: Պէտք է ըսել թէ այն օրէն իվեր որ Տէոսին կաղամարին եւ 78 թիւ բանտարկեալին գիւտը ըրաւ, բարեկամը եղաւ այդ բանտարկեալին տղուն, Գոօսիին, այն՝ որուն մազերը չէկ են եւ թեւը անշարժ: Տէոսին կ'օգնէ անոր գըրաւոր պարտականութիւններուն դպրոցը, յուշարուութիւն կ'ընէ անոր, թուղթ կու տայ, գրիչ կու տայ. վերջապէս, եղբօր պէս կը վարուի հետը, տեղը լեցնելու համար հօրը պատահած դժբախտութեանը, եւ զոր զաւակը չէր գիտեր: Շատ օրեր կար որ պտղավաճառ կինը աչքէն չէր հեռացներ Տէոսին. զի բարի կին մըն է, որ կ'ապրի մի միայն իր մանչուն համար, եւ, այս սիրեցեալ տղան օգնուած, լաւ նիշեր առած է չնորհիւ Տէոսիին, որ առաջինն է դասարանին, Տէոսին իրեն համար տեսակ մը մասնաւոր արարած է:

Անոր կը նայէր միշտ, իբրեւ թէ ունոր բան մը ըսել ուզէր, առանց ըսել համարձակելու:

Երէկ առտու, սակայն, դրան առջեւ կեցուց ու ըսաւ իրեն.

«Ներեցէ՛ք ինձի, դեռատի պարոնս. բայց այնքան բարի էք տղուս համար, որ չնորհ պիտի ընէք ինձի ընդունիլ այս պզտիկ յիշատակը հէգ մօր մը:»

Եւ իր պտուղի սակառին մէջէն քաշեց հանեց ոսկեզօծ խաւաքարտէ տուփ մը:

Տէնօսին կարմրեցաւ ու մերժեց բողոքովին :

« Ա՛յդ ձեր որդւոյն տուէք, զոսաւ . ես բան մը չեմ բնդուենիր : »

Կինը ամօթահար մնաց ու ներողութիւն խնդրեց կակազելով .

« Չէի կարծեր ձեզ վշտացնել, չաքար է տուածս ուրիշ բան չէ : »

Բայց Տէնօսին մերժումի նշան մը ըրաւ . այն ատեն վախն ի վախը, սակառին մէջէն կապոց մը մանր բողկ հանեց ու մրմնջեց .

« Գոնէ ատոնք ընդունեցէ՛ք, թարմ են, ձեր մօրը կը տանիք զանոնք : »

Տէնօսին ժպտեցաւ ու պատասխանեց .

« Չէ, շնորհակալ եմ, բան մը չեմ ուզեր, կրցածս պիտի ընեմ միշտ Գոսօսին համար, բայց բան մը չեմ կրնար ընդունիլ . բայց եւ այնպէս շնորհակա՛լ եմ : »

— Վշտացուցի՞ր ձեզ արդեօք, հարցուց կինը մտա հոգ :

— Ո՛հ, չէ՛, ըսաւ Տէնօսին ժպտելով, ու գնաց, մինչդեռ կինը կը գոչէր հրճուալից . « Ո՛հ, բարի՛ տըղայ, երբեք չեմ տեսած ասոր պէս ազնիւ եւ գեղեցիկ տղայ : »

Կարծեցինք՞ թէ ա՛լ լմնցաւ, բայց իրիկունը, ժամը չորսին, Գոսօսին մօրը տեղ, հայրը հոն գտնուեցաւ, իր տխուր ու մեղամաղձոտ կերպարանքովը : Կեցուց Տէնօսին . եւ, անոր երեսը նայելու կերպէն, հասկցայ թէ կը կասկածէր թէ նա իր գաղտնիքը գիտէ :

« Դուք կը սիրէք իմ որդիս, ըսաւ անոր, տխուր եւ խանդաղատալից ձայնի շեշտով մը : Ինչո՞ւ այնքան կը սիրէք զայն : »

Տէնօսին կրակի պէս կարմրեցաւ . կ'ուզէր պա-

տասխանել . « Կը սիրեմ զայն վասն զի դժբախտ է, վասն զի դուք ալ, իր հայրը, աւելի դժբախտ եղած էք քան յանցաւոր, վասն զի քաւեցիք ձեր յանցանքը . վասն զի սրտի տէր մարդ մըն էք : »

Սակայն քաջութիւնը պակսեցաւ իրմէ այս բանը ըսելու :

Իսկապէս, տակաւին տեսակ մը սոսկում, տեսակ մը զգուանք կը զգար խօսելու մարդու մը որ ուրիշին արիւնը թափեր էր, եւ որ վեց տարի բանտին մէջ մնացեր էր :

Բայց միւսը հասկցաւ ամէն բան, եւ, ձայնը ցած-ցընելով, Տէնօսին ականջն իվար ըսաւ դողդոջուն ձայնով մը .

« Զաւակը կը սիրէք, բայց չէք ատեր, չէք անարգեր բնաւ հայրը, այնպէս չէ՞ : »

— Ո՛հ, չէ, չէ, ընդհակառակը .» գոչեց Տէնօսին սրտի մեծ յուզումով մը :

Այն ատեն մարդը ակամայ շարժում մը ըրաւ իրբեւ թէ Տէնօսին թեւերուն մէջ առնելու համար, բայց չհամարձակեցաւ, եւ գոհացաւ անոր խարտեաչ խոսքովքներէն մէկուն դպչելով . յետոյ զայն թողով, իր մատները բերնին տարաւ ու համբուրեց Տէնօսին նայելով, թրջած աչքերով, ըսել ուզելու համար թէ այս համբոյրը իրեն համար էր : Յետոյ իր տղուն ձեռքէն բռնեց ու գնաց շուտաքայլ :



### ՊՁՏԻԿ ՄԵՌԵԼԸ

Երկու տարի, 13

Պզտիկ տղան որ պաղապատաւ կնոջ բակին մէջ կը բնակէր, եւ առաջին դասարանին մէջ եղբորս ընկերն էր՝ մեռաւ։ Տէլքաթի վարժուհին շարաթ օրը եկաւ վշտահար՝ ծանուցանել լուրը Պ. Բէռպօնիին, ու իսկոյն կառօնը եւ Գօռէթին ինքզինքնին առաջարկեցին դադարը տանելու։ Ազնիւ տղայ մըն էր, այդ խեղճ պզտիկը, նախորդ շարթուն մետալ ստացեր էր դպրոցը, նա շատ կը սիրէր եղբայրս ու անոր տուած էր կտորած գանձանակ մը։ Մայրիկս միշտ կը գգուէր զինքը, երբ իրեն հանդիպէր, վրան երկու շերտ կարմիր չուխայով մորթակ մը կը դնէր գլուխը, Հայրը բռնակիր է երկաթուղիին մէջ։ Երէկ իրիկուն, կիրակի, ժամը չորս ու կէսին, մեռելին տունը գացինք յուղարկաւորութեան գտնուելու համար։ Բակը լեցուն էր — առաջին դասարանի տղոցմով, իրենց մօրը հետ եկած։ Վարժուհիներէն հինգը վեցը եկեր էին։ Առաջին դասարանի վարժուհին ու Օր. Տէլքաթին ներս մտած էին, ու բաց պատուհանէն կը տեսնէինք որ կու լային։ Կը լսուէր նաեւ մեռնողին մօրը լալը, որ սիրտ դիմանալու բան չէր։ Երկու տիկիներ, դպրոցէն երկու աշակերտներու մայրեր, ծաղկէ պսակներ բերեր էին, ժամը ճիշդ հինգին ճամբայ ինկանք։ Դադարը գոցուած էր սեւ չուխայով մը, ծաղկէ պսակներով ծածկուած։ Սեւ չուխային վրայ կապեր էին մետալը եւ երեք պատուանիչ, զոր տղան ստացեր էր դպրոցէն այս տարուան շրջանին մէջ։ Կառօնը, Գօռէթին ու թաղեցի երկու տղաք դադարը կը տանէին։ Օր. Տէլքաթին դա-

դադին ետեւէն կ'երթար, լալով, իրրեւ թէ տղան իրը ըլլար, ու անոր ետեւէն միւս վարժուհիները, յետոյ իրենց աշակերտները, որոնց փոքրագոյնները մէյ մէկ փունջ ունէին մանուշակի մէկ ձեռքերնին ու միւս ձեռքերնին մօրերնուն տուած էին բռնելու։

Զարմանքով դադալին կը նայէին անոնք, ու լսեցի անոնցմէ մէկը որ հարցուց « Ու հիմա, այլ եւս դպրոց չպիտի՞ դայ։ »

Երբ դադարը դուրս ելաւ դռնէն, պատուհանէն վար յուսահատ ձայն մը լսուեցաւ. մայրն էր, զոր իսկոյն ներս առին պատուհանէն։

Փողոցին մէջ, հանդիպեցանք ուրիշ վարժարանի մը աշակերտներուն որ երկու կարգ կը քալէին, ու ամէնքն ալ, դադարը, մետալը եւ վարժուհիները տեսնելով, յարգանքով խոնարհու թիւն ըրին։

Սեղճ պզտիկ, մշտնջենական քունը պիտի քնանայ իր մետալին հետ, այլ եւս չպիտի տեսնենք իր պզտիկ մորթակը կարմիր շերտերով... Ինչ առողջ էր։ Չորս օրուան մէջ աներեւութացաւ։ Վերջի օրը, ջանաց դարձեալ ելլելու իր դպրոցական պարտականութիւնները գրելու համար, եւ ուզեց մետալը իր անկողնին վրայ պահել, վախնալով որ չառնեն իրմէ։ Ոչ ոք պիտի առնէ զայն քենէ, հէ՛ք տղայ։ Երթաս բարով, երթաս բարով։ Պիտի յիշենք միշտ զքեզ, Պառէթի վարժարանին մէջ։ Հանդարտ քնացիր, սրբ տիկ տղեկ։

### ՄԱՐՏ 14 Ի ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

Այսօր, օրը շատ ուրախ եղաւ : Մարտ 13, մրցանակարաշխութեան նախորդ օրը, որ վիքթոր-էմմանուէլ թատրոնին մէջ կը կատարուէի, ամէն տարուան փառաւոր հանդէսը (\*): Այս անգամ այն տղաքը որ պիտի երթան թատերարեմին վրայ ներկայացնել ընտրուածներու ցանկը պարոններուն որ մրցանակները կը բաշխեն, դիպուածով կոչուած չին :

Տնօրէնը եկաւ այս առաւօտ ու ըսաւ մեզի .

« Բարի լուր մը, տղաքս : »

Յետոյ կանչեց :

« Գօռասի՛ : »

Գալապրացին ստքի ելաւ :

« Կ'ուզե՞ս դուն ալ մէջերնին ըլլալ անոնց որ ընտրուածներուն ցանկը կը տանին վարչութեան պաշտօնատարներուն, վաղը, թատրոնին մէջ : »

Գալապրացին հաստատական պատասխան մը տրուաւ :

« Լաւ, ըսաւ տնօրէնը, այս կերպով Գալապրացիներէն ալ ներկայացուցիչ մը պիտի ըլլայ : Քաղաքատունը ուզեց այս տարի որ տասը տասներկու տղաքը, որ մրցանակները կը ներկայացնեն վարչութեան պաշտօնատարներուն, պատկանին Իտալիայի զանազան գա-

(\*) Այս հանդէսը տեղի կ'ունանայ, Իտալիայի մէջ, հոս տեսածնուս նայելով, զպրոցական տարեշրջանին կէսին : Պիտի տեսնենք թիչ մը անդին՝ Թէ զպրոցականներուն անցուցած ընտուծիւնները արձակուրդէն առաջ՝ նպատակ ունին մասնանիշ ընելու անոնք որ, արագայ շրջանին, ընդունակ են մտնելու աւելի բարձր դասարան մը :

ւառներու, եւ առնուին Թուրինի զանազան հասարակաց վարժարաններէն : Քսան դպրոցական բաժին եւ հինգ ալ ճիւղ ունինք. եօթը հազար աշակերտ : Այս չափ ստուար թիւի մը մէջէ, դժուար չէ գտնել տղաք իւրաքանչիւր իտալական գաւառներէն : Թոռֆուարօ-Թասօ բաժինին մէջէն, երկու ներկայացուցիչ գտան կղզիներէն, Սարտենիացի մը եւ Սիկիլիացի մը : Պուօնֆօնքայնիի դպրոցը պզտիկ Յլօրանցի մը տուաւ, փայտի վրայ քանդակագործի մը որդին : Հոռոմայեցի մը ընտրեցին Թօմասֆոյի բաժինէն . յետոյ դիւրաւ եղաւ գտնել վենետիկցիներ, Լօմպարտացիներ : Մօնվիզյի բաժինը կը ներկայացնէ Նաբօլիցի մը, սպայի մը որդին . մենք, Պառեքայի բաժնին մէջ, Ճենովացի մը եւ Գալապրացի մը կու տանք : Լաւ է . չէ՞, Իտալիայի ամէն կողմի մեր եղբայրներն են որ պիտի տան պարգեւները : Ուշադրութիւն ըրէ՛ք երբ անոնք երեւան բեմին վրայ, տասներկուքը միասին . ու ընդունեցէ՛ք զանոնք կեցցէներով : Տղաք են անոնք, բայց իրենց երկիրը կը ներկայացնեն իրբեւ թէ կատարեալ մարդիկ ըլլային, եռագոյն փոքրիկ դրօշակ մը Իտալիայի խորհրդանշանը չէ՞, որքան պիտի ըլլար մեծ դրօշ մը : Ջերմապէս պիտի ծափահարէք անշուշտ : »

Այս ըսաւ, տնօրէնը գնաց ու դասատուն յարեց ժպտելով .

« Ուրեմն, Գօռասի, դուն Գալապրացիներուն երեսփոխանն ես : »

Ամէնքս մէկ, ծափահարեցինք խնդալով . ու, երբ փոքրց ելանք, Գօռասին շրջապատեցին, բռնեցին զայն սրունքներէն, եւ ուսերնուն վրայ դրած տարին յալթանակով, կը պոռային . « Կեցցէ՛ Գալապրացիներուն երեսփոխանը . » բայց ուրախութիւն էր այս, ծաղր չէր

բնաւ, ընդհակառակը, կը շնորհաւորէին Գօռասին. արդարեւ, ամէնուս հաճելի է այս տղան: Իր յաղթանակին ժպտելով, նա տարուեցաւ այսպէս մինչեւ փողոցի մը անկիւնը, ուր դէմ առ դէմ եկան սեւ մօրուք պարոնի մը հետ, որ սկսաւ խնդալ:

« Հայրս է ըսաւ Գալապրացին:

Այն ատեն ընկերները անոր տղան թեւերուն մէջ գրին, իրենք փախան մէյ մէկ կողմ:

### Մ Ր Ց Ա Ն Ա Կ Ա Բ Ա Շ Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Մատ 14

Ժամը երկուքին մօտ՝ մեծ թատրոնը լեցուած էր. վարը, օթեակները, թատերաբեմը: Հազարներով դէմքեր կը տեսնուէր. տղաք, տիկիներ, ուսուցիչներ, գործաւորներ, ժողովրդի կիներ, երախաներ: Երբ-րում մըն էր գլուխներու, ձեռքերու, փետուրներու, ժապաւէններու եւ խոպոպներու վէտվէտում մը, մշտական ու զուարթ մրմունջ մը, որ կը զուարթացնէ քեզ ալ:

Թատրոնը զարդարուած էր դրօշներով շտկուած մեծ պսակներով: Նուագախումբին մէջ՝ երկու սանդուղ կառուցեր էին, մէկը աջին, ուրիշ պսակաւորները վեր պիտի ելլէին, մէկը ձախին, ուրիշ պիտի իջնէին: Բեմին առջեւի կողմը, կը գտնուէր կարմիր թաւիչէ թիկ. նախոճներու շարք մը. որոնց մէջ տեղիւնէն յենարանին վրայ կը կախուէր դափնիէ պզտիկ պսակ մը: Մէկ կողմը դրուած էր սեղան մը ծածկուած կանանչ գորգով մը, ուր կազմուած գիրքերը, եռագոյն ժապա-

ւէններով կապուած, դպրոցականներուն տենջը կը հրաւիրէին:

Նուագախումբը իր սովորական տեղն էր, բեմին առջեւ: Ուսուցիչները եւ ուսուցչուհիները կը լեցնէին առաջին հայելարանին կէսը, որ իրենց համար սահուած էր: Վարի նստարաններուն վրայ հարիւրի չափ տղաք զետեղուած էին, որոնք պիտի երգէին, ու ձեռքերնին լուծած էին երգի հատուածնին: Խորը եւ թատրոնին շուրջը, կը տեսնուէր երթալ գալը վարժապետներու եւ վարժուհիներու, որոնք կարգի կը դնէին պսակաւորները, արդէն չրջապատուած իրենց ծնողքներէն, վզնոցնին կամ գլխարկնին վերջին անգամ մըն ալ շտկելով:

Հազիւ հասած ծնողքիս հետ սրտազամին վրայ, դիմացս հայելարանին վրայ տեսայ կարմիր փետուրով վարժուհին, որ կը խնդար, իր գեղեցիկ փոսիկներովը այտերուն վրայ, եւ, իր քովը, եղբօրս վարժուհին ու պզտիկ մայրսպետը, ամբողջ սեւեր հագած, ինչպէս նաեւ իմ ազնիւ վարժուհիս առաջին բարձրագոյնի: Բայց նա այնքան դեղնած էր, խեղճ կիներ, եւ անանկ ուժով կը հազար, որ թատրոնին մէկ ծայրէն միւսը կը լսուէր: Վարը տեսայ իսկոյն սիրելի Կառօնը, ու անոր քովը, անոր ուսին կաթնած նէլլիին խարտեաչ գլուխը: Քիչ մը հեռուն Կառօֆին տեսայ, իր ագուաւի կտուցի ձեւով քիթովը. շատ կ'աշխատէր տպուած ցանկերը ձեռք անցընելու, թէեւ մեծ ծրար մը ունէր անոնցմէ... Թերեւս կ'ուզէր, իր սովորութեան համեմատ, շահագործել (spéculer) վրան... Դրան քով կը գտնուէին փայտովաճառն ու իր կիներ, կիրակի օրուան զգեստով, նստած իրենց որդւոյն, Գօռէթիին քով, որ երրորդ մրցանակ ունի այս ան-

գամ Գօռէթին չէր հագած այլ եւս իր ջրաղուէսի գոյն կրկնոցը եւ իր կատուի ստեւի գոյն գդակը, հապա պզտիկ պարոնի մը պէս հագուած էր: Հայելարանին մէջ, պահ մը տեսայ Վօթինին, ժանեակաւոր մեծ փողկապով մը, յետոյ աներեւութացաւ: Բեմին վրայ նայող օթեակի մը մէջ կար լեցուն մարդ, հրետանիի հարիւրապետ Ռօպէգին, ու անոր որդին, իր անթացուպերովը:

Ճիշդ ժամը երկուքին, երաժշտութիւնը սկսաւ, ու նոյն միջոցին տեսնուեցաւ որ բեմին վրայ կ'ելլէին աջ կողմի սանդուղէն, քաղաքապետը, գաւառապետը, անոր օգնականը, դպրոցներու վերակացուն ու շատ մը ուրիշ պարոններ սեւ հագած, որոնք գացին նստան կարմիր թիկնաթոռներուն վրայ, նուագը դադրած ըլլալով, երգի դասարանի տնօրէնը առաջ եկաւ, ճպտտ մը ձեռքը: Անոր մէկ նշանին վրայ՝ բոլոր վարը նստող տղաքը ոտքի ելան. ուրիշ նշան մըն ալ ըրաւ, ամէնքը մէկ սկսան երգել:

Եօթը հարիւր էին, փառաւոր խմբերգ մը երգելու հանգիստաւոր կերպով մը: Եօթը հարիւր տղոց ձայներ միահաղոյն երգելով. հիանալի էր: Ամէն մարդ անշարժ կեցեր էր զանոնք մտիկ ընելու համար, իրենց անուշ եւ միանգամայն լուրջ երգը մեծ տպաւորութիւն կ'ընէր: Երբ լռեցին, ուժգին ծափահարուեցան:

Մրցանակարաչխութիւնը պիտի սկսէր. իմ երկրորդ դասարանի վարժապետս, իր շէկ մագերովը եւ արթուն աչքերովը, բեմին վրայ առաջ եկեր էր արդէն, պսակաւորներուն անունները կարդալու համար: Կը սպասուէր որ ներս մտնէին տասներկու տղաքը որ մրցանակները պիտի ներկայացնէին: Լրագիրները ծանուցեր էին թէ Իտալիայի ամէն գաւառներէն

տղաք պիտի ըլլային անոնք: Անոնց սարտելով՝ հետաքրքրութեամբ կը նայէին այն կողմը ուրկէ պիտի գային անոնք: Քաղաքապետը ինքն իսկ ու միւս նշանաւոր անձերն ալ ուշադիր կ'երեւային, խոր լռութիւն կը տիրէր:

Յանկարծ երեսփոխանութիւնը տեսնուեցաւ որ կու գար կայտառ քայլերով: Բեմին մինչեւ եզրը յառաջացաւ. յետոյ տասներկու պզտիկ երեսփոխանները, ինչպէս կոչած էինք զիրենք, կանգ առին, ժպտուն, բայց քիչ մը վարանտ: Բոլոր հանդիսատիաները — երեք հազար հօգիլ չափ — ոտքի ելան միահաղոյն ու ծափահարութիւնները պայթեցան, որոտով երկար հարուածի մը նման: Տղաքը խիստ շիթած երեւցան:

Իսկոյն ճանչցայ Գօռասին, Գալապրացին, սեւ հագած ինչպէս միշտ: Քաղաքային ժողովի անգամ մը, որ մեզի հետ էր, ու կը ճանչնար տղաքը, մատնանիջ կ'ընէր զանոնք մօրս:

«Այս պզտիկ խարտեաչը, կ'ըսէր, Վենետիկի ներկայացուցիչն է. Հռովմայեցին սա երկայնահասակ ու զանգուր մազերով տղան է:»

Անոնցմէ երկու երեքը շատ չքեղապէս հագուած էին, միւսները գործաւորներու տղաք էին. բայց ամէնքն ալ վայելուչ կերպով եւ մաքուր հագուած էին: Ճլուռանոցին ամէնէն պզտիկը կը գտնուէր. կապոյտ ուսընդ մէջ մը կապած էր մէջքին: Ամէնքն ալ մէկզմէկու ետեւէ անցան քաղաքապետին առջեւէն որ զանոնք համբուրեց, մինչդեռ պարոն մը կ'ըսէր երբ յաջորդաբար կ'անցնէին. «Ճլուռանս, Նարօլի, Պօլօնիս, Բալերմօ...»

Եւ, իւրաքանչիւր տղան որ կ'անցնէր, հանդիսականները կը ծափահարէին: Իեւատի երեսփոխանները

գացին կեցան կանանչ սեղանին քով ուր դրուած էին մրցանակները . ու վարժապետը սկսաւ կարգալ ցուցակը , ըսելով վարժարանները , դասարանները , աշակերտներուն անունները . պատկառորները բեմին վրայ ելան . հետաքրքրաշարժ տողանցութիւն մը եղաւ :

Առաջինները հազիւ թէ վեր ելեր էին , որ լուսեցաւ կողմանոցներուն մէջէն թեթեւ եւ քաղցր երաժշտութիւն մը , որքան որ կրնամ կարծել , միայն ջութակով կ'ած էին : Այս նուագածութիւնը տեւեց բոլոր տողանցութեան ժամանակը , այնպիսի անուշ , ներդաշնակ , սիրուն եղանակ մըն էր , որ կարծես թէ ձայներու միմունջ մըն էր , ամէն մայրերուն , ամէն ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն ձայները , որոնք խրատներ կու տան կամ խանդաղատալից յանդիմանութիւններ կ'ընեն :

Պատկառորները իրարու ետեւէ կու գային պարտններուն առջեւ , որ անոնց կու տային մրցանակները եւ իւրաքանչիւրին կ'ըսէին անուշ խօսք մը կամ կ'ընէին գգուանք մը : Վարչն եւ հայելարաններէն , տղաքը կը ծափահարէին ամէն անգամ որ կ'անցնէր խիստ դեռատի պատկառ մը , կամ մէկը անոնցմէ որոնք իրենց հագուստովը , աղքատ ըլլալ կ'երեւային : Կային որ աղքատիկ դաստիարակներն պատկանելով , երբ բեմին վրայ կու գային , չէին գիտեր ի'նչ ընեն , շփոթած կ'երեւային ու իրենք իրենց վրայ կը դառնային , մեծ քրքիչներու պատճառ ըլլալով : Եկաւ մոնտաւանդ սիրունիկ մը , վարդագոյն ժապատէնով մը բռնուած իր խոպոպուած մազերը , որուն ոտքերը դորդին մէջ անցնելով գետնին վրայ ինկաւ պառկեցաւ : Գաւառապետը զայն վեր վերցուց . ու սկսան խնդալ ծափահարելով : Ուրիշ մը սանդուղներէն վար գլտորեցաւ իջած

ատեն : Ճիշեր արձակեց , բայց չէր վիրաւորուած : Ամէն տեսակ տղայ անցաւ , չարածճի դէմքով , զարհուրած կերպարանքով , ուրիշներ կեռասի նման կարմրած , ու խիստ փոքրեր , ուռած այտերով , որոնք կը խնդային ամէնուն : Ասոնք հազիւ վար իջած էին իրենց հայրերը կամ մայրերը թեւերնուն վրայ առին դուրս տարին զանոնք :

Վերջապէս կարգը եկաւ մեր վարժարանին : Իմ ճանչցածներէս շատ տղաք կանչեցին : Նախ Գօռէթին եկաւ , ոտքէն գլուխը նոփ նոր հագած , իր գեղեցիկ գուարթ դէմքովը , ճերմակ աղանները ցոյց տալով երբ ժպտի : Ո'վ գիտէ սակայն թէ այն առաւօտն իսկ փայտ չէ'ր կրէր : Քաղաքապետը , ձեռքը անոր ուսին դնելով , հարցուց անոր , մրցանակը տալով հանդերձ , թէ ի'նչ նշան էր ճակտին վրայ ունեցածը : Աչքով կը փնտռէի տեսնել վարը իր հայրն ու մայրը . ու տեսայ որ կը խնդային ձեռքերնին բերաններնուն դրած : Տէռօսին անցաւ իր կարգին , մութ կապոյտ հագուստներ հագած պողպատէ կոճակներով . նրբահասակ , շնորհալի , բարձր ճակատ , ուսերուն վրայ ծածան իր խարտեալ մազերը խոպոպուած , այնքան գեղեցիկ ու այնքան համակրելի որ համբուրելս կու գար : Հոն գտնուող պարտնները ու զեցին ամէնքն ալ իրեն հետ խօսիլ ու ձեռքը սեղմել : Յետոյ վարժապետը կանչեց . Ժիւլ Ռօպէրի :

Այն ատեն տեսանք որ կու գար իր անթացուպերովը՝ հրետանիի հարիւրապետին տղան : Հարիւրաւոր տղաք գիտէին անոր արկածին պատճառը . լուրը տարածուեցաւ իսկոյն . ու ծափահարութիւններու որոտում մըն է փրթաւ , սարսելով ամբողջ թատրոնը : Մարդիկը ոտքի ելան , կիները թաշկինակ կ'երբերցնէին ,

ու խեղճ աղան շփոթած ու դողդոջուն՝ կանգ առաւ բեմին մէջ տեղը . . . :

Քաղաքապետը իրեն քաշեց Ռօպէթին , համբուրեց զայն , հանեց դափնիէ պսակը իր թիկնաթուռին յենարանէն ուր կախուած էր , եւ անցուց անթացուպերէն մէկուն վրայ , զոր ազնիւ տղան իր առջեւը բռներ էր այն պահուն . յետոյ հետը գնաց մինչեւ բեմին վրայ նայող օթեակին առջեւ ուր կը գտնուէր հրետանիի հարիւրապետը , քաջ տղուն հայրը : Ասիկա առաւ տղան ու տարաւ օթեակին մէջ , ընդհանուրին կեցցէներովը , ապրի՛սներովը ողջունուած :

Անուշ ու թեթեւ նուագը կ'ածէր միշտ ու տղաքը կը շարունակէին անցնիլ , Գօնոլաթայի բաժանումները՝ գրեթէ ամէնքն ալ վաճառականներու տղաք . Վօշիլիայի բաժանումները՝ գործաւորներու տղաք . Պուօնքօնրայնիի բաժանումները՝ մեծ թուով հողագործներու տղաք , վերջապէս Ռականէսիի վարժարանները , որ վերջինը եղաւ : Հանդէսը աւարտելու մօտ , վարը նստող եօթը հարիւր տղաքը ուրիշ խմբերգ մը երգեցին խիստ գեղեցիկ : Ապա քաղաքապետը կարճ ատենարանութիւն մը ըրաւ , եւ , իրմէ ետքը , օգնականը վերջացուց ըսելով .

« Տղա՛քս , հոսիչ դուրս մի՛ ելլէք , առանց ուղղելու ողջոյն մը եւ շնորհակալութիւն մը անո՛նց որ այնքան կը յոգնին ձեզի համար , անո՛նց որ ձեզի գրհած են իրենց իմացականութեան եւ իրենց սրտին բոլոր զօրութիւնները , որոնք ձեզի համար կ'ապրին ու կը մեռնին , եւ որ ահաւասիկ են : » Օգնականը նշանակեց ուսուցիչները եւ ուսուցչուհիները որ հայելարանները նստած էին : Այս սրտաշարժ կոչումին , որ շատ լաւ կը համապատասխանէր իրենց զգացումին ,

տղաքը ոտքի ելան ու երկնցուցին իրենց բազուկները դէպի վարժապետները ու վարժուհիները , որոնք պատասխանեցին իրենց գլխարկները եւ թաշկինակները երերցնելով , ամէնքն ալ ոտքի կայնած , յուզուած անշուշտ դպրոցականներուն կողմէն եղած այս համակրական ցոյցէն :

Նուագախումբը նոր կտոր մը ածեց , զոր հասարակութիւնը ողջունեց վերջին անգամ մըն ալ Իտալական գաւառներու տասներկու պղտիկ ներկայացուցիչները , որոնք բեմին առջեւի կողմը եկան , ձեռք ձեռքի բռնած , եւ որոնց նիւտեցին ծաղկի փունջեր :

Կ Ռ Ի Ի Մ Ը

Երկու օտարքի 20

Է՛հ , չէ՛ , բնաւ նախանձութենէ չէ , ոչ թէ անոր համար որ նա մրցանակ առաւ ու ես մէկ հատ մըն ալ չառի , որ կուուեցայ այս առտու Գօնէթիին հետ : Նախանձ չէ՛ , եւ սակայն գիտեմ թէ իրաւունք չունէի :

Վարժապետը զանի իմ քովս նստեցուցեր էր . ես ալ գեղադարութեան տետրակիս մէջ կը գրէի . Գօնէթին ինծի զարնուեցաւ արմուկովը ու սոսկալի կեռիք մը շինել տուաւ ինծի տետրակիս վրայ եւ մեղանի բիծ ընել տուաւ ամսօրեայ պատմութեանս վրայ . Ռօնա-Սիակիս ընճանի՛ք մը , զոր կ'ընդօրինակէի պղտիկ որմնադրին համար որ հիւանդ է : Բարկացայ ու անվայել խօսք մը ըսի : Գօնէթին պատասխանեց ինծի լանդաւով . « Կամաւ չըրի : »

Պէտք էր հաւտայի ըսածին , զի կը ճանչնամ իր

սիրտը . բայց իր ժպիտը անախորժ եկաւ ինծի ու խորհեցայ . « Հիմա որ մրցանակ առաւ , ամբարտաւանութիւն եկեր է վրանս »

Քիչ մը ետքը , վրէժս առնելու համար , անա՛նկ մը հրեցի զինքը որ գրի տետրակը աղտոտեց .

Այն ատեն բարկութենէն կաս կարմիր կտրած .

« Դո՛ւն , կամաւ ըրիր , » ըսաւ ինծի , ձեռքը իմ վրաս վերցնելով : Ուսուցիչը անոր կը նայէր . նա ձեռքը վար առաւ , բայց յարեց .

« Դուրս ելլելնուս քե՛զի կը սպասեմ : »

Տրտմեցայ . բարկութիւնս անցեր էր , եւ արդէն կը զղջայի ըրածիս :

Չէ , Գօռէթին չէր կրնար կամաւ զիս հրած ըլլալ . զի , բարի է նա : Կը յիշէի , երբ իր տունը տեսայ զինքը , անոր աշխատիլը , իր մայրը խնամելով հանդերձ . եւ յետոյ , ես զինքը ա՛յնքան աղէկ ընդուներ էի մեր տունը . հայրս ալ զինքը այնքա՛ն հաճելի գտեր էր :

Ինչե՛ր չպիտի տայի արտասանած չըլլալու համար այն անվայել խօսքը , որ բերնէս թռե՛ր էր . չունենալու՞ համար վրէժխնդրութեան այս տգեղ շարժումը :

Կը խորհէի հօրս տալիք խրատին . « Անիրա՞ւ ես : — Այո՛ . — էյ , ուրեմն ներողութիւն խնդրէ իրմէ : »

Ներողութիւն խնդրե՛լ . աս ընելու քաջութիւնը չունէի , նուաստանալու կ'ամհնայի : Գօռէթին կը նայէի քովստի , կը տեսնէի կրկնոցը ուսէն քաղուած , թերեւս փայտ կրած . ըլլալուն համար , ու կը զգայի թէ կը սիրեմ զինքը , կ'ըսէի ես ինծի . « Արիութի՛ւն բայց , « ներե՛ ինծի » բառերը կոկորդիս մէջ կը մնային :

Նա ինծի կը նայէր գաղտագողի , ատեն ատեն . աւելի վշտացած կ'երեւար քան բարկացած : Բայց ես ,

ծուռ աչքով կը նայէի իրեն , որպէս զի չկարծէ թէ կը վախնամ իրմէ :

Նորէն կրկնեց . « Դուրսը կը տեսնուի՛նք : »  
Ես ալ կրկնեցի .

« Շատ լաւ , կը տեսնուի՛նք դուրսը : »

Սակայն կը խորհէի հօրս մէկ ըսածին . « Եթէ յանցաւոր ես , ինքզինքդ պաշտպանէ , բայց մի՛ զարներ : Ու ես ինծի կ'ըսէի . « Պիտի պաշտպանեմ ինքզինքս , բայց ես չպիտի զարներ : » Սրտնեղած , տխուր մնացի մինչեւ վերջը , դասը մտիկ չէի ըներ այլ եւս : Վերջապէս դուրս ելլելու ատենը եկաւ :

Երբ փողոցին մէջ մինակ մնացի , տեսայ որ Գօռէթին ետեւէս կու գար , կանգ առի ու իրեն սպասեցի , քանակս ձեռքս : Նա առաջ եկաւ ես քանակս վեր վերցուցի . . .

« Չէ , Հանութի , ըսաւ ինծի , անուշ ժպիտով մը , քանակս մէկդի ընելով , առջի պէս բարեկամ ըլլանք նորէն : »

Ապշած մնացի պահ մը . յետոյ զգացի իբրեւ թէ ձեռք մը զիս կը մղէր . ու ինքզինքս գտայ իր բազուկներուն մէջ :

Համբուրեց զիս ըսելով .

« Այլ եւս երբեք չպիտի կռուի՛նք , այնպէս չէ՞ , »

— Երբեք այլ եւս , երբե՛ք այլ եւս . » պատասխանեցի :

Փո՛հ սրտով իրարմէ բաժնուեցանք : Բայց երբ , տուն հասնելուս , հօրս պատմեցի ամէն բան , կարծելով թէ իրեն հաճոյք պիտի պատճառեմ , յանդիմանեց զիս ըսելով .

« Պէտք էր դո՛ւն առաջ իրեն ձեռք երկնցնէիր , որովհետեւ դո՛ւն անիրաւ էիր : »

Յարեց .

« Պէտք չէր քանակ վերցնէիր քենէ լաւագոյն տը-  
ղու մը վրայ . զինուորի մը որդւոյն վրայ . »

Եւ , քանակը քաշելով ձեռքէս , կտոր կտոր ըրաւ .

### ՌՕՄԱՆԻԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

( ԱՄՄՕՐԵԱՅ ՊԱՄՄՈՒԹԻՒՆ )

Այն իրիկունը , Ֆէռուչիոյի տունը սովորականէն  
աւելի հանդարտ էր : Իր հայրը որ փերեզակի պզտիկ  
խանութ մը կը բանեցնէր , Ֆօռլի գացեր էր , մէկ քա-  
նի գնումներ ընելու , իր կինն ալ հետը գացեր էր ,  
ինչպէս նաեւ Լուիճինան , իրենց պզտիկ աղջիկը , զոր  
կը տանէին ակնարոյժին , գործողութեան համար : Հե-  
տեւեալ առտուն միայն պիտի դառնային : Կէս գիշեր  
զարնելը մօտ էր : Տնարար կինը գացեր էր ճաշէն յե-  
տոյ , ու տունը կը մնար միայն մեծ մայրը , սրունք-  
ները անդամալոյծ , ու մէյ մըն ալ Ֆէռուչիօն տաս-  
ներեք տարեկան մանչ մը :

Տունը կը բաղկանար գետնայարկէ մը միայն , ու  
կը գտնուէր մեծ փողոցին վրայ , հրացանի մը հասո-  
ղութեամբ հեռու գիւղէ մը Ֆօռլիէն , Ռօմանիայի քա-  
ղաք : Տնակին քով , ուրիշ տուն չկայ բացի աւերակ-  
ները պանդոկի մը որ երկու ամիս առաջ այրեր էր :

Տնակին ետեւը , բանջարեղէնի պարտէզ մը կայ  
ցանկապատով շրջապատուած , ուր կը գտնուէր գեղ-  
ջուկ պզտիկ դուռ մը : Խանութին դուռը , որ տանը  
դրան տեղ ալ կը ծառայէր , կը բացուէր մեծ փողոցին

վրայ : Ծուրջը կը տարածուէր ամայի գիւղը , ահագին  
դաշտեր թիթենիներ տնկուած :

Կէս գիշեր պիտի զարնէր : Անձրեւ կու գար , հովը  
կը մռնչէր : Ֆէռուչիօն եւ իր մեծ մայրը , դեռ նստած  
էին , ճաշարահին մէջ կը կենային : Հին կարասիներ  
բով խճողուած սենեակ մը կը զատէր սեղանատունը  
պարտէզէն :

Ֆէռուչիօն ժամը տասնրմէկին միայն տուն մտեր  
էր , շատ մը ժամեր տունէն հեռու կենալէն ետքը ,  
մինչդեռ մեծ մայրը անձկութեամբ սպասեր էր իրեն ,  
գամուած լայն թիկնաթուռի մը մէջ , որուն վրայ կ'ան-  
ցընէր հէգ պառաւը ամբողջ օրը , եւ շատ անգամ ամ-  
բողջ գիշերը , կսկծալի շնչարգելութիւն մը զինքը կ'ար-  
գիլէր պառկած կենալ :

Կ'անձրեւէր , ու հովը ապակիներուն կը զարնէր  
անձրեւը : Գիշերը մութ էր , անթափանց : Ֆէռուչիօն  
յողնած , ցեխոտուած , կրկնակը պատռած , ու ճակա-  
տը քարի հարուածէ մը կապուտցած տուն եկեր էր :  
Նախ քարի հարուածներով ծեծկուեր էին բարեկամ-  
ներու հետ , խնդալու համար : յետոյ կպուր կպուրի  
եկեր էին , ինչպէս կը պատահի միշտ : Եւ , ի լրումն ,  
Ֆէռուչիօն խաղացեր ու բոլոր ունեցածը կորսնցու-  
ցեր էր , գտակն ալ ինկեր էր փոսի մը մէջ :

Թէեւ խոհանոցը լուսաւորուած էր միայն իւղի  
լամպարով , զոր դրուած էր սեղանի մը անկիւնը , թիկ-  
նաթուռին քով , հէգ մեծ մայրը իսկոյն տեսեր էր թո-  
ռանը ողորմելի վիճակը , եւ , անոր կէս խոստովանու-  
թիւններուն համեմատ , գուշակեր էր անոր գլխուն ե-  
կածին մէկ մասը , մնացածը խոստովաներ էր նա վեր-  
ջապէս , եւ , որովհետեւ պառաւը բոլոր սրտովը կը սի-  
րէր թոռը , սկսաւ լալ :



« Ո՛հ, ոչ, ըսաւ, երկար լռութենէ մը ետքը, դուն չես սիրեր քու խեղճ մեծ մայրդ, վասն զի եթէ սիրէիր չպիտի օգուտ քաղէիր ծնողքիդ բացակայութենէն երթալ այդ կերպ վարուելու, ինչպէս որ ըրիր: Բոլոր օրը իս մինակ թողուցիր: Քիչ մը կարեկցութիւն չունեցա՛ր ինծի համար: Զգոյշ կեցիր, Ֆէռուչիօ, յոռի ճամբու մէջ կը մտնես, որ քեզ ցաւալի վերջաւորութեան մը պիտի առաջնորդէ: Ես տեսած եմ տղաք որ քեզի պէս սկսած են, ու յետոյ սոսկալի անպիտաններ եղած են: Տունէն փախչելով, բնկերներուն հետ կռուելով, ստակ կորսնցնելով կը սկսին, յետոյ, քիչ քիչ, քարի հարուածներէն դանակի հարուածներու կ'ելլեն, խաղէն՝ ուրիշ մոլութիւններու, ու մոլութենէն... գողութեան»:

Ֆէռուչիօն մտիկ կ'ընէր, մեծ մօրմէն քանի մը քայլ անդին կայնած, սլահարանի մը կրթնած, գլխիկոր, յօնքերը պռստած, տակաւին կրակ կտրած ըրած կռիւէն: Իր խոպոպուած շագանակագոյն մազերը ճակտին շուք կու տային, ու իր կապոյտ խոշոր աչքերը տարօրինակ փայլ մը ունէին:

« Խաղէն գողութեան, կրկնեց մեծ մայրը լացը շարունակելով: Խորհէ՛, Ֆէռուչիօ, մտածէ երկրին սա ստահակին վրայ, Վիքթոր Մօծծօնիին վրայ, հիմա դատարկապօրտ, որ, քսանըջորս տարեկանին, արդէն երկու անգամ բանտ մտած էր: Յաւէն մեռցուց իր խեղճ մայրը, զոր կը ճանչնայի: Իսկ հայրը, յուսահատութենէն Զուիցերիա փախաւ: Մտածէ՛ այս անպիտանին վրայ, որուն բարեւ տալու կ'ամչնայ հայրդ, եւ զոր միշտ կը տեսնեն իրմէ աւելի յոռի աւազակներու հետ, մինչեւ որ թիարան երթայ օր մըն ալ: Էյ լաւ, ես այդ Մօծծօնին տղայ էր երբ ճանչցայ, ան ալ քեզի

պէ՛ս սկսաւ, դուն ալ թերեւս քու ծնողքդ անոր ծնողքին վիճակին պիտի հասցնես... »

Ֆէռուչիօն լուռ կը կենար: Նա գէշ սիրտ չունէր, ընդհակառակը իր փախուստները աւելի տաքարիւնութենէ եւ յանդգնութենէ առաջ կու գային քան յոռի բնաւորութենէ: Հոյրը շատ շփացուցած էր զինքը՝ զի գիտնալով թէ կարող էր, խորապէս, ամէնէն ազնիւ զգացումներու, ու նաեւ մեծանձնութեան եւ վեհանձնութեան, եթէ առիթը պատահէր, ուստի սանձը վիզը թողած էր անոր, սպասելով որ ինքնիրմէն խելքը գլուխը գայ:

Ֆէռուչիօն բարի էր, բայց յամառ եւ դժուարահաճ բնութեամբ, որքան որ զղջար իր մեծ մօրը անհաճոյ գտնուելուն, արիութիւն չէր ունենար արտասանելու սա զղջումի խօսքերը որ ներել կու տան: « Այո՛, յանցաւոր եմ, այլ եւս չպիտի ընեմ, կը խոստանամ քեզի, ներէ՛ ինծի: » Գոռոզութիւնը այդ խօսքերը իր սրտին խորը պահել կու տար, գորովովը նաեւ որ սակայն զայն կը լեցնէր:

Ա՛խ, զաւակս, շարունակեց պառաւը, տեսնելով որ լուռ կը կենայ Ֆէռուչիօն, զղջումի բառ մը չե՞ս ըսեր: Կը տեսնես սակայն թէ ի՞նչ վիճակի հասած եմ: Թաղուելու արժանի: Պէտք չէր սիրտ ընէիր լայնելու մօրդ մայրը, այնքան ծեր, այնքան մօտ իր վերջին օրուան, խեղճ Նօնադ (\*) որ միշտ այնքան սիրած է քեզ, որ քու օրորոցդ կ'օրէր ամբողջ գիշերներ երբ պզտիկ էիր եւ որ ամէն ցաւ ամէն վիշտ քենէ խնայել կ'ուզէր: Միշտ ես ինծի կ'ըսէի. « Այս տղան իմ մխիթարութիւնս պիտի ըլլայ »: այլ ընդհակառակը կը

(\*) Նօնա, մեծ մայր կը նշանակէ իսպաեկէ լեզուով:

մեռցնես զիս մտահոգութենէս : Սիրով պիտի տայի մնացած քիչ մը օրերս քեզ նորէն ագնիւ եւ հնազանդ տեսնելու համար ինչպէս երբեմն : Կը յիշես , Ֆէռուչիօ , երբ քեզ պտտցնել կը տանէի , գրպաններս խիճերով , խոտերով կը լեցնէիր : ու քեզ թեւերուս վրայ քնացած տուն կը բերէի : Այն ատեն շատ կը սիրէիր մեծ մայրդ : Հիմա որ անդամալոյժ եղած եմ , քու աղապատանքիդ պէտք ունիմ ինչպէս շնչած օդիս , խորհէ՛ որ ոչ ինչ ունիմ , ոչ ինչ աշխարհի վրայ որ զիս շահագրգռէ , խեղճ կէս մեռել մըն եմ , աւա՛ղ :

Ֆէռուչիօն դէպի մեծ մայրը պիտի սրանար , յուզումէն պարտուած , երբ իրեն թուեցաւ թէ թեթեւ աղմուկ մը կը լսէ , ճարճատիւն մը քովի սենեակէն , որ պարտէզին վրայ կը նայէր : Բայց չէր կրնար ըսել թէ ձայնը կ'ելլէր փեղկերէ՛ն զոր հովը կ'երերցնէր , թէ ուրիշ բան էր :

Ականջ տուաւ :

Անձրեւը կը սաստկանար :

Աղմուկը նորէն լսուեցաւ : Մեծ մայրն ալ լսեց :

« Ի՛նչ կայ , հարցուց խռոված :

— Անձրեւն է , մրմնջեց տղան :

— Ֆէռուչիօ , ըսաւ պառաւը աչքերը սրելով , կը խոստանա՞ս բարի ըլլալ եւ այլ եւս չլացնել խեղճ Նօնադ : »

Նոր ճարճատիւն մը ընդմիջեց խօսքը :

« Բայց այս անձրեւի բան չէ՛ , գոչեց գունատելով . . . դնա նայէ՛ : »

Յետոյ յարեց խիղոյն . « Չէ , հո՛ս կեցիր , » ու Ֆէռուչիօյի ձեռքը իր ձեռքին մէջ առաւ :

Երկուքն ալ շունչերնին բռնած , կը մնային հոն : Անձրեւին ձայնը միայն կը լսուէր :

Յետոյ երկուքն ալ դողացին յանկարծ . զի կարծեցին լսել , քովի սենեակէն , ոտքի ձայներ :

« Ո՛վ կայ հող , » կրկնեց տղան , վախէն սառ կտրած : Բայց հազիւ այս երեք բառերը արտասաներ էր որ մամ ու թոռ սոսկումի ճիչ մը արձակեցին :

Երկու մարդ խռժեր էին սենեակին մէջ :

Մարդոցը մէկը բռնեց տղան , ձեռքը անոր բերնին դնելով . միւսը պառաւին կոկորդը սեղմեց :

Առաջինը ըսաւ . « Է՛լ ոչ՛ , եթէ չե՛ս ուզեր մեռնիլ : Երկորդը . « Սը՛տ , » մը բրաւ ու քաջեց դանակը : Այս մարդոց երկուքն ալ մէյ մէկ սեւ դիմակ ունէին երեսնին : Պահ մը , հեւ ի հեւ շնչառութիւններ միայն լսուեցան , ու մէյ մըն ալ անձրեւին ձայնը , անձրեւին՝ որ միշտ կը վազէր աւելի խիտ :

Մամը կը խորդար ու աչքերը դուրս ինկեր էին :

Տղան բռնող մարդը ըսաւ անոր ականջն իվար .

« Ո՛ւր կը պահէ հայրդ ստակը : »

Տղան սպտաստիանեց ցած ձայնով , մինչդեռ ակռաները իրար կը զարնէին :

« Հոն . . . պահարանին մէջ :

— Ինձի հետ եկ՛ւր , » ըսաւ մարդը :

Քաջեց Ֆէռուչիօն տարաւ պզտիկ սենեակը , միշտ կոկորդէն սեղմած : Գետինը դրած էր գոլի լապտեր մը :

« Ո՛ւր է պահարանը . » հարցուց մարդը :

Տղան մատովը ցոյց տուաւ զայն :

Այն ատեն , ապահով ըլլալու համար , տղան ծնկան վրայ նստեցուց պահարանին առջեւ , իր երկու սրունքին մէջ սեղմեց զայն , անանկ որ կարենայ խեղդել զայն եթէ մարդ կանչէ , դանակն ալ ակռաներովը բռնեց , ու լապտերը առաւ մէկ ձեռքը , մինչդեռ միւս ձեռքով գրպանէն կը հանէր աքծան մը զոր սահեցուց

կղզւանքին մէջ : վրան կոխեց , խորտակեց , դուռները բացաւ պահարանին , տակն ու վրայ ըրաւ , գրպանները լեցուց , գոցեց նորէն , երկրորդ անգամ մըն ալ բացաւ , ու նորէն փնտռեց . յետոյ տղան բռնեց նորէն կոկորդէն ու հրեց սենեակին մէջ տեղը , ուր միւս գողը կը բռնէր տակաւին պառաւը , կէս մը մարած , գըլըխը ետին ինկած , բերանը բաց :

Պառաւը բռնող գողը հարցուց . « Գտա՞ր : »

Ընկերը պատասխանեց . « Գտայ , ու յարեց , դուռը գնա՛ . . . »

Նա վազեց պարտէզին դուռը , տեսնելու համար թէ մարդ չկա՞յ հոն , ու պզտիկ սենեակէն կանչեց սուլիչի պէս սուր ձայնով մը . « Եկո՛ւր : »

Միւսը , որ մնացեր էր ու տակաւին Ֆէռուչիօն կը բռնէր , դանակը ցուցուց տղուն ու պառաւին որ աչքերը կը բանար ու ըսաւ անոնց .

« Զայն չհանէ՞ք հա՛ , թէ ոչ կը սպաննեմ ձեզ : »

Իմական ծակերուն մէջէն աչքերը սպառնալից ուղղուեցան երկուքին վրայ :

Ս.յն միջոցին , հեռուն , մեծ ճամբուն վրայէն լսուեցաւ մարդիկ որ երգելով կու գային :

Գողը արագարար դարձուց գլուխը դէպի դուռը , եւ այս յանկարծական շարժումը վար ձգեց դիմակը երեսէն :

« Մօծծօնին , գոչեց պառաւը :

— Անիծեա՛լ , մոնչեց գողը ճանչցուելով , պիտի մեռնի՛ս : »

Ու դարձաւ , դանակը բռնած , պառաւին վրայ , որ մարեցաւ :

Մարդասպանը հարուածը իջեցուց :

Բայց արագ շարժումով մը , յուսահատ ճիչ մը ար-

ձակելով , Ֆէռուչիօն սրացեր էր մեծ մօրը վրայ , ու զայն իր մարմինովը ծածկեր էր : Մարդասպանը փախաւ , հրելով սեղանը ու վար ձգելով լամպարը որ մարեցաւ : Տղան յամրաբար սահեցաւ ելաւ մամուն վրայէն , ու ծնկան վրայ ինկաւ , այնպէս կենալով , թեւերը պառաւ կնոջ մէջքին դրած , գլուխը անոր կուրծքին կռթնցուցած :

Քանի մը վայրկեան այսպէս անցաւ . . . : Շատ մութ էր : Գիւղացիներու երգը կը կորսուէր հեռաւորութեան մէջ : Պառաւին խելքը գլուխը եկաւ :

« Ֆէռուչիօ՛ , » կանչեց , հազիւ լսելի ձայնով մը :

— Նօնա՛ , » պատասխանեց տղան :

Պառաւը ճիգ մը ըրաւ խօսելու , բայց վախէն լեզուն առնուեր էր :

Պահ մը լուռ կեցաւ , ոտքը ձեռքը դողալով : Յետոյ կրցաւ արտասանել .

« Հոս չե՞ն այլ եւս : »

— Ոչ :

— Իս չմեռցուցին . . . մրմնջեց պառաւը խղդուկ ձայնով մը :

Զէ . . . ազատած էք , ըսաւ Ֆէռուչիօն տխրութեամբ , սիրելի Նօնա , ստակները տարին : Բայց հայրիկս . . . գրեթէ ամէնը հետը առեր էր : »

Մեծ մայրը շունչ առաւ :

« Մեծ մայր , ըսաւ Ֆէռուչիօն , միշտ ծնրադրած ու մամուն մէջքէն սեղմելով , սիրելի մեծ մայր , զիս շատ կը սիրես , անանկ չէ՞ : »

— Ֆէռուչիօ՛ , հէգ որդի՛ս , պատասխանեց , մէկ ձեռքը անոր գլխուն վրայ դնելով , որքա՛ն վախցած պէտք է ըլլաս : Վառէ՛ քիչ մը լամպարը . . . : Զէ , մութին մէջ նստինք , կը վախնամ տակաւին . . . :

— Մեծ մայր, առաւ նորէն տղան, վիշտ պատ-  
ճառեցի ձեզի . . . :

— Ձէ, Ֆէսուչիօ, չէ, մի՛ խօսիր ատոր վրայ, ես  
այլ եւս չեմ մտածեր անոր, ամէն բան մոռցայ, այն-  
քա՛ն կը սիրեմ քեզ :

— Նս միշտ ձեզի հոգ պատճառած եմ, շարունա-  
կեց տղան, դողդոջուն ձայնով մը եւ ճիգ ընելով,  
բայց . . . միշտ սիրած եմ ձեզ, կը ներէ՞ք ինծի . . . :  
Ներեցէ՛ք ինծի Նօնա :

— Այո՛, գաւախ, կը ներեմ քեզի, բոլոր սրտովս  
կը ներեմ: Կրնա՞ն տարակուսիլ: Ոտքի ելի՛ր, սիրելիս:  
Այլ եւս չպիտի յանդիմանեմ քեզ, բարի ես, այնքա՛ն  
բարի ես: Լամպարը վառենք: Քիչ մը արիւթիւն ու-  
նենանք, ոտքի ելի՛ր, Ֆէսուչիօ . . . :

— Շնորհակալ եմ, մեծ մայր, ըսաւ տղան ա՛լ ա  
ւելի տկար ձայնով մը . . . հիմա . . . դո՛հ եմ: Պիտի  
յիշէ՞ք զիս, Նօնա, այնպէս չէ՞ . . . միշտ պիտի  
յիշէ՞ք զիս . . . ձեր Ֆէսուչիօն :

— Ֆէսուչիօ՛ս, բացագանչեց պտուաւը, ապա՞ծ  
եւ սրտատանջ, ձեռքերը անոր ուսերուն վրայ դնե-  
լով ու գլուխը ծռելով անոր երեսը տեսնելու համար :

— Յիշեցէ՛ք զիս, մրմնջեց դարձեալ տղան, ձայ-  
նով մը որ շունչի մը կը նմանէր: Համբոյր մը տուէ՛ք  
մայրիկիս . . . հայրիկիս . . . Լուիճիկային . . . : Մնաք  
բարով . . . Նօնա՛ . . . :

— Ֆէսուչիօ, սիրելիս Ֆէսուչիօ՛, ի՞նչ ունիս,  
գոչեց մամը, անձկութեամբ շօշափելով տղուն գլուխը  
որ ծունկերուն վրայ ծանրացեր էր . . . Յետոյ բոլոր ու-  
ժովը պոռաց, յուսահատութեամբ. « Ֆէսուչիօ՛, Ֆէ-  
սուչիօ՛, գաւա՛խ, հոգի՛ս, օգնութի՛ւն, օգնութի՛ւն . . . »  
Բայց Ֆէսուչիօն չպատասխանեց: Պզտիկ հերոսը,

իր մեծ մօրը ազատիչը, կռնակէն դանակի հարուածով  
մը զարնուած, հոգին կը փչէր, երջանիկ՝ իր Նօնային  
կեանքը ազատեւուն :

### ՊԶՏԻԿ ՈՐՄՆԱԴԻՐԸ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ

Երեքսրբի 18

Հէգ պզտիկ որմնադիրը ծանր հիւանդ է, վարժա-  
պետը մեզի ըսաւ որ երթանք տեսնենք զինքը, ու ե-  
րեքս ալ Կառօնը, Տէռօսին ու ես, խօսք մէկ ըրինք  
երթալ տեսնելու: Գոռոզ Նօպիսն ալ հրաւիրեցինք,  
տեսնելու համար թէ ի՞նչ պիտի պատասխանէր: Չոր  
և ոչ՝ մը ըսաւ: Վօթինին ալ ներողութիւն խնդրեց  
չգալուն, թերեւս իր շքեղ զգեստը կիրով ձերմկցնելէ  
վախցաւ :

Արձակուրդին, ժամը չորսին որմնադիրին տունը  
գացինք: Հեղեղանման կանձրեւէր: Կառօնը կանգ ա-  
ռաւ փողոցին մէջ ու ըսաւ մեզի, բերանը հացով լե-  
ցուն :

« Ի՞նչ պիտի առնենք տանինք իրեն . . . » ու հնչեցուց  
գրպանը գտնուած երկու սուն: Իւրաքանչիւրս երկեր-  
կու սու դրինք երեք խոշոր նարինջ առնելու համար:  
Մանսարդը ելանք: Դրանը առջև հասնելուս, Տէռօ-  
սին մետալը վերցուց ու գրպանը դրաւ: Հարցուցի թէ  
ինչու՞ վերցուց :

« Նս ալ չեմ գիտեր, չառնելու համար հովեր . . . ,  
աւելի փափկանկատ կ'երեւի ինծի առանց մետալի ներս  
մտնել . . . »

Դուռը զարկինք, հայրը բացաւ, — այս մարդը

հսկայ մըն է կարծես . — դէմքը խոսված էր :

« Ո՛վ էք դուք , » հարցուց :

Կառօն պատասխանեց .

« Անթօնիօյին դասարանի ընկերներն ենք , ու նարինջ կը բերենք իրեն :

— Ա՛խ , հէգ Անթօնիօս , գոչեց որմնադիրը գլուխը օրելով . « Վախնա՛մ թէ չկարենայ այլ եւս ուտել , ձեր նարինջները : »

Ու աչքերը սրբեց թեզանիքովը :

Առաջ անցուց մեզ : Խեղճուկ սենեակի մը մէջ մրտանք , ուր պզտիկ որմնադիրը կը քնանար երկաթէ անկողնի մը մէջ : Մայրը ծնրադրած էր անկողնին քովը , ճակատը ձեռքերուն մէջ . հազիւ ետին դարձաւ մեզի նայելու համար :

Պատին վրայ կախուած էին վրձիններ , ըրիչ մը եւ կիրի մազ մը : Հիւանդին ոտքերուն վրայ ձգուած էր որմնադիրին կրկնակը , գաճէն ձերմկցած :

Խեղճ տղան , նիհարցած , գունատ քիթը բարակցած , դժուարաւ կը շնչէր :

Ան սիրելի թօնիօն , այնքան սիրուն , այնքան զըւարթ . իմ պզտիկ ընկերս , ինչեք պիտի տայի քեզ տեսնելու համար նսպասակի դնչիկ ընեղդ , հէգ պզտիկ որմնադիր :

Կառօնը նարինջ մը դրաւ բարձին վրայ , դէմքին մօտը . նարինջին հոտէն արթնցաւ : Սռաւ նարինջը , բայց ձեռքէն վար ձգեց , ու շեշտ մը կառօնին նայեցաւ :

« Ես եմ Կառօնը , ըսաւ , զիս կը ճանչնա՛ս : »

Ժպիտ մը անցաւ հիւանդին շրթունքներէն , ճիգ մը ընելով ձեռքը երկնցուց Կառօնին , որ զայն իր ձեռքերուն մէջ առաւ , համբոյր մը դրոշմեց վրան ըսելով .

« Քաջութի՛ւն , քաջութի՛ւն , Անթօնիօ , քիչ օրէն

պիտի առողջանաս , դպրոց պիտի գաս , ու Պ . Բէնպօնին քեզ իմ քովս պիտի նստեցնէ : Գո՛հ ես :

Պզտիկ որմնադիրը չպատասխանեց :

Մայրը հեծկտաց :

« Ո՛հ , խեղճ թօնիօս , այնքա՛ն բարի ու այնքա՛ն սիրուն , չըլլա՛յ թէ մեռնի :

— Լռէ՛ , պոռաց որմնադիրը յուսահատ , լռէ՛ , թէ ոչ խելքս կը կորսնցնեմ : »

Յետոյ մեզի դառնալով .

« Շնորհակալ ենք , շնորհակալ ենք , տղաքս , ըսաւ : Ձեր տունը գացէ՛ք , հոս շատ տխուր տեղ է : »

Տղան վերստին գոցեր էր աչքերը , ու մեռած կը նմանէր :

« Կրնա՛մ ձեզի օգտակար ըլլալ որ եւ է կերպով , հարցուց Կառօնը :

— Ձէ , սիրելի տղայ , շնորհակալ եմ : » պատասխանեց որմնադիրը :

Ու , այս խօսքին վրայ , մեզ տարաւ մինչեւ դուռը ու գոցեց :

Բայց սանդուղին կէսը դեռ Չէինք հասած որ լսեցինք մեզ կանչելը .

« Կառօ՛ն , Կառօ՛ն : »

Շտապաւ վեր ելանք երեքս ալ :

« Կառօ՛ն , գոչեց որմնադիրը կերպարանափոխ եղած . թօնիօն կանչեց քեզ . ահա երեք օր էր որ չէր խօսեր . ու երկու անգամ անունդ տուաւ : Ա՛խ , արդեօք բարձր նշան մըն է այս :

- Յտեսութիւն , ըսաւ մեզի Կառօնը , ես կը կենամ : »

Ու որմնադիրին ետեւէն գնաց :

Տէնօսիին աչքերը արցունքով լեցուեցան :

«Թօնիրոյն համա՞ր կու լաս . . . ըսի իրեն: Խօսեցաւ ահա, պիտի առողջանայ:»

— Կը հաւատամ որ պիտի առողջանայ, բայց ես անոր չէի մտածեր . . . : Կառօնին կը մտածէի: Ի՛նչ բարի է, ու ի՛նչ վսեմ հոգի ունի:»

Ա Պ Ր Ե Լ

Գ Ա Ր Ո Ւ Ն Ը

Շարք 1

Ապրիլ մէ՛կ: — Երե՛ք ամիս միայն դպրոց ունինք: — Առաւօտը տարւոյն ամէնէն գեղեցիկներէն մէկը եղաւ: Ես գոհ էի. վասն զի Գօռէթին զիս հրաւիրեց վաղը չէ միւս օրը երթալ իրեն հետ պտտելու. յետոյ, մայրիկս ալ խոստացաւ իս տանիլ այցելելու Վալտօքոյի մանկապարտէզը . . . : Եւ, ինչ որ աւելի մեծ հաճոյք պատճառեց ինծի, այն է թէ խնայայ որ պըգտիկ որմնադիրը աւելի աղէկ է եղեր: Երէկ իրիկուն, Պ. Իէնպօնին ըսաւ հօրս, անցած ատենը:

«Աղէկ է, չա՛տ աղէկ է:»

Ի՛նչ գեղեցիկ առաւօտ զարնանային:

Դասարանին պատուհաններէն կը տեսնուէր կապոյտ երկինքը, պարտէզին ծառերը ծիլ կ'արձակեն ու ամբողջովին բացուած են տուներուն պատուհանները, իրենց ծաղկի թաղարներով՝ ծաղկած:

Դասատուն չէր խնդար, վասն զի երբեք չի խնդար նա. սակայն զուարթ էր, այնքան որ գրեթէ չէր տեսնուէր ձակտին վրայի խոր կնճիւղը: Գրատախտակին

առջեւ խնդիր մը կը բացատրէր, ու կը տեսնուէր որ հաճոյքով կը շնչէր խոնաւ հոգէն ու թարմ տերեւներէն հոտաւէտուած օդը, որ պատուհաններէն ներս կու գայ առատօրէն: Այս գեղեցիկ օդը արդէն իսկ խորհիլ կու տար գիւղային պտոյաներու: Մինչդեռ վարժապետը խնդիրը կը բացատրէր, կը լսուէր երկաթագործ մը որ սալին վրայ կը զարնէր մօտակայ փողօցի մը մէջ, ու դէմի տունէն կը համէր երգելու ձայնը մօր մը, որ իր պզտիկը կը քնացնէր: Հեռուն Չեռնարոյի զօրանոցին մէջ, փողերը կը հնչէին: Վերջապէս ամէն մարդ ուրախ եւ գոհ կ'երեւար, մինչեւ Սթառտին, այն դաժան Սթառտին: Միջոց մը եղաւ որ երկաթագործը աւելի ուժով զարկաւ, կինը աւելի բարձր երգեց: Վարժապետը դասը ընդհատեց ու ականջ տըւաւ: Յետոյ ըսաւ ծանր ծանր, պատուհանէն դուրս նայելով.

«Երկինքը կը ժպտի, մայր մը կ'երգէ, բարի մարդ մը կ'աշխատի, տղաք կ'ուսանին . . . ահա արդարեւ գեղեցիկ բաներ ամէնքն ալ . . . :»

Դասարանէն դուրս ելած ատեննիս, տեսանք որ միւս աշակերտներն ալ մեզի չափ ուրախ էին: Ամէնքն ալ կարգով կը քալէին, ոտքերնին զարնելով ու երգելով, իբրեւ թէ մեծ արձակուրդին նախորդ օրը ըլլար: Վարժուհիները կը խնդային: Ծնողքները կը խօսէին իրենց մէջ ժպտերես ու Գոսիին մայրը, պտղաՎաճառը, սակառը այնչափ լեցուցեր էր մանուշակներով որ ամբողջ բակին մէջ հոտը բուրբեր էր: Երբեք չտեսայ այնքան զուարթ ժպիտներ քան այս առաւօտը, ուր իմ բարի մայրս եկաւ զիս առնելու:

«Գոհ եմ, ըսի, դէպի իրեն երթալով: Ինչո՞ւ արդեօք այսքան ուրախ եմ այս առաւօտ:»

Մայրս ժպտելով պատասխանեց ինծի թէ օդը գեղեցիկ ըլլալուն եւ խղճմտանքս ալ հանդարտ ըլլալուն էր որ գոհ էի :

## Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Ջ Ը

### Յեբեաբքի 4

Ինչպէս որ խոստացեր էր մայրս երէկ զիս տարաւ ճաշէն յետոյ մանկապարտէզը , տեսչուհիին յանձնարարելու համար Բռէքօսիին պզտիկ քոյրը , Երբեք տեսած չէի մանկապարտէզ . կարի շատ հաւնեցայ ասոր :

Երկու հարիւր տղայ կար հոն , մանչ , աղջիկ , օրոնց քովը մեր ստորնագոյն դասարանի պզտիկները մէկ մէկ մեծ մարդ են :

Երբ հոն հասանք տղաքը ճաշարանն էին : Երկու երկար սեղաններ կար մէջ տեղէն ծակուած , ու ամէն մէկ ծակին մէջ խոր սկաւառակ մը բրինձով ու լուբիայով լեցուն , անագէ դգալ մը քովը :

Ճաշարանէն ներս մտած ատեննին ոմանք կ'իյնային ու հոն կը մնային , գետինը փռուած , մինչեւ որ վարժուհի մը գար վերցնէր : Շատերը կը կենային սկաւառակի մը առջեւ , համոզուած թէ ան իրենցն է , ու արդէն իսկ դգալով կուլ կու տային , երբ վարժուհին կուգար ու կ'ըսէր իրենց . « Առաջ անցէք : » Չորս քայլ անդին , նոյն տղաքը նորէն դգալ մը բերաննին կը դնէին , եւ ուրիշ մը աւելի հեռուն , մինչեւ որ տեղերնին հասնէին , այսպէս գաղտագողի հատցնելէ յետոյ ապուրին կէսը :

Վերջապէս , սկսան ուտել : Ի՛նչ զուարճալի տեսա-

րան : Մէկը կ'ուտէր երկու դգալով , միւսը ձեռքերով , շատերը լուրիան կ'առնէին հատիկ հատիկ , ու գրպաննին կը դնէին . ուրիշներ ընդհակառակը իրենց գոգնոցին մէկ ծայրը կը կապէին լուրիաները ու վրան կը կռթնէին ճզմելու համար : Կային որ կը մոռնային ուտել , ճանձերուն թռչիլը նայելով . ուրիշներ , հագալով , բրինձի անձրեւ մը կը ցանէին իրենց շուրջը , Հաւնոց մըն էր կարծես . բայց եւ այնպէս սիրուն էր , այս վարդագոյն դէմքերու կրկին շարքը , աղջիկնակները մանաւանդ , մազերնին գլուխնուն վրայ կապուած կարմիր , կապոյտ , կանանչ ժապաւէններով :

Վարժուհի մը հարցուց աղջիկներու խուճրի մը :

« Գիտէ՞ք ուր կը ծնի բրինձը : »

Ամէնքը մէկ՝ ապուրով լեցուն բերան մը բացին , ու եղանակով պատասխանեցին .

« Բրինձը — կը ծնի — ջուրին — մէջ : » Կարծեմ , ասի , այրբեարանին մէջէն նախագաստութիւն մըն է զոր հեգեւ կու տան իրենց :

Վարժուհին հրամայեց .

« Ձեռքերը վեր : »

Այն ատեն վեր բարձրացան բոլոր այս աղուորիկ պզտիկ թեւերը , որոնք , մէկ երկու տարի առաջ , խանձարուրին մէջն էին տակալին , ու այդ պզտիկ թաթիկները կը նմանէին ձերմակ ու վարդագոյն թիթեռնիկներու :

Յետոյ գացին զրօսանքի , բայց նախ ամէնքն ալ առին իրենց սակառները ուր դրուած էր ճաշը , եւ որ կախուած էին պատէն վար : Պարտէզ ելան ու անդին ասդին ցրուեցան իրենց պաշարը սակառէն հանելու համար . հաց , չոր սալոր , կտոր մը պանիր , կարծր խաշած հաւկիթ մը , ափ մը խաշած ոլու , վառեակի թեւ մը :

Մէկ վայրկեանի մէջ պարտէզը փշրանքներով լեց-  
ուեցաւ, իբրեւ թէ թռչունները հրաւիրելու համար  
նետած ըլլային զանոնք: Ամէնէն տարօրինակ դիրքե-  
րու մէջ կ'ուտէին. կարծես թէ նապաստակներ, մու-  
կեր, կատուներ էին, որ կը կրծէին, կը ծծէին...: Պզտիկ մը մահակաձեւ հաց մը բռնած էր կուրծքին  
վրայ ու կը շփէր ափովը: Պզտիկ աղջիկները կը վազէին  
իրարու ետեւէ կ'իյնային, սակառնին ակռայով բռնած,  
պզտիկ շուներու պէս: Երեք հատ տեսայ որ կարծր  
հակիթ մը կը փորէին գաւազանով մը, կարծելով թէ  
գանձ պիտի գտնեն մէջէն. փորածնուն կէսը գետինը  
կը թափէին, յետոյ կը ժողվէին փսփ փսփ, մեծ համ-  
բերութեամբ, իբրեւ թէ մարգարիտ ժողվէին: Եւ ա-  
նոնց շուրջը որոնք արտակարգ բան մը ունէին ուտե-  
լու, ութը տասը հատ կը կենային գլուխնին ծռած,  
ողորմելի կերպով նայելու համար պարապ սակառին  
մէջ. Գոսան հատ մը կային պզտիկի մը շուրջը որ բըր-  
գաձեւ թուղթի մէջ շաքար ունէր, հազար կտոր կ'ըլ-  
լային զիւրացը, որպէս զի թող տայ իրենց, հացերնին  
շաքարին վրայ քսելու. նա ալ որ մէկին թոյլ կու տար,  
բայց ուրիշներու ալ, որ թէեւ շատ աղաչած էին ի-  
րեն, մատը միայն կու տար լզելու:

Մայրս պարտէզ եկեր էր, գգուելու համար մէյ  
մը մէկը, մէյ մը միւսը: Շատերը կը շրջապատէին, կը  
պաշարէին զինքը երեսնին օդին մէջ իրեն երկնցնե-  
լով, որպէս զի համբուրէ: Պզտիկ մը խածուած նարին-  
ջի մը մէկ քառորդը տուաւ իրեն. ուրիշ մը հացի կը-  
տոր մը, պզտիկ աղջիկ մը տերեւ մը տուաւ:

Այս միջոցին, հոս հոն կը պատահէր արկածներ,  
որոնք կը վազցնէին վարժուհիները: Պզտիկ աղջիկներ  
կու լային, որովհետեւ չէին կրնար քակել իրենց թաշ-

կինակին կապը, ուրիշներ կը կուռէին եղունգի հար-  
ուածներով ու խոշոր ձայներով: Խնձորի երկու կուտի  
համար: Տղայ մը, որ հակառակ դարձուած նստարանի  
մը վրայ ինկեր էր, կը հեծկտար, առանց կարենալ  
ելլելու:

Երթալէ առաջ, մայրիկս երեք չորս հատը թեւե-  
րուն մէջ առաւ. այն ատեն ամէն կողմէ թափեցան  
եկան որ զիրենք ալ թեւերուն մէջ առնէ, երեսնին  
հակիթի դեղնուցով աղտոտած կամ նարինջի հիւ-  
թով թրջուած. կը նայէին թէ ո՛վ պիտի բռնէ մօրս  
ձեռքերը ու նայի անոր մատնիները, կամ վզի շրթան  
քաշէ ժամացոյցը նայելու համար, ուրիշներ կ'ուզէին  
մազին հիւսքերէն բռնել:

«Զգուշացէ՛ք, հագուստնիդ պիտի աղտոտեն,»  
կ'ըսէին վարժուհիները մայրիկիս:

Բայց մայրիկս, որուն հոգը չէր հագուստին աղ-  
տոտիլը, կը շարունակէր զանոնք գգուել, ու ամէնքն  
ալ կ'ուզէին անոր քովը գալ, թեւերնին երկնցուցած,  
իրարու հետ կուռելով որ առաջ անցնին եւ ամէնքը  
պոռալով, «Երթաք բարո՛վ, երթաք բարո՛վ:»

Վերջապէս կրցանք խոյս տալ պարտէզէն, ու տը-  
ղաքը քիթերնին փակցուցին վանդակապատին, որպէս  
զի անցնելնիս տեսնեն, իրենց պզտիկ թեւերը դուրս  
կը հանէին մայրիկս ողջունելու համար, նորէն իրեն  
նուիրելով հացի կեղեւներ, պանիրի աւելցուքներ,  
պտուղի կտորներ ամէնքը մէկ ձայնի պոռալով:

«Երթաս բարով, երթաս բարով, վաղը նորէ՛ն  
եկուր:»

Մայրս, գացած ատեն, նորէն ձեռքը տարաւ հա-  
րիւրաւոր պզտիկ ձեռքերու որ դէպի իրեն կ'երկնա-  
յին կենդանի վարդերու ցանկապատի մը պէս, ու փո-



ղոց ելաւ հագուստը փշրանքներով ու արատներով լեցուն, աչքերն ալ արցունքներով, երջանիկ՝ իբր թէ հանդէսէ մը կը դառնար. ու կը լսուէր տակաւին մանկապարտէզին ներսը թռչուններու ճռուողիւն մը որ կ'ըսէր.

« Երթաս բարո՛վ, երթաս բարո՛վ, ուրիշ անգամ նորէն եկուր, տիկին : »

### Մ Ա Ր Մ Ն Ա Մ Ա Ր Զ Ը

#### Չորեքաբքի 5

Գեղեցիկ օդը կը շարունակէր. մարմնամարզի դասը փոխանակ սենեակին մէջ ընելու, դուրսը պարտէզին մէջ ընել տուին մեզի, չուանին վրայ :

Կառօնը երէկ տնօրէնին սենեակը՝ կը գտնուէր, երբ նէլլին մայրը եկաւ խնդրելու որ իր զաւկին նոր մարմնամարզի դասը խնայեն : Ամէն մէկ բառը ըսելու համար ճիգ մը կ'ընէր, ու ձեռքը որդւոյն գլխուն կը դնէր տնօրէնին ըսելով.

« Զի կրնար . . . »

Նէլլին շատ ցաւած կ'երեւար տրապէզէն զրկուելուն, դարձեալ այս նուաստութիւնը կրելուն :

« Պիտի տեսնես, մայրիկ, կ'ըսէր, ուրիշներուն պէս պիտի ընեմ ես ալ : »

Մայրը անոր կը նայէր լռին, գթալից ու քաղցր, յետոյ ըսաւ վարանումով մը. « Կը վախնամ որ իր ընկերները . . . » Կ'ուզէր ըսել . . . « ծաղրեն զինքը : » Նէլլին պատասխանեց. « Հոգ չէ. ես Կառօնը ունիմ : Կը բաւէ որ ան չի խնդար վրաս . . . »

Ուստի թողուցին որ գայ մարմնամարզ ընէ : Վարժապետը մեզ տարաւ նախ ուղղաձիգ ձողերուն, որ շատ բարձր են. պէտք է մագլցիլ մինչեւ վեր, ու յետոյ շիտակ կենալ ձողին վրայ :

Տէռօսին ու Գօռէթին մագլցեցան երկու կապիկի պէս :

Պզտիկ Բուէքօսին նմանապէս շատ աղէկ ելաւ, թէեւ անհանգիստ էր իր մեծ կրկնակին մէջ, որ մինչեւ ծունկերը կ'իջնէ :

Ելած ատենը զինքը խնդացնելու համար, իր սովորական խօսքը կը կրկնէին իրեն.

« Ներեցէ՛ք, ներեցէ՛ք . . . »

Սթառտին կը թասար, կը կարմրէր հեղեղահալի մը պէս, ակռաները կը սեղմէր ոռնացող շունի մը պէս, կ'ուզէր մինչեւ վեր ելլել, նոյն իսկ եթէ հոն մնալու ըլլար : Արդարեւ ալ ելաւ, երբ Նօպիան ալ իր կարգին հասաւ վերի ձողին վրայ, վեհափառ դիրք մը բռնեց : Վօթիին երկու անգամ սահեցաւ, հակառակ իր շքեղ նոր հագուստին կապոյտ շերտերով, մասնաւորապէս մարմնամարզի համար շինուած : Աւելի դիւրութեամբ ելլելու համար, ամէնքս ալ ձեռքերնիս բեւեկնի խէժի փոշիով շփեք էինք : Գիտէին թէ Կառօֆին, առուտուր ընողը ամէնուն ալ կը հայթայթէր այն փոշիէն, ծրարը տասը բարայի ծախելով, անշուշտ վերան բան մը վաստկելով :

Կարգը եկաւ Կառօնին, որ մագլցեցաւ հացը ուտելով հանդերձ, իբրեւ թէ բան մը չըլլար, ու կարծեմ թէ կարող էր մէկը տանիլ ուսերուն վրայ, այնքան ուժեղ է, այդ պզտիկ ցուրը :

Կառօնէն ետքը, ահա Նէլլին : Հազիւ տեսնուեցաւ ձողը բռնելը իր երկար ու վտիտ ձեռքերով, որ ամէնքը սկսան խնդալ եւ փսփոսալ :

Բայց Կառօն թեւերը խաչաձեւեց կուրծքին վրայ ու շուրջը նետեց նայուածք մը որ կը խոստանար խիստ յստակ կերպով կռուիի հարուածներ, եւ իւրաքանչիւրը լռեց իբրեւ դիւթապէս: Նէլլին սկսաւ մագլցել մեծ դժուարութեամբ, խեղճ պզտիկին դէմքը կաս կարմիր եղեր էր. քրտինքը կը վազէր ճակատէն:

Վարժապետը ըսաւ. «Իջէ՛ք:»

Բայց նա կը յամառէր, ճիգ մը եւս կ'ընէր յաջողելու... Վայրկեանէ վայրկեան կը սպասէի թէ վար պիտի գլտորէր. կիսամեռ: Կը խորհէի որ եթէ իր տեղը եղած ըլլայի եւ մայրս զիս տեսնէր, որքա՛ն պիտի տառապէր. ու, այս մտածելով, կը զգայի թէ ա՛լ աւելի կը սիրէի իմ հէ՛գ ընկերս. ինչե՛ր չէի տար որպէս զի յաջողի մինչեւ վեր ելլելու, եթէ կարենայի զինքը վեր հրել առանց ուրիշ տեսնուելու... Այս միջոցին, Տէոսօին, Գօռէթին ու Կառօնը կ'ըսէին.

«Ելի՛ր, ելի՛ր, Նէլլի, քիչ մը եւս քաջութիւն...»

Նէլլին նորէն ուժգին ճիգ մը ըրաւ, մռնչիւն մը արձակեց ու ձողէն երկու մատ անդին դտնուեցաւ:

«Կեցցէ՛, պոռացին: Քաջութիւն, մէկ մղում եւս...»

Ծափահարեցին:

Ու ահա Նէլլին որ կը բռնէ ձողը:

«Ապրի՛ս ըսաւ վարժապետը, բայց ա՛լ բաւ է, իջէ՛ք:»

Նէլլին մտիկ չըրաւ, վրան ելլել կ'ուզէր միւսներուն պէս: Քանի մը ճիգերէ յետոյ, յաջողեցաւ արմուկները դնել, յետոյ ծունկերը, եւ վերջապէս ոտքերը. այն ատեն ելաւ կայնեցաւ, հեւ ի հեւ ու յաղթական, եւ մեզի նայեցաւ:

Նորէն ծափահարեցինք: Այն ատեն ակնարկ մը

նետեց դէպի փողոց: Այն կողմը դարձայ, ու պարտէզին վանդակապատը ծածկող կանանչներուն միջեւէն՝ տեսայ մայրը որ կը պտտէր մայթին վրայ, առանց նայիլ համարձակելու:

Նէլլին վար իջաւ, ու ամէնքը շնորհաւորեցին զինքը: Գրգռուած, ոգեւորուած էր, աչքերը կը փայլէին, կերպարանափոխ կ'երեւար:

Երբ մայրը զինքը դիմաւորելու եկաւ դուրս ելած ատեննիս ու իրեն հարցուց, քիչ մը սրտատանջ, զայն համբուրելով:

«Է՛յ, սիրունիկս, ի՞նչպէս եղաւ, յաջողեցա՞ւ:»  
Իր ընկերները պատասխանեցին իր կողմէն:

«Կատարելապէս, շատ աղէկ վեր ելաւ: Մեզի չափ աղէկ ելաւ. ուժով է, հաւատացէ՛ք, թեթեւաշարժ է, ուրիշներուն պէս կրնայ ընել ինքն ալ...»

Պէտք էր տեսնել ուրախութիւնը հէ՛գ կնոջ: Կ'ուզէր շնորհակալ ըլլալ մեզի, կը կակազէր, երեքն չորսիս ձեռքերը սեղմեց, Կառօնը գգուեց ու տարաւ իր տղան: Եւ մենք տեսանք տնոնց շուտաքայլ երթալը խօսելով ու ձեւեր ընելով, երկուքն ալ գոհ՝ որպէս երբեք չէինք տեսած զիրենք:

Հ Օ Ր Ս Ո Ւ Ս Ո Ւ Ց Ի Չ Ը

Նրեհաքքի 11

Երէկ չէ առջի օրը, ճաշի ատեն, երբ լրագիր կը կարդար, հայրս յանկարծ զարմացումի ճիչ մը արձակեց ու ըսաւ մեզի:

«Ես ալ կը կարծէի թէ քոսն տարիէ իվեր մե-

առձ է, իմ առաջին դասատուս նախակրթարանի, այն հէգ Վինչէնձօ Գոռլէթին ո՛ղջ է եղեր տակաւին, ութ-տունըչո՛րս տարեկան է: Հիմա կարդացի թէ նախա-բարը Արժանիքի մետալը տուեր է իրեն, վաթսուն տարուան ուսուցչութեան համար: Վարսուն տարի, կը հասկնա՞ք, Երկու տարի կայ միայն որ հանգստեան թոշակ կ'առնէ: Հէ՛գ Գոռլէթի: Թօնիօյէն երկաթուղիով ժամ մը հեռու կը բնակի, Գօնտօվայի մէջ, մեր Քիէնթի ամարսնոցի նախկին պարտիզպանու հիւն երկրը:

Ու յարեց .

« Հանուի, պիտի երթանք տեսնել զինքը: »

Ու ամբողջ երեկոյթը, հայրիկս միայն իր ուսուցչին վրայ խօսեցաւ: Իր առաջին վարժապետին անունը հազար յիշատակներ կը կենդանացնէր իր մանկութեան տարիներէն, իր ընկերներէն, իր խեղճ մօրմէն:

« Այդ խե՛ղճ պարոն Գոռլէթին, կ'ըսէր, կարծես թէ կը տեսնեմ նորէն զինքը: »

« Քառսուն տարու էր երբ ինծի դաս կու տար: »

« Կարճուկ մարդ մը արդէն քիչ մը կորաքամակ, բայց գոյն աչքերով, անմօրուս, դաժան, բայց քաղաքավար կերպերով, որ մեզ կը սիրէր հօր մը պէս, ու մէկ սխալ անցընել չէր տար մեզի: Գիւղացիութենէ եղեր էր ուսուցիչ, ուսանելով, զրկուելով: Մայրս շատ կը սիրէր զինքը, հայրս բարեկամի պէս կը վարուէր հետը: Ի՞նչպէս Թուրինէն ելեր գացեր է Գօնտօվա կեանքը լրացնել... Անշուշտ իս չպիտի ճանչնայ. ի՞նչ հոգ, ես զինքը պիտի ճանչնամ... Բառսունըչո՛րս տարի, Հանուի: Վաղը կ'երթանք կը տեսնենք վարժապետս: »

Ուստի երէկ, ժամը իննին, Սիւզի կայարանն էինք:

Կ'ուզէի որ Կառօնը մեզի հետ գար, բայց չկրցաւ, վասն զի մայրը հիւանդ է:

Գարնանային գեղեցի՛կ օդ մըն էր: Կ'անցնէինք կանանչ դաշտերէ ու ծաղկալից ցանկապատներէ, որոնք օդը կը հոտուէտէին: Հայրս գո՛հ էր. ատեն ատեն, թեւը վզիս շուրջը կ'անցընէր ու հետս կը խօսէր, իրբեւ բարեկամ մը, դաշտը նայելով հանդերձ:

« Խե՛ղճ վարժապետ, կ'ըսէր, հօրմէս ետքը ինք է որ զիս ամէնէն շատ սիրած ու աղէկութիւն ըրած է ինծի: Երբեք չեմ մոռցած իր բարի խորատները, եւ նոյն իսկ մէկ քանի խիստ յանդիմանութիւնները որոնք իս տուն կը զրկէին սրտնեղած: Աչքիս առջեւն է տակաւին, երբ դասարան կը մտնէր, գաւազանը անկիւն մը դնելով, ու կախկով իր վերարկուն ձորձակալէն վար, միշտ միեւնոյն ձեւով: Քաղցրաբարոյ էր, խղճամիա, բարեացակամ, եւ ուշադի՛ր... Իրբեւ թէ ամէն օր առաջին անգամն էր որ դաս կ'ընէր: »

« Կը յիշեմ երբ իս կը կանչէր. »

« Պօթի՛նի, է՛յ Պօթի՛նի, ցուցամառդ ու վիջնա-մատդ գրիչիդ վրայ... »

Գօնտօվա իջնելնուս պէս, գացինք ինտօնի Քիէնթի մեր նախկին պարտիզպանու հիւն, որ պզտիկ խոնարհ մը ունի անել փողոցի մը մէջ:

Գտանք զինքը իր գաւազաներէն շրջապատուած. շատ սիրով ընդունեց մեզ ու մեզի լուր տուաւ էրկանը վրայ, որ պիտի դառնայ ձեռնօվայէն, ուր գացեր է աշխատիլ երեք տարիէ իվեր, նաեւ լուր տուաւ իր աղջկան վրայ, խուլ համր, որ խուլ համրերու վարժարանն է Թուրինի մէջ: Յետոյ հասցէն տուաւ Գոռլէթի վարժապետին, որ ամէնուն ծանօթ է գիւղին մէջ:



Գուրս ելանք հոնկէ, ու զառիվեր ճամբայ մը բըռնեցինք ծաղկալից ցանկապատներով շրջապատուած :

Հայրս չէր խօսեր այլ եւս, իր յիշատակներուն մէջ ընկզմած, երբեմն կը ժպտէր, կամ մեղամարդձութեամբ գլուխը կ'օրէր :

Յանկարծ կանգ առաւ. « Ահաւասի՛կ է. գրաւ կը դնեմ թէ ինքն է, » ըսաւ :

Կարճահասակ ծերունի մը ձերմակ մօրուքով, լայն եզրերով գլխարկ մը դրած, գաւազանի մը վրայ կռթընած, արահետէն կ'իջնէր մեր առջեւը : Քալուածքը անհաստատ էր, ձեռքերը կը դողային :

« Ի՛նքն է, » կրկնեց հայրս, քայլերը արագ առնելով :

Երբ ծերունիին քով հասանք, կանգ առինք. ինք ալ կանգ առաւ ու հօրս նայեցաւ :

Իէ՛մքը թարմ էր տակաւին ու աչքերը փայլուն :

« Վէնսան Գոօզէթի ուսուցչին չէ՞ որ պատիւ ունիմ խօսելու. » ըսաւ հայրս, գլխարկը հանելով :

Ծերունին բարեւեց :

« Ս. յո՛, իրեն, պատասխանեց, քիչ մը դողդոջուն ձայնով մը, բայց հնչուն :

— Էյ լաւ, յարեց հայրս, ծերունիին ձեռքերէն մէկը բռնելով, թոյլ տուէք ձեր նախկին աշակերտներէն մէկուն ձեր ձեռքը սեղմելու : Թուրիսէն եկայ ձեզ տեսնելու համար :

— Շատ պատիւ կ'ընէք ինձի . . . : Ձեմ գիտեր . . . : Ո՛ր ժամանակ իմ աշակերտս եղած էք : Ներեցէք, ձեր անունը, եթէ կը հաճիք : »

Հայրս անունը տուաւ եւ իր դպրոց մտնելուն թըլականը ըսաւ. ու յարեց. « Թերեւս չէք յիշեր զիս. բնական է. բայց ես շատ լա՛ւ կը ձանչնամ ձեզ : »

Դասատուն գլուխը ծռեց ու սկուաւ մտածել երկու երեք անգամ հօրս անունը մըմնջելով, որ կը շարունակէր իրեն նայիլ ժպտելով գորովալիլ նայուածքով :

Ծերունին յիշեց յանկարծ, գլուխը վեր վերցուց, ու ըսաւ ծանր ծանր. « Ալլէէն Պօթինի, Պօթինի երկրաչափին տղան, որ Քօնսօլաթայի հրապարակին վրայ կը բնակէր : »

— Ս. յո՛, ճիշդ, ըսաւ հայրս, ձեռքերը երկնցնելով :

— Ուրեմն ներեցէ՛ք ինձի, սիրելի պարոն. . . » ու առաջ գալով, ծերունին համբուրեց հայրս. Գոօզէթին ձերմակ գլուխը հագիւ կը հասնէր իր աշակերտին ուսին, որ շրթունքները փակցուց անոր պատկառելի ձակտին վրայ :

« Հաճեցէ՛ք ինձի հետ գալ. » ըսաւ ուսուցիչը :

Եւ, առանց բառ մը աւելցնելու, իր տունը տանող ճամբան բռնեց : Քանի մը վայրկեանէն հասանք պզտիկ պարտէզ մը որ կը գտնուէր երկու դուռով արնակի մը առջեւ, որուն դուռներուն մէկը կիրի ծփով պատած էր :

Ուսուցիչը այն դուռը բացաւ, ու մեզ մտցուց՝ չորս պատերը ձերմակ՝ սենեակի մը մէջ : Մէկ անկիւնը, ծալածոյ անկողին մը, կապոյտով ձերմակ վերմակով մը վրան. քիչ մը անդին գրասեղան մը, վրան պզտիկ գրադարանով մը. չորս աթոռ ու ալխարհագրութեան հին քարտէս մը պատին գամուած. այդ էր բոլոր բովանդակ կարասին . . . :

Նստանք. հայրս եւ ուսուցիչը իրարու նայեցանք քանի մը վայրկեան լռութեամբ :

« Պօթինի՛, գոչեց վերջապէս ուսուցիչը, շեշտ նայելով գետինը, ո՛հ, լաւ կը յիշեմ, ձեր տիկին մայրը

խի՛սա բարի կին մըն էր : Առաջին տարին , դուք կը նստէիք ձախ կողմի առաջին նստարանին վրայ պատուհանին քովը : Տեսէ՛ք ի՛նչպէս կը յիշեմ : Կը տեսնեմ տակաւին ձեր գանգուր գլուխը . . . »

Քիչ մը կեցաւ , մտածեց , ու շարունակեց .

« Շատ արթուն տղայ մըն էիք , հէ՞ . երկրորդ տարին փողացաւ եղաք , ու ձեր խեղճ մայրը նորէն դըպրոց բերաւ ձեզ նիհարցած ու շալ մը փաթթուած : Քառասուն տարի անցաւ անկէ ի վեր , անանկ չէ՞ : Շատ ազնիւ էք որ յիշեցիք ձեր ծեր ուսուցիչը . . . : Ձեզի պէս ուրիշ նախկին աշակերտներ ալ եկան զիս տեսնել նախորդ տարիները . կան որ քահանայ եղեր են կամ գնդապետ , վերջապէս շատ տարբեր վիճակներ : »

Պ. Գոսգէթին հարցուց հօրս թէ ինչ էր իր արհեստը . ու խմանալով գոչեց .

« Գոհ եմ , շատ գոհ եմ . . . »

Յետոյ նորէն առաւ .

« Արդէն ժամանակ մը կայ որ այլ եւս ոչ ոք կը տեսնեմ , եւ վտանամ դուք վերջին այցելուս պիտի ըլլաք , սիրելի՛ պարոն :

— Ի՛նչ կ'ըսէք , ըսաւ հայրս , դուք դեռ ուժեղ ու քաջառողջ էք , պէտք չէ՛ այդպէս ըսէք :

« Կը կարծէ՞ք , բայց նայեցէ՛ք այս դողը , պատասխանեց ուսուցիչը ձեռքերը ցոյց տալով , ահա գէշ նշան մը . . . երեք տարի առաջ սկսաւ , երբ տակաւին դաս կու տայի : Նախ , կը կարծէի թէ պիտի անցնէր . բայց ընդհակառակը դողը շատցաւ : Օր մըն ալ անկարելի եղաւ որ գրեմ : Ա՛խ , սրտի հարուած մը եղաւ այս , սիրելի պարոն , երբ մեղանի կաթի՛լ մը ինկաւ աշակերտներէս մէկուն տետրակին վրայ :

« Քիչ մը ատեն եւս քաշկռուտեցայ . յետոյ պար-

տաւորեցայ , վաթսուն տարուան ուսուցչութենէ ետքը հրաժարիլ դպրոցէ , աշակերտներէ , աշխատանքէ՛ : Դժուար էր , կը տեսնէք , խիստ դժուար : Վերջին անգամ երբ դասս կու տայի , բոլոր աշակերտները տունս եկան ինծի հետ , ուրախութիւն ըրին . հակառակ այս ցոյցերուն , տխուր էի , կը հասկնայի թէ կեանքը լմնցած էր ինծի համար . . . : Նախորդ տարին , կինս եւ մէկ հատիկ զաւակս կորսնցուցեր էի . երկու եղբորորդիներս միայն կը մնային : Հիմա կ'ապրիմ քանի մը հարիւր Փռանք տարեկան թոշակով . այլ եւս բան մը չեմ ըներ . օրերը անվերջանալի են ինծի համար . մէկ հատիկ ափոփանքս է թղթատել դպրոցական հին գիրքերըս , դպրոցական լրագիրներու հաւաքածոներ . քանի մը հատորներ որոնք ընծայ բրած են ինծի , Հո՛ն , առաւ նորէն ծերունին գրատունը ցոյց տալով , հոն պահուած են բոլոր յիշատակներս , բոլո՛ր անցեալս : Ուրիշ բան չունիմ աշխարհի վրայ : »

Յետոյ յանկարծ զուարթ շեշտով մը .

« Ձեզի անակնկալ մը պիտի ընեմ , սիրելի պարոն Պօթինի : »

Ոտքի ելաւ , գրասեղանին մօտեցաւ , դարակ մը բացաւ , որ կը պարունակէր շատ մը պզտիկ ծրարներ մետաքսէ լարերով կապուած , եւ որոնց իւրաքանչիւրին վրայ գրուած էր անուն մը եւ թուական մը :

Քիչ մը փնտռելէ վերջը , ծրարներէն մէկը բացաւ , քանի մը թուղթ թղթատեց , ու քաշեց դեղնած թերթ մը զոր տուաւ հօրս : Անոր պարտականութիւններէն մէկն էր , քա՛ռսուն տարի առաջուան թուականով :

Վերեւը , կը կարդացուէր .

Աշպեր Պօթինի , Ուղղագրութիւն 3 ապրիլի 1838 :

Հայրս իսկոյն ճանչցաւ իր մանկական կոշտ գիրը, ու սկսաւ կարգաւ ժպտելով. բայց յանկարծ իր աչքերը արցունքով լեցուեցան. ոտքի ելայ ու հարցուցի իրեն թէ ի՞նչ ունի:

Թեւին մէկը մէջքիս շուրջը անցուց ու, զիս իր վրայ սեղմելով, ըսաւ ինծի.

«Նայէ՛ այս էջը, կը տեսնե՞ս. ահա սրբագրութիւններ որ խեղճ մօրս ձեռքովը եղած են: Վերջի տողերը բոլորովին իրն են: Սորվեր էր իմ գրիս նմանցնել իր գիրը, ու երբ ես յոգնէի եւ քուն ունենայի, ի՛նք կ'աւարտէր պարտականութիւնս: Իմ սո՛ւրբ մայրս:»

Ու հայրիկս համբուրեց թուղթը:

«Ա.սի, ըսաւ դասատուն, ցոյց տալով մեզի միւս ծրարները, իմ յիշատակներս են: Ամէն տարի, մէկ կողմ գրի պարտականութիւն մը իւրաքանչիւր աշակերտէս, հոս դրուած են կարգով եւ թուագրուած: Նրբեմն երբեմն կը թղթատեմ զանոնք, կը կարդամ տող մը ասկէ, տող մը անկէ, որոնք կը յիշեցնեն ինծի հազար բան. ու ինծի կը թուի թէ անցեալիս մէջ կ'ապրիմ նորէն: Որքա՛ն աշակերտներ, սիրելի պարոն: Աչքերս կը գոցեմ, դէմքեր կը տեսնեմ իրարու ետեւ, կարգ կարգ, հարիւրաւոր ու հարիւրաւոր տղաք: Ո՛վ գիտէ որքանը արդէն մեռած են: Կը յիշեմ մանաւանդ լաւագոյնները եւ յոռեգոյնները. անոնք որ գոհունակութիւն պատճառեցին ինծի եւ անոնք որ վըշտացուցին, զի գառնուկներուն մէջ, օձեր ալ գտնուեցան: Բայց հիմա կը հասկնաք, իրրեւ թէ արդէն անգրի աշխարհէն եղած ըլլայի, ամէնքն ալ հաւասարապէս կը սիրեմ:»

Նստաւ նորէն ու իմ ձեռքերէս մէկը իրեններուն մէջ առաւ:

«Հապա ինծմէ՞, հարցուց հայրս ժպտելով. ինծմէ բնաւ չարածձիւութիւն մը չէ՞ք յիշեր:»

— Ձենէ՞, պարոն, պատասխանեց ծերունին ժպտելով, չէ, հիմակու հիմա չէ. ասով ըսել չեմ ուզեր բնաւ ըրած չէք: Դուք ծանրագլուխ էիք ձեր տարիքին համար: Կը յիշեմ այն մեծ աղապատանքը զոր ունէր ձեզի համար ձեր տիկին մայրը... Գիտէ՞ք թէ շատ բարի եւ շատ ազնիւ էք գալ զիս տեսնելով: Ի՛նչպէս կրցաք թողուլ ձեր զբաղումները գալ այցելելու համար խեղճ ուսուցիչ մը:

— Մտիք ըրէ՛ք, պարոն Գոզէթի, պատասխանեց փութով հայրս, չեմ մոռցած դպրոց մտած օրս: Խեղճ մայրս իս կը բերէր: Առաջին անգամն էր որ ինէ կը բաժնուէր երկու ժամու համար, որ զիս տունէն դուրս օտար ձեռքերու կը յանձնէր: Այս պատուական մօրը համար՝ իմ դպրոց մտնելս ընկերութեան մէջ մտնելու պէս բան մըն էր, սկզբնաւորութիւնն էր երկար շարքի մը հարկաւոր այլ վշտալի բաժանումներու. ընկերութիւնն էր որ իր որդին իրմէ կը քաշէր կ'առնէր ետ չտալու համար երկինք զայն ամբողջովին: Յուզուած էր մայրս, ես ալ յուզուած էի: Զիս ձեզի յանձնեց, սիրելի ուսուցիչ. դողդոջուն ձայնով մը. եւ երբ, գացած ատենը, անգամ մըն ալ ժպտեցաւ ինծի դրանը միջեւէն, աչքերը արցունքով լեցան, դուք իրեն նշան մը ըրիք ձեռքով զայն վստահեցնելու համար, իրրեւ թէ ըսէիք իրեն. «Տիկին, ինծի վստահացէք:» Էյ լաւ, այն շարժումը, այն նայուածքը ինծի հասկցուց թէ կը մասնակցէիք մօրս յուզումին, այն ձեռքը որ ձեր սրտին վրայ դրիք, սիրտ տալու համար հէգ կնոջ, այն ներողամտութեան, բարութեան եւ համակրութեան շարժումը միշտ յիշած եմ, միշտ հո՛ս սրտիս վը-

բայ քանդակուած կեցած է։ Այն յիշատակն է որ զիս թուրինէն հոս բերել տուաւ, քառասունըջորս տարի ետքը. «Շնորհակալ եմ, սիրելի՛ ուսուցիչդ իմ»

Ուսուցիչը չպատասխանեց, մազերս կը շոյէր իր ձեռքովը որ կը դողդոջէր, ու մազերէս կ'անցնէր ճակտիս, ճակտէս ալ ուսիս։

Այս միջոցին, հայրս կը նայէր մերկ պատերը, անշուք անկողինը, հացի կտոր մը դրուած իւզի շիշի մը քով պատուհանին մէջ, ու կարծես կը մտածէր։

«Հէգ ուսուցիչ, վաթսուն տարուան աշխատութենէ վերջ, այս է վարձատրութիւնդ»

Բարի ծերունին գոհ էր ու սկսաւ նորէն խօսիլ եռանդով մեր ընտանիքին վրայ, այն ատենի միւս ուսուցիչներուն վրայ եւ հօրս դպրոցի ընկերներուն վրայ։

Հայրս կտրեց խօսակցութիւնը, աղաչելու համար վարժապետին որ մեզի հետ Գօնտօվա իջնէ, ուր մեզի հետ պիտի ճաշէր։

«Ոչ, չնորհակալ եմ,» ըսաւ եւ տեսնելով որ որդւոմ չտար, հայրս անոր երկու ձեռքերէն բռնեց ու նորէն աղաչեց որ գայ։

«Ի՛նչպէս պիտի կրնամ ուտել այս ձեռքերով որ կը դողդղան, ըսաւ, ինծի համար ալ ուրիշներուն համար ալ ապաշխարանք մըն է։

— Մենք ձեզի կ'օգնենք, վարժապետ,» ըսաւ հայրս։

Այն ատեն ընդունեց զլուխը երերցնելով ժպիտով մը։

«Ահա ինծի համար գեղեցիկ օր մը, ըսաւ, դուռը գոցելով, գեղեցիկ օր մը, սիրելի պարոն Պօթինի. ճշմարիտ պիտի յիշեմ այս օրը բոլոր կեանքիս մէջ։»

Հայրս թեւը տուաւ ծեր վարժապետին, սրուն

ձեռքէն բռնեցի ես ալ, ու իջանք ճամբէն։

Հանդիպեցանք երկու պզտիկ աղջիկներու բոկոտն, որոնք կովեր կը տանէին, մանչուկ մը՝ յարդի բեռ մը առած ուսին վրայ։

Վարժապետը մեզի պատմեց թէ այս տղաքը երկրորդ դասարանի աշակերտ էին, թէ առաւօտները դուարը կը տանէին արածելու, ու իրիկունը կօշիկնին կը հագնէին դպրոց գալու համար։

Կէս օրի մօտ էր երբ հասանք պանդոկ. մեծ սեղանի մը առջեւ նստանք, վարժապետը երկուքիս մէջ տեղը նստաւ ու սկսանք ճաշել։

Պանդոկը լւին էր։ Խեղճ ծերունին, ինք, շատ ուրախ էր. եւ, յուզումէն դողալը աւելնալով, չէր կրնար գրեթէ ուտել, հայրս կը կտրէր իր միսն ու հացը, պնակին մէջ աղ կը դնէր։ Խմելու համար՝ պէտք էր երկու ձեռքով բռնէր գաւաթը, եւ որ սակայն սկուաներուն կը զարնէր։

Շուտ եւ եռանդով կը խօսէր իր երիտասարդութեան ատենի ընթերցումի գիրքերուն վրայ, այն գովեստներուն վրայ զոր իր մեծերը իրեն ըրած էին. բոլոր ասոնք գրեթէ երիտասարդի խնդուքով մը կ'ըսէր։

Ու հայրս կը նայէր իրեն նոյն արտայայտութեամբ որ երբեմն կը տեսնեմ իր գէլմքին վրայ տունը, երբ, աչքերը յառած իմ վրաս, կը ժպտի իր ներքին մտածութեանը վրայ։

Խօսած ատեն, ուսուցիչը գինի թափեց բաձկոնին վրայ. հայրս ելաւ ու սրբեց իր անձեռնոցովը մինչդեռ դասատուն չէր թողուր ըսելով։

«Բայց ո՛չ, պարոն, չեմ թոյլատրեր»։ Ու կը խընդար, լատիններէն բառեր արտասանելով։

Վերջը, գաւաթը վեր վերցուց ու ըսաւ լրջութեամբ:

«Ձեր կենացը, սիրելի պարոն, ձեր զաւակներուն կենացը, ձեր ազնիւ մօ՛րը յիշատակին:

— Եւ ձե՛ր կենացը, սիրելի ուսուցիչս. » պատասխանեց հայրս անոր ձեռքը սեղմելով:

Սրահին խորը՝ պանդոկապետն ու իր մարդիկը մեզի կը նայէին գոհունակութեամբ հպարտացած՝ տեսնելով որ իրենց երկրին ուսուցիչը այսպէս կը յարգուի:

Ժամը երկուքին դուրս ելանք եւ վարժապետը ուզեց մեզ մինչեւ կայարան տանիլ: Հայրս թեւը անոր տուաւ նորէն. ես ալ ձեռքէն բռնեցի նորէն ու գաւազանը առի: Սնցրդները կը կենային մեզի նայելու, որովհետեւ ամէն մարդ կը ճանչնար Պ. Գոսզէթինն ու կը բարեւէր զայն:

Տեղ մը՝ բաց պատուհանէ մը ձայներ լսեցինք տղոց որ խմբովին կը կարդային, հեգեղով: Ծերունին կանգ առաւ ու իր ճակատը տխրեցաւ:

«Ահա՛, սիրելի պարոն Պօթինի, ըսաւ, ի՛նչ որ ինձի վիշտ կը պատճառէ, դպրոցի տղոց ձայներ լսել ու այլ եւս հոն չըլլալ, մտածել որ ուրիշ վարժապետ ունին... Վաթսուն ամբողջ տարիներ լսեցի այս նուազը մանկական ձայներու, սիրտս ալ վարժուեր էր ատոր... Հիմա առանց ընտանիքի եմ, տղայ չունիմ այլ եւս:

— Ներեցէ՛ք, վարժապետ, առաւ նորէն հայրիկս, առկաւին շատ տղաք ունիք աշխարհի մէջ ցրուած: Անոնք կը յիշեն ձեզ, ինչպէս ես միշտ յիշած եմ:

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ ծերունին տխրութեամբ, այլ եւս չունիմ վարժարան, այլ եւս չունիմ զաւակ, եւ, առանց զուգի, երկար չսիրտի ապրիմ:

— Մի՛ ըսէք ատիկա, պատասխանեց հայրս, դուք այնքան բարիք ըրած էք, ա՛յնքան ազնուութեամբ անցուցած էք ձեր կեանքը: »

Ծեր վարժապետը պահ մը ծռեց ձեռքով գլուխը հօրս ուսին վրայ, եւ իմ ալ ձեռքս սեղմեց:

Կայարան մտանք, կառախուժքը պիտի մեկնէր:

«Մնաք բարով, վարժապետ, ըսաւ հայրս, համբուրելով Պ. Գոսզէթինին երկու այտերը:

— Երթաք բարով եւ շնորհակալութի՛ւն, » պատասխանեց ծերունին, իր դուրդովուն ձեռքերովը բռնելով հօրս մէկ ձեռքը ու զայն սրտին վրայ սեղմելով:

Երբ համբուրեցի զինքը, զգացի որ երեսը թրջած էր արցունքով: Հայրս զիս հրեց վահոնին մէջ, եւ ինք հեծնելու ատեն փութով վեր վերցուց կոշտ գաւազանը որուն վրայ կը կոթնէր վարժապետը ու անոր տեղ տուաւ անոր իր գեղեցիկ գաւազանը արծաթ գլխով, ուր քանդակուած է իր անուան սկզբնատառերը:

«Պահեցէ՛ք զայն իմ յիշատակիս, » ըսաւ անոր:

Ծերունին փորձեց ետ տալ ու առնել նորէն իր գաւազանը, բայց հայրս արդէն ներս մտեր էր ու դռնակը կը գոցէր:

«Մնաք բարով, իմ ազնիւ վարժապետս:

— Երթաք բարով, զաւակս, պատասխանեց, մինչդեռ կառախուժը կը շարժէր, օրհնեալ եղէ՛ք, որ ուրախացուցիք հէ՛գ ծերունի մը:

— Յտեսութի՛ւն, » պոռաց հայրս յուզուած ձայնով մը:

Բայց վարժապետը գլուխը ծռեց իրրեւ թէ ըսելու համար:

«Այլ եւս չսիրտի տեսնենք զիրար:

— Այո՛, այո՛, կրկնեց հայրիկս, ցտեսութի՛ւն: »



Իբրեւ պատասխան, ծերունին դողդոջուն ձեռքը վեր վերցուց:

Ու աներեւութացաւ մեր աչքէն:

### Ա Պ Ա Ք Ի Ն Ո Ի Թ Ի Ն

Հինգգաբթի 20

Որո՞ւ մտքէն կ'անցնէր, թէ երբ հօրս հետ կը վերադառնայի այն պզտիկ ճամբորդութենէն բոլորովին գոհ, տասը օր շարունակ ո՛չ դաշտ պիտի տեսնէի ո՛չ երկինք: Հիւանդ եղայ, մահուան դուռը հասայ: Լսեցի որ մայրիկս կը հեծկտար, տեսայ հայրս, որ, դեփ դեփին կտրած, ինծի կը նայէր մտամոլոր: Սիւլիա քոյրս ու եղբայրս ցած ձայնով կը խօսէին, ու բծիչկը միշտ քովս էր, կ'ըսէր բաներ մը որոնք չեմ յիշեր: Արդարեւ ամէնուն հրաժեշտ տալու վրայ եղայ:

Ա՛խ, խեղճ մայրիկս: Երեք չորս օրեր անցան, որոնք այլ եւս չեմ յիշեր, իբրեւ թէ մուսյլ ու խառնաշփոթ երազ մը տեսած ըլլայի:

Ինծի կը թուի թէ անկողնիս քով տեսայ առաջին բարձրագոյնի իմ ազնիւ դաստիարակուհիս, որ կը ջանար իր հազը բռնել թաշկինակովը:

Շփոթ կերպով մը կը յիշեմ ուսուցիչս, որ վրաս կը հակէր իս համբուրելու համար ու զիս կը կծէր քիչ մը իր մօրուքովը: Գոսօիին շէկ գլուխին անցնիլը տեսայ իբրեւ մշուշի մէջէ, նաեւ Տէոսօիին խարտեաչ խոպոպները, տեսայ նաեւ Գալսարոսիին սեւեր հագած, Կառօնը, որ ինծի մանտարինս մը բերաւ աներեւները վրան, ու փութով փախաւ գնաց, վասն զի մայրը շատ

հիւանդ է: Յետոյ արթնցայ իբրեւ երկարատեւ քունէ մը: ու հասկցայ թէ աւելի աղէկ էի տեսնելով հայրս ու մայրս որ կը ժպտէին, եւ լսելով Սիւլիան որ կ'երգէր: Ո՛հ, ի՛նչ տխուր երազ...

Աւելի ազէկ կը զգամ ինքզինքս, սակայն, օրէ օր: Պզտիկ որմնադիրը եկաւ, առաջին անգամի համար իս խնդացուց իր նապաստակի դնչիկը ընելով: Ի՛նչպէս լաւ կ'ընէ, հիւանդութենէն իր դէմքը երկարելէն իվեր, հէ՛գ պզտիկը: Գօռէթին եկաւ, Կառօֆին եկաւ: Ինծի ընծայ բերաւ վիճակահանութեան մը երկու տոմսակ, զոր գներ է Պէտթօլս փողոցը ծախողէ մը: Երէկ մինչդեռ կը քնանայի, Բոէքօսին եկաւ չրթունքները ձեռքերուս վրայ դրաւ, զիս չարթնցնելու համար, եւ որովհետեւ իր հօրը աշխատանոցէն կու գար, դէմքը ածուխով սևեցած, սեւ բիծ մը թողուց թեւիս վրայ: Ուրախ եղայ արթնցած ատենս զինքը տեսնելով:

Ի՛նչպէս ծառերը կանանչցեր են այսքան քիչ օրուան մէջ: Եւ ո՛րքան կը ցանկամ ըլլալ այն տղոց պէս որոնց դպրոց վազելը կը տեսնեմ, իրենց գիրքերը թեւերնուն տակ, երբ հայրիկս զիս գրկած մինչեւ պատուհանին առջեւ կը տանի: Քանի մը օրէն ես ալ պիտի երթամ նորէն դպրոց, անանկ անհամբեր եմ տեսնելու դարձեալ բոլոր այն սիրելի դպրոցականները, իմ նստարանս, պարտէզը, փողոցը: Գիտնալ թէ ի՛նչ անցեր դարձեր է հոն՝ հիւանդութեանս միջոցին: առնե՛լ նորէն գիրքերս, տետրակներս:

Ինծի կը թուի թէ տարի մը կայ որ զանոնք չե՛մ տեսած: Խեղճ մայրիկս, ի՛նչպէս գունատեցաւ ու նիհարցաւ: Խեղճ հայրիկս, ան ի՛նչ յոգնած կերպարանք ունի: Ու իմ ազնիւ ընկերներս, որոնք եկան

զիս տեսնել, ոտքերնուն ծայրովը քալելով ու ճակատս համրուրելով: Հիմա կը տօրիմ, մտածելով թէ պէտք պիտի ըլլայ որ օր մը իրարմէ բաժնուիինք... լաւ գիտեմ թէ ուսմունքս պիտի շարունակեմ Տէռօսիին ու քանի մը ուրիշներու հետ. բայց կառօնը, Բռէքօսին, Գօռէթին չպիտի գան այլ եւս, չորրորդ կարգը աւարտելուն: Գնաք բարո՛վ: Աչքէ պիտի կորսնցնենք իրար, ա՛լ անկողնիս քով չպիտի գան, եթէ դարձեալ հիւանդ ըլլամ:

Ի՛նչ, այնքան ազնիւ տղաք, իմ բարի եւ սիրելի ընկերներս, չտեսնե՛լ այլ եւս:

### ԳՈՐԾԱԻՈՐ ԲԱՐԵԿԱՍՆԵՐԸ

Հինգգարքի 20

Ինչո՞ւ այլ եւս երթեմ, Հանուի. ասի քենէ կախուռմ պիտի ունենայ: Չորրորդ դասարանէն ելլելուդ, երկրորդական վարժարան պիտի մտնես, եւ քու ընկերներդ գործաւոր պիտի ըլլան. բայց դուն նոյն քաղքին մէջ պիտի մնաս տակաւին շատ տարիներ թերեւս, եւ ինչո՞ւ ուրեմն չպիտի կրնաք զիրար տեսնել: Երբ դուն շիսն ըլլաս, պիտի երթաս տեսնել բարեկամներդ իրենց խանութին, կամ իրենց աշխատանոցին մէջ. զի հաճոյք պիտի զգաս երթալ գտնելով քու դասարանի ընկերներդ — մարդ եղած — աշխատութեան մէջ: Պիտի երթաս քանի մը վայրկեան իրենց ընկերութիւնը վայելել. եւ պիտի տեսնես, կեանքն ու աշխարհը ուսումնասիրելով, ո՛րքան բաներ պիտի սորվիս անոնցմէ, զոր ուրիշները չպիտի կրնային քեզի սոր-

վեցնել, անոնց արհեստին, ընկերութեանը եւ քու երկրիդ վրայ: Լա՛ւ խորհէ որ եթէ չպահես մանկութեան այս բարեկամութիւնները, դժուար պիտի ըլլայ քեզի անոնց նման բարեկամութիւններ հաստատել, ըսել կ'ուզեմ այն դասակարգէն դուրս որուն կը պատկանիս: Եւ այսպէս՝ միայն մէկ ընկերական դասակարգի մէջ պիտի ապրէիր, եւ պիտի ըլլայիր այն ուսանող մարդուն նման որ միայն մէկ գիրք մը կը կարդայ: Հիմակուրնէ միտքդ դիր այս լաւ բարեկամներդ չկորսնցնել, նոյն իսկ եթէ անոնցմէ բաժնուած ըլլաս, եւ հրահանգէ՛ զանոնք ընտրութեամբ, ճիշդ անոր համար որ գործաւորի տղաք են: Տե՛ս, բարձր դասակարգի մարդիկը սպաներն են եւ գործաւորները աշխատութեան զինուորները. ընկերութեան մէջ ինչպէս բանակին, զինուորը նուազ ազնիւ չէ քան սպան, վասն զի ազնուութիւնը աշխատութեան մէջ է, եւ, ո՛չ վարձատրութեան, արժանիքին եւ ո՛չ աստիճանին. եւ արժանիքը աւելի զինուորին, գործաւորին կազմն է, որոնք նուազ կ'օգտուին իրենց աշխատութենէն: Սիրէ եւ յարգէ ուրեմն, ամէն բանէ վեր, աշխատութեան զինուորներու որդիները պատուէ՛ անոնց մէջ իրենց ծնողքներուն աշխատութիւնները եւ զոհողութիւնները: Սիրէ՛ կառօնը, Գօռէթին. Բռէքօսին պզտիկ ուրեմնայիտը որոնք, իրենց պզտիկ գործաւորի կուրծքին մէջ, կը պարունակեն ընտի՛ր սիրտեր, եւ երգուընցիր որ ոչ մէկ փոփոխութիւն վիճակի չկարենայ խլել քու հոգիէդ մանկութեան այս լաւ բարեկամութիւնները, թէ քառսուն տարի վերջն ալ, եթէ անցնիս երկութուղիի մը կայարանէ եւ ճանչնաս մեքենավարի սեւցած զգեստներուն մէջ քու հին բարեկամդ կառօնը... Ա՛խ, պէտք չունի՛մ որ երգնուս: — Ապահով

եմ որ մեքենային վրայ պիտի ցատկես, ու պիտի համբուրես բարեկամդ, նոյն իսկ եթէ արքայական ծերակոյտի անդամ ըլլաս:

### Կ Ա Ռ Օ Ն Ի Ն Մ Ա Յ Ր Ը

Շաբաթ 29

Հազիւ դասարան մտած՝ տխուր լուր մը կ'առնեմ: Շատ օրէ իվեր, Կառօնը դպրոց չէր գար, վասն զի մայրը ծանր հիւանդ էր: Շաբաթ իրիկուն մեռեր է: Երէկ երբ վարժարան մտանք, ուսուցիչը ըսաւ մեզի.

«Ամէնէն մեծ դժբախտութիւնը որ կրնայ գալ տղու մը՝ Կառօնի գլխուն եկեր է: Մայրը կորսնցուցեր է: Վաղը նա պիտի գայ դասարան, հիմակուց կ'աղաչեմ ձեզի, զաւակներս, որ յարգէք իր դառն վիշտը: Երբ ներս մանէ, աղապատանքով ընդունեցէք զինքը. եւ, մանաւանդ, լուրջ կեցէք: Թո՛ղ ոչ ոք խընդայ կամ կատակ ընէ իրեն հետ, կ'աղաչեմ:»

Այս առաւօտ, արդարեւ, միւսներէն քիչ մը վերջը, Կառօնը ներս մտաւ: Խորապէս զգածուեցայ տեսնելով զայն գունատ, աչքերը կարմրած, սրունքները դողդոջ: Կարծես թէ երկար հիւանդութենէ մը ելեր էր, այնքան անճանաչ եղեր էր: Իր սեփ սեւ հագուստները ամէնուս գութը կը շարժէին:

Ոչ ոք լերանը բացաւ, ամէնքս ալ կարեկցութեամբ իրեն նայեցանք:

Հազիւ ներս մտած՝ տեսնելով այն դասարանը ուր մայրը գրեթէ ամէն օր եկած էր զինքը առնելու համար, այն գրասեղանը որուն վրայ այնքան անգամներ

հակած էր մայրը, քննութիւններու օրեր, իրեն ընելու համար վերջին յանձնարարութիւն մը, եւ ուր այնքան մտածած էր Վօրջ վրայ, անհամբեր ըլլալով որ դասը վերջանայ ու անոր դէմը վազէ, Կառօնը յուսահատ հեծկտուքներ փրցուց:

Պ. Բէռպօնին իրեն քաշեց զայն, սրտին վրայ սեղմեց:

«Լա՛ց, լա՛ց, խեղճ տղաս, ըսաւ անոր, բայց արիացի՛ր: Մայրդ հոս չէ այլ եւս, բայց քեզ կը տեսնէ, կը սիրէ քեզ տակաւին, կ'ապրի տակաւին քու քովդ, ու օր մը պիտի տեսնես զինքը նորէն, զի դուն ալ ունիս անոր սրտին պէս բարի ու ազնիւ սիրտ մը, արիութիւն, տղաս:»

Այս ըսաւ, Կառօնին ձեռքէն բռնեց ու անոր նստարանը տարաւ, իմ քովս: Չէի համարձակեր Կառօնին նայելու: Նա առաւ իր գիրքերը եւ տետրակները, զոր շատ օրերէ իվեր չէր բացած, բայց ընթերցումի գիրքը բացած ատեն, մէջէն զարդապատկեր մը ինկաւ որ կը ներկայացնէր մայր մը իր տղուն ձեռքէն բռնած: Նորէն սկսաւ հեծկտալ, գլուխը թեւին վրայ ծռած:

Վարժապետը նշան ըրաւ մեզի որ յարգենք իր արցունքները. ու սկսաւ դասը:

Կ'ուզէի բան մը ըսել Կառօնին, բայց չէի գիտեր ինչպէս մխիթարել զինքը: Ձեռքս թեւին վրայ դրի ու մրմնջեցի:

«Մի՛ լար, Կառօն:»

Պատասխան չտուաւ, եւ, առանց գլուխը գրասեղանին վրայէն վեր վերցնելու, ձեռքը ձեռքիս մէջ դրաւ քանի մը վայրկեան:

Արձակումի պահուն, ոչ ոք համարձակեցաւ խօսիլ

հէգ տղուն հետ . իր շուրջը կը դառնային անխօսուկ եւ յարգանքով : Տեսայ մայրս որ ինծի կը սպասէր ու վազեցի համուրեւել զայն , բայց նա գիտ անդին ըրաւ կառօնը տեսնելով : Այն պահուն չհասկցայ թէ ինչո՛ւ համար էր . բայց յետոյ նշմարեցի որ կառօնը ինծի կը նայէր աննկարագրելի տխրութեամբ մը . կարծես ըսել կ'ուզէր . « Դուն մայրդ կը համուրեւս իսկ ե՛ս այլ եւս երբեք համարեւելք չունիմ իմինս . դուն մայր ունիս , իսկ իմինս մեռա՛ծ է : »

Այն ատեն հասկցայ թէ ինչո՛ւ մայրս իս անդին հրեր էր . ու դուրս ելայ առանց իր ձեռքէն բռնելու :

### Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն Ա Ր Ժ Ա Ն Ի Ք

(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՄՍՕՐԵԱՅ)

Կէս օրին , մեր ուսուցչին հետ քաղաքատունին առջեւն էինք տեսնելու համար քաղաքային արժանիքի չքաղբամը տրուելը տղու մը . որ ազատած էր ընկերներէն մէկը որ կը խոզուէր Բօ գետին մէջ :

Շուազոյն մեծ դրօշ մը կը ծածանէր քաղաքատու-նին պատշգամին վրայ :

Մենք մտանք գաւիթին մէջ :

Շատ մարդ կար արդէն հոն : Խորը կը տեսնուէր սեղան մը կարմիր գորգով մը ծածկուած թուղթերով լեցուն . յետոյ ոսկեզօծ թիկնաթոռներու շարք մը թաղապետին ու թաղային խորհրդականներուն համար : Գաւիթին աջ կողմը շարուած էր փոքր խումբ մը քաղաքային պահակ զօրքերու , որոնց շատերուն կուրծքը չքաղբամով զարդարուած էր . միւս կողմը կը գտ-

նուէին ջրհանկիրները պահեստի համազգեստով . ու զինուորներ ամէն զէնքերով եկած հոն հետաքրքրութեամբ : Պարոններ կային , գիւղացիներ , սպաներ , տիկիներ եւ տղաք : Մենք անկիւն մը կեցանք , ուր կային շատ մը աշակերտներ ուրիշ դպրոցներու՝ իրենց ուսուցիչներով : Մենէ ոչ հեռուն կը գտնուէին տասը տասներկու տարեկան տղաք , որ կը խօսէին ու կը խընդային բարձրաձայն . դպրոցականներ էին , բարեկամ կամ ընկեր պզտիկ դիւցազնին որ չքաղբամ պիտի ստանար : Գաւիթին վրայ նայող բոլոր պատուհաններուն առջեւ քաղաքատունին պաշտօնեաներէն կեցած էին : Մատենադարանին դարտափին վրայ նաեւ լեցուն մարդ կար եւ հակառակ կողմը ներս մտնելու դրանը վրայ , մեծ թուով աղջիկներ նստած էին ժողովրդական վարժարաններէ : Կարծես թէ թատրոն մըն էր , բոլոր իր օթեակներովը եւ իր գետնասրահովը խոնուած : Ամէն մարդ զուարթօրէն կը խօսէր , նայելով ատեն ատեն սեղանին կողմը , տեսնելու համար թէ մէկը կ'երեւա՞ր . նուազածուներու խումբը մեղանուչ կը նուազէր սրահին խորը , ու պատերուն բարձրէն արեւը կը փայլէր :

Յանկարծ լուեցաւ ծափահարութիւններ որ գաւիթէն , դարտափէն ու պատուհաններէն կու գային :

Ոտքերուս ծայրը կոխելով վեր ելայ , աւելի աղէկ տեսնելու համար :

Բազմութիւնը որ կարմիրով ծածկուած սեղանին առջեւն էր , ետ քաջուեցաւ , ճամբայ տալու համար մարդու մը եւ կնոջ մը : Մարդը տղու մը ձեռքէն կը բռնէր :

Այս տղան իր ընկերը ազատող տղան էր : Մարդը իր հայրն էր . որմնադիր մը՝ տօն օրերու հագուստ հագած . կինը , իր մայրը , կարճ եւ խար-

տեալ, սեւ շրջագրեստ հագած էր. տղան ալ խարտեալ եւ կարծուկ, գորշագոյն պարեգօտ մը հագած էր:

Այնքան բազմութիւն տեսնելով, այնքան ծափահարութիւն լսելով, շուարած մնացին երեքն ալ, առանց համարձակելու ո՛չ նայիլ եւ ո՛չ շարժիլ, Բարապան մը տարաւ զանոնք սեղանին քով, աջ կողմը:

Պահ մը լուռ մնաց սրահը, յետոյ կեցցէները ա՛լ աւելի ուժգին սկսան: Տղեկը կը նայէր պատուհաններուն, գլխարկը ձեռքը բռնած: Ինծի թուեցաւ թէ Գօռէթիին կը նմանէր քիչ մը: Հայրը եւ մայրը աչքերնին յառած էին սեղանին վրայ:

Սակայն արուարձանի տղաքը որ մեր քով կը գըտնուէին, առաջ եկան, նշաններ ընելով իրենց ընկերոջ տեսնուելու համար, զայն ցած ձայնով կանչելով:

Կանչելով, կանչելով, ինքզինքնին լսելի ըրին, տղան անոնց նայեցաւ եւ սկսաւ ժպտիլ գլխարկին ետեւէն, զոր կը բռնէր ձեռքը:

Այս միջոցին, թաղային պահակները՝ Զգուշացե՛ֆի նշանը տուին: Թաղապետը ներս մտաւ, բազմաթիւ պարոններու հետ. սեղանին առջեւ կայնեցաւ, եռագոյն ուսընդմէջը գօտիին վրայ միւս պարոնները իր շուրջը շարուեցան:

Նուագը դադրեցաւ, թաղապետը շարժում մը ըրաւ, ամէնքը լռեցին:

Սկսաւ խօսիլ Առաջին խօսքերը լաւ չլսեցի, բայց հասկցայ որ տղուն քաջութեան գործը կը պատմէր:

Քիչ քիչ ձայնը բարձրացաւ ու տարածուեցաւ յստակ եւ հնչուն բոլոր գաւթիթին մէջ, այնպէս որ մէկ բառ մը չկորսնցուցի:

«... Երբ տեսաւ գետեզերքէն իր ընկերը որ կը

տապալտըկէր գետին մէջ, արդէն իսկ մահուան վտանգի մէջ, քաշեց հանեց հագուստները վրայէն ու վազեց առանց վայրկեան մը վարանելու: Պոռացին իրեն. « Պիտի խեղդուիս: »

« Պատասխան չտուաւ: Ուզեցին կեցընել. մէկգի ըրաւ իր բարեկամները. կանչեցին զինքը. նա արդէն ջուրին մէջ էր: Գետը կը ծփար, վտանգը սոսկալի էր, նոյն իսկ մարդու մը համար: Բայց մարտնչեցաւ մահուան դէմ իր պզտիկ մարմնոյն եւ իր մեծ սրտին բոլոր ուժովը: Հասաւ եւ բռնեց ժամանակին հէգ տըզան որ արդէն ջուրին տակն էր, վեր հանեց ու լողաց ուժգնապէս հոսանքին դէմ որ զինքը կը մղէր, մինչդեռ իր ընկերը կը փորձէր զինքը գրկել: Քանի մը անգամ աներեւութացաւ, ու եկաւ նորէն մակերեւոյթին վրայ անյոյս ճիգով մը: Յամառ, անդրդուելի իր ազնիւ ձեռնարկին մէջ — ոչ թէ տղու մը պէս որ կ'ուզէ ուրիշ տղայ մը ազատել, հապա մարդու մը պէս, հօր մը պէս որ կ'ազատէ իր տղան, զոր իր յոյսն ու կեանքն է — վերջապէս, պզտիկ լուղորդը քաշեց առաւ զո՛հը գետէն, ու զայն ցամաքը բերաւ: Նաեւ, ուրիշներու հետ, անոր առաջին խնամքները տարաւ: Յետոյ դարձաւ իր տունը, միայնակ ու հանդարտ, պատմեց միամըտութեամբ ըրածը: »

« Պարոններ, մարդու մը դիւցազնութիւնը գեղեցիկ ու յարգելի բան է. բայց տղուն քով, որ փառասիրութեան կամ շահու ո՛չ մէկ դիտում չէ կարելի տակաւին, տղուն քով որ աւելի յանդգնութիւն պէտք է ցոյց տայ քան ուժ զոր նուազ ունի, տղուն քով՝ որմէ ոչինչ չենք պահանջեր, որ բանի մը պարտական չէ, եւ բաւականաչափ ազնիւ եւ սիրուն կը գտնենք, երբ միայն հասկնայ, առանց կարող ըլլալու, ուրիշի զոհօ-

ըութիւնը, տղուն քով, կ'ըսեմ, դիւցազնութիւնը վըսեմ բան է: Ոչինչ պիտի աւելցնեմ, պարոններ, չեմ ուզեր աւելորդ ներբողներ շուայել այնքան պարզ մեծութեան մը: Ահա՛ ձեր առջեւն է այս ազնիւ եւ քաջ ազատարարը: Զինուորնե՛ր, բարեւեցէ՛ք զայն իբրեւ եղբայր մը: Մայրե՛ր, օրհնեցէ՛ք զայն իբրեւ զաւակ մը: Տղա՛ք, յիշեցէ՛ք իր անունը, իր դիմագիծերը ձեր յիշողութեան ու ձեր սրտին մէջ տպաւորեցէ՛ք: Մօտեցի՛ր, տղաս, իտալիոյ թագաւորին անուանը, կը նուիրեմ քեզի քաղաքային արժանիքի չքադրամը:»

Ահագին կեցցէ մը, հազար բերաններէ արձակուած օդը թնդացուց:

Թաղապետը առաւ չքադրամը սեղանին վրայէն եւ անցուց տղուն կուրծքը: Յետոյ համբուրեց զայն քանի մը անգամներ:

Մայրը ձեռքը աչքերուն տարաւ, հայրը գլուխը ծռեց: Այս երջանիկ ծնողքին ձեռքը սեղմելէ յետոյ, թաղապետը առաւ չքադրամին հրովարտակը, ժապաւէնով մը կապուած եւ երկնցուց մօրը: Յետոյ տղուն դառնալով.

«Թո՛ղ այս օրուան յիշատակը այնքան՝ փառաւոր քեզի համար, այնքան քաղցր հօրդ եւ մօրդ համար՝ քու կեանքիդ մէջ քեզ հաստատ պահէ առաքինութեան եւ պատուոյ շաւղին վրայ: Երթաս բարո՛վ, տղաս:»

Թաղապետը դուրս ելաւ, նուագածութիւնը նորէն սկսաւ, եւ ամէն բան վերջացած կը թուէր, երբ ջրհանկիրներու գունդը ետ քաշուեցաւ, ճամբայ տալով ութը ինը տարեկան տղու մը, որ սրացաւ դէպի դիւցազնը եւ ինկաւ անոր թեւերուն մէջ:

Ծափահարութիւններ եւ աղաղակներ վերստին

հնչեցուցին գաւիթը. հասկցուեցաւ որ ազատուող տղան էր որ կու գար շնորհակալ ըլլալ իր ազատարարին: Զայն համբուրելէ յետոյ, տղան պզտիկ շքաւորեալին թեւէն մտաւ անոր ընկերանալու համար: Երկուքն ալ կը քալէին առջեւէ, հայրը եւ մայրն ալ ետեւնուն, ճամբայ բանալ անցնելով մարդկային ցանկապատին մէջէն որ կը փութար զիրենք տեսնել եւ բարեւել: Անոնք որ աւելի մօտը կը գտնուէին տղուն, ձեռք կ'երկնցնէին անոր, ու երբ որ ան անցաւ դըպրոցականներուն առջեւէն, անոնք իրենց գլխարկը երբեցուցին օդին մէջ, Դեռատի դիւցազնին ընկերները խանդավառ ցոյցեր ըրին իրեն, շատ մը կեցցէներ պոռալով:

Տեսայ զինքը որ անցաւ խիտ մօտէս, դէմքը ուրախութենէն ճառագայթարձակ, չքադրամը եռագոյն ժապաւէնով կապուած: Մայրը կը խնդար ու կու լար միանգամայն. յուզուած ու դողդոջուն ձեռքով, իբրեւ թէ տենդ ունենար, հայրը պէխը կ'ոլորէր:

Վերը, պատուհաններէն ու պատշգամներէն վար կը կախուէին ու կը ծափահարէին: Յանկարծ, այն պահուն ուր երջանիկ ընտանիքը պիտի անցնէր թաղապետութեան կամարակապ սրահին տակէն, ինկաւ իրենց վրայ, պատշգամէն ուր դըպրոցի աղջիկներ կեցած էին: Ճշմարիտ ծաղիկէ անձրեւ մը, մանուշակի, մարգարտածաղիկի փունջեր, որ կը ցրուէին տղուն, հօրը եւ մօրը գլխուն վրայ, վար լյնալէ առաջ: Շուտ մը սկըսան հաւաքել ծաղիկները եւ տուին մօրը... ու երաժշտութիւնը կը շարունակէր նուագել իր ամէնէն քաղցր եղանակները, ի պատիւ դեռատի ազատարարին.....:

### Չ Ո Շ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՔԵԱՐՔՔԻ, 9

Մայրս բարի է, Սիլվիա քոյրս ալ նոյն անկեղծ եւ վեհանձն սիրտը ունի, Երէկ զբաղած էի օրինակելու մէկ մասը ամսօրեայ պատմութեան որուն անունն է. Ապիկեաններէն Անտեանները (այս պատմութիւնը այնքան երկար է որ դասատուն իւրաքանչիւրիս մէկ քանի երես միայն տուաւ գրելու,) երբ Սիլվիան ներս մտաւ ոտքերուն ծայրը կոխելով, ու ըսաւ ինծի կամացուկ:

« Ինծի հետ մայրիկին սենեակը եկուր: Այս առաւօտ լսեցի հայրիկը եւ մայրիկը որ կը խօսէին, Հայրիկը ունէր, կ'երեւայ թէ կարեւոր գործ մը, որ լնցեր է իրեն շատ անապատ կերպով. յուսահատած էր նա, մայրիկը կը մխիթարէր զինքը. սնանկացած ենք, Հանուի, կը հասկնա՞ս. մեր ծնողքը այլ եւս ստակ չունին: Արդ, պէտք է որ զոհողութիւններ ընենք մենք ալ, անանկ չէ՞: Պատրաստ ես ընելու . . . : Լաւ, կը խօսիմ մայրիկին, բայց դուն ալ կը խոստանա՞ս ինծի ընել ինչ որ ըսեմ քեզի: »

խոստացայ իրեն:

Ուստի Սիլվիան ձեռքէս բռնեց, եւ տարաւ զիս մայրիկիս սենեակը, ուր մայրս մտախոհ նստած՝ կար կը կարէր: Քովը նստայ բազմոցին վրայ, Սիլվիան միւս կողմը նստաւ եւ ըսաւ իսկոյն:

« Մտիկ ըրէ՛, մայրիկ, քեզի խօսելիք ունիմ, Երկուքս ալ խօսելիք ունինք քեզի: »

Մայրիկս մեզի նայեցաւ, զարմացած:

« Հայրերնիս սնանկացած է, այնպէս չէ՞, սկսաւ Սիլվիան:

— Ի՞նչ կ'ըսես, ըսաւ մայրիկս կարմրելով: Սո՛ւտ է, ո՞վ ըսաւ քեզի: Ի՞նչէն գիտես:

— Գիտեմ, ըսաւ Սիլվիան հաստատ շեշտով մը. էյ լաւ, մտիկ ըրէ՛ մայրիկ. պէտք է զոհողութիւններ ընենք, մենք ալ: Դուն ինծի խոստացեր էիր հովանար մը առնել ամսու գլխուն, Հանուին ալ ներկի տուփի մը կը սպասէր: Չենք ուզեր այլ եւս. մենք չենք ուզեր որ մեզի համար ծախք ըլլայ, կը հասկնա՞ս: »

Մայրիկս փորձեց խօսիլ, բայց Սիլվիան շարունակեց.

« Այսպէս որոշեցինք Հանուին ու ես: Եւ մինչեւ որ հայրերնիս ստակ չունենայ, ազանդեր չենք ուզեր մենք. ապուրը կը բաւէ մեզի, առտուն ալ ցամաք հաց կ'ուտենք: Ասանկով, նուազ ծախք կ'ըլլայ ուտելիքի. ու կը խոստանանք քեզի որ շատ գոհ պիտի ըլլանք: Անանկ չէ՞, Հանուի: »

Հաստատական պատասխան մը տուի:

« Եւ եթէ տակաւին զոհողութիւններ կան ընելիք ըսաւ նորէն Սիլվիան, ձեռքին մէկը մայրիկին բերնին վրայ դնելով, որպէս զի չխօսի, հաճութեամբ պիտի ընենք, արդուզարդի կամ ուրիշ բանի վրայ: Կրնաք ծախել նաեւ ինչ որ մեզի ընծայ տուած էք. ես նախ քեզի կու տամ ինչ որ ունիմ: Սպասուհի տեղ պիտի բռնեմ քեզի. բան մը դուրս չենք տար. բոլոր օրը կար կը կարեմ: Պատրաստ եմ ամէն ուղածդ ընելու, ամէ՛ն բան, գոչեց մօրս վիզը նստուելով: Կը բաւէ որ հայրիկն ու դուն չնեղուիք, երկուքդ ալ հանգիստ ըլլաք, զուարթ ձեր երկու զաւակներուն մէջ տեղը, Սիլվիային ու Հանուին, որոնք իրենց կեանքը պիտի տային ձեզի համար: »

Երբեք չտեսայ մայրիկը աւելի երջանիկ քան լսելով քրոջս այսպէս խօսիլը . . . համբուրեց մեր ճակատը խնդալով, ու լալով, առանց կարենալ խօսելու, յետոյ վերջապէս վստահացուց Սիլվիան թէ սխալ հասկցեր է, թէ, բարեբախտաբար, սնանկացած չէինք ինչպէս որ քոյրս կը կարծէր, ու մեզի շնորհակալ եղաւ, մայրիկս, Իրիկունը, ուրախ, երջանիկ եղաւ ու պատմեց հօրս մեր առաջարկը, Բայց այս առաւօտ, սեղան նստած ատեննիս մեծ հաճոյք մը ու մեծ զարմացում մը զգացինք միանգամայն:

Սիլվիան գտաւ իր հովահարը իր անձեռնոցին տակ եւ ես . . . իմ ներկի տո՛ւփս:

Ն Ր Դ Ե Ն Ը (\*)

Այս առաւօտ, երբ ամսօրեայ պատմութեան ընդօրինակութեան բաժինս ըրած էի, կը փնտռէի նիւթ մը ազատ շարադրութեան համար զոր վարժապետը տուաւ մեզի ընելու, երբ անսովոր ձայն մը լսեցի սանդուղին վրայէն, եւ քիչ յետոյ, երկու ջրհանկիրներ մեր յարկը մտան, հօրմէս հրաման խնդրելով որ նային ծխանները եւ վառարանները, վասն զի ծխանէ մը կըրակ կ'ելլէր տանիքին վրայ ու չէին գիտեր ուրկէ էր: Հայրս ըսաւ իրենց որ ներս մտնեն եւ փնտռեն, թէ եւ մեր բնակարանին մէջ ոչ մէկ վառարան վառուած չկար: Ջրհանկիրները ամէն սենեակները գացին, մտիկ

(\*) Այս դէպքը պատահած է Թուրինի մէջ 1880 յունուար 27ի գիշերը:

ընելով պատերուն մէջ, լսելու համար թէ արդեօք կրակ կ'ար խողովակներուն մէջ որ կ'անցնէին մեր յարկէն եւ կը հաղորդակցէին քովի ծխաններուն հետ:

Հայրս ըսաւ ինձի. — Ահա, Հանուի, նիւթ մը շարադրութեան համար, Ջրհանկիրները: Ես զանոնք տեսայ գործի վրայ, երկու տարի կայ: Գրէ՛ ինչ որ պատմեմ քեզի:

Իրիկուն մը որ Պալպօ թատրոնէն դուրս կ'ելլէի. կէս գիշերին մօտ, Հռոմ փողոցը մտած ատենս, տեսայ անսովոր լոյս մը եւ խել մը մարդիկ որ կը վազէին: Տուն մը բոցերու մէջ էր: Կրակէ լեզուներ եւ մուխէ ամպեր կ'ելլէին պատուհաններէն եւ տանիքէն: Էրիկ մարդ, կնիկ մարդ կ'երեւային պատշգամներու վրայ, եւ կ'աներեւութանային յուսահատ ճիչեր արձակելով: Դրան առջեւ մեծ իրարանցում կար, ամբոխը կը պոռար: — Օգնու՛թի՛ւն, ողջ ողջ կ'այրի՛ն կոր. — ջրհանկիր, ջրհանկիր:

Այս միջոցին, չորս հատ ջրհանկիր եկան որոնք խուժեցին տունին մէջ: Կին մը երեւցաւ երրորդ յարկի պատուհանէն, սոսկալի ճիչեր արձակելով, ոտքը նետեց երկաթին եւ այնպէս կառչած մնաց, գրեթէ կախուած պարապութեան մէջ, կռնակը ծռած կրակէ կոյտերուն տակ որ իր գլխուն քովէն կ'անցնէին: Ամբոխը սոսկալի աղաղակ մը արձակեց: Ջրհանկիրները, անիրաւաբար երկրորդ յարկի ահաբեկ բնակիչներէն վար դրուած, արդէն վար առեր էին պատ մը եւ խուժեր էին սենեակի մը մէջ երբ հարկը աւտոր ձայներ պոռացին:

« Երրորդ յարկը, երրորդ յարկը: »

Թռան գացին վերի յարկը, ուր կարծես ամպ կ'որոտար: Գերանները կը գլորէին, նրբանցքները կը ճար-



ճատէին, մուխը կը տարածուէր... Հասնելու համար այն սենեակը ուր ապաստաններ էին բնակիչները, ուրիշ ճամբայ չէր մնար, բայց միայն տանիքը: Զրհանկիրները սլացան իսկոյն, եւ վայրկեան մը վերջը սեւ ուրուականի պէս մէկը տեսնուեցաւ որ կը ցատկէր տանիքին վրայ, մուխին միջեւէն: Զրհանկիրներուն տասնապետն էր որ ամէնէն առաջ եկած էր: Բայց երթալու համար տանիքին այն մասին վրայ որ հազորդակցութիւն ունէր այրած յարկին հետ, պէտք էր անցնիլ նեղ ճամբէ մը, լուսամուտի մը եւ քիւի մը մէջ տեղէն: Մնացածը ամբողջ կը բոցավառէր, եւ այս պղզտիկ միջոցը ծածկուած էր ձիւնով եւ սառով, առանց բնաւ ուրիշ յենարանի՝ կենալու համար...

« Անկարեւի է, չպիտի անցնի... » գոչեց ամբոխը վարէն:

Տասնապետը առաջ եկաւ տանիքին եզրերին վրայ: Ամէնքս ալ իրեն նայեցանք, անձկալից, շունչերնիս բռնած:

Անցաւ, — անհուն ապրի՛ս մը երկինք բարձրացաւ:

Տասնապետը ճամբան շարունակեց. սպառնալից կէտին երբ հասաւ, սկսաւ խորտակել կացինի խոշոր հարուածներով աղիւսները, կաւարները եւ մարդակները, անցք մը բանալու եւ երրորդ յարկը իջնելու համար: Այս միջոցին, կինը կախուած կը մնար պատուհանէն դուրս, կրակը գլխուն վրայէն կ'անցնէր. վայրկեան մը եւս, եւ կինը պիտի գահավիժէր չպարապութեան մէջ... Ծակը բացուեցաւ, տեսնուեցաւ ջրհանկիրը որ իր գօտին կը հանէր ու վար իջնելու կը գործածէր. միւս ջրհանկիրները, որ անոր ետեւէն եկեր էին, միացան անոր...

Այս միջոցին, ազատու մի մեծ ելնարան մը բերին, զոր կռթնցուցին տունին ծնօտներուն (corniche), պատուհաններէն վար, ուրկէ կ'ելլէին բոցեր եւ ճիչեր ահուելի: Կը կարծուէր թէ այս օգնութիւնը շատ ուշ կը հասնէր, թէ թշուառները ողջ ողջ այրած էին: « Զրհանկիրները կ'այրին. — լինցա՛ւ. մեռա՛ն. » կ'ըսէին:

Յանկարծ, պատշգամին պատուհանէն տեսնուեցաւ տասնապետին սեւ դէմքը, բոցերէն լուսաւորուած: Կինը կառչեցաւ անոր վզէն, նա զայն բռնեց մէջքէն ու քաշեց սենեակին մէջ:

Ամբոխը ճիչ մը արձակեց, որ խափանեց վայրկեան մը հրդեհին ճարձատիւնը: Հապա միւսները... Եւ իջնե՞լ... Ելնարանը կռթնած բարձր պատուհանի մը հեռու էր ծնօտէն (corniche):

Մինչդեռ այս խօսքերը կ'ըսուէր, ջրհանկիրներէն մէկը երեւցաւ պատուհաններուն մէկէն, դրաւ մէկ ոտքը ծնօտին վրայ ու միւսը ելնարանին, եւ, այսպէս կեցած տունին եւ ելնարանին միջեւ, առաւ մէկիկ մէկիկ բնակիչները զոր միւսները իրեն կու տային, եւ ինք ալ տուաւ զանոնք ուրիշ ջրհանկիրներու, որոնք փողոցէն կ'ելլէին ելնարանին վրայ, ու ապա կ'իջնէին, իւրաքանչիւրը իր թանկագին բեռով: Նախ անցաւ կինը, որ պատշգամէն կախուեր էր, յետոյ փոքր աղջիկ մը, ուրիշ տիկին մը, ծերունի մը...

Ամէնքն ալ ազատած էին: Ծերունիէն ետքը, տանը մէջ մնացած ջրհանկիրները իջան, վերջին իջնողը եղաւ տասնապետը որ ամէնէն առաջ վեր ելեր էր: Ամբոխը ընդունեց զիրենք ապրի՛քներու գոչիւնով: Բայց երբ երեւցաւ վերջինը, ազատարարներու առաջապահը, այն որ անդունդը գիւմազրուեր էր ընկեր-

ներուն օրինակ հանդիսանալու համար, այն որ պիտի մեռնէր եթէ անոնցմէ մէկը պարտաւորէր մեռնիլ, բազմութիւնը զայն ողջունեց իբրեւ յաղթող մը, պոռաւով ու թեւերնին կարկառելով զմայլումի եւ երախտագիտութեան աւելնով:

Քանի մը վայրկեանէն իր նսեմ անունը — ծիուզէբէ Ռօպինօ — բերնէ բերան անցաւ:

Ահա՛ ինչ բանի կ'ըսուի քաջութիւն, Հանուի: Սրբտի՛ քաջութիւնը որ չի տրամաբաներ, որ չի կքիր, որ կ'երթայ շիտակ հոն ուր կը լսէ յուսահատ ձիւ՛ն մը:

Օր մը կը տանիմ՝ քեզ տեսնելու ջրհանկիրներու փորձերը եւ ցոյց կու տամ քեզի Ռօպինօ տասնապետը: Շատ պիտի գոհ ըլլաս ճանչնալուդ, այնպէս չէ՞: Բայց, ահա նա կու գայ, առաւ նորէն հայրս:

Ետիս դարձայ: Երկու ջրհանկիրները, իրենց գործը աւարտած, սենեակէն կ'անցնէին դուրս ելլելու համար:

Հայրս ինծի ցուցուց ամէնէն պզտիկը որ կը կրէր ռսկի տրէզ ու ըսաւ ինծի.

« Տասնապետ Ռօպինոյին ձեռքը սեղմէ: »

Տասնապետը կանգ առաւ, ձեռքը ինծի երկնցուց ժպտելով, ես ալ զայն սեղմեցի: Նա բարեւեց ու դուրս ելաւ:

« Յիշէ՛, ըսաւ հայրս, հազարաւոր ձեռքերու մէջ զոր պիտի սեղմէս կեանքիդ մէջ, չպիտի գտնուի թերեւս տասը հատ որ արժեն այս ազնիւ ջրհանկիրին ձեռքը: »



### ԱՊԷՆԵԱՆՆԵՐԷՆ ԱՆՏԵԱՆՆԵՐԸ

( ԱՄՍՕՐԵԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ )

Քանի մը տարի կայ, ձենովացի տղայ մը տասներեք տարեկան, գործաւորի մը որդին, ձենովայէն Ամերիկա գնաց — մինակ — իր մայրը փնտռելու:

Իր մայրը գացած էր երկու տարի առաջ Պուէնոս Այրէս, Արժանթինի մայրաքաղաքը, հարուստ տան մը մէջ մտնելու՝ եւ այսպէս քիչ ժամանակի մէջ կանգնեցնելու համար իր ընտանիքը, որ զանազան թշուառութիւններու հետեւանքով աղքատութեան մէջ ինկած էր:

Հազուադէպ բան չէ տեսնել այն արի կիները որոնք այսպէս երկար ճամբորդութիւն մը կ'ընեն նոյն նպատակին հասնելու համար. եւ որ, շնորհիւ բարձր ամսականներու զոր կու տան այն տեղ ծառայութեան մէջ եղող անձերու, իրենց երկիրը կը դառնան ապաքանի մը հազար Փրանքով:

Խեղճ մայրը շատ լացեր էր բաժնուած ատենը զաւկըներէն, որոնց մէկը տասնութը տարեկան էր, եւ միւսը տասնըմէկ: Բայց նա մեկնած էր արիութեամբ եւ յուսալից: Ծամբորդութիւնը յաջող եղած էր:

Հազիւ հասած՝ Պուէնոս Այրէս, իսկոյն գտեր էր, միջնորդութեամբ իր ամուսնոյն մէկ հօրեղբորդու լոյն, ձենովացի խանութպան՝ հաստատուած քաղաքին մէջ երկար ատենէ ի վեր, լաւ անուն ունեցող տեղ մը, արժանթինցի պատուական ընտանիքի մը մէջ, որ իրեն հետ շատ փառիկանկատութեամբ կը վարուէր: Ժամանակ մը, թղթակցեր էր կանոնաւորապէս իրեն-

ներուն հետ : Իրենց մէջ եղած համաձայնութեան մը համեմատ , ամուսինը հօրեղբորորդուն կ'ուզէր իր նամակները , զոր կը հասցնէր կնոջը . ասի ալ իր պատասխանները կու տար խանութպանին , որ կը ղրկէր զանոնք ձէնովա , քանի մը տող ալ իր ձեռքովը աւելցընելէ յետոյ :

Ամիսը ութսուն ֆրանք վաստկելով , ու իրեն համար բան մը չծախսելով , ձենովացի կինը կը զրկէր , երեք ամիսը անգամ մը , պզտիկ գումար մը , որով իր էրիկը , որ շատ պարկեշտ էր , քիչ քիչ կը վճարէր եղած պարտքերը եւ իր համբաւը տեղը կը բերէր :

Կ'աշխատէր , ինքն ալ , գոհ իր ճակատագրէն , յուսալով մանաւանդ թէ իր կինը չպիտի ուշանայ վերադառնալ , վասն զի տունը շատ դատարկ ու տխուր էր առանց անոր : Կրտսեր որդին որ կը պաշտէր իր մայրը , աւելի եւս կը տիրէր ու չէր կրնար համակերպիլ սպասելու . . . :

Իր մեկնումէն տարի մը վերջը , կարճ նամակ մը ընդունեցան որուն մէջ ձենովացի կինը կ'ըսէր թէ բաւական հիւանդ էր , ապա այլ եւս լուր չառին իրմէ : Անգամ մը գրեցին հօրեղբորորդուն : Հօրեղբորորդին չպատասխանեց : Գրեցին արժանթիւնցի ընտանիքին ուր կինը ծառայութեան մտած էր , բայց նամակը գուցէ չէր հասած , վասն զի անունը սխալ գրուեր էր հասցէին վրայ . պատասխան չառին : Վախնալով որ դժբախտութիւն մը պատահած ըլլայ , Պուէնոս Այրէսի իտալական հիւպատոսին գրեցին , որ բարեհաճի փնտնուել տալ կինը , երեք ամիս վերջը , հիւպատոսը պատասխան զրկեց թէ հակառակ լրագիրներուն մէջ եղած ծանուցումներուն , ոչ ոք ներկայացուցած էր , նոյն իսկ տեղեկութիւն մը տալու համար :

Եւ այս , այն գերազանց պատճառով , որ ձենովացի կինը իր ճշմարիտ անունը չէր տուած այն ընտանիքին որուն քով մտած էր , անուշտ փրկելու համար իրեններուն վայելչութիւնը , զոր նուաստացնել կը կարծէր ծառայութեան արհեստը ընելով : Քանի մը ամիսներ եւս անցան առանց լուրի : Հայրն ու որդիները վշտացած էին , եւ ամէնէն պզտիկը համակուած մեղամաղձութեամբ մը որուն չէր կրնար յաղթել :

Ինչ ընելու է , ո՛ւր դիմելու է : Հօրը առաջին մտածումը եղաւ մեկնիլ , երթալ Ամերիկա իր կինը փնտնելու : Բայց , իր բացակայութեանը , ո՛վ պիտի հոգար զաւակները : Անդրանիկ զաւակն ալ , ինք ալ , չէր կրնար մեկնիլ , վասն զի հագիւ սկսեր էր բան մը շահիլ . ու ինք պէտք ունէր ընտանիքին :

Այս անձկութեան մէջ տեղ որ երեքն ալ կը ճընչէր , խեղճ մարդիկը շատ տխուր կեանք մը ունէին : Իրիկուն մը , Մառքօն , ամէնէն պզտիկը , ըսաւ որոշապէս .

« Ե՛ս պիտի երթամ Ամերիկա , մայրիկը փնտնուելու : »

Հայրը գլուխը ծռեց , ու պատասխան չտուաւ : Տղուն կողմէն վսեմ գաղափար մըն էր այս , բայց գործադրութիւնը անկարելի : Տասներեք տարեկան հասակին մէջ , առանձին ճամբորդել Ամերիկա , որ ամիս մը ճամբայ ունի :

Տղան պնդեց համբերութեամբ : Այն օրը պնդեց , հետեւեալ օրը եւ ամէն օրերը , մեծ մարդու մը պէս պատճառաբանելով եւ հարթելով դժուարութիւնները :

« Ուրիշներ հոն գացած են , կ'ըսէր , եւ ինչ աւելի պզտիկները : Մէյ մը որ նաւուն մէջ մտնեմ , ուրիշ ամէնուն պէս պիտի հասնիմ Ամերիկա : »

« Հոն հասնելուս, պիտի սկսիմ փնտռել հօրեղբորորդւոյն խանութը: Հոն այնքան Խտալացիներ կան, անչո՛ւշտ պիտի ըսեն ինձի անոր տեղը: Հօրեղբորորդիին երբ գտնեմ, կը գտնեմ նաեւ մայրիկը, եւ, եթէ չգտնեմ զայն, կ'երթամ հիւպատոսին, կը փնտռեմ արժանթինցի ընտանիքը: Ինչ որ ալ կարենայ պատահիլ, հոն ամէն մարդու համար գործ կայ: Գործ կը գտնեմ աշխատելու գոնէ վերադարձիս ծախքին բաւելու չափ կը վաստկիմ: »

Եւ այսպէս, քիչ քիչ, յաջողեցաւ համողել հայրը: Հայրը կը գնահատէր Մառքօն, գիտէր թէ շատ խելք եւ շատ արիւթիւն ունէր նա, թէ վարժուած էր զըրկողութիւններու եւ զոհողութիւններու, եւ թէ բոլոր այս լաւ յատկութիւնները աւելի պիտի զօրանային այս սուրբ յուսովը վառուած՝ սրալի մը մէջ. գտնե՛լ պաշտուած մայր մը:

Այս խօսքերուն վրայ, պատահեցաւ որ նաևու մը պետը, իրենց ծանօթներէն մէկուն բարեկամ, լսած ըլլալով այս որդիական սիրոյ արարքին վրայ, առաջարկեց առնել տալ Մառքոյին Յօդ կարգի ձրի տոմսակ մը, Արժանթին երթալու համար: Քիչ մը վարանումէ յետոյ, հայրը հաւանեցաւ, ճամբորդութիւնը որոշուեցաւ: Ճամբորդութեան ծրարը կապեցին, Մառքոյին գրպանը քանի մը Փրանք դրին. հօրեղբորորդիին ալ հասցէն, ու ապրիլի իրիկուն մը նաև հեծցուցին զայն:

« Մառքօ, սիրելի զաւակս, ըսաւ հայրը վերջին համրոյրը տալով, աչքերը արտասուելից, երթալիք նաևուն սանդուղին վրայ, արիւթիւն ունեցիր. վսեմ դիտաւորութեամբ մը կը մեկնիս: Կը յուսամ թէ պիտի յաջողիս: »

Ինե՛ղճ Մառքօ, սիրտը շատ պինդ բռնած էր, պատաստուած ամէն դժնդակ փորձերու. սակայն երբ տեսաւ որ իր ծննդավայր քաղաքը հորիզոնէն անդին կ'աներեւութանայ եւ երբ ինքզինքը ծովուն մէջ տեղ գտաւ, միայնակ այն մեծ նաւուն մէջ գիւղացի գաղթականներով լեցուն, չճանչնալով ոչ ոք, ունենալով միայն իր պզտիկ ծրարը, որ կը պարունակէր բոլոր իր հարստութիւնը, յանկարծ վհատութիւն մը զինքը պատեց: Ամբողջ երկու օր, կծկտած մնաց աւաջակողմը, գրեթէ առանց ուտելու, լալու հակամէտ: Ամէն տեսալ տխուր մտածումներ կ'անցնէին մտքէն. եւ առ մէնէն սոսկալին, ամէնէն հաստատր այն էր թէ մայրը մեռած՝ ըլլար: Իր սոսկալի երազներուն մէջ, միշտ կը տեսնէր անծանօթի մը դէմքը, որ կը մրմնջէր իր ականջին. Մայրդ մեռած եւ Ընդոստ կ'արթննար ճիշ մը արձակելով:

Սակայն, ձիարալթարի նեղուցը անցնելէ յետոյ, Ատլանտեան ովկիանոսը մտնելուն, Մառքօն քիչ մը քաջութիւն եւ յոյս առաւ, բայց այս սիրտիանքը կարճատեւ եղաւ: Այս անծայրածիր եւ անիտիոյս ծովը, աճեցուն տաքութիւնը, զինքը չըջապատող խելճ մարդոց մեղամալճութիւնը, առանձնութեանը զգացումը, նորէն վհատութիւն պատճառեցին իրեն: Օրերն իրարու կը յաջորդէին դատարկ եւ միօրինակ. անոնք կը շփոթէին իր յիշողութեան մէջ ինչպէս կը պատահի հիւանդներուն:

Իրեն կը թուէր թէ տարիէ մը իվեր ծովուն վրայ էր: Եւ ամէն առաւօտ, արթնցած ատեն, նոր զարմացում մը կը զգար հոն գտնուելուն, միայնակ այս ովկիանի մէջ տեղ, դէպի Ամերիկա ճամբորդելով:

Թուշտուն ճուկերը որ կու գային ատեն ատեն իյ-

նալ նաւուսն վրայ, հասարակածինի հրաշալի արեւ-  
մուտները, իրենց ահագին ամպերով կրակի կամ ա-  
րիւնի գոյնով, եւ գիշերային փոսփորականութիւնը որ  
կարծես Ադլանտեանը լավայէ ծով մը դարձուցեր էր,  
այս ամէնը իրական չէին երեւար իրեն, երազի մէջի  
տեսիլներու պէս բան մըն էր: Գէշ օգերով օրեր ալ  
եղան, ուր ննջարանին մէջ փակուած կը մնար, մինչ-  
դեռ ամէն բան կը տատանէր ու կտոր կտոր կ'ըլլար  
զարհուրելի նուագախմբի մը ճիշերուն եւ անէծքնե-  
րուն մէջ տեղ: Այն ատեն կը կարծէր թէ իր վերջին  
ժամը հնչած է: Ու ճամբան որ շէր հասնէր. ծով ու  
երկինք, երկինք եւ ծով, այսօր երէկուան պէս, ե-  
րէկ վաղուան պէս — տակաւին — միշտ — յաւիտե-  
տենապէս: — Մառքօ երկար ժամեր կը մնար նաւուն  
տախտակամածին կռթնած, նայելով անսահման ծո-  
վուն, թմրած, տարտամ կերպով մտածելով մորը վրայ,  
մինչեւ որ քունէն ծանրացած աչքերը գոցուէին, վե-  
րըստին կը տեսնէր այն անծանօթ դէմքը որ իրեն կը  
նայէր ճշմարիտ գուժով մը, կրկնելով իր ականջին.  
«Մայրդ մեռած է: Այս ձայնին, Մառքօն կ'արթըն-  
նար ընդօտս. վերստին երազել սկսելու համար, աչ-  
քերը բաց՝ անյեղի հորիզոնին վրայ: Ծամրորդութիւ-  
նը քսանը եօթը օր տեւեց: Վերջին օրերը լաւագոյնե-  
ները եղան: Օղբ գեղեցիկ էր եւ գով: Տղան ծանօ-  
թացեր էր ծեր Լօմպարտացիի մը, որ Ամերիկա կ'եր-  
թար իր որդին գտնելու, Ռօզարիօ քաղաքին մօտ հո-  
ղագործ մը: Մառքօն անոր պատմեր էր իր պատմու-  
թիւնը, եւ ծերունին իրեն կը կրկնէր ատեն ատեն,  
ձեռքը անոր ծոծրակին վրայ դնելով. «Քաջութիւն,  
սղայ, պիտի գտնես մայրդ առողջ եւ գոհ:»

Բարի ծերունիին ընկերութիւնը ուժ կու տար Մառ-

քոյին. իր տխուր նախագգացումները ուրախ դարձեր  
էին: Նաւուն առաջակողմը նստած, գիւղացիին քով  
որ ծխափողը կը ծխէր, աստղազարդ երկինքի մը տակ,  
խուճի մը մէջ գաղթականներու որ կ'երգէին, աչքին  
առջեւ կը բերէր իր Պուէնոս Այրէս հասնելիք օրը,  
ինքզինքը կը կարծէր տեսնել փողոցի մը մէջ. խանու-  
թը կը գտնէր ու կը սրանար հօրեղբորորդոյն դէմը:  
«Ի՞նչպէս է մայրիկս. ո՞ւր է՝ երթանք տեսնե՞նք  
զինքը շուտով:»

Կը վազէին միասին, սանդուղէ մը վեր կ'ելլէին...  
դուռ մը կը բացուէր...

Հոս կը դադրէր երազը, իր երեւակայութիւնը կը  
կորսուէր անբացատրելի գորովալի զգացումի մէջ:

Ճենովայէն մեկնելուն քսանը եօթերորդ օրը  
հասան Պուէնոս Այրէս: Մայիսի գեղեցիկ արշալոյս  
մը. կարմիր ու փայլուն, կ'այրէր երկինքը, երբ նա-  
ւը խարիփ նետեց Լա Բլադայի անհուն գետին մէջ,  
եզերքներէն մէկուն ուրկէ կը տարածուի Արժան-  
թիւնի մայրաքաղաքը: Այս գեղեցիկ օրը բարենշան  
երեւցաւ Մառքոյին: Չափազանց ուրախ եւ ան-  
համբեր էր: Իր մայրը քի՛չ մը հեռուն էր այլ եւս:  
Քանի մը ժամէն պիտի տեսնէր զայն, եւ ինք կը  
գտնուէր Ամերիկայի մէջ, նոր Ալխարհի մէջ, ուր յան-  
դըզնութիւն ունեցեր էր մինակ գալու: Այս երկար  
եւ տաժանելի ճամբորդութիւնը փայլակի պէս անցած  
կը թուէր: Իրեն կը թուէր թէ թռած էր երազած ա-  
տենը եւ արթնցած էր նաւահանգստին մէջ: Մառքօն  
այնքան երջանիկ էր որ չխռովեցաւ բնաւ երբ գրպան-  
ները խուզարկած ատեն դրամապանակը չգտաւ...  
բարեբախտաբար երկուքի բաժնած էր իր փոքրիկ գան-  
ձը, աւելի ապահով ըլլալու համար ամէնը չկորսնցնե-

լաւ Գողցեր էին քսակը , քանի մը Ֆրանք միայն մնացեր էր քովը , բայց ի՞նչ փոյթ : Չէ՞ որ հիմա մօրը մօտ կը գտնուէր :

Իր ծրարը ձեռքը , ուրիշ Իտալացիներու հետ իջաւ պղտիկ շոգենաւի մը մէջ , որ զիրենք տարաւ եզերքէն քիչ մը հեռու : Նաւուն մէջէն ցատկեց մակոյկի մը մէջ որ Անտրես Տօրիս անունը կը կրէր , դուրս ելաւ թումբերուն առջեւ , իր ծեր բարեկամին՝ Լօմպարտացիին՝ ձեռքը սեղմեց եւ մեծ քայլերով նետուեցաւ քաղաքին մէջ :

Առաջին փողոցին բերանը երբ հասաւ , անցորդ մը կեցուց , եւ աղաչեց անոր որ ցոյց տայ իրեն թէ ի՞նչ ճամբայ բռնել պէտք էր Լօս Առթեա փողոցը երթալու համար : Ծիչք ալ խոսքը կ'ուզէր Իտալացի գործաւորի մը : Ասիկա հետաքրքրութեամբ նայեցաւ իրեն եւ հարցուց թէ կարգաւ գիտե՞ր :

« Այո , ըսաւ դեռատի մանչուկը . — էյ լաւ ըսաւ գործաւորը իրեն ցոյց տալով փողոցը ուրկէ դուրս կ'ելլէր , շիտակ գնա՛ , ու կարգալով ամէն փողոցներու անկիւնը փողոցներուն անունները , այս կերպով պիտի գտնես փնտռածդ : »

Տղան շնորհակալ եղաւ ու սկսաւ վազել փողոցը որ իր առջեւ կը բացուէր :

Ուղիղ եւ անվերջանալի՝ բայց նեղ փողոց մըն էր , ցած եւ ձերմակ տուներով որոնք կը նմանէին ամարանոցներու :

Շատ մը անցորդներ , կառքեր եւ սայլակներ խաղցուցիչ աղմուկ մը կ'ընէին . հօսսա հունա կը ծածանէին ամէն դոյնէ դրօշակներ , ծանուցանելով խոշոր գրերով նաւերու մեկնումը անծանօթ քաղաքներու համար : Իւրաքանչիւր քսան քայլին , աջ ու ձախ դառնալով ,

Մառքօ կը տեսնէր երկու ուրիշ փողոցներ որ կ'երկարէին աչքդ առածին չափ , ցած ու ձերմակ տուներով շրջապատուած . եւ մարդերով ու կառքերով լեցուն : Այս Ամերիկայի քաղաքները ամէնքն ալ այսպէս շինուած են ուղիղ գծով , անհուն դաշտին վրայ ովկիանոսին չափ ընդարձակ :

Ուշադրութեամբ կը նայէր փողոցներու անունները որ կը խաչաձեւէին այն փողոցը որուն մէջէն ինք կ'երթար , անծանօթ անուններ զոր կարդալու դժուարութիւն կը կրէր : Ամէն մէկ նոր փողոցի , սիրտը կը զարնէր մտածելով թէ արդեօք իր փնտռածն է : Ամէն կիներու կը նայէր այն յոյսով որ իր մայրը տեսնէ :

Իր առջեւը տեսաւ կին մը որ զինքը սարսուացուց , մօտեցաւ անոր , երեսը նայեցաւ , սեւամորթ կին մըն էր :

Կը քալէր , կը քալէր , քայլերը փութացնելով . Գոեհ մը հասնելուն , կարդաց , ու մնաց գամուած մայթին վրայ . Լօս Առթեա փողոցն էր :

Նտին դարձաւ , 117 թիւը տեսաւ հօրեղբորդուոյն խանութը 175 թիւն էր , ա՛լ աւելի փութացուց քայլը :

171 թիւին առջեւ պարտաւորեցաւ կանգ առնել շունչ առնելու համար . ու մրմնջեց .

« Մայրի՛կ , մայրի՛կ , արդեօք իրա՛ւ է որ քանի մը վայրկեանէն քեզ պիտի տեսնեմ : »

Վազեց հասաւ փերեզակի փոքր խանութ մը . ներս մտաւ ու հոն գտաւ գորշագոյն մազերով կին մը որ ակնոց դրած էր :

« Ի՞նչ կ'ուզէք , տղաս , հարցուց նա սպաներէն : — Այս չէ՞ Ֆուանտու Մըռէլլիին խանութը , կակազեց :

— Ֆուանսուա Մըռէլին մեռած է, պատասխանեց կինը իտալերէն։

Տղան կարծես թէ հարուած մը ընդունեցաւ կուրծքին։

« Երբէ՞ն լվեր մեռած է։

— Էյ, քանի մը ամիսէ իվեր, պատասխանեց կինը։ Անյաջող գործեր ընելէ յետոյ, քաղաքը թողուց. կ'ըսեն թէ Պահիա Պլանքա գնաց, շատ հեռու հոսկէ, եւ, հազիւ հոն հասած, մեռեր է։ Խանութր իմն է հիմա։

Տղան տփգունեցաւ, յետոյ ըսաւ արագօրէն։

« Մըռէլին կը ճանչնար մայրս։ Հոս ծառայութեան մտած էր պարոն Մէքինէզին քովը, ա՛ն միայն կրնայ ըսել ինծի թէ ուր կը բնակի մայրս։ Ես Իտալիայէն Ամերիկա եկայ մայրս փնտռելու։ Մըռէլին կը զրկէր մեր նամակները իրեն... Պէտք է որ գտնեմ մայրս։

— Խեղճ տղայ, պատասխանեց կինը, ես բան մը չեմ գիտեր։ Կրնամ հարցնել մանչուկին որ Մըռէլին յանձնարարութիւնները կ'ընէր։ Թերեւս ան բան մը գիտնայ։

Խանութին խորը գնաց ու կանչեց. մանչ մը եկաւ իսկոյն։

« Կը յիշե՞ս, ըսաւ խանութպան կինը, թէ Մըռէլին քու ձեռքովդ նամակ կը զրկէ՞ր երբեմն սպասուհիի մը որ հայրենակիցի մը տունը մտած էր։

— Պարոն Մէքինէզին տունը, պատասխանեց մանչը, այո, տիկին, կ'երթայի շատ անգամ։ Լօս Արթէս փողոցին ծայրը։

— Ո՛հ, շնորհակալ եմ, բարեկամս, գոչեց Մառքօն, հաճեցէ՛ք ըսել ինծի տանը թիւը... Է՛ք գիտեր։ Կ'ուզէ՞ք ինծի ընկերանալ։ Դեռ մէկ քանի մանրութիւն ստակ ունիմ։

Մառքօն այնքան եռանդով ըսաւ այս, որ, առանց խանութպան կնոջ հրամանին սպասելու, տղան պատասխանեց. « Երթա՛նք, » եւ դուրս ելաւ առջեւէն։

Գրեթէ վազելով, առանց բառ մը ըսելու, գացին փողոցին ծայրը. երկայն փողոց մը, ու կանգ առին ճերմակ տան մը առջեւ, երկաթէ վանդակորմով շրջապատուած, ուրկէ կը տեսնուէր պզտիկ բակ մը ծաղկամաններով լեցուն։

Մառքօն զանգակը հնչեցուց։ Դեռատի աղջիկ մը երեցաւ։

« Հո՛ս կը բնակի Մէնինէզ ընտանիքը, այնպէս Է՛ք, հարցուց տղան անձկութեամբ։

— Այդ ընտանիքը հոս բնակած է, արդարեւ, պատասխանեց աղջիկը սպանիական շեշտով մը. հիմա մենք կը բնակինք։

— Մէքինէզները ո՛ւր են, հարցուց Մառքօն, արտատրոփ։

— Գօրտօվա գացին անոնք։

— Գօրտօվա՛, բացագանչեց Մառքօն, ո՛ւր է Գօրտօվան։ Հապա իրենց սպասուհի՞ն, մա՛յրս, սպասուհին իմ մա՛յրս էր. իրենց հե՞տ տարին զայն։

Աղջիկը նայեցաւ ու պատասխանեց։

« Չեմ գիտեր։ Հայրս գիտէ թերեւս, ան ճանչցած է Մէքինէզները, իրենց մեկնուկին ատենը։ Սպասեցէ՛ք վայրկեան մը։ »

Աղջիկը աներեւութացաւ ու նորէն եկաւ քիչ վերջը հօրը հետ, երկայնահասակ մարդ մը, գորշագոյն մօրուքով, Ասիկա շեշտ նայեցաւ այն համակիր դէմքը, պզտիկ ձեռնովացի նաւաստիին, խարտեաչ մազերով, սրածայր քիթով ու հարցուց անոր յոռի իտալերէնով մը. « Մայրդ ձեռնովացի՞ է։ »

Այո, պատասխանեց Մառքօն :

— Էյ լաւ, ձեռնովացի սպասուհին Մէքինէզներուն հետ գնաց, ապահով եմ :

— Ո՛ւր գացին հապա :

— Գօրտօվա :

Տղան հառաչ մը արձակեց :

« Ուրեմն Գօրտօվա կ'երթամ, ըսաւ համակերպութեամբ :

— Ա՛խ, խեղճ տղայ, գոչեց Սպանիացին գթութեամբ, Գօրտօվան հարիւր փարսախ հեռու է հոսկէ :

Մառքօն տոգունեցաւ մեռելի պէս ու դեղեւեւով կռթնեցաւ վանդակորմին :

« Տեսնենք, տեսնենք, ըսաւ այն ատեն ծեր պարոնը կարեկցութենէն յուզուած, եկուր վայրկեան մը, տեսնենք բան մը կրնա՞մ ընել քեզի համար : »

Ներս մտցուց Մառքօն, աթոռ մը տուաւ անոր եւ առաջարկեց որ իր պատմութիւնը ընէ : Ուշադրութեամբ մտիկ ըրաւ, մտախոհ մնաց, ապա ըսաւ որոշ կերպով :

« Ստակ չունիս, այնպէս չէ՞ :

— Ունիմ տակաւին . . . շատ քիչ, կակազեց Մառքօն :

Պարոնը խորհեցաւ վայրկեան մը, ապա գրասեղանին առջեւ նստաւ, նամակ մը գրեց, գոցեց եւ Մառքոյին տալով, ըսաւ անոր :

« Մտիկ ըրէ՛, պզտիկ Իտալացիս, այս նամակը ա՛ռ Պօքա գնա՛ (պզտիկ քաղաք մըն է կէս ճենովական, հոսկէ ո՛չ հեռու, երկու ժամ ճամբայ առ առաւելն) : Ամէն ոք կրնայ քեզի ցոյց տալ ճամբան : Մէյ մը որ հասնիս, կը փնտռես պարոնը, որուն ուղղուած է այս նամակը, ամէնուն ծանօթ է ան, տու՛ր ասիկա իրեն :

ան քեզ Ռօզառիօ պիտի զրկէ, ու քեզ պիտի յանձնարարէ հոն մէկու մը որ հոգ պիտի տանի ճամբադ շարունակելուդ մինչեւ Գօրտօվա : Գօրտօվա պիտի գտնես Մէքինէզ ընտանիքը, եւ անշուշտ մայրդ ալ : Առ այժմ, ա՛ռ ասիկա : »

Ա.իին մէջ դրաւ քանի մը մանրուք ստակ :

« Գնա՛, եւ քա՛ջ եղիր, յարեց, հոս ամէն կողմ հայրենակիցներ պիտի գտնես որոնք քեզ չպիտի լքանեն : Երթա՛ս բարով : »

Մառքօն շնորհակալ եւլ մը մրմնջեց առանց ուրիշ խօսք մը գտնելու : Դուրս ելաւ ծրարը ձեռքը, ճամբու դրաւ իր պզտիկ առաջնորդը, ու սկսաւ յամրաբար երթալ աղմկալից մեծ քաղաքին մէջէն Պօքա տանող ճամբան . . . :

Ինչ որ իրեն պատահեցաւ, այդ վայրկեանէն սկըսեալ մինչեւ հետեւեալ օրուան իրիկունը, չփոթ կերպով միտքը մնաց, տենդոտ մղձուռանջի մը պէս, այնքան խոնջած ու վհատած էր :

Հետեւեալ օրը, մթնշաղին, Պօքայի մէկ պանդոկին պզտիկ սենեակի մը մէջ գիշեր մը անցընելէ ետքը, նաւահանգիստի բեռնակիրի մը քով, եւ ամբողջ օրը գերաններու դէզի մը վրայ նստած, կէս մը արթուն, նայելով հազարաւոր նաւեր, մակոյկներ եւ նաւածիք շոգենաւներ, ինքզինքը գտաւ յետասկողմը առաջաստանաւի մը, պտուղով բեռնաւորուած, որ Ռօզարիօ կը մեկնէր, առաջնորդութեամբ երեք կաշմբուռն առոյգ ձեռնովացիներու, արեւէն պղնձագունած : Իր հայրենակիցներուն ձայնը, իր ծննդավայրին սիրելի բարբառը խօսելով, քիչ մը բալասան դրաւ սրտին մէջ :

Մեկնեցան : Ծամբան տեւեց երեք օր եւ չորս գի-



չեր, որոնք զարմացում մը եղան պզտիկ ճամբորդին համար, երեք օր չորս գիշեր նաւարկելով այս հրաշագեղ գետին վրայ, Բառանան, որուն քով Բօն վտակ մըն է, եւ որուն երկայնութիւնը ամբողջ Իտալիայի չորսէն աւելի է: Նաւը կամաց կամաց կ'երթար, կըռուելով այս ջրի կոյտին դէմ, եւ անցնելով կղզիներու մօտէն, նարնջենիներ եւ ուռիներ տնկուած, ծածանուտ թաւուտներու հանգոյն, օձերու եւ վագրերու խշտիքներ... Աւելի հեռուն կը գտնուէին նեղ ջրանցքներու մէջ, եւ որ կը տանէին ընդարձակ ջուրերու տարածութիւններու վրայ, մեծ հանդարտ լիճերու կերպարանքով: Յետոյ դարձեալ կղզիներ էին, արշիպելագոսի մը նեղուցները, յորդառատ բուսականութեան անհուն փունջ մը: Ամէն կողմ խոր լուսութիւն կը տիրէր, այս մենաւոր ափունքը եւ ջուրը անծանօթ գաղափարը կու տային գետի մը, որուն վրայ առաջատանաւը առաջինը պիտի ըլլար ինքզինքը վտանգի ենթարկող: Քանի առաջ կ'երթային, այնքան աւելի այս այլանդակ գետը կ'ահարեկէր Մառքօն. ան կ'երեւա կայէր թէ մայրը կը գտնուէր Բառանայի ակներուն մէջ եւ թէ նաւարկութիւնը տարիներ պիտի տեւէր: Օրը երկու անգամ, պզտիկ ուղեւորը քիչ մը հաց ու աղած միս կ'ուտէր նաւավարներուն հետ, որոնք, զայն տխուր տեսնելով, երբեք խօսք մը չէին ուղղէր անոր: Գիշերը, Մառքօն կ'արթննար ատեն ատեն, զգածուած վճիռ լոյսէն լուսինին, որ կը լուսաւորէր անհուն ջուրերը եւ հեռաւոր ափունքները: Այն ատեն սիրտը կը սեղմուէր. «Գօրտօ՛վա» կը կրկնէր այս անունը որպէս վէպերու խորհրդաւոր մէկ քաղաքին անունը: Ապա կը մտածէր. «Մայրս հոսկէ անցած է, տեսած է այս կղզիները, տեսած է այս ափունքը...»

Ու այն ատեն օտար երկիրները իրեն նուազ մենաւոր կը թուէին, մտածելով որ մայրը տեսած էր զանոնք:

Վերջին գիշերը, նաւավարներէն մէկը երգեց: Այս երգը իր մայրն ալ կ'ըսէր զինքը քնացնելու համար երբ պզտիկ էր: Զայս լսելով, Մառքօն սկսաւ հեծկըլտալ: Նաւավարը ընդհատեց երգը:

«Օն, արիւթիւն, տղայ գոչեց իրեն, ա՛ն ինչ է, ձենովացի մը որ կու լայ, վասն զի հեռու է իր հայրենիքէն, օ՛ն անդր: Ձենովացիները աշխարհի շրջանը կ'ընեն փառապանծ եւ յաղթական...»

Այս խօսքերուն, Մառքօն թոթվուեցաւ, ձենովական արիւնին ձայնը զգաց, հպարտութեամբ գլուխը վեր առաւ եւ բռունցքովը դեկին զարնելով:

«Եթէ պէտք ըլլայ որ, ես ալ, աշխարհի շրջանը ընեմ, տարիներով ճամբորդեմ ու հարիւրաւոր փարսախներ ստքով ընեմ, պիտի երթամ դէպ առաջ, մինչեւ որ գտնեմ մայրս: Եթէ մահամերձ հասնիմ իր քով ու իր ստքերուն տակ հոգիս փչեմ, թո՛ղ տեսնեմ անգամ մը զինքը, գո՛հ պիտի ըլլամ անով...»

Այս կերպով զօրացած հասաւ առտու մը Ռօզարիօ քաղաքը, Բառանայի բարձր եզերքին վրայ կառուցուած, ուր կը ցոլային ջուրին մէջ հարիւր նաւերու դրօշները ամէն երկիրներու:

Նաւէն ելլելուն պէս, վազեց քաղաքին մէջ, ծրարը ձեռքը, փնտռելով արժանթինցի պարոն մը որուն համար Պօքայի իր պաշտպանը տուեր էր իրեն այցատոմս մը, քանի մը բառ յանձնարարելով: Ռօզարիօ մտած ատեն, Մառքօն կարծեց թէ պիտի գտնէր արդէն ծանօթ քաղաք մը: Նոյն փողոցներն էին անվերջանալի, ուղիղ, ճերմակ եւ ցած տուներով շրջապա-

տուած, տանիքներուն վրայ ամէն կողմէն անցուած, հեռագրական թեւերու մեծ շերտեր որոնք անհուն սարդի ոստայններ կ'երեւային: Յետոյ մեծ շարժում մը մարդերու, ձիերու եւ սայլակներու: Մառքոյին խելքը գլխէն կ'երթար, կարծեց թէ Պուէնոս Այրէս մտած էր, ուր փնտռեր էր ատեն մը իր հօրեղբորորդին: Մէկ ժամու մօտ գնաց աջէն ձախը, գրեթէ կարծելով որ միշտ նոյն փողոցին մէջն էր: Հարցնելով հարցնելով, գտաւ իր նոր պաշտպանին տունը: Զանգակին չուանը քաշեց: Խոչոր խարտեալ մարդ մը, դաժան երեւոյթով, վերակացուի կերպարանքին տակ, երեւցաւ դրան առջեւ. խտափոյթ հարցուց Մառքոյին թէ ի՞նչ կը փափաքէր: Տղան անոր վարպետին տունը տուաւ:

«Վարպետը՞, պատասխանեց վերակացուն, ա՛ն երէկ Պուէնոս Այրէս գնաց բոլոր ընտանիքով:»

Հէգ պզտիկը բերանը չկրցաւ բանալ զարմացումէն, յետոյ կակազեց.

«Բայց ես . . . Ոչ ո՛ր կը ձանչնամ: Մինա՛կ եմ:»  
Ու այցեատմը երկնցուց:

Վերակացուն զայն առաւ, կարդաց, ու ըսաւ անոր խտուրթեամբ.

«Ի՞նչ կ'ուզես որ ընեմ: Ամիսէ մը, երբ որ գայ կու տամ իրեն:»

— Բայց ես մինա՛կ եմ: Ես պէտք ունիմ իր օգնութեանը. դոչեց տղան արցունքներով դողդղացած ձայնով մը:

— Օ՛ն, քայլէ՛, ըսաւ միւսը, արդէն բաւական շատ կան քու հայրենակիցներէդ Ռօզարիոյի մէջ, Գրեմա՛ իտալիա մուրա՛:»

Վերակացուն վանդակորմը գոցեց ու տղան մնաց հոն քարացած:

Վերջապէս ծրարը առաւ եւ դուրս ելաւ սիրտը անձկութեամբ լեցուն, միտքը պաշարուած հազար խռովայոյզ մտածութիւններով:

— Ի՞նչ ըներ: — Ո՛ւր երթար: Ռօզարիոյէն Գօրտովա օրուան մը ճամբայ կար երկաթուղիով: Մառքօն հազիւ քանի մը Փրանք ունէր գրպանը: Մէկ օրուան համար պէտք ունեցածը եթէ հանէր, գրեթէ ոչինչ կը մնար իրեն: Ո՛ւր գտնէր ստակ իր ճամբուն ծախքին համար, կրնար աշխատիլ . . . : Բայց ի՞նչպէս: Ո՛րմէ գործ ուզէր: Ստա՞կ մուրար: Ո՛հ, չէ. մերժուէր, անարգուէր, նուաստանար ինչպէս որ եղեր էր պահ մը առաջ այն վերակացուէն, ո՛չ երբեք, աւելի՛ աղէկ էր մեռնիլ:

Այս գաղափարով, եւ տեսնելով իր առջեւ երկար փողոցը որ կը կորսուէր անսահման դաշտին մէջ, զգաց թէ անգամ մը եւս կը կորսնցնէ իր արիութիւնը: Ծըրարը նետեց մայթին վրայ, վրան նստաւ, ուսերը պատին դրաւ, ու գլուխը ծռեց երկու ձեռքերուն մէջ, առանց լալու, բայց ցաւագին կացութեան մը մէջ:

Զրաղիտ մարդիկը որ կ'անցնէին կը հրէին զայն ոտքով. սայլակները կը թաւալէին աղմուկով, տղաք կանգ կ'առնէին իրեն նայելու համար: Ու Մառքօ կը մնար. միշտ զգետնած վճատութենէ:

Յանկարծ արթնցաւ իր թմրութենէն ճայնէ մը որ իրեն կը հարցնէր, կէս մը իտալերէն, կէս մը Լօմպարտերէն.

«Ի՞նչ ունիս, մանչուկս:»  
Մառքօն աչքերը վեր վերցուց եւ իսկոյն ոտքի ելաւ զարմացումի բացազանչութիւն մը արձակելով:

«Դուք, հո՛ս:»  
Լօմպարտացի գիւղացին էր ան՝ որուն հետ կա-

պուեր էր ձենովայէն Պուէնոս Այրէս ճամբորդութեանը մէջ :

Գիւղացիին զարմանքը հաւասար էր տղեկինին , որ ժամանակ չթողուց իրեն հարցախորձելու ու արագօրէն պատմեց իր յուսախարութիւնները :

« Հիմա բնաւ ապաւէն մը չունիմ . պէտք է որ աշխատիմ , տեղ մը գտէք ինծի գործի մտնեմ ու քանի մը ֆրանք մէկ կողմ դնեմ . ի՛նչ գործ ըլլայ կ'ընեմ . բեռնակիր , աւելածու , յանձնակատար , պիտի գոհանամ սեւ հացով , միայն թէ կարենամ գտնել վերջապէս մայրս : Ըրէ՛ք ինծի այս բարութիւնը . աշխատութիւն , կարենամ մեկնիլ , շո՛ւտ , գործ գտէք ինծի , ա՛լ չեմ գիմանար :

— Վա՛յ չար սատանայ , ըսաւ գիւղացին , շուրջը նայելով ու դունջը քերելով , այս ի՛նչ բան է : Աշխատի՛ր ըսելը դիւրին է : Տեսնե՛ք , միջոց չկա՛յ արդեօք երսուն ֆրանք գտնելու այսքան հայրենակիցներու մէջ :

Մառքօն անոր կը նայէր , այս յոյսի նշոյլէն զօրացած :

« Հետս եկո՛ւր , ըսաւ գիւղացին :

— Ո՞ւր , հարցուց տղան , ծրարը առնելով :

— Ինծի հետ եկուր :

Գիւղացին սկսաւ քալել , Մառքօն ետեւէն գնաց , Բաւական տեղ գացին միասին առանց խօսելու : Լօմպարտացին կանգ առաւ պանդոկի մը դրան առջեւ :

Գիւղացին , ներս նայելէ յետոյ , դարձաւ դէպի Մառքօն ու ըսաւ անոր զուարթ շեշտով մը .

« Աղէկ ատենին հասանք , »

Ներս մտան երկուքն ալ մեծ սենեակի մը մէջ , ուր կը գտնուէին սեղան նստած մարդիկ , խմելով ու բարձրաձայն խօսելով : Ծեր Լօմպարտացին մօտեցաւ

առաջին սեղանին , եւ հոն նստող վեց սեղանակիցները բարեւելու ձեւէն հասկցուեցաւ որ նոր բաժնուեր էր անոնցմէ : Անոնք կարմրեալ էին , ու իրենց գաւաթները կը հնչեցնէին խնդալով ու երգելով :

« Ընկերնե՛ր , ըսաւ , առանց նախաբանի , Լօմպարտացին , ոտքի կեցած ու Մառքօն ներկայացնելով , ահա խեղճ տղայ մը , մեր հայրենակիցը , ձինովայէն միջակ եկեր է Պուէնոս Այրէս իր մայրը փնտուելու : Պուէնոս Այրէսէն ըսին իրեն . « Մայրդ հոս չէ , Գօթտօվա է : » Մակոյկով Ռօզարիօ եկաւ — երեք օր չորս գիշեր — երկու տող յանձնարարական գրով մը պարտնի մը համար որ դժբախտաբար ճամբորդութեան մէջ է : Տղան գիրը կը ներկայացնէ , կը սաստեմ զինքը : Խեղճը ստակ մը չունի , միմակ է հոս ու յուսահատ , — սրտի տէր տղայ մըն է : Տեսնե՛ք . . . : Ձե՛նք կըր նար մեր մէջը քիչ մը ստակ հաւաքել ճամբուն տոմսակը վճարելու համար , որպէս զի երթայ գտնէ իր մայրը . ասանկ չունի պէս մէջ տեղը՝ պիտի թողունք զինքը :

— Ձէ՛ արդարեւ , Ատանկ բան չըլլա՛ր , պոռացին խմողները բուռնցքով սեղանին զարնելով : — Հայրենակի՛ց մը . — հո՛ս եկուր , պզտի՛կ , — Հոս ենք մենք , գաղթականներս . տեսէ՛ք սա գեղանի լածը . — Մ՛ն , բացէ՛ք քօակնիդ , ընկերներ :

— Մինա՛կ եկար , տպրի՛ս , քաջասիրտ ես , — Մի՛ վախնար , մենք քեզի մայրիկդ գտնել կու տանք : » Գաղթականներէն մէկը տղուն թուշը կը սեղմէր , մէկ ուրիշը ձեռքը անոր ուսին վրայ կը դնէր , երրորդ մը ծրարը ձեռքէն կ'առնէր : Ուրիշ գործաւորներ քովի սեղաններէն ելան ու մօտեցան : Մառքոյին պատմութիւնը սրահին մէկ ծայրէն միւսը գնաց . տասը

վայրկեանի մէջ Լօմպարտայի գիւղացին, որ իր գըւ-  
խարկը կ'երկնցնէր պղտիկ տղուն համար դրամ հաւա-  
քելու, քառսուն Ֆրանք ժողկեց:

«Կը տեսնե՞ս, ըսաւ դէպի տղուն դառնալով, ինչ-  
պէ՞ս կը կատարուին գործերը Ամերիկայի մէջ»:

— Մօրդ կենացը խմէ՛, ըսաւ գաղթական մը,  
բաժակ մը գինի տալով տղուն:

— Մօրդ կենացը՝ ըսին գործաւորները բաժակ-  
նին վեր վերցնելով:

Մառքօն կրկնեց. «Կենացը իմ . . .»

Բայց ուրախութեան հեծկտուք մը արգիլեց շա-  
րունակել, եւ, բաժակը սեղանին վրայ դնելով, իր  
ծերունի բարեկամին վրդը նետուեցաւ:

Հետեւեալ առաւօտուն, արչալոյսին, Մառքօն  
Գօրտօվայի ճամբան բռնած էր, ճառագայթարձակ եւ  
միտքը բարեյաջող նախագդացումներով ցանկորդած:  
Բայց չկայ բնաւ ուրախութիւն մը որ դիմադրէ բնու-  
թեան օխուր երեւոյթներուն: Օդը թանձր ու գոր-  
էր. կառախուսմբը, գրեթէ դատար, կը վազէր կ'եր-  
թար ամայի անհուն դաշտի մը մէջէն: Մառքօն մինակ  
էր խիստ երկար վակոնի մը մէջ, նման այն վակոննե-  
րուն ուր վիրաւորեալներ կը զետեղեն պատերազմի ա-  
տեն: Աջին ձախին կը նայէր, եւ անվերջ առանձնու-  
թիւն մը միայն կը տեսնէր, հեռուէն հեռու պղտիկ  
ծառեր կ'երեւային ձեւէ ելած եւ ազազուն:

Թխագոյն խոտը, ցանցառ ու տխուր անծայրա-  
ծիր գերեզմանատունի մը կերպարանքը կու տար այս  
դաշտին: Մառքօն կը մրտափէր կէս ժամ մը, յետոյ այս  
միապաղաղ տեսարանը կը դիտէր: Երկաթուղիի կայա-  
րանները ամայի էին ձգնաւորներու խրճիթներու պէս,  
եւ երբ կառախուսմբը կանգ կ'առնէր ձայն մը չէր

լուեր որ բարձրանար: Մառքօն ինքզինքը առանձին  
կը կարծէր կառախուսմբին մէջ, կորսուած, լքուած ա-  
նապատի մը մէջ:

Հէգ տղան կ'երեւակայէր թէ իւրաքանչիւր կա-  
յարան վերջինը պիտի ըլլար, եւ թէ անկէ ետքը վայ-  
րենիներու խորհրդաւոր եւ սարսեցցուցիչ երկիրներու  
մէջ պիտի մտնէին: Պազ հով մը կը կսկծեցնէր երեսը:  
Հայրը ձենովայէն զինքը շոգեհաւ դրած ատեն, Ապ-  
րիլի վերջերը, չէր մտածած թէ Ամերիկայի մէջ ցուրտ  
ձմեռ պիտի գտնէր, ուստի ամառուան հագուստներ  
հագուեցուցեր էին իրեն: Քանի մը ժամուան ճամբոր-  
դութենէ յետոյ Մառքօն սկսաւ նեղուիլ ցուրտէն:  
Ճուրտին վրայ կ'աւելնար նախորդ օրերու յոգնութիւ-  
նը, սաստիկ ցնցումներով, անքուն գիշերներով ու սըր-  
տատանջութեամբ լի: Քունը ստրաւ, երկար քնացաւ,  
փայտ կորած արթնցաւ, ինքզինքը հիւանդ զգալով:  
Այն ատեն ուրիշ սարսուռէ մը բռնուեցաւ, հիւանդ  
կյնալու վայր, ճամբան մեռնելու, հոն նետուելու,  
այն ամայի դաշտին մէջ ուր իր դիակը պիտի լափուէր  
չուներէն եւ գիշակեր թռչուններէն, ինչպէս ձիերու  
եւ եզերու սակրատիներ զոր կը տեսնէր ատեն ատեն,  
եւ որոնցմէ սոսկումով անդին կը դարձնէր նայուածքը:

Այս անհանգստութեան եւ այս մտատանջութեան  
մէջ, բնութեան այս խոր լուսութեան մէջ տեղ, իր ե-  
րեւակայութիւնը կը բորբոքէր ու թախծալի երազնե-  
րու մէջ կը կորսուէր: Ապահով էր թէ մայրը պիտի  
գտնէր Գօրտօվա: Հապա եթէ հոն չըլլա՞ր նա, եթէ  
Պուէնսո Սթրէտի պարտնը սխալա՞ծ ըլլար: Եթէ մայրը  
մեռա՞ծ ըլլար: Վերստին քնացաւ այս տխուր մտածու-  
թիւններով, երազեց թէ գիշերը Գօրտօվա հասեր էր  
եւ թէ ամէն դուռներէն ու պատուհաններէն ձայներ  
կը պուային իրեն:

« Մայրդ հոն չէ՛, մայրդ հոն չէ՛ : »

Ընդոստ արթնցաւ, ու տեսաւ վահոնին խորը երեք մօրուսաւոր մարդիկ, զանազան գոյներով շալերու մէջ ծածկուած, որ իրեն կը նայէին ցած ձայնով խօսելով իրենց մէջ, կասկած մը անցաւ Մառքոյին՝ զառանցանքով լեցուն մտքէն : Թերեւս այս մարդիկը մարդասպաններ էին որ զինքը մեռցնել կ'ուզէին եւ ունեցածը գողնալ :

Արդէն զգացած նեղութեանը վրայ վախն ալ աւելցաւ : — Երեք մարդիկը միշտ իրեն կը նայէին ակնապիշ :

Անոնցմէ մէկը ոտքի ելաւ, ու դէպի իրեն եկաւ :

Այն ատեն, խելքը կորսնցնելով, Մառքոն վազեց անձանթին դիմացը թեւերը բացած՝ պոռալով. « Ես բան մը չունիմ, խեղճ տղայ մըն եմ Խտալիայէն եկած մայրիկս գտնելու համար : Մինակ եմ : Ինձի գէշութիւն մի՛ ընէք : »

Օտարականները հասկցան տղուն սխալումը, զթացին վրան, կրցածնուն չափ վստահացուցին զինքը սպանիւրէն լեզուով, ու, տեսնելով որ ակռաները իրար կը զարնէին ցուրտէն, իրենց շալին մէկը անոր ուսերուն վրայ դրին ու թողուցին որ նորէն քնանայ, Երբ Մառքոն արթնցաւ, Գօրտովա հասած էին :

Ա՛խ, ինչ սիրտանքի հառաչանքով մը վահոնէն դուրս նետուեցաւ : Կայարանի պաշտօնեայի մը Մէքինէզ ճարտարագէտին տեղը հարցուց : Ան ալ եկեղեցի մը ըսաւ : Այդ եկեղեցիին մօտն էր տունը :

Տղան սկսաւ քալել : Գիշեր էր : Քաղաք մտաւ, ու թուեցաւ Մառքոյին թէ վերստին Ռօզարիօն կը տեսնէր իր ցած ու ճերմակ տուներով, շրջապատելով երկար եւ ուզիղ փողոցներ : Բայց հոս քիչ մարդ կար :

Իրարմէ շատ հեռու լապտերներու լոյսովը, տարօրինակ դէմքեր կը տեսնէր, անձանթ գոյնով, սեւին ու կանանչին մէջ տեղ. եւ, գլուխը վեր կ'առնէր, կը տեսնէր նորանշան ճարտարապետութեամբ շինուած եկեղեցիներ որ կ'երեւային, հոյակապ եւ նսեմ : Քաղաքը մութ եւ լռին էր : Բայց այն անհուն անապատին քով ուրիշ անցեր էր շոգեկառքով, այս քաղաքը գուարթ երեւցաւ իրեն :

Հսնկէ անցնող քահանայի մը հարցուց ու գտաւ եկեղեցին, անոր քովի տունը, ու դողդոջուն ձեռքով զանգակը քաշեց : Սիրտը կը նետէր կրկնուած զարկերով որ մինչեւ կոկորդը կը հասնէին :

Պառաւ մը եկաւ դուռը բացաւ, ձեռքը ճրագ մը բռնած :

Տղան բառ մը չէր գտներ ըսելու :

« Ո՞վ կը փնտռես, հարցուց պառաւը սպանիւրէն : »

— Մէքինէզ ճարտարագէտը, » ըսաւ Մառքոն :

Պառաւ կինը ձեռքերը խաչածեւ դրաւ կուրծքին վրայ ու ըսաւ գլուխը երերցնելով.

« Դո՛ւն ալ Մէքինէզ ճարտարագէտը կը փնտռես : Կարծեմ ա՛լ ժամանակ է որ վերջ տանք այս խնդրոյն : Երեք ամիս է որ կը ձանձրացնեն մեզ : Միթէ չի՞ բաւեր որ լրագիրները ծանուցած ըլլան, ոչնէ՞տք է որ ամէն փողոցի բերան ծանուցագիր փակցուի թէ պարոն Մէքինէզը Թիւքիւման գացած է բնակելու : »

Տղան յուսահատ շարժում մը ըրաւ, բարկութեան փայլակ մը անցաւ վրայէն :

« Անէ՛ծք կայ ուրեմն, գոչեց : Պէ՛տք է որ փողոցին մէջ մեռնիմ առանց մայրս գտնելու : Կը խենթեմ հիմա . . . : Կ'ուզեմ վերջ տալ ասոր : Ի՛նչ ըսիք տեղին անունը, ո՞ւր է, որքա՞ն հեռու է : »

— Էհ, խեղճ տղայ, ըսաւ պառաւը արգահատելով, ոչի՛նչ, ասկէ Թիւքիւման չորս հինգ հարիւր մղոն ճամբայ կայ:

Տղան երեսը ծածկեց ձեռքերովը ու հարցոց հեծկլտալով.

« Է հիմա՛, ի՛նչ ընեմ . . . »

— Ի՛նչ ըսեմ քեզի, հէգ տղայ, ըսաւ նորէն կինը, չեմ գիտեր ի՛նչ ըսեմ . . . »

Յանկարծ գաղափար մը ունեցաւ, ու յարեց.

« Մտի՛կ ըրէ, հիմա կը մտածեմ, բան մը կրնաս ընել. աջ կողմիդ փողոցը դարձիր, երրորդ դռնէն ներս մեծ բակ մը պիտի գտնես: Հոն վաճառական մը կայ որ վաղը առաւօտ Թիւքիւման կը մեկնի իր սայլերով ու եղերով: Գնա՛ նայէ կ'ուզէ՞ քեզ հետ առնել. գնա՛ առաջարկէ՞ որ իրեն ծառայութիւն մը ընես. Թերեւս սայլին մէջ քեզի տեղ մը տայ. գնա՛ շուտով: »

Տղան ծրարը ձեռքը առաւ, շնորհակալ եղաւ ու վազեց գնաց:

Երկու վայրկեան ետքը ընդարձակ բակի մը մէջ կը գտնուէր որ լապտերներով լրսաւորուած էր, ուր մարդիկ զբաղած էին բեռցնելու ալիւրի պարկեր մեծ սայլի մը մէջ, աճպարարներու սայլի նման, վրան կամարով ու բարձր անիւններով: Երկայնահասակ ու մօրտաւոր մարդ մը, ծածկուած տեսակ մը վերարկուով սեւ ու ձերմակ քառանկիւն նկարով, աշխատութիւնը կը վարէր: Տղան մօտեցաւ ու երկչոտութեամբ իր խընդիրը մատուց անոր, յարելով թէ Իտալիայէն կու գար եւ մայրը գտնելու կ'երթար:

Վաճառականը անոր նայեցաւ ոտքէն գլուխը ու չոր կերպով ըսաւ. « Տեղ չկայ:

— Տասնըհինգ ֆրանք ունիմ, առաւ նորէն տղան

պաղատագին ձայնով, ձեզի կը նուիրեմ անոնք. ու ճամբան կ'աշխատիմ ձեզի համար, ջուր եւ խոտ կը բերեմ անասուններուն, ի՛նչ ըսէք կ'ընեմ: Քչիկ մը հաց կը բաւէ ինծի: Պզտիկ տեղ մը տուէք ինծի, պարոն: »

Վաճառականը վերստին նայեցաւ տղուն ու նուազ խստութեամբ պատասխանեց.

« Տեղ չկայ . . . եւ ապա . . . մենք Թիւքիւման չենք երթար, ուրիշ քաղաք կ'երթանք, Սանթիակո տէլ էսթէնօ քաղաքը: Ծամբան քեզ ձգելու պիտի ստիպուինք. ու դուն տակաւին երկար ճամբայ պիտի ունենաս ստքով քալելու: »

— Ա՛խ, կրկի՛նն ալ ըլլայ կ'ընեմ, բացագանչեց Մառքօն:

— Խորհէ՛, քսան օրու ան ճամբայ է . . . »

— Ի՛նչ փոյթ:

— Դժուար ճամբորդութիւն մըն է:

— Ամէն բանի պիտի դիմադրեմ:

— Մինա՛կ պէտք է որ ճամբորդես:

— Ես բանէ մը չեմ վախնար, բաւական է որ մայրս գտնեմ: Գիթացէ՛ք վրաս: »

Վաճառականը լապտեր մը մօտեցոց տղուն երեսին ու անոր նայեցաւ:

« Լաւ », ըսաւ, այդ քննութենէն յետոյ:

Տղան անոր ձեռքը պագաւ:

« Այս գիշեր սայլի մը մէջ պիտի պառկիս, յարեց վաճառականը, վաղը առաւօտ ժամը չորսին քեզ կ'արթընցնեմ: Գիշեր՛ը բարի: »

Առտուն, ժամը չորսին, աստղերուն լոյսով, սայլերու երկար տողանցը սկսաւ շարժիլ շառաչումով: Իւրաքանչիւր սայլի լծուած էին վեց կզեր, շատ մը ա-

նատուներ ալ ետեւնուն կ'երթային փոփոխման համար : Տղան արթննալուն՝ սայլի մը մէջ դրին , պարկերու վրայ , ուր քիչ ատենէն քնացաւ խորունկ խորունկ :

Երբ արթնցաւ , սայլերը կանգ առեր էին ամայի տեղ մը , ու մարդիկը կլոր մը նստած էին հորթի միսի մը շուրջը , որ կ'եփէր բաց տեղը , անցուած երկար տէգի մը հողին մէջ մխուած , հովն արծարծուած մեծ կրակի մը քովը : Ամէնքը միասին պիտի ուտէին , քնանային ու նորէն մեկնէին : Ճամբան այսպէս շարունակեց , զինուորներու գնացքի մը պէս կանոնաւոր : Ամէն առաւօտ ժամը հինգին ճամբայ կ'ելլէին , իննին կանգ կ'առնէին . իրիկունը ժամը հինգին վերտօին ճամբայ կ'իյնային , ու նորէն կանգ կ'առնէին ժամը տասնինը Սայրոգները ձիով կ'երթային սայլերուն քովն ու կը խթէին եզերը , զանոնք խթելով երկար խթաններով : Մառքօն , ինք , խորոված միսին կրակը կը վառէր , անատուներուն ուտելիք կուտար , լսպտերները կը մաքրէր , խմելու ջուրը կը բերէր :

Անցած տեղերը իրեն շփոթ տեսիլներու պէս կ'երեւային . ընդարձակ թաւուտներ պղտիկ թխագոյն ծառերով , գիւղակներ ցանցառ տուներէ բաղկացած կարմիր , ժանեկաւոր ճակատներով . անսահման միջոցներ , նախկին օրրաններ մեծ աղի լիճերու , ճեփ ճերմակ , անծայրածիր :

Ամէն կողմէ եւ միշտ դաշտի միայնութեան եւ լռութեան միօրինակութիւնը : Երբեմն կը պատահէին երկու երեք ձիաւորներու , ետեւնին ալ սանձարձակ ձիերու խումբով մը , որ կ'անցնէին վազելով , յորձանքի մեման : Օրերը կը սահէին իրարու ետեւէ միօրինակ , նման անոնց զոր Մառքօն անցուցեր էր ծովուն վրայ , անվերջ ձանձրոյթի մը մէջ : Օդը գեղեցիկ էր : Միայն

թէ սայրոգները օրէ օր աւելի պահանջկոտ կ'ըլլային , իրեւ թէ տղան իրենց ծառան ըլլար . ոմանք իրեն հետ խտուրթեամբ կը վարուէին , կ'սպառնային , ամէնքն ալ կը ծառայեցնէին զայն՝ առանց նկատելու անոր տարիքը եւ ուժը : Խոտերու ահագին բեռներ տանել կու տային անոր , հեռուներէն ջուր բերել կու տային . ու Մառքօն , խոնջած պարտասած , չէր կրնար քնանալ իսկ գիշերը , թօթուուած սայլի ուժգին ցնցումներէն եւ անիւներուն խլացուցիչ ձանչիւնէն : Եւ ամէն բան կատարեալ ըլլալու համար , հով մըն ալ ելեր էր , բարակ փոշի մը , շիկագոյն եւ իւղոտ կը մաղուէր ամէն դի , սայլերուն մէջ կը թափանցէր , հագուստներու տակ , այրելով աչքն ու բերանը թշուառ տղուն , աչքին լոյսը խափանելով ու շունչը բռնելով , շարունակ , անհանդուրժելի կերպով :

Յոգնութենէ ու քնատուրթենէ ճնշուած , յանդիմանուած , շարշարուած օրն ի բուն , զգեստները աղտոտած ու պատուած , հէգ մանչուկը կը վհատէր ամէն օր . ու բոլորովին պիտի յուսահատէր , եթէ վաճառականը տտեն ատեն անուշ խօսք մը չըսեր իրեն : Ծատ անգամ , սայլին անկիւնը մինակ մնալով , կու լար , դէմքը կռթնցուցած իր ծրարին , որ այլ եւս ցնցոտիներ միայն կը պարունակէր . ամէն առտու , Մառքօն կ'ելլէր աւելի տկար եւ աւելի ընկճուած : Յամաքային ովկէսնի պէս անսահման դաշտերը տեսնելով կ'ըսէր ինքնիրեն . « Զպիտի դիմանամ մինչեւ իրիկուն , ճամբան պիտի մեռնիմ » — Յոգնութիւններն ու շարշարանքները կը կրկնապատկուէին : Օր մը , որովհետեւ ջուրը ժամանակին չէր բերած , վաճառականին բացակայութենէն օգուտ քաղեցին զայն խոշտանգելու համար : Մարդոցմէն մէկը ապտակ մը զարկաւ անոր ը-

սելով. «Ա՛ն ասիկա, դատարկագորտ: — Մօ՛րդ տար  
աս» ըսաւ ուրիշ մը, ոտքի հարուած մը տալով անոր:  
Խեղճ պզտիկը ա՛լ չդիմացաւ: Հիւանդ ինկաւ:

Երեք օր սայլին մէջ մնաց, վերմակի մը տակ դո-  
ղալով, չտեսնելով ոչ զոք բացի վաճառականը, որ կու  
գար բան մը կը խմցնէր իրեն եւ բազկերակը կը նայէր:

Մառքօն կարծեց թէ ա՛լ պիտի մեռնէր: Յուսա-  
հատարար մայրը կանչեց. «Ո՛հ, մայրիկ, մայրիկ, այլ  
եւս չպիտի տեսնեմ քեզ. օգնութեան հասի՛ր ինձի,  
մայրիկ. քովս եկո՛ւր, կը մեռնի՛մ: Զիս ճամբուն վրայ  
մեռած պիտի գտնես:»

Սակայն, շնորհիւ վաճառականին խնամքներուն,  
առողջացաւ տղան: Բայց առողջութեան հետ ամէնէն  
սոսկալի օրը հասաւ իր ճամբորդութեան, այն՝ որ մի-  
նակ պիտի շարունակէր: Երկու շաբաթէն աւելի էր  
ճամբան էին: Երբ հասան այն տեղը ուր Թիւքիւմանի  
ճամբան կը բաժնուի Սանթիակօ տէլ Էսթէոյի ճամ-  
բէն, վաճառականը իրեն իմացուց թէ պէտք էր բաժ-  
նուէին իրարմէ: Մէկ քանի ծանօթութիւններ տուաւ  
երթայիք ճամբուն վրայ, ծրարը կապեց ուսին այնպէս  
որ արգելք չըլլայ քաշելուն, եւ կորճ կապելով, որ-  
պէս թէ կը վախնար կարեկցելէ, երթաս բարով ըսաւ  
անոր: Տղան հազիւ ժամանակ ունեցաւ ձեռքը առնել  
պագնելու: Միւս մարդիկը որ այնքան խստութեամբ  
վարուեր էին տղուն հետ, կարեկցութիւն զգալ թուե-  
ցան զինքը մինակ թողլով, ու իրեն հրաժեշտի նշան  
մը ըրին հեռանալով:

Մառքօն ձեռքով պատասխանեց բարեւին, անոնց  
երթին նայեցաւ կրցածին չափ հեռուն մինչեւ փոշի-  
ներու ամպերու ետին կորսուիլը...: Յետոյ ճամբայ  
ինկաւ տխրաբէին:

Բան մը, սակայն, ոյժ կուտար իրեն քիչ մը, ճամ-  
բորդութեան սկիզբէն իվեր. հորիզոնին վրայ կապոյտ  
չղթայի մը տեսքն էր ան, լեռներու բարձրագագաթ  
ու ձերմակ, որ կը յիշեցնէին իրեն Ալպեան լեռնաշղ-  
թան, եւ ասով իսկ կը թուէին մօտեցնել զինքը իր  
երկրին:

Արդ, այս լեռները Ալպեանները չէին, հապա  
Անտեանները, զոր մականուանած են ամերիկեան աշ-  
խարհին ողնայարը, անհուն շղթան որ կը տարածուի  
հրեղէն երկրէն մինչեւ հիւսիսային բեւեռին սառնա-  
պառ ծովը, հարիւր տասը աստիճան երկայնութեան  
մէջ տեղէն:

Ինչ որ կը զօրացնէր նաեւ զինքը, այն էր որ կը  
զգար թէ մթնոլորտը կը մեղմանայ. այն է որ, դէպի  
հիւսիս ելլելով, հասարակածին երկիրներուն կը մօտե-  
նար:

Իրարմէ շատ հեռու անջրպետով՝ Մառքօն կը գըտ-  
նէր տուներու պզտիկ խումբեր եւ ողորմելի կրպակ  
մը, ուրկէ քիչ մը ուտելիք կ'առնէր: Ատեն ատեն ձիա-  
ւոր մարդերու կը հանդիպէր, ու կը տեսնէր կիներ եւ  
տղաք անշարժ եւ լուրջ նստած գետնին վրայ, բոլո-  
րովին տարօրինակ դէմքերով, հողի գոյնով, աչքերնին  
չեղ նայուածքով, շրթունքնին առաջ եկած, որոնք ի-  
րեն կը նայէին պիշ պիշ ու երկար ատեն նայած կը  
մնային յամբարար գլուխնին դարձնելով ինքնաշարժ  
մեքենաներու պէս: Հնդիկներ էին անոնք:

Առաջին օրը, Մառքօն քալեց մինչեւ որ ուժա-  
սպառ եղաւ ու քնացաւ ծառի մը տակ: Երկրորդ օրը  
աւելի քիչ քալեց եւ նուազ ուժով, կօշիկները ծակեր  
էին, ոտքերը կտրտեր էին, ստամոքսն ալ տկարացեր  
էր անսուաղ մնալէ: Իրիկուան մօտ սկսաւ վախնալ:



Իտալիա եղած ատեն լսած է թէ այս երկիրներուն մէջ  
օձեր կ'ըլլան: Կարծեց թէ անոնց սողակիլը կը լսէր,  
կանգ առաւ, նորէն ճամբայ ընել սկսաւ, մինչեւ ոս-  
կորներուն ծուծը սարսուռ զգալով:

Երբեմն մեծ կարեկցութիւն կը զգար ինքզինքին  
համար, լուռ ու մունջ կու լար, քալելով հանդերձ ու  
կ'ըսէր:

« Ո՛հ, ի՛նչպէս մայրիկս պիտի տանջուէր եթէ գիտ-  
նար թէ ի՛նչ վիճակի մէջ կը գտնուիմ: »

Այս մտածութիւնը քիչ մը արիութիւն կու տար  
իրեն: Ապա, վախը փարատելու համար, միտքը կը  
բերէր բոլոր այն բաները զոր մօրը վերաբերեալ էին.  
անոր վերջին խօսքերը ձէնովա իրենց քովէն բաժնուած  
ատեն, ու անոր, իր վերմակը խծկելու կերպը, երբ  
ինք անկողին կը պառկէր: Ու երբ իր պղտրկութեանը  
նա գիրկը կ'առնէր զինքը երբեմն ըսելով.

« Հոս եկո՛ւր քիչ մը, քովի՛կս: »

Մտռքօն այսպէս կը քալէր, իր սիրական մօրը եւ  
երջանիկ օրերու յիշատակը միտքը բերելով, կ'ըսէր  
ինքնիրեն. « Պիտի տեսնե՞մ արդեօք քեզ վերստին, սի-  
րելի մայրիկս: պիտի հասնի՞մ ճամբուս աւարտը, ըսէ՛,  
մայրիկ: »

Ու կը քալէր, կը քալէր, իրեն անծանօթ տերեւ-  
ներով ծառերու, շաքարեղէգներու, անվերջ մարգա-  
ղետիներու միջեւէն, միշտ իր աչքին առջեւ ունենա-  
լով երկնագոյն բարձր լեռները, ջինջ երկնքին վրայ  
իրենց անհուն կոները նկատելով: Չորս օր, հինգ օր,  
չարաթ մը անցաւ: Տղուն ուժը կը սպառէր, ոտքերը  
արիւն թաթախ եղած էին: Վերջապէս, իրիկուն մը, ը-  
սին իրեն.

« Թիւքիւմանը հոսկէ յիսուն մղոն անդին է: »

Մտռքօն ուրախութեան ճիչ մը արձակեց եւ քայ-  
լերը փութացուց, այս յոյսը իրեն նոր ախոյժ մը կու  
տար: Բայց վաղանցուկ պատրանք մը եղաւ այս: Ու-  
ժէ ինկաւ յանկարծ, եւ ինկաւ փոսին եզերքը, ուժա-  
թափ: Սիրտը սակայն կը արօփէր ուրախութենէն, աստ-  
ղազարդ երկինքը երբեք իրեն այնքան գեղեցիկ չէր  
երեւցած: Կը դիտէր զայն խոտին վրայէն ուր պառ-  
կած էր քնանալու համար. ու մտածելով որ թերեւս  
մայրն ալ այն միջոցին երկինք կը նայէր, մրմնջեց.  
« Մայրի՛կ, ո՞ւր ես. ի՛նչ կ'ընես այս վայրկեանիս, կը  
խորհի՞ս արդեօք աղուդ վրայ որ այնքան մօտ է քեզի: »

Հէգ Մտռքօ, եթէ կարենար տեսնել ի՛նչ վիճակի  
մէջ կը գտնուի մայրը, այս վայրկեանին, գերմարդ-  
կային ճիգ մը պիտի ընէր տակաւին քալելու, քանի  
մը ժամ առաջ անոր քով հասնելու համար:

Ճենովացի կինը հիւանդ պառկած էր անկողին  
մէջ, Մէքինէզ ընտանիքին բնակած գեղեցիկ տանը  
գետնայարկը: Այդ ընտանիքը կը խանդաղատէր այս  
խեղճ սպասուհիին վրայ ու զայն կը խնամէր կրցածին  
չափ: Նա արդէն տկար էր երբ Մէքինէզ ճարտարա-  
գէտը պարտաւորեցաւ թողըլ խոտափոյթ Պուէնոս  
Այրէսը. եւ խեղճ կինը չէր կրցած կաղզուրիլ Գօրտօ-  
վայի լաւ օդին մէջ:

Ապա, այլ եւս պատասխան չստանալով ամուսնոյն  
եւ հօրեղբորորդւոյն զրկած նամակներուն, որոնք  
կորսուեր էին, կը խորհէր թէ դժբախտութիւն մը  
պատահած պէտք է ըլլայ իրեններուն: Անձկութիւնը  
որուն մէջ կ'ապրէր, անստոյգ ըլլալով մեկնումի մը կամ  
բնակութեան շարունակութեան մը մէջ, իր ցաւը շատ  
աւելցուցեր էր: Այս վերջի ատենները, ծանր պատա-  
հար մը առաջ եկեր էր իր մէջ: Տասնըհինգ օր է այլ

եւս չէր ելլեր անկողնէն, ու վիրարութական գործողութիւն մը կարեւոր էր անոր կեանքը ազատելու համար:

Ճիշդ այն միջոցին ուր Մարքոն զինքը կը կանչէր, մօրը գտնուած տանը տէրը ու տիրուհին անոր անկողնին սնարին քովն էին, համոզելով զինքը շատ քաղցրութեամբ որ սրոշում տայ գործողութիւնը ընելու: Իսկ նա կը պնդէր կը մնար իր մերժումին մէջ արտասուելով:

Թիւքիւմանէն բժիշկ մը եկեր էր նախորդ շաբթուն անօգուտ տեղը:

«Ձէ, սիրելի տէրերս, կ'ըսէր ձեռնովացի կինը, դիմանալու ուժ չունիմ, վիրարոյթին երկաթին տակ կը մեռնիմ: Աւելի աղէկ է որ ասանկ մնամ: Այլ եւս չեմ կապուած կեանքին, ամէն բան լինցած է ինձի համար: Աւելի աղէկ է որ մեռնիմ ընտանիքիս գլխուն եկածը իմանալէ առաջ:»

Մէքինէզները նորէն կը խրատէին զինքը համբերութեամբ, ըսելով որ արիութիւն ունենայ, թէ պատասխան մը պիտի առնէր անշուշտ ուղղակի ձեռնովա զրկած նամակներուն, բայց թողու որ գործողութիւնը ընեն իր վրայ, զաւակներուն սիրոյն համար: Իր զաւակներուն մտածումը իր անձկութիւններն ու վհատութիւնը կ'աւելցնէին: Անոնց անունը տալերին լսելով, դժբախտ կինը հեծկլաւ սկսաւ:

«Ա՛խ, զաւակներս, զաւակներս: Կ'ըսէր ձեռքերը իրար կցելով, անոնք այլ եւս գոյութիւն չունին անշուշտ: աւելի լաւ է որ մեռնիմ ես ալ: Շնորհակալ եմ ձեռնէ, իմ ազնիւ տէրերս, գործողութիւնն ալ ընեն չպիտի առողջանամ, ապահով եմ անոր: Շնորհակալ եմ ձեր բարութենէն, սիրելի տէրերս, անօգուտ է որ բը-

ժիշկը գայ վաղը, ես մեռնիլ կ'ուզեմ: Իմ ճակատագիրս է որ հոս մեռնիմ:»

Ու տէրերը կը ջանային տակաւին մխիթարել զինքը, անոր ձեռքերը կը բռնէին ու կ'աղաչէին որ թողու գործողութիւնը ընել: Այն ատեն հիւանդը աչքերը կը գոցէր, սպառած, խնալով թմրութեան մը մէջ որ կը նմանէր մահուան:

Մէքինէզ ընտանիքը կրցածին չափ կը խնամէր այս սքանչելի մայրը, որ, իր ընտանիքին փրկութեանը համար, եկած էր մեռնիլ իր հայրենիքէն երեք հազար փարսախ հեռու, մեռնի՛լ այնքան չարչարուելէ ետքը, հէ՛գ կինը, այնքան ազնիւ, այնքան սրբկեշտ եւ ա՛յնքան դժբախտ:

Հետեւեալ օրը, առաւօտուն կանուխ, ծրարը կռնակը առած, կորաքամակ եւ կաղալով, բայց արիութեամբ լի, Մառքոն կը մտնէր Թիւքիւման, Սրժանթիւնի ամէնէն աւելի նորաչէն եւ ամէնէն աւելի ծաղկած քաղաքներէն մէկը:

Փողոցներուն մէջ քալած ատեն, Մառքօ բռնուեցաւ սաստիկ յուզումով մը որ զինքը պաշարած էր Պուէնոս Այրէսի մէջ ալ: Ամէն տուները կը նայէր, մայրը տեսնելու յոյսով: Կ'ուզէր հարցնել ամէնուն ու չէր համարձակեր մէկը կեցնել: Անցնողները ետեւին կը դառնային նայելու համար ցնցոտիներ հագած ու փոշիով ծածկուած այս խեղճ տղուն, որ կ'երեւար թէ շատ հեռու էն կու գար: Իսկ ինք բազմութեան մէջ համակրելի կիրպարանքով մէկը կը փնտէր, որուն ուղիք իր հարցումը: Մառքոյի նայուածքը ինկաւ իսանութի մը նշանակին վրայ ուր գրուած էր իտալա կան անուն մը: Կրպակին մէջ կը գտնուէր ակնոցաւոր մարդ մը եւ երկու կին: Յամբարար դէպի դուռը

յառաջացաւ ու որոշումը տալով, հարցուց .

« Կրնա՞ք ինձի ըսել, պարոն, ուր կը բնակի Մէքլինէզ ընտանիքը :

— Մէքլինէզ ճարտարագէտին ընտանիքը, հարցուց խանութպանը :

— Այո, ճարտարագէտ Մէքլինէզին, պատասխանեց տղան դողդոջ ձայնով մը :

— Մէքլինէզ ընտանիքը, ըսաւ խանութպանը, Թիւքիւման չի բնակիր : »

Յուսահատութեան ճիշ մը, այնքան սուր որքան մահուան մտ կըող վիրաւորի մը ճիշը, պատասխանեց այս խօսքին : Խանութպանն ու կիները ստքի ելան, դրացիները վազեցին :

« Ի՞նչ է, ի՞նչ ունիս, տղաս, ըսաւ խանութպանը Մառքօն իրեն քաշելով ու նստեցնելով : Յուսահատելու բան չկայ, տէ՛ր Աստուած : Մէքլինէզները հոս չեն, բայց շրջականերն են, Թիւքիւմանէն քանի մը ժամ անդին :

— Ո՛ւր, ո՛ւր, գոչեց Մարքօն . նորէն աշխարհ եկածի պէս, ստքի ելլելով :

— Հոսկէ տասըհինգ մղոն անդին, շարունակեց մարդը, Սալաաիլլայի եզերքը, ուր շաքարի գործարան մը կը շինուի այս միջոցին . . . : Հոն խուճի մը տուններ կան, անոնց մէջն է Մէքլինէզ ճարտարագէտին տունը . ամէն ոք կրնայ քեզի ցոյց տալ զայն, ու պիտի հասնիս հոն քանի մը ժամէն :

— Ես հոն գացի մէկ քանի շաբաթ առաջ . » ըսաւ երիտասարդ մը, որ Մառքոյին պոռալու ձայնէն վազեր եկեր էր : »

Մառքօն անոր նայեցաւ իր խոշոր բացած աչքերովը ու հարցուց անոր դեմքերով .

« Տեսա՞ք հոն Պ. Մէքլինէզին սպասուհին, խաւուհին :

— Ճենովացի՞ն, այո՛, տեսայ : »

Մառքօ ջղաճգական հեծկլտուքներ փրցուց, լացին ու խնդուքին մէջ տեղ բան մը :

Յետոյ աւիւնով մը, ուժգին որոշումով մը .

« Ո՛ւրկէ կ'երթուի, չո՛ւտ, ճամբա՛ն, խսկոյն կ'երթամ, ճամբա՛ն ցուցուցէք ինձի : »

— Բայց օրուան մը ճամբայ պիտի քալես, կ'ըսեն իրեն չորս կողմէն, յոգնած ես, պզտիկ, պէտք է հանգչիս, վաղը ճամբայ կ'ելլես . . . :

— Անկարե՛լի է, անկարե՛լի է, պատասխանեց տղեկը, ճամբան ըսէ՛ք ինձի, վայրկեան մ'իսկ չեմ սպասեր, ճամբան մեռնի՛լս գիտնամ : »

Անոր անդրդուելի որոշումը տեսնելով, այլ եւս վար չդրին զինքը :

« Ճամբուն ուշադրութիւն ըրէ անտառին մէջ :

— Բարի ճամբորդութիւն պզտիկ Իտալացի : »

Մարդ մը իրեն ընկերացաւ մինչեւ քաղաքէն դուրս՝ ճամբան ցոյց տուաւ իրեն, քանի մը խրատ տուաւ, եւ անոր ետեւէն նայեցաւ երթալը : Մէկ քանի վայրկեան ետքը, տղան կաշնիկաղը, պայուսակը կռնակը առած, աներեւութացաւ խիտ ծառերուն ետին որ ճամբան կ'եզերէին :

. . . . .

Այն գիշերը անտանելի եղաւ խեղճ հիւանդ կնոջ համար : Սոսկալի ցաւեր կը զգար, որոնք զարհուրելի ճիչեր հանել կու տային իրեն ու զառանցանքի մէջ կ'լյնար :

Հոն գտնուող կիները խելքերնին կը կորսնցնէին : Իր տիրուհին կու գար երբեմն, բուրբովին շփոթած :

Սկսան վախնալ որ, եթէ ինք համոզուէր իսկ գործողութիւնը ընել տալու, բժիշկը որ հետեւեալ առտուն պիտի գար, չպիտի հասնէր: Ձառանցանքը դադարած վայրկեաններուն, կը հասկցուէր թէ իր ամէնէն սուկալի ցաւը մարմնէն աւելի մտածութենէն կու գար, որ միշտ հեռաւոր ընտանիքին ձգտած էր:

Սպառած, հիւժած դէմքը անճանանչ եղած, խեղճ կինը մազերը կը փետտէր յուսահատաբար գոչելով:

« Ա. փսո՛ս, մեռնիլ այնքան հեռու, մեռնիլ առանց զիրենք տեսնելու. իմ խեղճ զաւակներս, ու իմ պղզտիկ Մառքօս որ այնքան դեռատի է տակալին, այնքան անձնու էր է ու այնքան աղապատալից: Ձէք գիտեր, Տիկին, ի՞նչ աղնիւ տղայ է: Մեկնած օրս չէի կրնար ինձմէ հեռացնել զինքը որ վիզս պլլուած էր. իր հեծկտուքները սիրտ կը խշխշացնէին, կարծես թէ կը հասկնար որ այլ եւս չպիտի տեսնէր մայրը. հէգ Մառքօ, խեղճ զաւակս: Ո՛հ, եթէ այն ատեն մեռնէի, երբ իրենց մնաք բարո՛վ կ'ըսէի. առանց մօրը, հէգ տղայ, ի՞նչ պիտի ընէ, պիտի երթայ մուրայ, ինք, Մառքօս, ձե՛ռք երկնցնէ: Ո՛հ, չէ, չեմ ուզեր մեռնիլ: Բժիշկը, կանչեցէ՛ք, թո՛ղ գայ, թո՛ղ յօշոտէ, բայց թո՛ղ ազատէ կեանքս: Ես առողջանալ կ'ուզեմ, ապրիլ կ'ուզեմ, վաղը երթա՛լ կ'ուզեմ. օգնութիւն, օգնութիւն: »

« Ձինքը խնամող կիները ձեռքերը կը բռնէին եւ յոյս կու տային իրեն: Այն ատեն խեղճ կինը մահացու սրտաբեկութեան մէջ կ'իյնար, կու լար, ձեռքերը գորշ մազերուն մէջ, տղու մը պէս հեծեծելով:

« Ո՛հ, ձէնովա, ծննդավայրս, տ'ունս. բոլոր այն ծովը... ո՛հ, Մառքօս, իմ հէգ Մառքօս, ո՛վ գի-

տէ ո՛ւր է այս ժամուս, իմ խեղճ տղաս: »

Կէս գիշեր էր, ու իր հէգ Մառքօն շատ մը ժամեր փոսի մը եղերքը անցընելէ յետոյ, կը քալէր անհուն անտառի մը մէջէն, հսկայ ծառերէ, անհուն կոճղերէ ձեւացած, նման մայր և կեղեցիի սիւներու, որ կը շաղապատէին իրենց գագաթները լուսնի լուսով արծաթափայլած: Տարտամօրէն, կէս-մութին մէջ, Մառքօն կը տեսնէր ամէն դիրքով կոճղեր, շիտակ, հակած, խաչածեւ, տարօրինակ ու սպառնական դիրքերով: Քանի մը ծառեր տապալած, ինկած աշտարակներու պէս, կը ծածկուէին առատ ու չփոթ բուսականութեամբ մը: ուրիշներ, սեղմուած խմբովին՝ նետերու խուրձի մը պէս որուն ծայրերը երկինք պիտի դպչէին, ուղիղ եւ հոյակապ կը բարձրանային. վերջապէս, ամէն դի, վեհաշուք մեծութիւն մը, բնական անկարգութիւն մը հրաշալի գեղեցկութեան, ամէնէն մեծաշուք տեսարանը զոր երկնային բուսականութիւնը կրնայ ընծայել աչքի:

Երբեմն սաղութիւն կու գար Մառքօյին վրայ, բայց իսկոյն սիրտը կը զօրանար դէպի մայրը սրանալով, ու ժասպառ ոտքերը արիւնոտած, միայնակ այն ահարկու անտառին մէջ, ուր հեռուէն հեռու կը տեսնուէր մարդկային փոքրիկ բնակարաններ: Այս մեծ ծառերուն տակ, մրջիւններու բոյներու կը նմանէին անոնք:

Մառքօն խոնջէնքը չէր իմանար, մինակ էր ու չէր վախնար: Անտառին մեծութիւնը սիրտը կը բանար. մօրը մօտակայութիւնը ուժ կու տար իրեն ու չափահասի մը ապահովութիւնը: Ովկիանոսը անցնելուն, յուսախաբութիւններուն, կրած եւ յաղթած տառապանքներուն, զգացած յոգնութիւններուն յիշատակ-

ները ճակատը բարձր բռնել կու տային իրեն : Իր ձե-  
նովակոն արիւնը , ազնիւ եւ զօրաւոր , կ'եռար սրտին  
մէջ սէգ եւ յանդուգն կոհակի մը նման : Ու նոր  
բան մը եկաւ վրան . մինչեւ այն ատեն իր մօրը մուշկ  
պատկերը միայն միտքը բերած էր , երկու տարուան  
բացակայութենէն քիչ մը եղծուած պատկեր մը . հիմա  
այս պատկերը սրայծառ ու սրոշ կ'երեւար . յստակ կեր-  
պով կը տեսնէր անոր դէմքը , ինչպէս չէր տեսած եր-  
կար ատենէ ի վեր . կը տեսնէր վերստին , կը վերյիշէր  
անոր աչքերուն , անոր շրթունքներուն ամէնէն դոյզն  
չարժումները , անոր ձեւերը եւ կեցուածքը :

Այս յիշատակներէն մղուած , Մառքօն փութա-  
ցուց քայլերը , նոր ազապատանք մը կ'աճէր սրտին մէջ ,  
երեսն ի վար անուշիկ ու հանդարտիկ արցունքներ հո-  
սեցնելով , եւ , խաւարին միջեւէն բաւեր կ'արտասա-  
նէր որոնք քիչ ատենէն իր սիրտկան մօրը ականջն ի-  
վար պիտի փսփսար :

« Ահա եկայ . . . մա՛յր սիրտկան , եկայ ահա . այլ  
եւս չպիտի թողումքեզ , միասին պիտի դառնանք մեր  
երկիրը . ես միշտ քովդ պիտի ըլլամ նաւուն մէջ , ու  
ոչ ոք զիս պիտի բաժնէ քեանէ երբեք , երբե՛ք . . . »

Այսպէս երազելով , Մառքօն չէր նշմարեր թէ ,  
հսկայ ծառերուն գաղաթներուն վրայ , լուսինին ար-  
ծաթափայլ լոյսերը կը մարէին տեղի տալու համար նօ-  
րածագ այգուն փափուկ ճերմակութեան . . . :

Փամը ութին , նոյն այն առաւօտը , թիւքիւմանի  
բժիշկը , դեռատի Արժանթիւնցի մը , արդէն հիւանդին  
անկո ընին քովն էր , իր օգնականովը , վերջին անգամ  
մըն ալ փորձելով համոզել հիւանդը որ գործողութիւնը  
ընել տայ . Բայց թէ՛ բժիշկին եւ թէ՛ հիւանդին տէրե-  
րուն թախանձանքները անօգուտ կ'ըլլային . հէգ կինը ,  
ինքզինքը խիստ տկար զգալով , հաւատք չուներ գոր-

ծողութեանը յաջողելուն վրայ . ինք ապահով էր թէ  
պիտի մեռնէր վիրաբոյժին ձեռքին տակ , զինքը սպան-  
նող տառապանքներէն աւելի սոսկալի տառապանքներ  
կրելէ յետոյ :

Բժիշկը կը կրկնէր իրեն . « Գործողութեան յաջո-  
ղութիւնը ապահով է , ձեր կեանքը պիտի ազատեմ ե-  
թէ քիչ մը արիութիւն ունենաք . եթէ մերժէք , մա-  
հերնիդ մտաւուտ է . . . Անօգուտ խօսքեր էին : « Ո՛չ ,  
կը պատասխանէր հիւանդը խեղդուած ձայնով մը , տա-  
կաւին բաւական արիութիւն ունիմ մեռնելու համար ,  
բայց ո՛չ տառապելու համար անօգուտ կերպով . Շնոր-  
հակալ եմ , տօքթէօս , թողէ՛ք որ հանդիստ մեռնիմ . . . »

Բժիշկը վճատած այլ եւս չպնդեց : Այն ատեն  
սպասուհի կինը դէպի իր տիրուհին դարձաւ ու իր  
վերջին յանձնարարութիւնները բրաւ անոր :

« Իմ ազնիւ տիրուհիս , բաւ ճիգով մը , ունեցած  
բաներս եւ խնայած ստակներս պիտի զրկէք ընտանի-  
քիս , իտալական հիւպատոսին միջոցովը . . . : Կը յու-  
սամ թէ բոլոր իմիններս ողջ են : Սրտիս մէջ կը զգամ  
այս յոյսը , շնորհ բրէք իրենց գրելու . . . թէ միշտ ի-  
րենց վրայ մտածեցի . . . իրենց համար աշխատեցայ . . .  
զաւակներուս համար . . . եւ թէ միակ վիշտս զիրենք  
վերստին չտեսնելս է . . . թէ արիութեամբ ու համա-  
կերպելով մեռայ . . . զիրենք օրհնելով . . . եւ թէ կը  
յանձնարարեմ էրկանս , անդրանիկ որդւոյս . . . կրտսե-  
րը , պզտիկ Մառքօս որուն վրայ մտածեցի մինչեւ վեր-  
ջին վայրկեանս . . . »

Յետոյ յանկարծ բորբոքելով , գոչեց ձեռքերը ի-  
րար կցելով .

« Ո՛վ Մառքօ , զաւակս , հոգիս . . . »

Բայց երբ արտասուալից աչքերը անդին դարձուց

տեսաւ որ տիրուհին այլ եւս հոն չէր: Շտապով եկեր կանչեր էին զինքը: Աչքովը պարոն Մէքինէզը փընտռեց, ան ալ աներեւութացեր էր: Երկու հիւանդապահ կիները եւ օգնական-վիրարոյժը միայն կը մնային:

Քովի սենեակին մէջ փութկոտ քայլերու աղմուկ մը կը լսուէր, արագ ու ցած ձայնի մը մոնունջ մը, զրուսուած բացազանչութիւններ: Հիւանդը քողամած աչքերը տնկից դրան վրայ, սպասելով:

Քանի մը վայրկեան ետքը, տեսաւ բժիշկը որ ներս կը մտնէր. տարօրինակ արտայայտութիւն մը ունէր ան. յետոյ ներս մտան պարոն Մէքինէզը եւ տիկինը, անոնք ալ, խռոված դէմքով: Երեքն ալ հիւանդին կը նայէին եզական արտայայտութեամբ մը, ցած ձայնով քանի մը բառ փոխանակելով իրարու: Հիւանդին թուեցաւ թէ տօքթէօնը կըսէր իր տիրուհւոյն. «Աւելի աղէկ է անմիջապէս»: Չէր հասկնար:

«Ժողէֆա, ըսաւ տիկին Մէքինէզը դողդաղացող ձայնով մը, բարի լուր մը ունի՞մ՝ ձեզի տալու: Պատրաստուեցէ՛ք ազէկ լուր մը լսելու:»

Հիւանդը ուշադրութեամբ նայեցաւ անոր:

«Լուր մը, շարունակեց տիկինը միշտ աւելի յուզուած, որ ձեզի մեծ ուրախութիւն պիտի պատճառէ:» Սպասուհիին աչքերը բացուեցան:

«Պատրաստուեցէ՛ք, շարունակեց տիկինը, տեսնելու անձ մը... զոր շատ կը սիրէք:»

Ժողէֆան գլուխը վեր առաւ. զօրաւոր շարժումով մը ու սկսաւ նայիլ փոխն ի փոխը դուռը եւ իր տիրուհիին, հրացայտ աչքերով:

«Անձ մը, յարեց տիկինը, որ հոս եկած է, հիմա, անակնկալ կերպով մը...»

— Ո՞վ է.՝ հարցուց կինը բեկ բեկ ձայնով մը,

զարհուրած մէկու մը ձայնին նման: Վայրկեան մը վերջը, խոշոր ճիչ մը արձակեց. անկողնին վրայ նստած, անշարժ կը մնար, աչքերը չափէ դուրս բացած, ձեռքերը քունքերուն վրայ դրած իբրեւ գերմարդկային երեւոյթի մը առջեւ:

Մառքօն՝ պատառատուն զգեստներով եւ փոշեւից՝ դրան սեմին առջեւ կայնած էր: Տօքթէօնը անոր թեւէն բռնեց:

Կինը պուսաց երեք անգամ. «Ա՛ն է, ա՛ն է:»

Մառքօն սլացաւ, ու հիւանդը երկնցուց անոր իր վտիտ բազուկները, զայն սեղմելով իր կուրծքին վրայ վագրի մը կատաղութեամբ, ուժգին խնդուքով մը պայթելով, ընդհատուած խոր հեծկտուքներով, առանց արցունքի, որոնք զինքը շնչասպառ նետեցին նորէն բարձին վրայ: Բայց իսկոյն վրայ եկաւ եւ, ուրախութենէն խենթեցած, համարոյրներով ծածկելով Մառքոյին գլուխը, ըսաւ.

«Ի՛նչպէս հոս եկար: Ինչո՞ւ: Աս ո՛րչափ մեծցեր ես, ո՞վ քեզ հոս բերաւ, մինա՞յ եկար: Հիւանդ չե՞ս, Մառքօ, դո՞ւն ես: Տեսիլ մը չէ՞, խօսէ՛ հետս...»

Յետոյ յանկարծ ձայնը փոխելով.

«Չէ, լռէ՛, սպասէ՛:»

Ու դառնալով դէպի բժիշկը, փութով.

«Շուտ, տօքթէօն, առողջանալ կ'ուզեմ: Պատրաստ եմ, վայրկեան մի՛ կորսնցնէք: Մառքօն դուրս հանեցէք որ չլսէ: Սիրական Մառքօս, բան մը չէ, գնա՛, վերջը կը պատմես ինձի ամէն բան: Համարոյր մը եւս... գնա՛... Ահաւասիկ եմ, տօքթէօն:»

Մառքօն դուրս հանեցին: Պարոնն ու տիկինը անոր հետ դուրս ելան, վիրարոյժն ու անոր օգնականը դուռը գոցեցին:

Պարոն Մէքրինէզը փորձեց Մառքօն հիւռ սենեակ մը տանիլ, բայց անկարելի եղաւ : Կարծես տախտակամածին փակած էր ան :

« Ի՞նչ կայ, հարցուց տղան, ի՞նչ ունի մայրս, ի՞նչ պիտի ընեն իրեն : »

Ճարտարագէտը կը ջանար մեղմութեամբ զայն անդին տանիլ :

« Կ'ըսեմ քեզի, եկո՛ւր . . . մայրդ հիւանդ է, պէտք է իրեն բժշկական պզտիկ գործողութիւն մը ընել, պիտի բացատրեմ ասոնք քեզի, հետո եկո՛ւր : »

— Ո՛չ, հոս կենալ կ'ուզեմ, ըսաւ տղան, հո՛ս բացատրեցէք : »

Ճարտարագէտը կը ջանար զայն վստահեցնել անդին տանելով, ու տղան սկսաւ վախնալ ու դողալ :

Յանկարծ սուր ճիչ մը, մահու աստիճան վիրաւորի աղաղակին նման, գոռաց տանը մէջ :

« Մայրս մեռա՛ւ : »

Բժիշկը սեմին վրայ երեւցաւ ու ըսաւ .

« Մայրդ ազատեցաւ : »

Տղան անոր նայեցաւ վայրկեան մը, յետոյ անոր ոտքերը ինկաւ հեծկլտալով :

« Շնորհակալ եմ, տօքթէօն շնորհակա՛լ եմ : »

Բայց տօքթէօնը շարժումով մը զայն վերցուց ըսելով :

« Ոտքի ելի՛ր . հէգ դիւցազն տղայ, դո՛ւն ազատեցիր մայրդ : »

# Ա Մ Ա Ռ

## Չորեքաբքի 24

Ճենովացի Մառքօն վերջնութեւ պզտիկ դիւցազունն է որուն հետ կը ծանօթանանք այս տարի : Մէկ հատ միայն կը մնայ յունիսի ամսուն համար : Երկու ամսօրեայ քննութիւն կայ միայն, քսանըվեց օր դաս, վեց հինգշաբթի ու հինգ կիրակի : Տարւոյն վերջը զգալի է, պարտէզին ծառերը, տերեւախիտ ու ծաղկած, աղուոր հովանի մը կ'ընեն մարմնամարզի կազմածքին վրայ : Դպրոցականները ամառուան հագուստ հագած են : Աշակերտներուն մազերը որ ուսերնուն վրայ ձգուած էին անհետացած են : Ամէն գլուխներուն մազերը կտրուած են :

Ամէնուն սրունքն ու վիզը մերկ են, կը տեսնուին յարդէ գլխարկներ ամէն ձեւ, ամէն գոյն շապիկներ : Փոքրագոյնները վզնոցի կամ գօտի տեղ կապոյտ, կարմիր, դեղին ժպաւէններ կապած են . մայրերու քը մահաճոյքներ՝ որ, հարուստէն մինչեւ ամէնէն աղքատը, ուզած են զանոնք զարդարել : Շատերը կու գան դպրոց բաց գլուխ, իբրեւ թէ տունէն փախած ըլլալին : Ոմանք մարմնամարզի ձերմակ հագուստը հագած են : Օր. Տէլքաթիին դասարանէն աշակերտ մը կայ որ ոտքէն գլուխը կարմիր հագած է, խաշած խեցեգետնի պէս : Ոմանք ալ նաւաստիի զգեստներ հագած են : Բայց ամէնէն շքեղը « Պզտիկ որմնագիրն » է, որ յարդէ ահագին գլխարկ մը կը դնէ, որուն տակ կը նմանի լուսամտի տակ ծածկուած մոմի՛ մը : Գօռէթին հանեց իր կատուի մորթէ գլխարկը, ու անոր տեղ դրաւ գորշ մետաքսէ հին մորթակ մը ճամբոր

դուժեան, Վօթինին տեսակ մը զգեստ ունի սկով-տիական, Գուսին իր մերկ կուրծքը կը ցուցնէ, Բռէքօսին դարբինի կապոյտ զգեստի մը տակ կ'աներեւութանայ: Իսկ Կառօֆիւն: Հիմա որ թողած պէտք է ըլլայ մեծ վերարկուն որ իր ապրանքը կը ծածկէր, իր ուռեցած գրպանները բացը կը մնան, դէզ մը առարկաներ ցուցնելով ուրկէ դուրս կ'ելլեն վիճակահանութեան ցուցակներ:

Աշակերտները դպրոց կու գան առաւօտները ծաղկեփունջերով իրենց վարժուհիներուն համար բերած: Վարժուհիներն ալ բաց գոյն հագուստ հագած են, բացի «մայրապետ»ն որ միշտ սեւերով է: Կարմիր փետուրով վարժուհին նոյն գլխարկը ունի եւ վարդագոյն ժապաւէնէ կապ մը վիզը, քիչ մը ճմրտկուած եւ աղտոտած իր պզտիկ դպրոցականներուն գգուանքներէն, որոնք կը խնդացնեն զինքը... եւ կը վազցնեն:

Կեռասի, թիթեռնիկներու, բացօթեայ երաժրչաութեան եւ դաշտային պտոյտներու եղանակն է: Չորրորդ դասարանէն շատ աշակերտներ խոյս կու տան կ'երթան գետին մէջ լողանք մը ընելու: Ամէնքն ալ արձակուրդին կը տենջան: Ամէն օր, դպրոցէն դուրս կ'ելլենք աւելի անհամբեր եւ աւելի քսն նախորդ օրը: Ինչ որ ինձի վիշտ կը պատճառէ, Կառօնը սգաւոր ու իմ հէգ վարժուհիս միշտ աւելի տկար, աւելի գունատ տեսնելու է, եւ միշտ աւելի ուժով հազալը լսելու է: Հիմա բոլորովին կորաքամակ կը քալէ. ու այն ինչ տխուր բարեւ է որ կու տայ ինձի...:

### Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ուրբաթ 26

Ահա կը սկսիս հասկնալ վարժարանին բանաստեղծութիւնը, Հանուի: Բայց հիմա, դպրոցին միայն ներքինը կը տեսնես: Ան շատ աւելի չքեղ ու աւելի բանաստեղծական պիտի երեւայ քեզի երսուն տարիէն, երբ քու զաւակներդ բերես հոն, ու զայն դրսէն տեսնես, ինչպէս ես կը տեսնեմ:

Արձակումի վայրկեանին սպասելով՝ կը պտըտիմ ամայի փողոցներուն մէջ որ կը շրջապատեն դպրոցը, ահնարկ մը կը նետեմ գետնայարկի պատուհաններուն, որոնք գոցուած են փեղկերով միայն: Մէկ պատուհանէն կը լսեմ ձայնը վարժուհիի մը որ կը պոռայ: «Ո՛հ, աս ի՞նչ ծուռ ու մուռ ք է, աս սասնկ չըլլար, տղաս: Մայրիկդ ի՞նչ պիտի ըսէ:»

Քովի լուսամուտէն ուսուցչի մը հաստ ձայնը որ ծանր ծանր կ'ըսէ. «Եիսուն կակզուն կերպաս առի... կակզունը չորս ֆրակն ու կեսէն, ու ծախեցի...»

Աւելի հեռուն ուրիշ վարժուհի մը բարձր ձայնով կը կարգայ. «Այն ատեն Բիեռ Միխան, պատրոյզը վառած...»

Քովի դասարանէն մանկական ձայներու շշուկ մը կ'ելլէ, որ ապացոյց է թէ ուսուցիչը դուրս ելած է պահ մը: Քանի մը քայլ կ'առնեմ ու կը լսեմ տղայ մը որ կու լայ: Ուսուցչուհիին ձայնը կը յանդիմանէ կամ կը մխիթարէ զայն: Ուրիշ պատուհաններէ կը լսուին ոտանաւորներու հատուածներ, երեւելի ու բարի մարդոց անուններ, առաքինութեան վրայ առածներ...:



Յետոյ կը յաջորդեն լուսթեան պահեր: Կարծես թէ այն ատեն դպրոցը պարապ է. անկարելի կը թուի որ պարունակէ եօթը հարիւր տղայ:

Յանկարծ կը լսուի, լուսթիւնը խզող, խնդուքի քրքիչներ, չէնչող վարժապետի մը կատակարանութեանն առաջ եկած . . . :

Անցորդները կանգ կ'առնեն մտիկ ընելու համար. ու ամէնքն ալ համակրական ակնարկ մը կը նետեն այդ չէնքին որ կը պարունակէ այնքան թարմ գլուխներ:

Մէյ մըն ալ գիրքերու եւ տետրակներու կամ ոտքի քայլերու խուլ աղմուկ մը կը լսուի. բզզիւն մը կը տարածուի վարէն վեր, անակնկալ լուրի մը աւետումին պէս: Գոնապանն է որ կ'երթայ դասարանէ դասարան նուիրական բառերը կրկնելով. դասը վերջացաւ:

Այս ձայնէն, խուժք մը կ'իններ, մարդիկ, դեռատի աղջիկներ ու երիտասարդներ կը խռնուին դուռներուն առջեւ, սպասելով իրենց զաւակները, եղբայրները, թոռները, մինչդեռ դասարաններէն դուրս կ'ելլեն փոքրագոյնները, որոնք կու գան առնել իրենց վերարկուները եւ զլսարկները: Վերջապէս բոլոր դպրոցականները դուրս կ'ելլեն կարգով, ոտքերնին զարնելով. ու ծնողքները շատ մը հարցումներ կ'ուզղեն անոնց:

«Դասդ գիտցար: — Բա՛նի պարտականութիւն տուին քեզի: — Ի՞նչ ունիս ընելու, սորվելու վաղուան: — Ամսօրեայ քննութիւնը ե՞րբ պիտի ըլլայ:»

Խեղճ մայրերը որոնք կարդալ չեն գիտեր, անոնք ալ կը բանան տետրակները, թուաբանութեան խնդիրները կը նային ու առած թիւերնին կը հարցնեն.

«Ութը թի՞ւ միայն առիր: — Տասը, գովեստո՞վ

մէկտեղ: — Ինը դասի՞դ համար:»

Եւ կը սրանեղին կամ կը հրճուին, դասատուներուն կը հարցնեն, ծրագրի ու քննութիւններու վրայ կը խօսին . . . :

Ի՞նչ աղու որ բան է դաստիարակութիւնը, ի՞նչ ազնիւ բան է, եւ ի՞նչ անհուն խոստում է աշխարհի համար:

ՀԱՅՐԳ

Խ Ո Ւ Լ - Չ Ա Մ Ր Ա Ղ Ջ Ի Կ Ը

Կիրակի 28

Մայիս ամիսը չէր կրնար լաւագոյն կերպով վերջանալ քան այս առաւօտեան այցելութեամբը: Գուռը կը զարնուի: Կը լսեմ հօրս ձայնը որ կը գոչէ զարմացման շեշտով մը. — «Աս ի՞նչ է, դ՛ճք էք, ժօռժ:»

Ժօռժը մեր Բիէլիի պարտիզպանն է, որուն ընտանիքը հիմա Գօնտովա է:

Ճենովոյէն կու գար ան, ուր հասեր էր շոգենաւով նախորդ օրը, Յունաստանէն գալով, երեք տարի հոն երկաթուղիներու մէջ աշխատելէ յետոյ: Ժօռժ խոշոր ծրար մը ունէր թեւին տակ, Բիչ մը ծերացած գտանք զինքը, բայց միշտ զուարթ եւ առոյգ դէմքով:

Հայրս կ'ուզէր ներս հրամցնել զայն, բայց ան մերժեց ու հարցուց իսկոյն, անձկութեամբ մը.

«Ի՞նչպէս է ընտանիքս, ի՞նչպէս է պզտիկ Լուիճիաս:»

— Աղէկ են. դեռ նոր տեսայ զայն . . . պատասխանեց մայրիկս:

ժօռժ սիրտիանքի հառաչանք մը արձակեց :

« Այն է որ , կը տեսնէք , քաջութիւն չունէի համր-  
խուլերու վարժարանը երթալ առանց իմ աղջիկէս լուր  
առնելու : Ներեցէք որ հոս թողում ծրարս ու երթամ  
Լուիճիաս փնտռեմ : Երեք տարի է որ չեմ տեսած ,  
խեղճ աղջիկս : Երեք տարի է որ իմիններէս ո՛չ զոք  
տեսած եմ :

— Ժօրժին հետ գնա՛ , ըսաւ ինծի հայրս :

— Բան մը եւս ունիմ ձեզի ըսելու , ներեցէ՛ք ին-  
ծի , » ըսաւ պարտիզպանը սանդուղին գլուխը կենալով :  
Հայրս ընդմիջեց զայն :

« Հապա գործերը՞ :

— Գործերը աղէկ են , քանի մը առ կը բերեմ  
հետս : Բայց կ'ուզէի ձեզի հարցնել պարոն , թէ իմ  
հէգ համր-խուլ աղջիկս յառաջգիմութիւն ըրա՞ւ , Զին-  
քը թողած ատենս պզտիկ կենդանիի մը վիճակին մէջն  
էր , առանց որ եւ է բանի վրայ ծանօթութիւն ու-  
նենալու : Ես այս համր-խուլերու հաստատութիւններ-  
րուն վրայ շատ հաւատք չունիմ : Նշաններ ընել սոր-  
վեցա՞ւ : Կինս կը գրէր ինծի . « Լուիճիան խօսիլ կը  
սորվի , յառաջգիմութիւններ կ'ընէ : » Բայց ես ինծի  
կ'ըսէի . « Ատիկա ինծի օգուտ մը չունի որ նշաննե-  
րով խօսիլ սորվի , քանի որ ես չեմ հասկնար այդ  
նշանները : Ա՛տ՝ համր-խուլերու միջեւ՝ օգտակար կըր-  
նայ ըլլալ : » Ի՞նչպէս կը գտնէք Լուիճիաս :

Հայրս ժպտեցաւ ու պատասխանեց .

« Բան մը չեմ ըսեր ձեզի : Դուք ինքնին պիտի  
տեսնէք : Գացէ՛ք , գացէ՛ք , վայրկեան մի՛ կորսնցնէք  
այլ եւս : »

Դուրս ելանք : Համր խուլերու հաստատութիւնը  
մօտ է : Ծամբան գացած ատեննիս , պարտիզպանը կը

խօսէր հետս , տրտում տխուր .

Ա՛յս , խեղճ Լուիճիաս , ասանկ դժբախտութեամբ  
մը աշխարհ գալ , եւ ըսել թէ երբեք լսած չե՛մ անոր  
նայրիկ կանչելը , եւ թէ ան ալ երբեք լսած չէ , իմ  
աղջիկս անունը տալ իրեն , քանի որ ո՛չ երբեք ար-  
տասանած ու ո՛չ երբեք լսած է բառ մը : Բարեբախ-  
տութիւն մըն է որ բարեբար անձ մը մեզի ստաջարկած  
է զայն վարժարան դնել . . . . Պէտք եղաւ որ սպա-  
սէինք ութը տարին մտնելը . . . . Երեք տարի կ'ըլլայ  
որ հոն է , քիչ ատենէն տասնըմէկ տարու պիտի ըլլայ :  
Մեծցած է արդեօք , ըսէ՛ք ինծի քիչ մը , պարոն Հան-  
ուի , ուրախ է :

— Պիտի տեսնէք , պիտի տեսնէք , ըսի իրեն քայ-  
լերս փութացնելով :

— Բայց ո՛ւր է վարժարանը : Կինս տարաւ Լուի-  
ճիաս վարժարան , իմ տունէն մեկնելէս յետոյ . ես չեմ  
գիտեր ո՛ւր է . . . . »

Մինչդեռ կը խօսէր այսպէս , հասանք վարժարան ,  
ու մտանք խօսարանին մէջ : Պահապան մը մեզ դիմա-  
ւորեց :

« Լուիճիա Վօճճիին հայրն եմ ես , ըսաւ պարտիզ-  
պանը , աղջիկս տեսնել կ'ուզեմ , շուտ , շո՛ւտ :

Տղաքը դրօսանք կ'ընեն , պատասխանեց պահա-  
պանը , վարժուհին ըսեմ : »

Ու դուրս ելաւ :

Պարտիզպանը չէր կրնար այլ եւս ո՛չ խօսիլ ո՛չ  
հանդարտ կենալ , պատէն կտխուած պատկերներուն  
կը նայէր , առանց զանոնք տեսնելու :

Դուռը բացուեցաւ : Սեւեր հագած վարժուհի մը  
ներս մտաւ , պզտիկ աղջկան մը ձեռքէն բռնած :

Հայր ու աղջիկ իրարու նայեցան պահ մը , յետոյ

մէկզմէկու բազուկներու մէջ նետուեցան, ճիչ մը արձակելով:

Պատիկ աղջիկը հագած էր ճերմակ ու կարմիր գըծաւոր շրջազգեստ մը ու գորշագոյն գոգնոց մը:

Ան ինէ բարձրահասակ է: Բազուկներովը հօրը վիզը փաթթուելով կու լար:

Պարտիզպանը հեռացաւ, սկսաւ աղջիկը գիտել զննել ոտքէն գլուխը, ակնոցը աչքը դրած, շնչասպառ իրրեւ թէ երկար ճամբայ մը բրած ըլլար ու գոչեց.

«Ո՛հ, որքա՛ն մեծցեր է, որչա՛փ գեղեցկացեր է: Ո՛հ, հէգ, սիրական Լուիճիաս, իմ խեղճ պատիկ համրս . . . : Դո՛ւք էք, տիկին, վարժուհին, Ըսէ՛ք աղջկանս որ մէկ քանի նշաններ ընէ. քիչ քիչ ես ալ կը սորվիմ այդ նշանները . . . ըսէ՛ք իրեն որ ինձի բան մը հասկցնէ . . . »

Վարժուհին ժպտեցաւ ու ցած ձայնով ըսաւ պըզտիկ աղջկան որ իրեն կը նայէր:

«Ո՛վ է այս պարոնը:»

Այն ատեն աղջիկը, տարօրինակ հաստ ձայնով մը, նման վայրենիի մը ձայնին որ պիտի խօսէր մեր լեզուն առաջին անգամ, բայց յստակ արտասանելով, ու ժպտելով հանդերձ, պատասխանեց.

«Հայրս է, տիկին:»

Պարտիզպանը հտ քաշուեցաւ, զարմացած, խենթի պէս պռաւով:

«Կը խօսի՛, կարելի՛ բան է, կարելի՛ բան է: Կը խօսի՛: Բայց կը խօսիս, աղջիկս, կը խօսիս, ըսէ՛ ինձի քիչ մը . . . »

Իրեն քաշեց զայն ու համբուրեց շատ մը անգամներ ճակատէն:

«Ուրեմն ձեւերով չէ՞ որ կը խօսին խուլ-համբերը,

տիկին, մատներով չէ՞: Ի՞նչ կը նշանակէ այս:

— Ոչ, պարոն Վօճի, պատասխանեց վարժուհին, ձեւերով չէ, ա՛ն հին դրութիւնն է: Հոս նո՛ր դրութեամբ կը սորվեցնենք, բերանացի դրութիւնը: Չէի՞ք գիտեր:

— Բա՞ն մը չէի գիտեր, պատասխանեց պարտիզպանը շիտթած: Երեք տարի կ'ընէ որ Խտալիայէն մեկնած եմ: Թերեւս գրեցի՛ն այս բանը, բայց ես չըմբռնեցի: Գլուխս հաստ է, իմին. ո՛վ աղջիկս, կը հասկընա՞ս զիս ուրեմն, կը լսե՞ս ձայնս, պատասխան տուր նայիմ, կը լսե՞ս, կը լսե՞ս ըսածս:

— Բայց ոչ, ազնիւ մարդ, ըսաւ վարժուհին, ձայնը չի լսեր, քանի որ խուլ է, բայց ըսածնիդ կը հասկընայ ձեր շրթունքներուն շարժումէն: Ան ո՛չ ձեր ըսածը կը լսէ, ոչ իր ըսածը. բառերը կ'արտասանէ. վասն զի մենք իրեն սորվեցուցած ենք գիրերը, հատիկ հատիկ, թէ ի՛նչ կերպով պիտի շարժէ շրթունքները ու լեզուն, եւ ի՛նչ ճիգ պիտի ընէ կուրծքին եւ կոկորդին օգնութեամբ ձայն մը հանելու:»

Պարտիզպանը չէր հասկնար ու բերանը բաց կը կենար: Հսածին չէր հաւտար տակաւին:

«Ըսէ՛ ինձի, Լուիճիա, ըսաւ աղջկանը, ականջն իվար խօսելով, գո՞հ ես որ հայրդ եկաւ:»

Պատասխանին սպասեց անհամբեր: Աղջիկը մտախոհ անոր նայեցաւ, բայց չպատասխանեց, հայրը շատ վրդոված էր:

Վարժուհին սկսաւ խնդալ:

«Ազնիւ մարդ, ըսաւ, Լուիճիան ձեզի չի պատասխաներ, վասն զի չտեսաւ ձեր շրթունքներուն շարժումը: Դուք անոր ականջին խօսեցաք: Կրկնեցէ՛ք իրեն ձեր հարցումը դէմքերնիդ իր երեսին դարձուցած:

Հայրը աղջկանը երեսին նայեցաւ ու կրկնեց .

« Գո՞հ ես որ հայրդ դարձաւ եկաւ , որ այլ եւս չերթայ . »

Ծաղկահաս աղջիկը որ ուշադրութեամբ հօրը շքրթունքներուն նայեր էր , յտակ մը պատասխանեց .

« Այո՛ , գո՞հ եմ որ եկար , որ այլ եւս մեզ չպիտի ձգես երթաւ . »

Պարտիզպանը դարձեալ համբուրեց զայն , յետոյ աւելի լաւ հասկնալու համար նորանշան բանը , անհասկնալի իրեն համար , շատ մը հարցումներ ըրաւ անոր .

« Մայրիկիդ անունը ի՞նչ է .

— Ան-թօ-նիա .

— Պզտիկ քրոջդ անունը ի՞նչ է .

— Ա-տե լա-ի տը .

— Ի՞նչի հաստատութիւն կը կոչուի այս հաստատութիւնը .

— Համր-խուլերու .

— Երկու անգամ տասը ի՞նչ կ'ընէ .

— Քսան . »

Մինչդեռ կը յուսայինք պարտիզպանը հրճուալից տեսնել , յանկարծ սկսաւ լալ , բայց ուրախութեան արցունքներ էին անոնք .

« Տեսնենք , ըսաւ անոր վարժուհին , որ թերեւս կը սխալէր անոր թափած արցունքներուն պատճառին վրայ , պէտք է հրճուիք եւ ոչ թէ լաք . ձեր աղջկին ալ կը լացնէք . . . »

Պարտիզպանը վարժուհիին ձեռքը առաւ համբուրեց ըսելով .

« Շնորհակալ եմ , հարիւր անգամ շնորհակալ եմ , հազար անգամ շնորհակալ եմ , տիկին , ներեցէ՛ք որ

ուրիշ կերպով չեմ կրնար բացատրել միտքս . . . »

— Բայց Լուիճիան միայն խօսիլ չի գիտեր , ըսաւ վարժուհին , գրեւ հաշուել ալ գիտէ : Ան գիտէ ամէն գործածելիք առարկաներուն անունները : Քիչ մը պատմութիւն եւ աշխարհագրութիւն գիտէ , Հիմակ վարժապետանոցի կարգին մէջն է . երբ երկու կարգ ալ փոխէ , աւելի շատ ուսեալ պիտի ըլլայ : Հոսկէ դուրս ելլելուն կարող պիտի ըլլայ արհեստի մը հետեւիլ : Արդէն ուրիշ խուլ-համրեր տեղաւորեցինք խանութներու մէջ , յաճախորդներու ծառայելու համար . եւ ուրիշներու չափ կը յաջողին . »

Պարտիզպանը անգամ մը եւս զարմացած մնաց : Գաղափարները կը շփոթէին գլխուն մէջ , աղջկանը նայեցաւ ճակատը քերելով , ուրիշ բացատրութիւն մը կը տենջար .

« Վարժուհին հասկցաւ , դէպի պատուհանը դարձաւ ու ըսաւ .

« Նախապատրաստական կարգէն տղայ մը լերէ՛ք հոս . »

Պահպանը պահ մը ետքը դարձաւ եկաւ ու թրինը տարեկան խուլ-համր աղջկան մը հետ , որ քիչ օրէ իվեր մտած էր այդ հաստատութեան մէջ .

« Այս տղան , ըսաւ վարժուհին , անոնցմէ է որոնց կը սորվեցնենք տարրական բաներ : Պիտի տեսնէք թէ ինչպէս կ'ընեն : Իրեն պիտի ըսեմ ե , ուշադրութիւն ըրէ՛ք :

« Վարժուհին բերանը բացաւ , ինչպէս կը բանան ե ձայնաւ որը հնչելու համար , ու տղուն նշան ըրաւ որ նոյն ձեւով բերանը բանայ : Տղան հնազանդեցաւ : Այն ատեն վարժուհին անոր նշան ըրաւ որ ձայնը հանէ : Դեռատի աղջիկը ձայնը հանեց , բայց փոխանակ եի օարտասանեց :

« Չէ, ըսաւ վարժուհին, այն չէ՛: »

Ու դպրոցականին երկու ձեռքերը բռնելով, մէկ ձեռքը դրաւ կոկորդին վրայ, միւսը կուրծքին վրայ ու կրկնեց եւ Տղան, իր ձեռքերովը զգալով վարժուհին կոկորդին ու կուրծքին շարժումը, նորէն բացաւ բերանը ու շատ լաւ արտասանեց ե գիրը:

Նոյն կերպով ըսել տուաւ վարժուհին անոր գ եւ դ, միշտ անոր պզտիկ ձեռքերը իր կուրծքին ու կոկորդին վրայ բռնելով:

« Հիմայ հասկցա՞ք, » հարցուց: Պարտիզպանը հասկըցեր էր: Բայց եւս աւելի սքանչացած կ'երեւար երբ չէր հասկնար:

« Այսպէ՞ս կը սորվեցնէք խօսիլ, հարցուց պահ մը խորհելէ յետոյ վարժուհին նայելով: Այսպէս համբերութիւն ունիք խօսիլ սորվեցնելու քիչ քիչ ամէն աշակերտի, ամէն օր, տարիներով... Դուք ամէն վարձատրութեան արժանի էք: Բայց կա՞յ միթէ այնքան մեծ վարձատրութիւն մը, այսքան մեծ աշխատութիւն մը վճարելու համար: Ի՞նչ կրնամ ըսել ձեզի... Ա՛խ, զիս քիչ մը մինակ թողէ՛ք աղջկանս հետ, հինգ վայրկեան ինծի թողէ՛ք զայն: »

Ու, հեռուն նստած, սկսաւ հարցափորձել խուլ-համբը. ու անիկա կը պատասխանէր. եւ այս պատասխանները կը խնդացնէին պարտիզպանը, որուն աչքերը կը փայլէին երջանկութենէ: Ուրախութեամբ ձեռքերը ծունկերուն կը վարնէր ու աղջկանը կը նայէր, ինքզինքէն դուրս ելած, զայն ըսելու երջանկութեամբ:

« Կրնա՞մ տնօրէնին շնորհակալ ըլլալ. հարցուց վարժուհին: »

— Տնօրէնը հոս չէ, բայց ուրիշ անձ մը կայ որուն կրնաք շնորհակալ ըլլալ: Հոս սովորութիւն է որ պրզ-

տիկ աղջիկները իրենցմէ տարեց ընկերուհիի մը յանձնուին, որ քրոջ տեղ, մօր տեղ կը բռնէ իրենց: Ձեր աղջիկը յանձնուած է տասնըօթը տարեկան խուլ-համբ աղջկան մը, հացագործի մը աղջկան, որ շատ բարի է Լուիճիային համար ու շատ կը սիրէ զայն: Երկու տարիէ ի վեր, ան կ'օգնէ իրեն հագուելու, ան կը շտկէ մազերը ան կը սորվեցնէ կար կարել, շրջագլխատները կը շտկէ, իրեն ընկերութիւն կ'ընէ: — Լուիճիա՛, քու վարժարանի մայրիկիդ անունը ի՞նչ է: — Քաթր-ձինա ձիօռ-տանօ, պատասխանեց աղջիկը ժպտելով: յետոյ յարեց — շատ բարի: »

Պահապանը, որ վարժուհիին մէկ նշանին վրայ դուրս ելեր էր, դարձաւ եկաւ գրեթէ իւրոյն, խարտեաչ, ուժեղ, ու բաց դէմքով խուլ-համբի մը հետ, ան ալ հագուած կարմիրով ճերմակ ու գորշագոյն, գոգնոցով: Մանկամարդ աղջիկը կանգ առաւ դրանը սեմին վրայ ու կարմրեցաւ, յետոյ ծուկ ծրպտելով: Մեծ կնոջ մը չափ երկայնահասակ էր, բայց ազու մը կը նմանէր: Ժօրժին աղջիկը վազեց անոր, թեւէն բռնեց ու տարաւ իր հօրը քով իր հաստ ձայնով ըսելով:

« Քաթր-ձինա ձիօռ-տանօ: »

— Ա՛հ, աղնի՛ւ աղջիկ, գոչեց պարտիզպանը անոր ձեռքը բռնելով, երջանի՛կ թող ըլլայ միշտ, ինք եւ իրենները. պարկեշտ գործաւոր մը, ընտանիքի խեղճ հայր մըն է որ կը մաղթէ այս բանը սրտանց, զաւակս: »

Դեռատի աղջիկը կը շոյէր Լուիճիան գլուխը ծըռած: Իսկ պարտիզպանը, չէր դադրեր անոր նայելէ տեսակ մը յարգանքով:

« Կրնաք, եթէ ուզէք, այսօր տանիլ ձեր աղջիկը, ըսաւ վարժուհին: »

— Գօնտօվա կը տանիմ ու վաղը նորէն կը բերեմ :  
Պզտիկ աղջիկը գնաց հագուելու :

« Կը հարցնէք թէ կը բաղձամ տանիլ զինքը , շարունակեց պարտիզպանը , երեք տարիէ ի վեր որ զինքը չէ՛ր տեսած , եւ հիմա կը խօսի՛ . . . նախ պիտի տանիմ ամբողջ Թուրին քաղաքը պտտցնեմ բարեկամներուս ցուցնելու համար , որպէս զի անոր խօսիլը լսեսն : Ա՛խ , ի՛նչ գեղեցիկ օր , ահա՛ երջանիկ անակընկալ մը , թեւս մտի՛ր , աղջիկս : »

Լուիճիան որ հագուած շքուած ներս կը մտնէր , հօրը թեւը մտաւ :

« Ու շնորհակալութի՛ւն ամէնուդ . . . ըսաւ պարտիզպանը սեմին վրայէն : Ամէնէդ ալ շնորհակալ եմ բոլոր սրտովս : Դարձեալ պիտի գամ շնորհակալ ըլլալ ձեզի : »

Պահ մը մտախոհ մնաց , յետոյ աղջիկէն զատուելով փութով , ետ դարձաւ եկաւ ու տե՛ղոտ ձեռքով բաճկոնին գրպանը խառնելով , գոչեց .

է՛յ , աղքատ մարդ մըն եմ ես , բայց կ'ուզեմ ոսկի մը նուէր ձգել այս հաստատութեանը , նո՛վի նոր ոսկի մը : »

Ձեռքի հարուած մը տալով սեղանին վրայ , ոսկի մը դրաւ հոն :

« Ո՛չ , ո՛չ , ազնիւ մարդ , ըսաւ վարժուհին յուզուած , ետ առէ՛ք ձեր ստակը , չեմ կրնար ընդունիլ : Ետ առէ՛ք զայն : Իմ խառնուելու բանս չէ : Երբ տնօրէնը հոս ըլլայ այն ատեն եկէ՛ք : Բայց ան ալ չպիտի ընդունի , ապահով եղէ՛ք : Դուք աշխատած էք այս ոսկին վաստկելու համար . . . խեղճ մարդ , ձեզի երախտապարտ կ'ըլլան դարձեալ :

— Ո՛չ , ո՛չ , ստակը կը թողո՛ւմ , ըսաւ պարտիզ-

պանը յամառաբար . . . ու յետոյ . . . տեսնենք : »

Բայց վարժուհին ստակը ժօռժին գրպանը դրաւ , առանց անոր ժամանակ տալու որ ետ հրէ ձեռքը :

Պարտիզպանը համակերպեցաւ գլուխը ծռելով , թափով բարեւեց վարժուհին ու մանկամարդ աղջիկը , եւ , Լուիճիան թեւը առնելով , դուրս ելաւ ըսելով .

« Եկո՛ւր , եկո՛ւր , աղջիկս , խեղճ պզտիկ համր աղջիկս , գա՛նձս : »

Ու աղջիկը գոչեց իր խոշոր ձայնով .

« Ո՛չ , — ի՛նչ — գեղեցիկ ա ըբեւ : »

Յ Ո Ւ Ն Ք Ս

32 Ա Ս Տ Ի Ճ Ա Ն

Ուրբաթ 16

Ամառուան մէջ տեղն ենք հիմա : Մարդ կը սկսի յոգնիլ , գարնան մէջ ունեցած թարմ գոյները կը կորսընցնէ : Վիզերն ու սրունքները կը կթին , գլուխները կը հակին ու աչքերը կը գոցուին : Խեղճ Նէլլին շատ կը տառապի տաքէն , դէմքը բոլորովին տժգունած է եւ երբեմն խորունկ կը քնանայ գլուխը տետրակին վերայ դրած : Կառօնը միշտ ուշադիր է , բաց գիրք մը առջեւը կը դնէ , երկայնութեանը դրած , որպէս զի ուսուցիչը չտեսնէ զինքը : Գոսսին անանկ կերպ մը ունի գրասեղանին վրայ կռթնցնելու շիկահեր խոշոր գլուխը որ կարծես թէ մարմնէն բաժնուած է : Գալով Նօպիսին , ան կը գանգատի թէ կտրի բազմաթիւ ենք դասարանին մէջ եւ թէ օդը կը սպառենք : Ա՛խ , ի՛նչ

ջանքեր ընելու է հիմա ուսանելու համար... : Մեր տանը պատահաններէն կը տեսնեմ գեղեցիկ ծառերը որոնք խիտ հովանի մը կ'ընեն, որոնց տակ այնքան յօժարակամ պիտի վազէինք. ու կը տրտմիմ, ու կը դայրանամ մտածելով թէ պէտք է երթալ փակուիլ վարժարանին մէջ : Բայց համբերութիւն ձեռք կ'առնեմ իմ բարի մօրս համար, որ սրտատանջութեամբ երեսս կը նայի երբ դպրոցէն դուրս ելլեմ, եւ որ, տունին մէջ, իւրաքանչիւր էջը գրեւորու կը հարցնէ ինծի :

«Շատ յոգնած չես, այնպէս չէ՞ :» Առաւօտուն ժամը վեցին զիս արթնցուցած ատեն կ'ըսէ ինծի. «Արիութիւն, այսքան օրդ մնաց, անկէ ետքը պիտի հանգչիս գիւղը :»

Մայրս իրաւունք ունի յիշեցնելով ինծի թէ տղաք կան որ դաշտերուն մէջ կ'աշխատին բոցակէզ արեւուն տակ, կամ մեծ գետերու եզերքը ձերմակ խիճերուն վրայ, եւ կամ ապակիի գործարաններու մէջ. ուր շարունակաբար դէմքերնին հնոցի մը վրայ հակած է : Այս ամէն տղաքը մենէ առաջ կ'եղլեն եւ արձակուրդ չունին բնաւ : Արիութիւն ուրեմն : Սակայն օրինակը Տէնօսին տուաւ մեզի : Կարծես թէ ան ո՛չ տաքէն կը նեղուի ոչ քունէն. միշտ առոյգ, զուարթ է, ամառը ինչպէս ձմեռը :

Առանց յոգնելու կ'աշխատի եւ իր շուրջը ամէնուն աշխոյժ կու տայ, իբրեւ թէ իր ձայնովը կը զովացնէ օդը որ զինքը կը շրջապատէ :

Երկու դպրոցական եւս կան միշտ արթուն ու միշտ ուշադիր. այն յամառ Սթառտին, որ ինքզինքը կ'ուտէ չքանանալու համար (զի որքան աւելի տաք ընէ, այնքան աւելի կը սեղմէ ակռաները ու աչքերը կը բանայ, իբրեւ թէ Պ. Բէնպօնին պիտի լափէր) : Իսկ Կա-

նօֆին, առուտուր ընողը, շատ զբաղած է շինելու վարդագոյն թղթէ հովահարներ, զոր մէկին միւսին կը ծախէ : Ամէնէն քաջը դարձեալ Գօռէթին է, այն խեղճ Գօռէթին որ ժամը հինգին կ'եղլէ առտուն, հօրը օգնելու համար փայտ կը կրէ : Ժամը տասնըմէկին այլ եւս չի կրնար աչքերը բաց կենալ, ու զլուխը կուրծքին վրայ կ'իյնայ : Սակայն կը թօթուուի, ծոծրակին կը զարնէ, հրաման կ'ուզէ դուրս ելլելու երեսը պաշտուր զարնելու համար, երբեմն ալ քովի նստողներուն կ'ըսէ որ կամթեն զինքը : Այս առաւօտ, այլ եւս չկըրնալով դիմանալ, քնացաւ խորունկ քունով մը : Ուսուցիչը կանչեց զինքը. «Գօռէթի» :

Նա չլսեց :

Պ. Բէնպօնին զայրացած, կրկնեց. «Գօռէթի» :

Այն ատեն մեր ընկերներէն մէկը որ անոր մօտ կը բնակի, ոտքի ելաւ.

«Գօռէթին առտուն հինգէն սկսեալ փայտի տրուցակ կրեց :» ըսաւ :

Ուսուցիչը թողուց որ քնանայ եւ շարունակեց դասը կէս ժամ մը : Յետոյ մեղմիւ Գօռէթին դարանին քով գնաց, եւ, անոր ճակտին փշելով, արթնցուց զայն :

Գօռէթին, Պ. Բէնպօնին իր առջեւը տեսնելով, ետ քաշուեցաւ զարհուրած : Բայց ուսուցիչը տղուն գլուխը ձեռքերուն մէջ առաւ ու մագերը համբուրեւով, ըսաւ.

«Ձեմ յանդիմաներ քեզ, զաւակս : Գու քունդ ծուլութեան քուն չէ, զիտեմ թէ շատ աշխատեր ես հոս գալէդ տուաջ :»

# Հ Ա Յ Ր Ս

Շաբաթ 17

Անշուշտ չէ, քու ընկերդ Գօռէթիին ո՛չ ալ կառօնը չպիտի պատասխանէին երբեք իրենց հօրը ինչպէս դուն քու հօրդ պատասխանեցիր երէկ իրիկուն, Հանուի: Կարելի՞ բան է: Պէտք է երդնուս ինծի թէ ուրիշ անգամ մըն ալ չպիտի պատահի քեզի այդ բանը: Ամէն անգամ որ հօրդ մէկ յանդիմանութենէն ետքը ըմբոստ պատասխան մը ծածանի չըթուներդ վրայ, խորհէ՛ այն օրուան — որ պիտի դայ անհրաժեշտաբար — ուր նա պիտի կանչէ քեզ մահուան անկողնին քով քեզի ըսելու համար. « Հանուի, հրաժեշտ կու տամ քեզի: » Ո՛հ, սիրելի զաւակս, երբ լսես հօրդ ձայնը վերջին անգամի համար, եւ անկէ ետքն ալ երկար ատեն իսկ, պիտի հարցնես դուն քեզի թէ ի՞նչպէս կըրցար յարգանքի Վակասութիւն ընել իրեն դէմ: Պիտի հասկնաս թէ ան քու լաւագոյն բարեկամդ եղած է միշտ, թէ երբ պարտաւորուած ըլլար քեզ պատժելու, քենէ աւելի ինք կը տանջուէր. եւ եթէ երբեք քեզի լացուցեր է, քու թերութիւններդ միայն ուղղելու համար բեր է: Այն ատեն պիտի լաս ու պիտի լըզ՝ ջա՛ս: Հայրդ ամէն բան կը ծածկէ քենէ, բացի իր բարութիւնը եւ սէրը: Գուն չես հասկնար թէ, երբեմն, խոնջէնքէ ընկճուած է ան. թէ կը կարծէ որ մէկ քանի օրը միայն մնացած է ապրելու, եւ եթէ կը խոսիլի այն ատեն, քեզ մինակ եւ անպաշտպա՛ն թողու գազափարոզի է: Քանի քանի անգամներ այս մտածումով պաշարուած, սենեակդ մտած է, երբ դուն քո՛ւնի մէջ ես: Գովդ կը կենայ, մոմը բռնած, քեզի կը նայի, յետոյ, յոգնած նոր ճիգ մը կ'ընէ ու կ'երթայ նորէն աշ-

խատի՛ւ: Չես դիտար նաեւ թէ երբ սրտին վրայ դառնութիւն մը, յուսախաբութիւն մը ունենայ, ինչպէս որ կը պատահի ամէն մարդու, զաւկին ներկայութեամբ, զայն տեսնելով է որ կը զօրանայ: Խեղճ հայրդ պէտք ունի, հաւատալու քու բուն աղապատանքիդ, որ իրեն պիտի տայ զուարթութիւն եւ արիութիւն: Խորհէ՛ թէ ի՞նչ վիշտ պիտի ըլլայ իրեն երբ, փոխանակ քու քովդ խանդաղատանք գտնելու, պաղութիւն եւ անպատկառութիւն միայն գտնէ: Երբեք այլ եւս յանցաւոր մի՛ ըներ ինքզինքդ այդ սոսկալի ապերախտութեամբ: Խորհէ՛ թէ ոչինչ տեւական է այս կեանքին մէջ, եւ թէ կրնաս կորսնցնել հայրդ, տակաւին մահուակ հասակիդ մէջ... տարիէ մը, ամիսէ մը. վաղը թերեւս...

Ա՛խ, իմ հէգ Հանուիս, ի՞նչպէս ամէն բան պիտի փոխուէր այն ատեն քու շուրջդ, ի՞նչպէս տունը դատարկ պիտի երեւար աչքիդ սեւազգեաց մօրդ հետ: Գնա՛, զաւակս, գնա՛ գտիր հայրդ, իր աշխատութեան սենեակն է. մատներուդ ծայրերը կոխելով ներս մտի՛ր, ճակատդ ծունկերուն վրայ դի՛ր, ու խնդրէ՛ որ ներէ քեզի:

ՄԱՅՐԳ

## Գ Ի Ի Ղ Ը

Նրկուաբքի 19

Իմ բարի հայրս ներեց ինծի այս անգամ եւս, եւ թողուց որ երթամ գիւղային պտոյտին զոր խորհուրդը բրած էր չորեքշաբթի օրը Գօռէթիին հօրը հետ: Ամէնքս ալ պէտք ունէինք քիչ մը մաքուր օդ ծծա՛լու: Ասի ուրախութիւն մը եղաւ: Երէկ ժամը երկուքին



Սթաթիւի հրապարակին վրայ գտնուեցանք, Տէոս-  
սին, Կառօնը, Կառօֆին, Բռէքօսին, Գօռէթի հայրը,  
Գօռէթի որդին եւ ես, պառզի, երչիկի եւ խաչած  
հաւկիթի պաշարներով: Կաշիէ ամաններ եւ թիթեղէ  
չիշեր ունէինք: Կառօնը ձերմակ գինիով լեցուն չոր  
դդում մը ունէր: Գօռէթին մէջքը կապած էր սերիշ  
դդում մը, որ իր հօրը ծառայիւր էր անոր գինուոր ե-  
ղած ատենը. ա՛ն ալ կարմիր գինիով լեցուն էր: Գա-  
լով պղտիկ Բռէքօսին, իր երկաթագործի գոգնոցովը,  
թեւին տակ կը տանէր երկու քիւօնոց հաց մը: Մինչեւ  
քաղքէն դուրս ելլելը հանրակառքով գացինք: Յետոյ  
իջանք վազեցինք վազվառեցինք մարգագետիններուն  
վրայ եւ բլուրներն իվեր: Զով էրհոն, դալար էր եւ  
չուք խտեբուն վրայ կը գլորէինք, գետակներուն ջրո-  
վը ճակատնիս կը զովացնէինք, ցանկապատներուն մի-  
ջեւէն կը ցատկուտէինք . . . Գօռէթիին հայրը, որ  
մեզի հետ գալ ուզեր էր, հեռուէն մեզի կը հետեւէր,  
կրկնոցը ուսին վրայ առած, իր ծխափայտը ծխելով.  
եւ ատեն, ձեռքովը մեզի կը սպառնար, որպէս զի մեր  
տարատները չծակենք: Բռէքօսին կը սուլէր. — Երբեք  
իր սուրբը չէի լսած. — Գօռէթին, միշտ թեթեւաշարժ  
էր վայրի այծի մը պէս, դանակովը շատ մը բաներ կը  
չինէր. աղօրիքի անիւներ, պատառաքաղներ, գրեխներ:

Տէոսին կանգ կ'առնէր ու մեզի կ'ըսէր տունկե-  
րու, միջատներու անունները: Չեմ գիտեր ի՛նչպէս կ'ը-  
նէ այս ամէն բանը գիտնալու համար . . . Կառօնը իր  
հացը կ'ուտէր լուի միջիկ, բայց առջի խորթակը չու-  
նէր . . . մայրը կորանցնելէն իվեր բոլորովին փոխուած  
է, խեղճ Կառօնը, թէեւ միշտ նոյնն է, իր սիրած հա-  
ցին պէս ազնիւ. մենէ մէկը երբ փոսէ մը անցնիլ ու-  
զէր, փոսին անդիի կողմը կը վազէր կը կենար որ մեր

ձեռքէն բռնէ անցընէ. եւ որովհետեւ Բռէքօսին կո-  
վերէն կը վախնայ, — վասն զի պղտիկ եղած ատենը  
եղջիւրի հարուածներ կրած է անոնցմէ. — ամէն ան-  
գամ որ կով մը անցնէր, Կառօնը անոր դէմը կը կե-  
նար: Այս կերպով գացինք մինչեւ Սուրբ Մառկոսիթ,  
ու իջանք զառ իվարներէն ցատկելով, գլտորելով . . .

Բռէքօսին, ցանկապատէ մը անցնելով, հագուստը  
պատռեց, ու հոն մնաց, ամօթահար՝ զգետտին կտորը  
կախուած . . . բարեբախտաբար Կառօֆին, որ միշտ  
գնդասեղներ ունի իր վրայ, պատռած տեղը այնքան  
լաւ խօթեց որ հազիւ կը տեսնուէր, մինչդեռ Բռէքօ-  
սին իր սովորութեանը համեմատ կը մրմնջէր. « ներո-  
ղուրիւն, ներողուրիւն, » ու սկսաւ վազել:

Կարօֆին ժամանակը չէր կորսնցնէր. ազցան կը  
ժողվէր, ու երբ նշմարէր քարի մը կտոր որ կը փայլէր  
քիչ մը. կ'առնէր գրպանը կը դնէր, խորհելով թէ ոսկի  
կամ արծաթ կը պարունակէր ան իր մէջ:

Իսկ մենք ամէնքս կը վազէինք, կը մագլցէինք,  
չուքին մէջ, արեւին մէջ, ամէն կողմ. մինչեւ որ խոն-  
ջած, շնչասպառ կանգ առինք բլուրի մը գագաթը,  
ուր նստանք խոտին վրայ ահրատ ընելու համար: Հիա-  
նալի հեռանկար մը ունէինք առջեւնիս. անհուն դաշտ  
մը կը տարածուէր մեր ոտքին տակ, եւ շատ հեռուն  
կապոյտ Ալպեանները, ձիւնով պատած:

Անօթութենէ կը մեռնէինք, Կարծես թէ հացը կը  
հալէր մեր բերնին մէջ, Հայր Գօռէթին մեզի երչիկի  
բաժիններ կու տար, դդումի տերեւներու վրայ, իբր  
պնակ: Ուտելով հանդերձ, խօսեցանք մեզի հետ չե-  
կող ուսուցիչներուն, ընկերներուն վրայ, նաեւ քննու-  
թիւններու վրայ: Բռէքօսին գրեթէ չէր համարձակեր  
ուտելու, բայց Կառօնը ստիպմամբ լաւ կտորները անոր

տերեւէ պնակին մէջ կը գնէր: Գօռէթին հօրը քովը նստած էր, ծալլապատիկ: Անոնք երկու նղբայր կը նմանէին աւելի քան թէ հայր ու տղայ, այսպէս իրարու քով նստած, թարմ եւ զուարթ, իրենց ճերմակ ակուններով: Հայրը հաճոյքով կը խմէր, մեզի ըսելով. «Փայտավաճառները աւելի պէտք ունին խմելու քան դպրոցականները, որոնց կը վնասէ՝ գինին: Յետոյ մէկ ձեռքը տղուն ուսին վրայ դնելով՝ յարեց.

«Սիրեցէ՛ք աս տղան, որ ազնուութեան ծաղիկ մըն է. կը հաւաստեմ ձեզ:»

Ու մենք ամէնքս կը խնդայինք, բացի Կառօնէն, «եւ ըսե՛լ թէ, հառաչեց հայր Գօռէթին, այսօր ամէնքդ լաւ ընկերներ էք, մինչդեռ քանի մը տարիէն Հանուին ու Տէռօսին փաստաբան կամ ուսուցիչ պիտի ըլլան, ու դուք չորսդ, գործաւոր, խանութպան եւ այլն:

— Ի՛նչպէս, պատասխանեց Տէռօսին, ինծի համար Կառօնը միշտ Կառօն պիտի մնայ, Բռէքօսին միշտ Բռէքօսի եւ միւսներն ալ նոյնպէս, եթէ նոյն իսկ ըլլամ երեւելի մարդ մը:

— Ապրի՛ս, գոչեց հայր Գօռէթին, գաւաթը բարձրացնելով, նայեցէ՛ք ի՛նչ լաւ խօսեցաւ: Բախեցէ՛ք բաժակիս, ազնիւ ընկերներ, եւ ապրի վարժարանը որ մէկ ընտանիք կ'ընէ անոնք որ ունեւոր են եւ անոնք որ բան մը չունին:

Ամէնքս ալ ճնկեցինք իրեն հետ:

Ատենը ուշ էր արդէն: Վազելով եւ երգելով վար իջանք, մէկզմէկու թեւ մտած, ու հասանք Բօ գետին եզերքը, որուն ալիքները կը մթննային եւ որոնց վրայ կը թռչէին արդէն հազարաւոր կայծոռիկներ:

Սթաթիւ հրապարակին վրայ զատուեցանք իրարմէ, խօսք մէկ ընելով որ ամէնքս ալ առաջիկայ կի-

րակին գտնուինք, իրիկուան դասախօսութեան աշակերտներու պարգեւարաշխութեան:

Ի՛նչ գեղեցիկ օր, եւ ինչպէս գոհ սրտով տուն պիտի մտնէի, եթէ մութ սանդուղներուն վրայ, դէմ առ դէմ չելլէի իմ նախկին վարժուհիիս օր, երկու ձեռքերս բռնելով, ըսաւ ականջս իվար, «Մնաս բարով, Հանուի, յիշէ՛ զիս:»

Անանկ հասկցայ թէ կու լար: Երբ մօրս ըսի թէ պատահեցայ վարժուհիիս:

«Խեղճ աղջիկ, ըսաւ, չատ կը վախնամ որ գուցէ ըլլայ վերջին այցելութիւնը զոր ինծի ըրաւ. թէ եւ տակաւին ասդին անդին կ'երթայ, եւ դասերը կու տայ, բայց բոլորովին ուժաթափ երեւցաւ ինծի:»

## ԳԱՐԾԱԻՈՐՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Կիրակի 25

Ինչպէս որ խօսք ըրած էինք, գացինք ամէնքս ալ Վիքթոր Էմմանուէլ թատրոնը, ներկայ ըլլալու գործաւորներու պարգեւարաշխութեան, իրիկուան դասախօսութեան:

Թատրոնը լեցուն էր Մարտ 14ի օրուան պէս, բայց այս անգամուան ժողովուրդը կը պատկանէր ամբողջովին գործաւորներու դասակարգին: Գետնայարկը ըրձնած էին խմբերգող տղաքը: Պատերազմի մէջ մեռնող զինուորներուն հոգուն երգ մը երգեցին, այնքան գեղեցիկ երգ մը, որ երբ լմնցաւ, ամէն ոք ոտքի ելաւ ծափ զարնելով ու գոչելով. կրկի՛ն հարկ էր վերըսկսիլ կտորը:

Անմիջապէս ետքը, չըջանաւարտները սկսան տո-

ղանցիլ քաղաքապետին եւ ուրիշ շատ անձնաւորութիւններու առջեւէ, որոնք գիրքեր, վկայականներ եւ մետաղներ կու տային:

Արահին մէկ անկիւնը տեսայ պզտիկ որմնագիրը, մօրը քով նստած, յետոյ քիչ մը հեռուն մեր տնօրէնը, ու անոր ետեւը երկրորդ դասարանի վարժապետնուս շիկահեր գլուխը:

Գծագրութեան վարժարաններու շրջանաւարտներուն տողանցումը տեսանք. ոսկերիչներ, քանդակագործներ, վիմագիրներ, նոյն իսկ կահագործներ եւ որմնագիրներ. յետոյ առեւտրական դպրոցի շրջանաւարտները, երաժշտական դպրոցիները, որոնց մէջ կը գտնուէին մէկ քանի մատաղատի աղջիկներ ու գործաւորներ տօնի զգեստով: Ծայրայեղ կ'ըրպով կը ծափահարէին զիրենք, եւ անոնք երջանիկ կ'երեւային այդ ծափահարութիւններէն: Վերջապէս հասան իրիկուան նախակրթական վարժարաններու աշակերտները:

Արդարեւ գեղեցիկ բան էր տեսնել այս մարդիկը ամէն արհեստէ, հագուած զանազան ձևերով: Գորշագոյն մազերով մարդիկ, գործաւորներու տղաք, սեւ մօրուքով գործաւորներ:

Երիտասարդները ուրախ զուարթ էին, տարիքոտ մարդիկը քիչ մը վարանոտ կ'երեւային: Ժողովուրդը կը ծափահարէր երիտասարդն ալ, ծերն ալ:

Իայց ոչ ոք կը խնդար մեր պարզեւարաշխութեան օրուան պէս: Ամէնուն դէմքը ուշադիր եւ լուրջ կերպարանք մը ունէր:

Շրջանաւարտներէն շատերը իրենց կիներ եւ զաւակները մէկտեղ բերած էին, եւ կը տեսնուէր լամուկներ որոնք, տեսնելով իրենց հայրը բեմին վրայ, բարձրաձայն կը կանչէին զայն, մատով կը ցուցնէին զայն բռնիչով խնդալով:

Գիւղացիներ, բեռնակիրներ եկան, անցան, որոնց մէջ կօշիկ ներկող մըն ալ, զոր հայրս կը ճանչնայ եւ որուն վկայական մը տուաւ քաղաքապետը: Անկէ ետքը հսկայ մը եկաւ զոր տեսած էի տեղ մը... պզտիկ որմնագիրին հայրն էր, որ երկրորդ մրցանակ կ'առնէր: Յիշեցի այն իրիկունը ուր տեսայ զինքը իր մանսարգին մէջ, իր մահամերձ որդւոյն անկողնին քով, եւ իսկոյն աչքով փնտուեցի պզտիկ որմնագիրը: Խեղճ պզտիկ: Կարեկցութեամբ կը նայէր իր հօրը:

Այս միջոցին ծափահարութիւններու պայթիւն մը ուշագրութիւնս գրաւեց բեմին վրայ, ուր կը գտնուէր պզտիկ ծխան մարդու մը, դէմքը լուացուած, բայց մուրի գոյն զգեստներով: Քաղաքապետը անոր կը խօսէր ձեռքը բռնած:

Ծխան մաքրողէն ետքը, կարգը եկաւ խոհարարի մը. յետոյ փողոցի աւելածու մըն ալ եկաւ մետալ մը ստանալ:

Տարապայման յարգանքի եւ համակրութեան պէս բան մը կը զգայի սրտիս մէջ այս ամէն աշխատող ընտանիքի հայրերուն համար, խորհելով թէ այս մրցանակներուն արժանի ըլլալու համար տուած աշխատութիւնները որքան աշխատութիւն աւելցուցեր էր իրենց առօրեայ աշխատութեան վրայ. քանի ժամեր գողցած էին իրենց քունէն որուն այնքան պէտք ունին: Ու նաեւ որքան ձիգեր իրենց ուսման համար դեռավարժ խմացականութեանը եւ իրենց աշխատութենէ կարծրացած ձեռքերուն:

Այս տողանցիլ մէջէն անցաւ աշկերտ մը, որուն հայրը իր պարեգօտը փոխ տուեր էր հագնելու. ասի յայտնի կ'երեւար իր կարի երկայն թեզանիքներէն, զոր պարտաւորեցաւ վեր առնել բեմին վրայ՝ իր մըր-

ցանակը առնելու համար, Հոս հոն խնդալու ձայներ լսուեցան. ընդհուպ ծածկուած ծափահարութիւններով, Անկէ ետքը եկաւ ճաղատ զլիսով ձերուներ մը ձերմակ մօրուքով, հրետանիներու զինուորներ, — որոնց մէկ քանին մեր դպրոցին իրիկուան դասախօսութիւններուն կու գային, յետոյ մաքսի պաշտօնեաներ եւ քաղաքային պահակներ, որոնք մեր դպրոցները կը հսկեն: Վերջապէս երգի աշակերտները գեղեցիկ երգ մը երգեցին վերստին, այս անգամ այնքան աւիւնով որ հազիւ համարձակեցան ծափահարել եւ դուրս ելան յետոյ յուզուած, յամբարար, անշուկ:

Քիչ ատենէն փողոցը լեցուեցաւ բազմութեամբ: Թատրոնին դրան առջեւ կը կենար պզտիկ ծխան մաքրողը, իր կարմիր գլորքը թեւին տակը: պարոններէ շրջապատուած, որոնք կը խօսէին իրեն հետ շահագրգռութեամբ: Շատ մը մարդիկ իրար կը բարեւէին. գործաւորներ, տղաք, պահակներ, ուսուցիչներ, երկրորդ դասարանի ուսուցիչս դուրս ելաւ, երկու հրետանիի զինուորներէ ընկերացած. բայց ամէնէն որառուչն էր տեսնել գործաւորներու կիներ, որոնց գըրկած տղաքը իրենց պտըտիկ ձեռքերուն մէջ բռնած էին հօրերնուն մրցանակը ու հպարտութեամբ ցոյց կու տային անցորդներուն:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՇԻՍ ՄԱՇԸ

Յրեֆաքքի 27

Մինչ մենք Վիքթօր-Էմմանուէլ թատրոնն էինք, իմ հէգ վարժուհիս կը մեռնէր: Ժամը երկուքին մեռեր է, մօրս այցելութեան գալնն եօթը օր վերջը: Տնօրէ-

նը երէկ առտու ծանոյց մեզի տխուր լուրը ու յարեց.

« Ձեռնէ անոնք որ իր աշակերտները եղան գիտեն թէ ո՛րքան բարի էր ան, եւ որչափ կը սիրէր իր տղաքը, անիկա մայր մըն էր անոնց համար: Այլ եւս չկայ ան... սոսկալի հիւանդութիւն մը հալումաջ կ'ընէր զայն երկար ատենէ ի վեր: Եթէ պարտաւորուած չըլլար աշխատելու իր ապրուստը ճարելու համար, պիտի կարենար ինքզինքը խնամել ու բուժել թերեւս: Կրնար կեանքը երկարել մէկ քանի ամսուան համար արձակուրդ մը խնդրելով: Բայց ուզեց իր աշակերտներուն հետ մնալ մինչեւ այն օրը որ իր ոյժը զինքը թողու: Շաբաթ օրը, ամուռն 17ին, իրիկունը, հրածեշտ տուաւ անոնց՝ այլ եւս զանոնք չտեսնելու տխուր ապահովութեամբ: Բարի խրատներ տուաւ դարձեալ անոնց, ամէնքն ալ համբուրեց ու գնաց քովերնուն հեծկլտալով: Ասկէ վերջը այլ եւս չպիտի տեսնէք զինքը: Յիշեցէ՛ք զինքը, տղաքս: »

Պզտիկ Բուէքօսին, որ իր աշակերտը եղած էր առաջին կարգին մէջ, գլուխը ծռեց գրասեղանին վրայ ու սկսաւ լալ, երէկ իրիկուն, դպրոցէն ելլելնուս, ամէնքս ալ մեռելին տունը գացինք, յուզարկաւորութեան գտնուելու համար: Մեռելական կառքը կը կենար արդէն փողոցին մէջ եւ շատ մարդիկ կը սպասէին, ցած ձայնով իրարու հետ խօսելով:

Տնօրէնը հոն էր դպրոցին ուսուցիչներով եւ ուսուցչուհիներով, եւ ուրիշ շատեր, զանազան վարժարաններէ ուր հանգուցեալը դասախօսած էր ատենով: Իր դասարանին բոլոր աշակերտները գրեթէ ներկայ էին, իրենց մօրը հետ եկած: Յիսունի չափ աշակերտներ Պառէթիի վարժարանէն մեծ պսակ մը կը բերէին, ուրիշներ ալ վարդի փունջեր: արդէն շատ ծաղիկ դը-

րուած էր կառքին վրայ, որուն վրայէն կախուած էր մեծ պսակ մը վրան սա բառերը գրուած. Իրենց դաս-  
տիարակութիւնն, քոյ դասարանի աշակերտները, եւ այս պսակին տակ ուրիշ աւելի պզտիկ մը կար զոր առաջին կարգին աշակերտները բերած էին:

Հէգ ուսուցչուհի, այնքան բարի էր ինծի նկատմամբ, եւ որ այնքան համբերութիւն ունեցաւ, ու այնքան աշխատանք տուաւ տարիներով: Իր ունեցած գիրքերը իր աշակերտներուն թողուց. մէկին իր կաղամարը, միւսին՝ փոքրիկ պատկեր մը. վերջապէս ինչ որ ունէր:

Մեռնելէն երկու օր առաջ, աղաչեց տնօրէնին որ չթողարտէ բնաւ պզտիկներուն որ իր դազաղին ետեւէն երթան, ոչպէս զի չլան անոնք: Բարիք ըրաւ, տառապեցաւ, մեռաւ: Խեղճ վարժուհիս, երթա՛ս բարով, առէ՛ն մշտնջենապէս, ազնիւ բարեկամուհիս, տխուր բայց շատ քաղցր յիշատակ մանկութեանս:

### Շ Ն Ո Ր Շ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Չորեքաբքի 28

Իմ խեղճ դաստիարակուհիս ուզեց աւարտել իր դպրոցական տարեշրջանը. դասերը աւարտելէն երեք օր առաջ մեռաւ:

Վաղը չէ միւս օր դասարան պիտի երթանք, լսելու համար վերջին ամսօրեայ պատմութիւնը, որ վերնագրուած է. Նաւարեկոսթիւն մը եւ յետոյ . . . պիտի վերջանայ. շարաթ, յունիս 1, քննութիւնները կը սկսին: Ահաւասիկ տարի մըն ալ անցաւ, չորրորդը ա-

ւարտեցա՛ւ. տարին բարեյաջող պիտի ըլլար առանց իմ հէգ ուսուցչուհիս մահուանը:

Երբ կը խորհիմ անցեալ տարուան գիտցածիս վըրայ, ինծի կը թուի թէ հիմա շատ աւելի գիտեմ. այնքան նոր բաներ ունիմ յիշողութեանս մէջ: Հիմա աւելի աղէկ կը գրեմ եւ աւելի աղէկ կը բացատրեմ խորհածս: Կրնամ ընել հաշիւներ ինչ մեծերուն համար եւ օգնել անոնց իրենց գործերուն մէջ, հիմա շատ աւելի աղէկ կը հասկնամ կարգացածս . . . : Արդարեւ շատ ալ մղում տուին ինծի սորվելու. որը մէկ կերպով, որը ուրիշ կերպով: Այսօր ամէնէն ալ շնորհակալ եմ. . . : Նախ շնորհակալ եմ իմ սիրելի ուսուցիչէս, որ այնքան ներողամիտ եւ այնքան աղապատալից է ինծի հանդէպ, եւ որուն համար ըրած ամէն յառաջդիմութիւնս յոգնութիւն մը առթած է:

Շնորհակալ եմ Տէօսօիէն, իմ ազնիւ ընկերոջմէս, որ, իր ոգեւորիչ եւ յստակ բացատրութիւններով, շատ անգամ դժուար բաներ հասկցուցած է ինծի, եւ քննութեան դժուարութիւններուն յաղթել տուած է: Շնորհակալ եմ նաեւ ազնիւ եւ քաջ Աթառտիէն որ ցոյց տուած է ինծի թէ ի՛նչպէս երկաթէ կամք մը կը յաջողի ամէն բանի մէջ. Կառօնէն, ազնիւ եւ վեհանձն բարեկամէս, որ վեհանձն ու բարի կ'ընէ ամէն անոնք որ զինքը կը ճանչնան. ձենէ ալ, Բուէքօսի եւ Գօռէթի, որ միշտ արիութիւն տուիք ինծի դժուարութիւններու մէջ եւ զուարթութիւն աշխատութեան մէջ: Բայց մանաւանդ քե՛նէ շնորհակալ եմ, ազնիւ հայրս. դուն, առաջին վարժապետս, առաջին բարեկամս, դուն որ այնքան բարի խորատներ տուիր ինծի եւ այնքան բան սորվեցուցիր: Մինչդեռ ինծի համար կ'աշխատէիր ու կը ծածկէիր ինչ քու տխրութիւններդ,

կը ջանայիր ուսումը հեշտ ընծայել ինծի եւ կեանքը ախորժելի . իսկ դուն , բարի մայրս , որ իմ ամէն ուրախութիւններուս եւ հոգերուս մասնակից եղար , որ ուսար , աշխատեցար , լացիր ինծի համար : կը ծնրադրեմ առջեւդ ինչպէս կ'ընէի երբ պզտիկ էի , ու շնորհակալ կ'ըլլամ երկուքիդ ալ այն գորովով զոր դրիք իմ սրտիս մէջ , այս տասներկու տարուան սիրոյն եւ զոհողութեան մէջ :

Ն Ա Ի Ա Բ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

(ՎԵՐՁԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՄՍՍՐԵԱՅ)

Քանի մը տարի կայ , դեկտեմբեր ամսուան առաւօտ մը , մեծ շոգեմաւ մը դուրս կ'ելլէր Լիվրբուլի նաւահանգիստէն : Նաւուն մէջ երկու հարիւրէ աւելի անձ կար , որոնց վաթսունը նաւազներ էին : Նաւապետը եւ գրեթէ բոլոր նաւաստիները Անգլիացի էին :

Ուղեւորներուն մէջ կը գտնուէին բազմաթիւ Իտալացիներ : Երեք վաճառական , մէկ քահանայ , նուագածուներ : Նաւը կ'ուղղուէր դէպի Մալթա կղզին : Օդը գէշ էր :

Յառաջակողմը , կը տեսուէր , Յրդ կարգի ուղեւորներուն մէջ , Իտալացի տղայ մը տասներկու տարեկանի մօտ , կարճահասակ իր տարիքին համար , բայց կորովի , Սիկիլիացիներու դաժան եւ համարձակ դէմքով : Հոն էր , միայնակ , չուանի դէզի մը վրայ նստած , մաշած պայուսակի մը քով , որ կը պարունակէր իր զգեստները , եւ որուն վրայ կը կոթնցնէր իր ձեռքը : Թխագոյն դէմք մը ունէր , խոպոպած սեւ մազեր կ'իջնէին

վիզն իվար . այս խեղճ տղան ողորմելի կերպով հագուած էր : Հին չալ մը կը ծածկէր ուսերը , մինչդեռ իր կաշիէ հին մախաղին փոկը իր ուսին վրայ կ'անցնէր : Իր շուրջը կը նայէր , մտահոգ կերպով , ուղեւորները , նաւը , նաւաստիները որ կ'անցնէին վազելով . ու ծովը որ կը մռնչէր : Այս տղան ընտանեկան մեծ վշտէ մը տառապող մէկու մը կերպարանքը ունէր . անմեղ դէմք մը եւ տխրանոյշ նայուածք մը :

Մեկնումէն քիչ յետոյ , իտալացի նաւաստի մը , գորշագոյն մազերով , երեւցաւ յառաջակողմը , պզտիկ աղջկան մը ձեռքէն բռնած . կանգ առաւ փոքրիկ Սիկիլիացիին առջեւ ու ըսաւ անոր .

«Քեզի ճամբու ընկեր մը կը բերեմ , Մաուիօ :»  
Ու հեռացաւ :

Պզտիկ աղջիկը նստաւ չուանի դէզին վրայ , մանչուկին քովը :

Երկուքը իրարու նայեցան :  
«Ո՛ւր կ'երթաս , հարցուց Սիկիլիացին :

— Մալթա կ'երթամ , նարօլիի ճամբով ,» պատասխանեց աղջիկնակը :

Յետոյ յարեց . « Պիտի երթամ գտնել հայրս եւ մայրս որ ինծի կը սպասեն : Անունս ծիուլէթթա Փաճիանի է :»

Տղան պատասխան չտուաւ :

Քիչ մը ետքը , քաշեց պայուսակին մէջէն հաց եւ չոր միրգ , պզտիկ աղջիկն ալ պաքսիմատ ունէր : Կերան :

« Զուարթօրէ՛ն , պոռաց իտալացի նաւաստին անցած ատեն , պա՛րը պիտի սկսի :»

Հովը աւելի ուժգին կը փչէր . նաւը սոսկալի կերպով կը տառանէր . բայց երկու տլաքը , որոնք ծովէն

չէին բռնուած , ուշադրութիւն չէին ընէր անոր ըսածին :

Պզտիկ աղջիկը կը ժպտէր : Իր ընկերոջը տարիքը ունէր գրեթէ , բայց անկէ երկայնահասակ էր . գոյնով թուխ ինքն ալ , տկարակազմ , անչուշտ տառապած , աղքատօրէն հագուած : Իր խոստոված մազերը կարճ կտրուած էին , ծածկուած կարմիր թաշկինակով մը , ու իր ականջներէն կը կախուէին երկու արծաթ օղակներ :

Երկու տղաքը պատմեցին իրարու իրենց պատմութիւնը : Մանչուկը որք էր , իր հայրը , գործաւոր մը , քանի մը օր առաջ մեռած էր Լիվրբուլի մէջ , ու Իտալիոյ հիւպատոսը գիտնալով թէ տղան մինակ է , իր հայրենիքը զրկեր էր զայն , Բալերմօ , ուր կը յուսար գտնել մէկ քանի հեռաւոր աղգականներ :

Աղջիկը նախորդ տարին Լօնտօն տարուեր էր իր մէկ հօրաքրոջը որ զինքը շատ կը սիրէր եւ որուն յանձներ էին զինքը ժամանակ մը , իր ծնողքը որ շատ աղքատ էին , այն խոստումով որ հօրաքրոյրը իր ժառանգորդը պիտի ընէր զայն : Քանի մը ամիս ետքը , հօրաքրոյրը մեռեր էր , հանրակառքի մը տակ մնալով , առանց մէկ ստակ թողլու : Իտալիոյ հիւպատոսը պզտիկ աղջիկն ալ նաև հեծցուցեր էր երկիր զրկելու համար :

Երկու տղաքը յանձնարարուած էին Իտալացի նաւաստիին :

« Այսպէս , ըսաւ աղջիկնակը , հայրս , մայրս , որ կը յուսային իս հարստացած տեսնել , առաջուան պէս աղքատ պիտի գտնեն : Բայց այնքան զիս կը սիրեն որ հաճութեամբ պիտի ընդունին դարձեալ : Հապա եղբայրներս , ինչքան ուրախ պիտի ըլլան զիս տեսնելուն : Չորս հատ ունիմ եղբայր , պզտըտիկ ամէնքն ալ , Ես անդրանիկն եմ : Ես կը հագուեցնէի պզտիկ-

ները . . . : Ի՛նչ ուրախութիւն , դարձիս : Մատերուս ծայրերը կոխելով ներս պիտի մտնեմ . . . : »

Յետոյ հարցուց իր պզտիկ ընկերոջը :  
« Իսկ դո՞ւն , դո՞ւն ալ ծնողքդ գտնելու կ'երթաս . . . : »

- Այո՛ . . . : Եթէ զիս ուզեն . . . պատասխանեց :
- Քեզ չե՞ն սիրեր որ բնաւ :
- Չեմ գիտեր :
- Ծնունդին տասներեք տարեկան պիտի ըլլամ : »

ըսաւ աղջիկը :

Ոսուցան տակաւին ծովին վրայ ու իրենց շուրջը գտնուող մարդոց վրայ : Ամբողջ օրը կեցան մէկզմէկուքով , առեն առեն խօսք մը փոխանակելով : Ծամբորդները կարծեցին թէ քոյր ու եղբայր են : Պզտիկ աղջիկը գուլպայ մը կը հիւսէր . մանչուկը մտախօհ էր , ծովը երթալով կ'ալեկոծէր :

Իրիկունը , քնանալու համար իր ընկերոջմէն բաժնուելու առեն , պզտիկ աղջիկը ըսաւ Մառիոյին .

- « Բարի գիշեր : »
- Ոչ ոք պիտի քնանայ , հէ՛գ տղաքս , » ըսաւ Իտալացի նաւաստին , որ կ'անցնէր վազելով , նաւապետէն կանչուած ըլլալով :

Մառիօն կ'ուզէր պատասխանել « բարի գիշեր » իր պզտիկ բարեկամուհիին , երբ ալիքի փրփուր մը յանկարծ ողողեց զինքը անդին նետելով :

« Վիրաւորուեցա՞ր , » գոչեց աղջիկը , դէպի իրեն սրանալով :

Ուղեւորները՝ որ հապճեպով վար կ'իջնէին ուշադրութիւն չբրին տղոցը : Պզտիկ աղջիկը ծնրադրեց Մառիոյին քովը , որ սասանած մնացեր էր հարուածէն , անոր արիւնսալից ճակատը սրբեց եւ , իր գլխէն կար-

միր թաշկինակը հանելով, անով պատեց ընկերոջը ճակատը: Թաշկինակը կապելու համար Մառիոյին գլուխը սեղմած ատեն, կաթիլ մը արիւն արատեց իր դեղին շրջագգեստը:

Մառիօ ինքզինքը գտաւ ու ոտքի ելաւ:

«Աւելի աղէ՞կ ես, հարցուց աղջիկը:

— Բան մը չէ, պատասխանեց տղան:

— Հանգիստ քնացիր, ըսաւ ձիուլէթթան:

— Բարի գիշեր, » ըսաւ Մառիօն:

Ու իջան իրենց ննջարանը:

Նաւաստին ճիշտ գուշակեր էր: Տղաքը տակաւին չէին քնացած երբ փոթորիկ մը փրթաւ: Սաստիկ յարձակման պէս բան մը եղաւ որ, քիչ ժամանակի մէջ, նաւուն կայմին մէկը կոտորեց ու տարաւ երեք մակոյկ, որոնք կախուած էին նաւուն մէկ կողմը, նաւէն դուրս, ինչպէս նաեւ տարաւ երեք եզ որ կը գտնուէին յառաջակողմը:

Աննկարագրելի շփոթութիւն մը եւ մեծ սոսկում մը տիրեց այն ատեն նաւուն վրայ. ճիշեր, ողբեր, լացեր որ սիրտ կը ճմլէին: Փոթորիկը երթալով սաստկացաւ ամբողջ գիշերը, այգուն, իր կատաղութեան կատարը հասած էր: Ահագին կոհակներ կ'ողողէին նաւը. մէյ մը լայնութեանը, մէյ մը երկայնութեանը, հետերնին տանելով ու խորտակելով ինչ որ հանգիստ պէտէն: Մեքենան ծածկող միահարթը խորտակեցաւ, ու ջուրը ներս խուժեց սոսկալի աղմուկով, կրակները մարեց ու փախուստի մատնեց հնոցպանները: Ջուրի հեղեղներ կը հոսէին ամէն կողմէ, թափանցելով ամէն տեղ: Գոռացող ձայն մը գոչեց. « Արհանձնե՛րը! » Նաւապետին ձայնն էր: Նաւաստիները ջրհաններուն վրայ խոյացան. բայց կոհակի անակնկալ հարուած մը, նաւ-

ուն ետելի կողմին զարնելով, խորտակեց չուանները եւ դուռները, ու ներս նետեց ջուրի թաթառ մը:

Ուղեւորները, աւելի մեռած քան թէ սղջ, ամէնքն ալ ապաստաներ էին մեծ սրահին մէջ: Միջոց մը նաւապետը երեւցաւ:

« Նաւապետ, նաւապետ, գոչեցին ամէնքը մէկ բերան, ինչ կայ: Յոյս կայ: Ազատեցէ՛ք մեզ: »

Նաւապետը սպասեց որ լռեն ու ըսաւ պաղ կերպով:

« Համակերպինք: »

Կին մը միայն այս ճիշը արձակեց. « Գթու՛թի՛ւն: »

Ոչ ոք կրցաւ բառ մը արտասանել, սոսկումը սառեցուցեր էր տարաբախտները: Բաւական երկար ատեն մը անցաւ այսպէս մեռելային լութեան մէջ: Իրարու կը նայէին գունատ ու զարհուրած: Միջոց մը, նաւապետը փորձեց նաւակ մը իջնցնել ծովը: Հինգ նաւաստիներ կը հեծնէին անոր մէջ... նաւակը իջաւ... հազիւ ջուրին դպեր էր որ ահագին կոհակ մը շրջեցուց զայն: Մէջի նաւաստիներէն երկուքը խեղդուեցան, որոնց մէջ էր Իտալացին: Միւսները յաջողեցան, ոչ առանց մեծ ճիգերու, չուանները բռնել ու նաւուն մէջ ելլել:

Այս փորձէն ետքը, նաւաստիները իրենք ալ արիւթիւննին կորսնցուցին: Երկու ժամ անցաւ... նաւը կը սուզուէր ջուրին մէջ մինչեւ պատերը:

Այն ատեն սոսկալի տեսարան մը անցաւ վերնահամուրջին վրայ: Մայրերը յուսահատութեամբ կը սեղմէին իրենց գաւակները կուրծքերնուն վրայ, բարեկամները զիրար կը համբուրէին ու կեանքի հրաժեշտը կու տային իրարու: Ոմանք կ'իջնէին խցիկներուն մէջ, ծովը չտեսնելու համար: Ուղեւորներէն մէ-



կը ընկալէր ի հարուած մը տուաւ ինքզինքին, ու ինկաւ սանդուղին մէջ տեղը, ուր հոգին փչեց: Ուրիշ տարաբախտներ զիրար կը սեղմէին տագնապով մահուան սպասումին մէջ:

Կը լուէր հեծկլտութի շփոթ աղմուկ մը, տղայական ճիչեր, սուր ձայներ, տարօրինակ, ու կը տեսնուէր հուսա՛ հունա՛ մարդիկ անշարժ, ապշած, աչքերնին բաց եւ առանց նայուածքի, խենթի աչքերու պէս: Երկու տղաքը, Մառիօն եւ Ճիուլէթթան, իրենց թեւերով կը գրկէին նաւուն կայմերէն մէկը, ու ծովուն կը նայէին պիշ պիշ աչքերով: Ծովը քիչ մը հանդարտած էր, բայց նաւը կը շարունակէր սուզուել յամրաբար: Քանի մը վայրկեան եւս, եւ պիտի իջնէր խորը:

«Մակոյկը ծովը իջեցուցէ՛ք,» դռնէն նաւապետը: Մակոյկ մը, վերջին նաւը որ կը մնար, ծովը իջուցուեցաւ: Տասնըչորս նաւաստիներ եւ երեք ճամբորդներ իջան մէջը:

Նաւապետը նաւուն մէջ մնաց:

«Մեզի հետ իջէ՛ք դուք ալ, կը պոռային իրեն վարէն:

— Ես պէտք է մեռնիմ իմ պաշտօնիս վրայ, ըսաւ նաւապետը:

— Նաւու մը կը հանդիպինք, պոռացին նաւաստիները, կ'ազատինք, իջէ՛ք, թէ ոչ կորսուած էք:

— Կը մնամ:

— Մէկ հոգիի համար տեղ կայ տակաւին, կի՛ն մը,» պոռացին նաւաստիները ուղեւորներուն ուղղելով:

Առաջ եկաւ կին մը, զոր նաւապետը բռնած կը բերէր. բայց, նաւակին գտնուած տեղին հեռաւորութիւնը տեսնելով, չհամարձակեցաւ մէջը նետուել ու

ինկաւ վերնակամուրջին վրայ: Միւս կիները նուազած էին կամ կէս մեռել եղած:

«Տղայ մը,» պոռացին նաւապետը:

Այս ձայնին, պզտիկ Սիկիլիացին եւ իր ընկերուհին, որ մինչեւ այն պահուն քարացած կեցեր էին, անձնապահութեան բնագոյումէն բռնուեցան յանկարծ, ու սլացան նաւուն եզերքը պոռալով:

«Ես, ե՛ս,» եւ զիրար կը հրէին փոխադարձաբար եղջերուներու պէս:

«Ամէնէն պզտիկը, դռնէն նաւաստիները, նաւակը բռնաւորուած է, ամէնէն պզտիկը:»

Այս բառերը լսելով, պզտիկ աղջիկը թեւերը վար կախեց ու անշարժ մնաց, Մառիօյին վրայ ուղղելով իր մահամերձ աչքերը:

Մառիօն պահ մը անոր նայեցաւ, տեսաւ արիւնի բիծը անոր շրջագոգեստին վրայ, յիշեց իր փոքրիկ բարեկամուհին ազնիւ արարքը, եւ ազնիւ գաղափարի մը կայծը ճառագայթեց իր դէմքը:

«Ամէնէն պզտիկը, կը կրկնէին նաւաստիները անհամբերութեան շեշտով մը: Կը մեկնինք ահա:»

Այն ատեն Մառիօն պոռաց ձայնով մը որ մարդկային ձայն ըլլալէ հեռու էր բոլորովին:

«Ի՛նքն է ամէնէն թեթեւը. դուն գնա՛, ձիուլէթթա՛. Գուն, տակաւին հայր, մայր ունիս, ես մինակ եմ, քեզի կու տամ տեղս... իջի՛ր...»

— Վար նետէ՛,» պոռացին նաւաստիները:

Մառիօն մէջքէն բռնեց ձիուլէթթային ու վար նետեց:

Պզտիկ աղջիկը ճիչ մը արձակեց ու մխրճեցաւ:

Նաւաստի մը բռնեց զայն թեւէն ու նաւակին մէջ քաշեց:

Պզտիկ Սիկիլիացին կայնած մնաց նաև ուն եզերքը , բարձրաճակատ , մազերը հովին տուած , անշարժ ու վսեմ :

Նաևակը հեռացաւ ճիշդ ժամանակին , ու ազատուեցաւ մղուելու հոսանքէն զոր նաւը առաջ կը բերէր խորասուզուելով :

Ճիուլէթթան , որ մինչեւ այն ատեն ինքզինքէն դուրս ելած կ'երեւար , աչքերը Մառիոյին վրայ վերցուց ու հեծկլտուք մըն է փրցուց :

« Մնաս բարով , Մառիօ , պոռաց անոր , թեւերը դէպի անոր երկնցներով , մնաս բարով :

— Երթաս բարով , » պատասխանեց տղան :

Մակոյկը կը հեռանար ու ժգնութեամբ յուզուած ծովուն վրայ , երկինքը թխպահոծ էր : Ոչ ոք կը պոռար այլ եւս նաևուն վրայ , ջուրը կը թրջէր արդէն վերնակամուրջին շուրջը :

Ճիուլէթթան երեսը ծածկեց ձեռքերուն մէջ : Երբ գլուխը վեր վերցուց ու ծովուն վրայ ակնարկ մը նետեց , նաւը աներեւութացած էր . . . :

Յ Ո Ւ Լ Ե Ս

Մ Օ Ր Ս Վ Ե Ր Ջ Ի Ն Է Ջ Ը

Շարքար 1

Տարեշրջանը աւարտած է ուրիմն Հանուի Արգարեւ շատ սիրուն փակոււմ մը կ'ընէ պատմութիւնը այս գիւցազն տղուն որ իր կեանքը կու տայ իր պզտիկ բարեկամուհիին համար : Ահա կը մօտենայ ժամանակը ուր

պիտի բաժնուիս քու դաստիարակներէդ եւ ընկերներէդ . ու ես տխուր լուր մը ունիմ քեզի տալու : Բաժանուող երկու ամիս չպիտի տեւէ , այլ միշտ :

Հայրդ , իր գործին վերաբերեալ պատճառներով , Թուրինէն պիտի մեկնի ու մենք ամէնքս ալ իր հետք պիտի երթանք : Նոր վարժարան մը պիտի մտնես : Ասի վիշտ կը պատճառէ քեզի , այնպէս չէ : Ապահով եմ որ կը սիրես նախկին վարժարանդ ուր , չորս տարի շարունակ , օրը երկու անգամ աշխատելու հաճոյքը ունեցար , ուր տեսար այնքան երկար ատեն միեւնոյն դպրոցականները , միեւնոյն դաստիարակները , միեւնոյն ծնողքները , եւ քու հայրդ ու մայրդ որ ժպտուն երես կու դային քեզ առնելու . նախկին վարժարանդ ուր իմացականութիւնդ բացուեցաւ , ուր այնքան լաւ բարեկամներ գտար . ուր արտասանուած ամէն մէկ խօսքը այնքան օգտակար էին : Պարտաւորութիւններն իսկ օգտակար եղան քեզի . . . : Հետդ տար այդ յիշատակը , սրտիդ խորէն հրաժեշտ մը տալով քու ընկերներուդ : Անոնցմէ շատերը դժբախտութիւններ պիտի կրեն , թերեւս կանուխէն պիտի կորսնցնեն իրենց հայրն ու մայրը . ուրիշներ դեռատի պիտի մեռնին , գրեթէ ամէնքն ալ պիտի ըլլան ազնիւ ու պարկեշտ գործաւորներ , ընտանիքի աշխատասէր հայրեր եւ արժանի յարգանքի : Աղապատանքով զատուէ անոնցմէ , քու հոգիէդ մաս մը ձգէ այդ մեծ ընտանիքին մէջ , ուր մտար պզտիկ տղայ , ուրկէ : լլես պատանի , եւ որ հայրդ ու մայրդ այնքան սիրէին , վասն զի դուն սիրուած էիր հոն : Դպրոցը մայր մըն է , Հանուիս : Նա քեզ առաւ իմ գրկիս մէջէն երբ դուն հագիւ բառեր կը թոթովէիր , եւ ահա նա քեզ ինձի կու տայ զօրացած , ազնուացած , ուսմունք առած : Օրհնեալ

ըլլայ դպրոցը, եւ դուն, մի' մուսնար երբեք զայն, զաւա'կս: Մարդ պիտի ըլլաս, պիտի ճամբորդես աշխարհին շուրջը, մեծ քաղաքներ պիտի տեսնես եւ գեղեցիկ շէնքեր, բայց պիտի յիշես միշտ այն համեստ ձերմակ շէնքը, գոց փեղկերով, հովանաւորուած պարտէզով, ուր ծլեցաւ քու իմացականութեանդ առաջին ծաղիկը. պիտի տեսնես զայն կեանքիդ մինչեւ վերջին օրը. ինչպէս կը յիշեմ, ես, այն տունը ուր առաջին անգամ լսեցի քու ձայնդ:

ՄԱՅՐԴ

### Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

#### Յեբեաքքի 4

Ահա քննութիւններու մէջ ենք: Դպրոցին մօտակայ փողոցներուն մէջ ուրիշ խօսք չի լսուիր, բայց եթէ. ֆլնուքիւն, քիւ, շարադրուքիւն, եւայլն. տղայ, հայր, մայր, դաստիարակ եւ դաստիարակուհի, ամէնքն ալ նոյն նիւթին վրայ կը խօսին:

Երէկ առաւօտ ամսօրեայ շարադրութիւնը շարադրեցին, այս առաւօտ թուարանութիւն: Սրտայոյզ բան էր լսել ծնողքները որոնք վերջին խրատներ կու տային տղոց զորոնք դպրոց կը բերէին. ու մայրերը կը տանէին պզտիկները մինչեւ իրենց նստարաններուն վրայ կը նստեցնէին, անոնց գրիչները կը փորձէին ու դրան սեմէն ետ դառնալով կը պոռային.

«Արիութիւն, ուշադրութիւն . . .»

Մեր ընթերակայ ուսուցիչը Պ. Գօաթթին էր, այն որ առիւծի նման ձայն կը հանէ աշակերտները յան-

դիմանելու համար եւ սակայն ոչ զոք կը պատժէ:

Տղաք կային որ վախերնուն տոգուններ էին բոլորովին:

Երբ ուսուցիչը քաղաքատունէն եկած նամակին կնիքը խզեց եւ մէջէն խնդիրը հանեց, շունչի մը ձայն չէր լսուեր: Պ. Գօաթթին բարձրաձայն ըսաւ խնդիրը: Պատան նայուածքներ ուղղելով մեր վրայ, կը գուշակուէր սակայն որ եթէ կարենար խնդիրին լուծումն ալ ըսել, մեծ հաճոյքով պիտի ընէր:

Աշխատութեան սկսանք: Մէկ ժամէն, շատ աշակերտներ կային որ կը սկսէին վճատիլ, վասն զի խնդիրը դժուար էր: Անոնցմէ մէկը կու լար: Գռօսին բռունցքի հարուածներ կու տար գլխուն:

Խեղճ տղաք. անոնց մէջէն շատերը յանցանք չունէին: Իրենցն է յանցանքը եթէ քիչ ժամանակ ունին աշխատելու եւ եթէ ծնողքնին չօգնէր պարտականութիւննին կատարելու: Բարեբախտաբար Տէռօսին հոն էր, Տէռօսին որ անլուր աշխատութիւն յանձն կ'առնէր իր ընկերներուն օգնութեան հասնելու համար, մէկ թուանշան մը անոնց անցընելու կամ թուարանական գործողութիւն մը տուն տալու, առանց նշմարուելու, ուշադիր ամէնուն համար, իրբեւ թէ ինք ըլլար մեր ուսուցիչը: Կառօն, որ քաջ է թուարանութեան մէջ, կ'օգնէր որի որ կրնար եւ օգնութեան հասաւ նոյն իսկ հպարտ Նօպիսին, որ նեղը մնացած ըլլալուն, բարեհամրոյր եղեր էր: Սթաուտին մէկ ժամէն աւելի ատեն անշարժ մնաց, աչքերը տնկած իր խնդիրին վրայ ճակատը կռթնցուցած գոց ձեռքերուն, յետոյ յանկարծ գրիչը առաւ եւ խնդիրը լուծեց հինգ վայրկեանի մէջ:

Մեր ուսուցիչը կը պտտէր դասարանին մէջ ըսելով.

« Հանդարտեցէ՛ք, Հանդարտութի՛ւն կը պատուիրեմ ձեզի: »

Կէս օրին մօտ, պատուհաններուն փեղկերուն միջեւէն կը տեսնուէին մեծ թուով մտահոգ ծնողքներ, որ կ'երթային ու կու գային փողոցին մէջ, անհամբեր՝ իմանալու խնդիրին արդիւնքը: Բռէքօսիին հայրը կար՝ կապոյտ գոգնոցով: Իր աշխատանոցէն փախեր եկեր էր, երեսը տակաւին մրտած: Գոսօիին մայրը, պըտղավաճառը: Նէլիին մայրը, սրտայոյզ: Կէս օրէն քիչ մը առաջ, հայրս եկաւ եւ աչքերը, դէպի դասարանին պատուհանը վերցուց: Սիրե՛լի հայրս: Կէս օրին ամէն բան լինցած էր: Կէս օրի արձակման պահուն, ճշմարիտ կատակերգութիւն մը եղաւ: Ծնողքները կ'երթային տղոցը դէմը, հարցնելով: Թղթատելով տետրակները, բաղդատելով անոնց պարտականութիւնները իրենց ընկերներուն գրածներուն հետ:

« Քանի՞ գործողութիւն: Գումարը ի՞նչ է: »

— Հապա բարձո՞ւմը, հապա փոխադրութիւնը, հապա ասանորդականներուն ստորակէտը: »

Ամէն կողմէ ուսուցիչները կը կանչուէին:

Հայրս առաւ ձեռքէս գրածս, նայեցաւ ու ըսաւ.

« Լա՛ւ է: »

Մեր մօտը կը գտնուէր Բռէքօսի երկաթագործը, որ ինք ալ իր տղուն աշխատութիւնը կը քննէր: Քիչ մը վարանոտ էր, ու դէպի հօրս դառնալով ըսաւ.

« Կը հաճի՞ք, պարոն, գումարը կարդալ: »

Հայրս կարդաց: Բռէքօսին խփոյն իր տղուն տետրակը նայեցաւ: Ծիշտ էր:

« Ապրի՛ս, տղա՛ս: » գոչեց բոլորովին գոհ սրտով:

Հայրս եւ երկաթագործը իրարու նայեցան վայրկեան մը միեւնոյն գաղափարով լցուած: Իրենց տղոցը

յաջողութիւնը: Իրարու երեսի խնդացին իբրեւ երկու բարեկամներ: Հայրս ձեռքը երկնցուց երկաթագործին, որ սեղմեց:

« Հիմա բերանացի քննութեան, » ըսաւ...: Իրարմէ զատուեցան: Քանի մը վայրկեան յետոյ, ձայն մը լսեցինք, որ գլուխնիս դարձնել տուաւ. երկաթագործն էր որ կ'երթար երգելով:

### Վ Ե Ր Զ Ի Ն Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Աւրբաք 7

Այս առաւօտ կատարուեցան բերանացի քննութիւնները: Ժամը ութին ամէնքս ալ դասարանն էինք, եւ ժամը ութը քառորդ անցած սկսան կանչել չորս աշակերտ միանգամայն, մեծ սրահին մէջ: Կանանչ գորգով ծածկուած սեղանի մը շուրջը, տնօրէնը եւ չորս ուսուցիչները նստած էին: Այս չորս ուսուցիչներուն մէջ կը գտնուէր մերինը, Պ. Բէռպօնին: Ես առաջիններէն մէկը եղայ կանչուող: Խեղճ ուսուցիչ: Իսկոյն կը հասկցուէր թէ կը սիրէ մեզ իսկապէս: Աչքը մեր վրայէն շէր զատեր: Կը խռովէր երբ վարանէինք պատասխանելու, ու զուարթութիւնը կը վերստանար երբ լաւ պատասխանէինք: Զեռքով նշաններ կ'ընէր մեզի, որոնք ըսել կ'ուզէին. « Լաւ է — չէ՛ — ուշադիր եղէ՛ք — աւելի կամաց — արիութիւն: »

Քովերնուս պիտի ըսէր պատասխանները եթէ կարենար: Աշակերտներու հայրերը աւելի խռոված չպիտի ըլլային քան ինքը: Կ'ուզէի հազար շնորհակալութիւն ըսել իրեն:

Երբ ուսուցիչները զիս տեղս զրկեցին ըսելով.

« Գացէ՛ք լա՛ւ է, » Պ. Բէռպօնին աչքերը ուրախութեամբ կը շողային:

Դասարան գացի, հօրս սպասելու: Գրեթէ ամէն աչակերտները տակաւին հոն էին: Ես կառօնին քովը նստայ: Տխուր էի մտածելով թէ վերջին անգամն էր որ իր քով կը նստէի: Տակաւին չէի ըսած կառօնին թէ իրեն հետ չպիտի ըլլայի չորրորդ կարգին մէջ. վասն զի Թուրինէն պիտի մեկնէինք: Ան բան մը չէր գիտեր: Ու հոն կը կենար, գրասեղանին վրայ հակած, գրիչովը գեղազարդելու լուսանցքները մէկ լուսանկարին իր հօրը, խոշոր եւ ուժեղ մարդ մը, որ բարի եւ ազնիւ կերպարանք մը ունի տղուն պէս:

Կառօնին կիսաբաց չապիկին տակ, կը տեսնէի ոսկիէ խաչը զոր նէլլիին մայրը տուած էր իրեն, երբ իմացաւ թէ նա կը պաշտպանէր իր հէգ տղան:

Վերջապէս արիութիւն առնելով, ըսի բարեկամիս. «Կառօն, հայրս իմօտոյ պիտի մեկնի Թուրինէն մշտնջենապէս:»

Կառօնը հարցուց ինծի թէ ես ալ հե՞տ կ'երթամ, պատասխանեցի թէ կ'երթամ:

«Ուրեմն ինծի հետ չպիտի՞ ըլլաս չորրորդ կարգին մէջ:»

Քիչ մը ատեն լուռ մնաց, միշտ գծելով, յետոյ հարցուց առանց գլուխը վեր առնելու.

«Պիտի յիշե՞ս երրորդ դասարանի ընկերներդ:»

— Այո, ըսի, ամէնքն ալ... բայց քեզ ամէնէն աւելի... ո՞վ կրնայ մոռնալ քեզ:»

Կառօն ակնարկ մը ուղղեց ինծի որ շատ բան կ'արտայայտէր: Բայց բան մը չըսաւ, ձախ ձեռքը ինծի երկնցուց, միւս ձեռքովը գծագրութիւնը շարունակել ձեւացնելով. ու կը սեղմէի խորտակելու չափ այդ անկեղծ ձեռքը:

Այս միջոցին Պ. Բէռպօնին ներս մտաւ ոգեւորուած դէմքով ու ցած ձայնով ըսաւ մեզի փութով.

«Ապրի՛ք, մինչեւ հիմա աղէկ գնաց, թո՛ղ մնացողներն ալ ջանան որ իրենց նախորդներուն չափ լաւ յաջողին, ապրիք եւ քաջ եղէք զաւակներս, շա՛տ գոհ եմ:»

Եւ մեզի ցոյց տալու համար իր ուրախութիւնը ու մեզ զուարճացնելու համար, անտնկ ձեւացուց թէ կը սահի, ու պատին կռթնեցաւ չիյնալու համար: Ինք, Պ. Բէռպօնին, որուն խնդալը երբեք չէինք տեսած: Այնքան տարօրինակ թուեցաւ մեզի իր ըրածը, որ փոխանակ խնդալու ապշած մնացինք:

Գալով ինծի, վարժապետիս այս կատակը տխրեցուց զիս: Այս մէկ վայրկեանը չէ՞ր միթէ իր ուրախութեան ատենը. ինը ամիս բարութեան, համբերութեան ու տօգոհութեան փոխարինութիւնը: Այս մէկ վայրկեանին համար այնքան աշխատած էր հիւանդօրն ալ, տխուր օրն ալ, յոգնած օրն ալ եկեր դասը տուեր էր... Ի՞նչ կը խնդրէր մենէ այնքան աշխատութեան եւ այնքան խնամքներուն փոխարէն, ժպիտ մը:

Ինծի կը թուէ թէ միշտ պիտի յիշեմ ուսուցչիս այդ տղայական անկումը, եւ եթէ, երբ մեծնամ, Պ. Բէռպօնին ապրի տակաւին, եթէ բարեբախտութիւնը ունենամ իրեն պատահելու, պիտի ըսեմ իրեն թէ իր այդ արարքը սրտիս դպաւ. ու պիտի համբուրեմ ուրախութեամբ իր ճերմակ գլուխը:

Մ Ն Ա Ք Բ Ա Ր ՈՎ

Երկուօրքի 10

Կէս օրին, ամէնքս ալ դպրոցը գտնուեցանք, քըննութիւններուն արդիւնքը իմանալու եւ վիճակացոյց-

նիս առնելու : Փողոցը լեցուն էր ծնողքներով, որոնք մինչեւ մեծ սրահը գրաւած էին, շատերը դասարաններն իսկ մտած էին, մինչեւ ուսուցչին գրասեղանին քովը գացած էին : Մեր դասարանին մէջ, պատին ու գրասեղաններուն մէջ տեղ, կը տեսնուէր կառօնին հայրը, Տէնօսիին մայրը, Բուէքօսի երկաթագործը, Գօռէթին, տիկին Նէլլին, պողալաճառուհին, պզտիկ որմնադրին հայրը, Սթաուտին հայրը, ուրիշ շատ ծնողքներ, գորոնք չէի տեսած տակաւին : Ու ամէն կողմէ ձայներ կը լսուէր, իբրեւ թէ հրապարակի մը վրայ ըլլայինք :

Երբ ուսուցիչը ներս մտաւ, խոր լռութիւն տիրեց : Յուցակը ձեռքն էր եւ սկսաւ իսկոյն կարդալ :  
 « Ապաթիչին կ'անցնի, Առքինին կ'անցնի, պզտիկ որմնադիրը, Գոսօին կ'անցնին, Տէնօսին կ'անցնի, առաջին մրցանակով : »

Ամէն ծնողքները որ հոն էին կը ձանձնային զայն, ամէնքը միաձայն պոռացին .

« Ապրի՛, ապրի՛, Տէնօսին : »  
 Իսկ Տէնօսին, իր խարտեաչ գլուխը ծռեց, փնտռելով հանդերձ իր մայրը, որ իրեն նշան կ'ընէր ձեռքով :  
 « Կառօնը, Կառօֆին, Գալապրացին կ'անցնին : »

Պ. Բէնպօնին կարդաց երեք չորս անուն աշակերտներու որոնք պիտի մնային դարձեալ երրորդ կարգին մէջ . ու անոնցմէ մէկը սկսաւ լալ, տեսնելով իր հայրը որ իրեն սպառնալիք կ'ընէր ձեռքով :

Բայց վարժապետը ըսաւ անոր հօրը :  
 « Չէ, պարոն, ներողամիտ եղէք իրեն, ամէն ատեն տղոցը չէ յանցանքը, երբեմն լալ չար բախտն է պատճառ, եւ այս ալ նոյն պարագան է : »

Յետոյ նորէն սկսաւ իր ընթերցումը . Նէլլին,

կ'անցնի . (անոր մայրը համբոյր մը զրկեց իրեն) Սթաուտին կ'անցնի : Վերջին անցնողը Վօթինին եղաւ, որ եկած էր շքեղապէս հագուած :

Ուսուցիչը ոտքի ելաւ այն ատեն ու ըսաւ մեզի .  
 « Տղա՛ք, այսօր մեր վերջին միութեան օրն է : Տարի մը մէկտեղ էինք, ու հիմա սիրով կը բաժնուինք իրարմէ, այնպէս չէ՞ . . . : Կը ցաւիմ ձեռնէ բաժնուելուս, տղաքս . . . : »

Սօսքը ընդհատեց, յետոյ նորէն առաւ . « Եթէ երբեմն համբերութիւնս հատաւ, եթէ երբեմն, առանց գիտնալու, շատ խիստ եղայ ձեզի հանդէպ, ներեցէ՛ք ինձի . . . : »

— Չէ, չէ, ըսին ծնողքները եւ աշակերտները միաբերան, ո՛չ երբեք . . . :

Ներեցէ՛ք ինձի, շարունակեց, ու սիրեցէ՛ք զիս : Գալ տարի մէկ տեղ չպիտի ըլլանք, բայց միշտ իմ սըրտիս մէջ պիտի ըլլաք : Յետսութիւն, տղա՛քս : »

Այս ըսաւ, Պ. Բէնպօնին ու առաջ եկաւ մեր մէջ տեղը . մենք ամէնքս ձեռքերնիս երկնցուցինք իրեն, մեր գրասեղաններուն վրայ ելանք կայնեցանք ու թեւը կամ հագուստին ծայրը բռնելով, մէջերնուս շատերը համբուրեցին, ու յիսուն ձայներ պոռացին .

« Յետսութիւն, վարժապետ, շնորհակալ ենք . քաջառօղջ եղէք, մեզ մի՛ մոռնաք : »

Երբ Պ. Բէնպօնին դուրս ելաւ, շատ յուզուած կ'երեւար : Ամէնքս դուրս ելանք, փութալով, իրար հրելով, անկարգ : Ծնողքները եւ տղաքը մնաք բարով կ'ըսէին վարժապետներուն եւ վարժուհիներուն : Կարմիր փետուրով վարժուհին եւ « Մայրապետ » պաշարուած էին իրենց պզտիկ դպրոցականներէն : Շատ մարդիկ կը շրջապատէին Ռօպէթին, որ առաջին անգամ կը քալէր առանց անթացուպի : Ամէն կողմէ կը լսուէր .

« Հոկտեմբերին : — Գա՛լ տարեչրջանին : »

Ընկերները իրարու մնաք բարով կ'ըսէին , մու- նալով անկեղծ ողջագուրումի մէջ անհամաձայնութիւն- ները եւ հակակրութիւնները :

Վօթիներն , որ միշտ այնքան նախանձոտ եղեր էր Տէռօսիին , առաջինը եղաւ անոր վիզը պլլուելու : Համ- բուրեցի պզտիկ որմնադիրը այն միջոցին որ վերջին անգամ նապաստակի դնչի՛կ կ'ընէր ինծի : Բռէքօսիին ձեռքը սեղմեցի , նաեւ ԿառօՓիինը , որ ինծի ծանոյց թէ իր վիճակահանութիւններուն մէկէն բաժին մը կը վաստկէի , ու ինծի տուաւ պատուած թուղթ մը պլո՛- րուած : Միւս ամէնուն մնաք բարով ըսի : Խեղճ Նէլ- լին կը կառչէր Կառօնին ու կը համբուրէր զայն ցտե- սութիւն ըսելով : Ամէն աշակերտները կը շրջապատէին Կառօնը , ու խանդավառ ցոյցեր կ'ընէին այդ ազնիւ եւ աննենգ տղուն : Հայրը , կը ժպտէր , տղուն յաղ- թանակին վրայ զարմանալով : Վերջին համբուրածս Կառօնը եղաւ զոր համբուրեցի փողոցին մէջ : Չկրցայ հեծկլտուքս բռնել իրեն մնաս բարով ըսած ատենս : Ծակատէս համբուրեց , յետոյ գնաց բարեւել ծնողքս :

Հայրս ու մայրս հարցուցին ինծի . « Ամէն բարե- կամներուդ մնաք բարով ըսի՞ր : Եթէ կա՛յ մէկը որուն դէմ անիրաւութիւն մը ըրած ես , պէտք է երթաս ներողութիւն խնդրես իրմէ : Կա՛յ անանկ մէկը :

— Ո՛չ բնաւ :

— Ուրեմն , մնաք բարով՝ ըսաւ հայրս դողդոջուն ձայնով մը , վերջին ակնարկ մը նետուելով դպրոցին վրայ : Մայրս կրկնեց . « Մնաք բարով : »

Իսկ ես , այնքան յուզուած էի որ չկրցայ արտա- սանել բառ մը . . . .

ՀՈՒՅԵՄԲԵՐ	
Վերամուտը . . . . .	5
Նոր վարժապետը . . . . .	8
Դժբախտութիւն մը . . . . .	10
Պզտիկ Գալապոսացին . . . . .	12
Իմ ընկերներս . . . . .	14
Մեծանձնութիւն . . . . .	16
Ա. Դասարանի վարժուհիս . . . . .	18
Մանսարդի մը մէջ . . . . .	21
Վարժարանը . . . . .	23
Բատուացի պզտիկ տղան . . . . .	25
ՆՈՅԵՄԲԵՐ	
Ծխան մաքրողը . . . . .	28
Կառօն բարեկամս . . . . .	31
Ծխավաճառն ու ազնը- ուականը . . . . .	33
Եղբորս դաստիարակուհին . . . . .	35
Մայրս . . . . .	38
Գօռէթի ընկերս . . . . .	39
Տնօրէնը . . . . .	45
Զինուորները . . . . .	47
Նէլլիին պաշտպանը . . . . .	49
Դասարանին առաջինը . . . . .	51
Հօմարտացի պզտիկ հեծ- եալ պահակը . . . . .	53
Աղքատները . . . . .	59
ԴԵԿՏԵՄԲԵՐ	
Առուտուր ընողը . . . . .	61
Սնապարծութիւն . . . . .	63
Առաջին ձիւնը . . . . .	65
Պզտիկ որմնադիրը . . . . .	68
Զիւնագնդակ մը . . . . .	70
Վարժուհիները . . . . .	73
Վիրաւորեալին տունը . . . . .	75
Յըռօանցի պզտիկ գրա- գիրը . . . . .	77
Կամքը . . . . .	87
Երախտագիտութիւն . . . . .	89
ՅՈՒՆՈՒՍԻՐ	
Փոխանորդը . . . . .	91
Սթարտիին գրագարանը . . . . .	93
Երկաթագործին որդին . . . . .	95
Հաճելի այցելութիւն մը . . . . .	98
Ֆռանթին դպրոցէն ար- տաքսուած . . . . .	100
Նախանձ . . . . .	103
Ֆռանթիին մայրը . . . . .	105
ՓԵՏՐՈՒՍԻՐ	
Արժանիքով ստացուած մետալ մը . . . . .	107
Լաւ որոշումներ . . . . .	110
Մեքենական պզտիկ շո- գեկաւքը . . . . .	112
Հպարտութիւն . . . . .	114
Աշխատութենէ վիրաւոր- ուածները . . . . .	117
Բանտարկեալը . . . . .	119
Թաթայի հիւանդապահը . . . . .	123

Աշխատանոցը . . . . .	135	Առաքինութիւն . . . . .	218
Պզտիկ Հտպիտը . . . . .	138	Գործաւոր բարեկամները	220
Բարեկենդանի վերջի օրը	143	Կառօնին մայրը . . . . .	222
Կոյր աղաքը . . . . .	146	Քաղաքային արժանիք .	224
Ուսուցիչը հիւանդ . . . . .	154	Զոհողութիւն . . . . .	230
Փողոցին մէջ . . . . .	157	Հրդեհը . . . . .	232
<b>Մ Ա Ր Տ</b>		<b>Ապէնեաններէն Անտեան-</b>	
Երեկոյեան դասերը . . . . .	159	ները . . . . .	237
Կռիւը . . . . .	162	Ամառ . . . . .	279
Ծնողքներ . . . . .	165	Բանաստեղծութիւն . . . . .	281
78 թիւը . . . . .	167	Խուլ-Համր աղջիկը . . . . .	283
Պզտիկ մեռելը . . . . .	170	<b>Յ Ո Ւ Ն Ի Ս</b>	
Մարտ 14ի նախորդ օրը	172	32 Աստիճան . . . . .	293
Մրցանակաբաշխութիւն	174	Հայրս . . . . .	296
Կռիւ մը . . . . .	181	Գիւղը . . . . .	267
Ռօմանիական ընտանիք		Գործաւորներու պարգե-	
մը . . . . .	184	ւաբաշխութիւնը . . . . .	301
Պզտիկ որմնադիրը վտան-		Դաստիարակուհիիս մահը	404
գի մէջ . . . . .	193	Շնորհակալութիւններ . . . . .	306
<b>Ա Պ Ր Ի Լ</b>		Նաւարեկութիւն մը . . . . .	308
Գարունը . . . . .	196	<b>Յ Ո Ւ Լ Ի Ս</b>	
Մանկապարտէզը . . . . .	198	Մօրս վերջին էջը . . . . .	316
Մարմնամարզը . . . . .	202	Քննութիւնները . . . . .	318
Հօրս ուսուցիչը . . . . .	205	Վերջին քննութիւնը . . . . .	321
		Մնաք բարով . . . . .	324





«Ազգային գրադարան»



NL0247720

ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ԳՐԱՅՈՒՑԱԿԷՆ (Պ)

Մ Է Կ Ք Ա Ն Ի Գ Ր Ք Ե Ր

Արքայ Բոնոբէքէն, Վիպասանոսիւն . Թարգմանոսիւն, Օր. Ե. Պ. Օսեան	3
Սոթրազիր Ընդարձակ . Տ. Յովհաննէս Ա. Բն. Մկրեան	15
Անգիր Գլուխքիսն եւ Առակք, Վահան Չ. Տեր-Մինասեան	30
Անկանոն Բայրե Գաղ. լեզուի . Յ. Էսիլեան	5
Արեւաբանագրոսիւն Պատկ. Անձազիր Փալազուսեան	4
Այնուց Անգլ. լեզուի, հաստատոս բառարանով	5
Առաջնորդ Խոսակցութեան Յայն լեզուի . Տ. Զօրագեան	6
Առանիս Տնտեսութիւն . Կ. Ս. Իսիլեան	4
Բանալի Անգլ. լեզուի Ա. Ման . Գ. Պաղասարեան	10
Բանալի Բ. Լան	10
Բանարան Գրանութեան Հայերէն, (Ընդարձակ) . Ե. Տէրօհայրսեան	22
Բանարան Հայերէնէ Յունարան . Տ. Զօրագեան	10
Բանարան Հայերէնէ Բարբերէն . Տ. Արամեան	4
Բանարան Կէտայից Քիւրճիկ . Ս. Ա. Գաբրիէլեան	4
Բանարան Կէտայից Գրանութեան լեզուի . Յ. Էսիլեան	4
Բանարան Անգլ. Գրանութեան	4
Բն. լեզուի Կէտայից (Վարդենիս Ընդիր Գեղամուղ) . Ս. Ա. Գաբրիէլեան	2
Բն. լեզուի Կէտայից Գրանութեան Ա. Ի 1/2 Գրանութեան	2
Բն. լեզուի Կէտայից Գրանութեան Կարէն Արք. Գաբրիէլեան	7
Բն. լեզուի Կէտայից Գրանութեան Գրանութեան Ընդ. Գրանութեան	40
Բն. լեզուի Կէտայից Գրանութեան 3 Հատեր . Ա. Արիստակէս	20
Գործք Հոգևոր կամեանով	4
Գոսկիւր Առաջնորդ գրականութեան 2 Հատեր . Գորգէն	30
Գոսկիւր Արքեպիսկոսոս, Գործքի եւ Գլխազիր	1
Գոսկիւր Գործքից Գրանութեան Տնտեսութեան . Կ. Ս. Իսիլեան	4
Գրանութեան Գրանութեան . Տ. Զօրագեան	1 1/2
Գրանութեան Առաջնորդ . Ա. Արեւիկեան	15

(\*) Այս Գրանութեան բացի իւր Գրանութեան սեպակոսն գրքերէն որոց մասն կատարած Գրանութեան տողեան թիւերն կը պարտաւորեալ ստեղծուին այն Գրանութեան թիւերն, ինչպէս նաեւ կարեւորեալ Գրանութեան նամակատանց . Հետագրութեան Գրանութեան թիւերն կը պարտաւորեալ թիւերն . Տ. Արեւիկեան